Վ. Բ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ

ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ՀՈՂԱՏԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 9-11-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆ - 2017

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Վ. Բ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ

ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ՀՈՂԱՏԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 9–11-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԻՄՆԱՐԱՐ ԳԻՏԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

Ա 106902

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԵԱՆ
ՄԱՏԵՆԱՇԱՐ
162

ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES
162

Երևան – 2017

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)
Բ 358

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՄԲ

Խմբագիր՝ *Ա.Ա. Մելքոնյան*
Գրախոս՝ *Ա.Ի. Շահնազարյան*

Բարխուդարյան Վ. Բ.
Բ 358 Ֆեոդալական հողատիրությունը Հայաստանում 9–11-րդ դարերում / Վ. Բ. Բարխուդարյան.- Եր.:
Պատմության ինստիտուտ, 2017.- 230 էջ:

Աշխատությունը նվիրված է Հայաստանում զարգացած ավատատիրության շրջանի առաջին փուլի սոցիալ-տնտեսական ու մասամբ քաղաքական պատմության կարևոր հիմնախնդիրներին: Համապարփակ անդրադարձ է կատարվել քննվող ժամանակահատվածում Հայաստանի անկախացման գործընթացի փորձերին ու պետականության վերականգնմանը, նախարարական համակարգի քայքայմանը, աշխարհիկ և եկեղեցական հողատիրության զարգացմանն ու բնույթին, ինչպես նաև հասարակության դասային բաժանմանը:

Հատուկ ուշադրություն է դարձվել երկրի տնտեսության վերելքի, հարկային համակարգի քննությանը, ինչպես նաև տարբեր խավերի իրավական ու սոցիալական վիճակին և X–XI դդ. Հայաստանում ծավալված գյուղացիական շարժումներին:

Հացեագրված է պատմաբաններին և հայոց միջնադարյան պատմությամբ հետաքրքրվողներին:

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)
ISBN 978-9939-860-53-4
© ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2017

ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

Սույն մենագրությունը պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, ակադեմիկոս Վլադիմիր Բաբիշի Բարխուդարյանի (1927–2017) գիտական հարուստ ու արժեքավոր ժառանգության երախայրիքն է: Այն դեռ 1954 թ. ակադեմիկոս Ս. Երեմյանի ղեկավարությամբ երիտասարդ պատմաբանի հաջողության պաշտպանած թեկնածուական ատենախոսությունն է: Հայ և ընդհանրապես խորհրդային պատմագիտության նվաճումների հաշվառմամբ շարադրված այս աշխատությունը նա կյանքի վերջին շրջանում մտադրվել էր լրամշակել ու հրատարակել: Սակայն, առողջական վիճակի վատթարացումն ու վերահաս մահը խանգարեցին դրա իրականացմանը:

Չնայած այսօրվա համեմատ սուղ գրչագիր և, հատկապես, վիմագիր աղբյուրագիտական նյութի հիման վրա շարադրված լինելուն, այն չի կորցրել ոչ միայն գիտական արժեքը, այլև արդիականությունը:

Եվ, իրոք, հեղինակում սույն մենագրության բուն հիմնախնդրի և դրան աղերսվող այլ հարցերի շուրջ աղբյուրագիտական անհամեմատ հարուստ ու վստահելի հենքի վրա հեղինակված աշխատությունները եկան հաստատելու Վ. Բարխուդարյանի առաջադրած մի շարք տեսակետների ճշմարտացիությունը: Ասվածի վկայություններն են երկրում նախաարտադրական համակարգի քայքայման, աշխարհիկ ու հոգևոր հողատիրության և սոցիալ-տնտեսական հարաբերությունների զարգացման, հասարակության դասային բաժանման ու դասերի իրավական

վիճակի, հարկային համակարգի, արտաքսման գիրապետության ժամանակ Հայաստանի իրավական կարգավիճակի և անկախացման նախադրյալների, Բագրատունիների օրոք կենտրոնացված միասնական պետություն չստեղծվելու, հայոց պետականության կործանման ներքին պատճառների և այլ հարցերի շուրջ Վ. Բարխուդարյանի եզրահանգումները:

Հենց այդ իրողություններով և մասնագետին ու լայն ընթերցողին անվանի ու վաստակաշատ հայագետի գիտական ժառանգությունն ամբողջական ներկայացնելու անհրաժեշտությամբ է պայմանավորված այս աշխատության՝ գիտահամբարական և լեզվաոճական որոշ միջամտություններով հրատարակումը: Դա նաև կնպաստի զարգացած ավատատիրության շրջանի առաջին փուլի վերաբերյալ հայագիտության նվաճումներն ավելի լիարժեք ընկալելուն և արժևորելուն:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Միջին դարերում հողագործությունը հասարակական արտադրության հիմնական բնագավառն է եղել: Այդ պատճառով էլ հողը Ֆեոդալական հասարակարգի արտադրության գլխավոր միջոցն էր, իսկ դրա Ֆեոդալական սեփականությունը՝ այդ հասարակարգի հիմքը:

Ֆեոդալական հողատիրության աճի ու զարգացման պրոցեսը սերտորեն կապված է անմիջական արտադրող կախյալ բնակչության վիճակի և նրա հետագա կացության հետ: Ամենից առաջ այդ է ֆեոդալական հողատիրության նշանակությունը, որպես ֆեոդալիզմի հիմքի, այսինքն՝ արտադրական հարաբերությունների մի այնպիսի սիստեմի, որը հիմնված է հողատիրոջ կողմից գյուղական բնակչության շահագործման վրա: Եթե կապիտալիստական հասարակարգի օրինաչափությունների բացահայտման համար կարևոր է կապիտալի կառուցվածքն ու դրա շրջանառությունը, ապա ֆեոդալական հասարակարգի տնտեսության օրինաչափությունների ուսումնասիրության համար նույնչափ կարևոր է ֆեոդալական հողային սեփականության ձևավորումն ու դրա էվոլյուցիան: Ինչպես կապիտալիզմի էպոխայում կապիտալը հավելյալ արժեքի ստեղծման աղբյուր է, այնպես էլ ֆեոդալիզմի ժամանակաշրջանում հողի մասնավոր սեփականությունը ֆեոդալական հողային ռենտայի ստեղծման հիմքն է: Ֆեոդալական հողային ռենտայի, մասնավորապես նրա առաջին երկու ձևերի փոփոխության, գյուղական բնակչության շահագործման հետագա ուժեղացման և դրանց անմիջական հետևանք դասակարգային պայքարի հարցերը հնարավոր է ճիշտ լուսաբանել միայն հողի ֆեոդալական սեփականության խոր ու բազմակողմանի ուսումնասիրության միջոցով: Ավելին, տիրող դասակարգի ներսում առանձին դասերի գոյացման և դրանց ռազմա-քաղաքական դիրքի ու փոխհարաբերության հիմքում նույնպես ընկած է ֆեոդա-

լական հողային սեփականությունը: Առանց չափազանցության կարելի է պնդել, որ ֆեոդալական հողատիրությունն այն կարևոր պրոբլեմներից մեկն է, որի մեջ համակենտրոնանում են ֆեոդալական հասարակության զարգացման հանգուցային մոմենտները: Զուսումնասիրել այդ հարցը՝ նշանակում է ստվերի տակ թողնել կամ շատ աղոտ ու մակերեսային պատկերացում ունենալ ֆեոդալական էպոխայի սոցիալ-տնտեսական, իրավատնտեսական և իրավաքաղաքական հարցերի դերակշռող մասի վերաբերյալ:

Փորձենք ելնելով այս բնագավառում սովետական, մասնավորապես ռուսական պատմագիտության ձեռք բերած նվաճումներից, անդրադառնալ Հայաստանի հարուստ պատմության կարևորագույն շրջաններից մեկի՝ Բագրատունյաց ժամանակի հողատիրության մի քանի կարևոր հարցերի:

Այս խնդիրների կապակցությամբ միջնադարյան հեղինակները բավարարվում են թռուցիկ ակնարկներով: Դրա հետևանքով, ինչպես հողատիրության, այնպես էլ տնտեսական կամ սոցիալական մյուս հարցերով հետաքրքրվողը հարկադրված է ուշադիր ուսումնասիրել բոլոր աղբյուրները, որպեսզի դրանց մեջ պահպանված կցկտուր փաստերն ի մի բերելով կարողանա որոշ հետևություններ հանգել:

ա) 9–11-րդ դդ. հողային հարաբերությունների ուսումնասիրության ամենադլխավոր աղբյուրը ժամանակի մատենագիրների երկերն են:

Արաբական տիրապետության շրջանի պատմությունը տվել է Ղևոնդ վարդապետը, սկսելով նրանց առաջին արշավանքներից և հասցնելով մինչև 788 թ.: Ղևոնդն իր «Պատմության»[1] մեջ մանրամասն պատմում է արաբների հարկային ծանր քաղաքականության, երկրում արաբական էմիրությունների հաստատման, նրանց և հայ նախարարական տների փոխհարաբերության և մանավանդ 8-րդ դ. խալիֆայության տիրապետության դեմ հայ ժողովրդի մղած հերոսական պայքարի մասին: Նա եղել է 774–775 թթ. ժողովրդական ապստամբության ժամանակակիցը և ստույգ

---

[1] Պատմութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի Հայոց, Ս. Պետերբուրգ, 1887 (այսուհետև՝ Ղևոնդ):

ու հավասարի տվյալներ է տալիս դրա վերաբերյալ: Ղևոնդի պատմության միջոցով հնարավորություն ենք ստանում հետևելու հայ նախարարական տների կրած փոփոխություններին, հետևաբար, այս կամ այն չափով նաև ֆեոդալական ժառանգական հողատիրության մեջ 7–8-րդ դդ. կատարված տեղաշարժերին:

Հովհաննես Դրասխանակերտցին ապրել է 9-րդ դ. կեսերից մինչև 929 թ.: Նա իր «Հայոց պատմությունը»[2] սկսել է համաշխարհային ջրհեղեղից և հասցրել մինչև 925 թ.: Աշխատության առաջին մասը նախընթաց շրջանի հայոց պատմության համառոտ շարադրանք է և շատ քիչ արժեք է ներկայացնում: Պատմիչը որքան մոտենում է իր ապրած շրջանին, այնքան շարադրում է ընդարձակ ու հետաքրքիր, սակայն 8-րդ դ. վերջի և 9-րդ դ. առաջին կեսի պատմության վրա նա նույնպես հանգամանորեն կանգ չի առնում, պատճառաբանելով, թե այդ մասին գրել է Շապուհ Բագրատունին, որի պատմությունը դժբախտաբար ցավոք չի հայտնաբերված: Դրասխանակերտցու պատմությունը հետաքրքիր և արժեքավոր է հատկապես 9-րդ դ. վերջերի – 10-րդ դ. առաջին քառորդի՝ Բագրատունի առաջին երեք թագավորների (Աշոտ Ա, Սմբատ Ա, Աշոտ Բ) ժամանակաշրջանի վերաբերյալ: Այսինքն, նա փաստորեն տվել է Հայաստանի 35–40 տարիների, իր ապրած շրջանի պատմությունը, մանրամասն կանգ առնելով քաղաքական դեպքերի, Ատրպատականի էմիրների արշավանքների և դրա հետևանքով երկրում ստեղծված ծանր ու խառնաշփոթ դրության վրա: Դրասխանակերտցին 897–929 թթ. հանդիսանալով երկրի հոգևոր առաջնորդը, կողմնակից էր Հայաստանի անկախության ամրապնդմանը և Բագրատունիների հզորացման միջոցով նրա կենտրոնացմանը: Այդ իսկ պատճառով նա պաշտպանում է վերջիններիս և հայ իշխաններին խարազանում անմիաբանության ու երկիրը թշնամու ձեռքը հանձնելու համար: Նրա Հայոց պատմության մեջ արժեքավոր վկայություններ կան նաև երկրի սոցիալ-տնտեսական կյանքի առանձին հարցերի մասին:

---

[2] Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912 (այսուհետև՝ Հովհաննես Դրասխանակերտցի):

Թովմա Արծրունին գրել է Արծրունյաց տան պատմությունը[3] հնագույն շրջանից մինչև 850 թ., իսկ մի Անանուն հեղինակ շարունակել է նրա պատմությունը և հասցրել մինչև 10-րդ դ. կեսերը: Թովմա Արծրունու աշխատությունը նվիրված լինելով Արծրունյաց նախարարական տան պատմությանը, բնականաբար գովաբանում ու չափազանցրած ձևով է ներկայացնում Արծրունի իշխաններին: Այդուհանդերձ, նա արժեքավոր տեղեկություններ է պահպանել արաբական էմիրությունների, Վասպուրականի մյուս նախարարական տների ու Արծրունիների փոխհարաբերությունների, ինչպես նաև հողատիրությունների համար նրանց միջև տեղի ունեցող պայքարի մասին: Թովմա Արծրունու պատմության միջոցով մանրամասն տեղեկություններ ենք ստանում Վասպուրականի տնտեսական կյանքի ու այդ երկրամասում ծավալված կուլտուրական շինարարության մասին:

Մովսես Կաղանկատվացին գրել է Աղվանքի պատմությունը՝ սկզբից մինչև իր ապրած շրջանը՝ 10-րդ դ. կեսերը[4]: Նա մեծ չափով օգտվել է այլ մատենագիրներից և իր պատմության մեջ հաճախ քաղվածորեն մեջ է բերում նրանց: Ավելի արժեքավոր են նրա աշխատության երկրորդ և երրորդ գրքերը, որտեղ նա ուշագրավ փաստեր է հավաքում քաղաքական և մանավանդ եկեղեցական դեպքերի ու հարաբերությունների մասին:

Ստեփանոս Տարոնեցին կամ Ասողիկը ապրել է 10-րդ դ. երեսունական թվականներից մինչև 11-րդ դ. առաջին տասնամյակը: Նրա «Տիեզերական պատմությունը», բաղկացած է երեք մասից կամ հանդեսից[5]: Առաջին երկու մասը տարբեր հեղինակներից քաղված Հայաստանի ու նրա հարևան երկրների պատմության համառոտ շարադրանքն է, ուստի և առանձին արժեք չի ներկայացնում: Կարևոր է երրորդ մասը, որն Ասողիկը սկսում է Աշոտ Ա Բագրատունու թագավորությունից և հասցնում Գագիկ Ա-ի ժա-

---

[3] Թովմայի վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917 (այսուհետև՝ Թովմա Արծրունի):

[4] Մովսէսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի, Թիֆլիս, 1912 (այսուհետև՝ Մովսես Կաղանկատվացի):

[5] Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական Ս. Պետերբուրգ, 1885 (այսուհետև՝ Ասողիկ):

մանակը՝ 1004 թ., այսինքն տալիս է 117 տարվա պատմություն: Երրորդ մասի Բագրատունի առաջին երեք թագավորների պատմությունը նույնպես քաղված է նախորդ մատենագիրներից, իսկ մնացած մասն ինքնուրույն գործ է և առավել մեծ արժեք ունի: Ասողիկը Բագրատունյաց Հայաստանի իրադաղ ժամանակաշրջանի ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական ու մշակութային կյանքի պատմության կարևոր աղբյուր է:

Արիստակես Լաստիվերտցին գրել է Հայաստանի 1001–1072 թթ. պատմությունը՝ կանգ առնելով գլխավորապես բյուզանդական նվաճումների և սելջուկյան ավերիչ արշավանքների վրա[6]: Ինքն էլ ապրել է 11-րդ դարում, քանի որ 1049 թ. սելջուկների կողմից Արծն քաղաքի ավերման և մի քանի այլ դեպքերի ականատեսն է եղել: Լաստիվերտցու պատմությունն, օտարերկրյա արշավանքներին և քաղաքական անցքերին նվիրված լինելով հանդերձ, ուշագրավ փաստեր է պահպանել Հայաստանի արևմտյան շրջանների պատմության վերաբերյալ: Նա միաժամանակ թոնդրակյան գյուղացիական շարժման ամենակարևոր աղբյուրն է:

Եդեսիայի հարաբերությունների ուսումնասիրության համար առանձնահատուկ կարևոր աղբյուր է Ստեփանոս Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիսական» աշխատությունը[7]: Պատմիչն իր ժամանակի (ապրել է 13-րդ դարի երկրորդ կեսում, մահացել 1305 թվականին), կրթված ու բանիմաց անձնավորություններից է եղել: Նա իր պատմությունը գրել է նախորդ մատենագիրների, վիմական արձանագրությունների, զանազան վավերագրերի, կալվածագրերի, հրովարտակների ու կաթողիկոսական շրջաբերականների հիման վրա՝ հաճախ բառացիորեն մեջ բերելով դրանք: Իր աղբյուրների նկատմամբ նա քննական վերաբերմունք է ցուցաբերել: Այդ առավելությունների շնորհիվ նրա աշխատությունը ոչ միայն իր ապրած ժամանակի, այլև նախորդ շրջանների և, առաջին հերթին, մեզ հետաքրքրող ամբողջ Հայաստանի պատմութ-

---

[6] Պատմութիւն Արիստակեայ վարդապետի Լաստիվերտցւոյ. Թիֆլիս, 1912 (այսուհետև՝ Արիստակես Լաստիվերտցի).

[7] Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան այրեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1910 (այսուհետև՝ Ստեփանոս Օրբելյան):

յան կարևոր աղբյուր է: Օրբելյանը հանգամանորեն անդրադառնում է Տաթևի վանքի խոշոր կալվածատեր դառնալուն, նշանավոր ֆեոդալներից տարբեր ժամանակներում նրան նվիրած գյուղեր նվիրելուն, սեփական միջոցներով վանքի զնած հողերին ու այգիներին, ինչպես նաև Սյունիքի իշխանների և եպիսկոպոսների գործունեությանը: Այս բոլորի հետևանքով նա տարբերվում է մեր մյուս մատենագիրներից, դառնում ավելի վստահելի ու յուրօրինակ պատմիչ: Օրբելյանի աշխատությունը միևնույն ժամանակ Սյունիքի գյուղացիական ապստամբության միակ աղբյուրն է:

Օգտագործել ենք նաև 12–13-րդ դդ. մատենագիրներ Մատթեոս Ուռհայեցու, Սամվել Անեցու, Ներսես Շնորհալու, Կիրակոս Գանձակեցու և Վարդան վարդապետի աշխատությունները, որոնք երբեմն շատ արժեքավոր, նոր փաստեր են պարունակում Բագրատունյաց ժամանակաշրջանի պատմության վերաբերյալ:

Ն. Կարաուլովի, Պ. Ժուզեի և Բ. Խալաթյանի թարգմանությունների միջոցով[8] օգտվել ենք նաև արաբական պատմիչների երկերից: Պետք է ասել, որ արաբ հեղինակները շատ արժեքավոր վկայություններ են հաղորդում Հայաստանի քաղաքների, արհեստների ու առևտրի մասին, սակայն հողային հարաբերությունների մասին գրեթե ոչինչ չեն հայտնում:

բ) Բագրատունյաց շրջանի տնտեսական պատմության ուսումնասիրության կարևոր աղբյուր են նաև հայկական դատաստանագրքերը: Դրանց մեջ առանձնապես արժեքավոր է Մխիթար Գոշի 12-րդ դ. հեղինակած դատաստանագիրքը[9], որի մեջ որոշակիորեն արտացոլվել է տիրապետող և շահագործվող Դասակարգերի իրավասոցիալական վիճակը: Ճիշտ է, ինչպես Գոշի, այնպես էլ

---

[8] Н.А. Караулов, Сведения арабских писателей о Кавказе, Армении и Азербайджане (Сборник материалов для описания местностей и племень Кавказа, выпуск XXIX, Тифлис, 1901, выпуск XXXI, Тифлис, 1902, выпуск XXXII, Тифлис, 1903, выпуск XXXVIII, Тифлис, 1908, (այսուհետև՝ СМОМПК), Արաբացի մատենագրները Հայաստանի մասին հատաբեց և թարգմանեց Բագրատ Խալաթեանց, Վիեննա, 1919: П.К. Жузе, Муттагалибы в Закавказье в IX–XI вв. (К истории феодализма в Закавказьи), материалы по истории Грузии и Кавказа, выпуск III, Тбилиси, 1937.

[9] Մխիթարայ Գօշի Դատաստանագիրք Հայոց, հրատ. Վ. Բաստամեանցի, Վաղարշապատ, 1880 (այսուհետև՝ Մխիթար Գոշ, Դատաստանագիրք):

մյուս դատաստանագրքերն ուշ են հանդես եկել, սակայն կազմված լինելով դերազանցապես սովորութային իրավունքի հիման վրա, արտացոլել են նաև նախորդ էպոխան, մանավանդ որ միջին դարերում սովորույթներն ու տրադիցիաները կարևոր դեր էին խաղում և երկար պահպանում իրենց ուժը: Մասնավորապես Գոշի Դատաստանագրքում մեծ չափով տեղ է գտել նաև Բագրատունյաց թագավորության էպոխան, ուստի այն, որոշ վերապահումներով հանդերձ, նաև այդ շրջանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների ուսումնասիրության արժեքավոր աղբյուր է:

Մատենադարանում պահվող №№ 839, 8459, 5607 ձեռագրերի միջոցով օգտագործել ենք նաև Դավիթ Ալավկա որդու Դատաստանագիրքը կամ Կանոնական դատաստանագիրքը: Դավիթ Ալավկա որդին ապրել է ավելի մոտ ժամանակ՝ 12-րդ դ. առաջին կեսին, իսկ նրա դատաստանագիրքը հանդես է եկել նույն դարի 30-ական թվականներին: Սակայն այն ամբողջովին կենցաղային-բարոյական բովանդակություն ունի, որի պատճառով էլ շատ քիչ բան է տալիս մեզ հետաքրքրող հարցի կապակցությամբ: Այս դատաստանագիրքը վերջերս հրատարակվեց Ա. Աբրահամյանի կողմից: Սմբատ Գունդստաբլի Դատաստանագիրքը[10] կազմվել է 13-րդ դ. Կիլիկիայի հայկական թագավորության տնտեսական ու քաղաքական կյանքի պատմության ազդեցության պայմաններում, ուստի այն տողերիս հեղինակի կողմերից առավել զգուշությամբ է օգտագործվել:

գ) 9–11-րդ դդ. ագրարային հարաբերությունների ուսումնասիրության շատ կարևոր աղբյուր են վիմական արձանագրությունները: Դրանք սովորաբար փորագրվել են վանքերի կամ եկեղեցիների պատերի, պարիսպների, գերեզմանաքարերի, ամանների և այլ իրերի վրա: Արձանագրությունները կազմվել են գյուղեր, այգիներ, ջրաղացներ նվիրելու, դնելու կամ փոխանակելու, հարկեր հավաքելու, խոշոր շենքեր կառուցելու և նման այլ առիթներով, նշելով գրության ժամանակը: Այլ խոսքով ասած՝ դրանք տվյալ

---

[10] Սմբատ իշխան (Գունդստաբլի) Դատաստանագիրք, հրատ. Ա, Ղլտճեան, Վաղարշապատ, 1918 (այսուհետև՝ Սմբատ Գունդստաբլ, Դատաստանագիրք):

ժամանակի սոցիալ-տնտեսական պատմության համար շատ արժեքավոր նյութեր են պարունակում:

Հայկական արձանագրությունների գերակշռող մասը տարբեր ժամանակներում հրատարակվել են պատմագիտական, բանասիրական և աշխարհագրական աշխատություններում ու պարբերականներում: Դժբախտաբար մինչ այժմ վիմական արձանագրությունների ամբողջական գիտական ժողովածու չկա: Հրապարակի վրա է Կ. Կոստանյանի կազմած ժողովածուն[11], որը թերի է և հրատարակման որակի տեսակետից շատ հեռու է գիտության ներկա պահանջները բավարարելուց: Մենք օգտվել ենք այդ ժողովածուից՝ հարկավոր եղած փաստերը համեմատելով նրա մատնանշած աղբյուրների հետ:

Օգտագործել ենք նաև Կ. Բասմաջյանի հրատարակած Անիի, Բագնայրի և Մարմաշենի արձանագրությունները[12], ինչպես և Կ. Ղաֆադարյանի հավաքած արձանագրությունների անտիպ ժողովածուն:

դ) Հնագիտական պեղումների հետևանքով հայտնաբերված նյութական կուլտուրայի մնացորդները շատ արժեքավոր նյութեր են տալիս՝ մասնավորապես հողագործության տեխնիկայի ու նրա զարգացման աստիճանի մասին: Հնարավորին չափով օգտագործել ենք Անիի և Դվինի պեղումներից հայտնաբերված նյութերը՝

ե) Պատմության ուսումնասիրության կարևոր ու արժանահավատ աղբյուր են նաև հայերեն ձեռագրերի հիշատակարանները, որոնցում խոսվում է ժամանակի կարևոր դեպքերի ու անցքերի, ինչպես նաև սոցիալ-տնտեսական պատմության առանձին ուշագրավ փաստերի մասին: Բարեբախտաբար վերջերս հրատարակվեց Գ. Հովսեփյանի «Հիշատակարանք ձեռագրաց» ժողովածուի առաջին հատորը, որն ընդգրկում է 5–13-րդ դդ.[13]: Մինչև 12-րդ դ. հի-

---

[11] Վիմական տարեգիր, Յուցակ ժողովածոյ արձանագրութեանց հայոց, կազմեաց Կ. Կ. Կոստանեանց, Ս. Պետերբուրգ, 1913 (այսուհետև՝ Վիմական տարեգիր):

[12] Կ. Բասմաջեան, Հայերէն արձանագրութիւնք (Անւոյ, Բագնայրի և Մարմաշենու), Պարիս, 1931:

[13] Յիշատակարանք ձեռագրաց (Ե դարից մինչև 1250 թ.): Անթիլիաս, հ. Ա, կազմեց Գարեգին Ա կաթողիկոս Յովսեփեան, Անթիլիաս, 1951 (այսուհետև՝ Հիշատակարանք ձեռագրաց):

շատակարանները համեմատաբար սակավ են, իսկ 12–13-րդ դդ. դառնում են ավելի առատ ու բովանդակալից:

*

* *

Կղերաֆեոդալական պատմագիտությունը, հասկանալի պատճառով, չի անդրադարձել ինչպես սոցիալ-տնտեսական պատմության շատ հարցերի, այնպես էլ ֆեոդալական հողատիրությանը: Այդ պատմագրության ներկայացուցիչները հիմնականում տվել են եկեղեցու, քաղաքական անցքերի պատմությունը, նկարագրել սոսկ երևույթների արտաքին կողմը՝ չխորանալով այդ երևույթներին ծնունդ տվող ներքին պատճառների մեջ:

Այսպես, օրինակ, Մ. Չամչյանը «Հայոց պատմություն» եռահատոր, իր ժամանակի համար ամփոփիչ բնույթ ունեցող աշխատության երկրորդ հատորի չորրորդ գիրքը նվիրել է Հայաստանը 856–1080 թթ. պատմությանը[14]: Նա մանրամասնորեն շարադրել է միայն Բագրատունի թագավորների, հայոց կաթողիկոսների և նրանց օրոք կատարված անցքերի, մանավանդ Բյուզանդիայի և Խալիֆայության հետ նրանց հարաբերության պատմությունը: Այլ խոսքով՝ Մ. Չամչյանը տվել է Բագրատունյաց նախարարական տան ու եկեղեցու պատմությունը:

Բուրժուական պատմագիտությունը, չնայած մի քանի քայլ առաջ է գնացել կղերաֆեոդալական պատմագրությունից, սակայն նա էլ չի կարողացել երևույթներին ճիշտ, սոցիալ-դասակարգային մեկնաբանություն տալ:

Լեոն իր «Հայոց պատմության» երկրորդ հատորում ընդարձակ տեղ է հատկացրել Բագրատունյաց շրջանի պատմությանը[15]: Հեղինակը մի քայլ առաջ է գնացել կղերական պատմագրությունից և սկզբնաղբյուրների հիման վրա Հայաստանի 9–11-րդ դդ. պատմությունը շարադրելիս աշխատել է փաստերն իմաստավորել, բացատրել այս կամ այն երևույթի պատճառները: Սակայն նա նախ գերազանցապես ներկայացրել է երկրի քաղաքական ու կուլ-

---

[14] Մ Չամչյանց, Պատմութիւն Հայոց, հ. Բ, Վենետիկ, 1785, էջ 673–1048:
[15] Լեո, Հայոց պատմություն, հ. երկրորդ, Երևան, 1947, էջ 497–173:

տուրական պատմությունը և երևույթները բացատրել սուբյեկտիվ իդեալիստական դիրքերից: Այսպես, օրինակ, նա Բագրատունյաց անկախ թագավորության առաջացումը հիմնականում բացատրում է Աշոտ Բագրատունու վարչաքաղաքական ընդունակություններով: Լեոն նույն կերպ սխալ է մեկնաբանում նաև երկրի ֆեոդալական մասնատվածությունը՝ Հայաստանի տարբեր մասերում ինքնուրույն թագավորությունների ու իշխանությունների առաջացումը, դասակարգային պայքարի հարցերը, ինչպես նաև Բագրատունի, Սյունյաց և Արծրունյաց իշխանական տների հարաբերություններն ու ներքին կռիվները: Լեոյի մոտ երևույթների ներքին, սոցիալ-տնտեսական բացատրությունը բացակայում է:

Ակադեմիկոս Հ. Մանանդյանը հիմնականում զբաղվել է հին շրջանի ագրարային հարաբերությունների պատմության հարցերով: Նա նախ ուսումնասիրել է Բագրատունյաց շրջանի հարկերի առանձին տեսակները և, բացի այդ, «Ֆեոդալիզմը հին Հայաստանում» արժեքավոր մենագրության մեջ[16], առանձին գլխով քննել է մանր հողատիրության հարցն ինչպես հին, այնպես էլ մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում: Ֆեոդալական հողատիրության հարցերը բավական ընդարձակ չափով տեղ են գտել և քննվել Խ. Սամուելյանի «Հին հայ իրավունքի պատմություն» աշխատության մեջ[17]: Ճիշտ է, հեղինակին հետաքրքրում են հայ իրավունքի պատմության հարցերը, սակայն այդ կապակցությամբ նա «Պետական և վարչական իրավունք» բաժնում քննում է 4–13-րդ դդ. հողատիրության, ֆեոդալական ծառայության, կառավարչության և անմիջական արտադրողների իրավունքի հարցերը: Հողատիրության և ընդհանրապես սոցիալական կյանքի վերաբերյալ արժեքավոր փաստեր բերելով և համապատասխան բացատրություններ տալով հանդերձ, Խ. Սամուելյանը սխալ տեսակետ է զարգացնում հողի պետական սեփականություն գոյության և մի քանի այլ հարցերի վերաբերյալ:

9–11-րդ դդ. ֆեոդալական հողատիրության, ինչպես նաև սոցիալ-տնտեսական պատմության հարցերն ամբողջական տրվել է

---

[16] Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, Երևան, 1934:

[17] Խ. Սամուելյան, Հին հայ իրավունքի պատմությունը, հ. I, Երևան, 1939:

1953 թ. լույս տեսած «Очерки истории СССР» ձեռնարկի առաջին հատորի Ս. Երեմյանի գրած «Армения в IX – первой четверти XIII в.» ենթագլխում (էջ 589–641): Այդ ժամանակաշրջանի հողատիրության խնդիրներն այս կամ այն չափով շոշափվել են նաև Ս. Երեմյանի «Опыт периодизации истории Армении эпохи феодализма» (Вопросы истории 1951, № 7), Ս. Հակոբյանի «Հայ ժողովրդի ֆեոդալական շրջանի պատմության պերիոդիզացիայի հարցի շուրջը» («Տեղեկագիր» ՀՍՍՌ ԳԱ հասարակագիտական բաժանմունքի, 1951, № 8) հոդվածներում: Ֆեոդալական հողատիրության և ընդհանրապես ուսումնասիրվող շրջանի ագրարային հարցերն ավելի հանգամանորեն քննվել են Բ. Հարությունյանի «Социально-экономическое положение в Армении XII в. по Судебнику Мхитара Гоша (Вопросы истории, 1952, № 3)», և «Крестьянские волнения Сюнии в X веке» (Ученые записки Ереванского государственного русского педагогического института им. А.А. Жданова, Ереван, 1950, т. II) արժեքավոր հոդվածներում: Ի դեպ, վերջին հոդվածը, որտեղ բավարար չափով վեր է հանված Սյունիքի գյուղացիության պայքարը, մեզ համար արժեքավոր է հատկապես այն տեսակետից, որ հեղինակը գյուղացիության պայքարը կապել է հողատիրության մեջ կատարվող տեղաշարժերի՝ գյուղական համայնքների հաշվին խոշոր ֆեոդալական հողատիրության աճի հետ և մանրամասն կանգ է առել այդ խնդրի վրա:

Ֆեոդալական հողատիրության հարցերն ավելի մեծ չափով տեղ են գտել դիսերտացիոն, դեռևս անտիպ աշխատություններում:

Ս. Հակոբյանի դոկտորական դիսերտացիան[18], նվիրված է հայ գյուղացիության պատմությանը 4–13-րդ դ.: Հեղինակն այս ստվարածավալ մենագրության մեջ գյուղացիության պատմությանը զուգահեռ բավական հանգամանորեն կանգ է առնում նաև

[18] Ս. Ե. Հակոբյան, Հայ գյուղացիության պատմություն (4–13-րդ դարեր), (դիսերտացիոն աշխատանք), անտիպ, Երևան, 1951:

հողային հարաբերությունների վրա: Նա իր թեմայի պահանջներից ելնելով՝ զարգացած ֆեոդալիզմի ողջ ժամանակաշրջանի՝ 9–13-րդ դդ. գյուղացիության և նրա հետ կապված հողատիրության հարցերը միասին է քննում և միանգամայն ճիշտ ընդգծում 9-րդ դ. սկսած հողատիրության մեջ կատարված տեղաշարժերը:

Հ. Ութմազյանի թեկնածուական դիսերտացիան նվիրված է պատմական Հայաստանի նահանգներից մեկի՝ Սյունիքի 9–10-րդ դդ. տնտեսական և քաղաքական պատմությանը[19]*: Սակայն հեղինակն իրավացիորեն այդ երկրամասի պատմությունը շարադրել է Հայաստանի ընդհանուր պատմության հետ կապակցված և ղղալի տեղ է հատկացրել ոչ միայն Սյունիքի, այլև ամբողջ Հայաստանի հողային հարաբերություններին:*

Հ. Նալբանդյանի դիսերտացիոն աշխատանքը վերաբերվում է 8-րդ դ. սկզբից մինչև 9-րդ դ. կեսը Հայաստանում արաբների վարած հարկային և վարչական քաղաքականությանը[20]*: Այս ուշագրավ աշխատանքը կարևոր է Բագրատունյաց ժամանակաշրջանին անմիջապես նախորդող գրեթե չուսումնասիրված էպոխայի սոցիալ-տնտեսական հարաբերությունները թեկուզ ընդհանուր գծերով պարզաբանելու տեսակետից:*

---

[19] Հ. Ութմազյան, Սյունիքը 9–10-րդ դարերում, (դիսերտացիոն աշխատանք) անտիպ, Երևան, 1948:

[20] Հ. Նալբանդյան, Արաբների վարչական և հարկային քաղաքականությունը Հայաստանում (8-րդ դ. սկզբից մինչև 9-րդ դ. կեսը), (դիսերտացիոն աշխատանք) անտիպ. Երևան, 1950:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ 9–11-ՐԴ ԴԴ.

1 Երկրի անկախության վերականգնումը.

8-րդ դ. կեսերին Խալիֆայության ներսում Օմանյանների և Աբբասյանների միջև մղվող պայքարը վերջացավ վերջիններիս հաղթանակով: 750 թ. Աբբասյաններն անցան իշխանության գլուխ: Այդ նույն ժամանակ Հայաստանում ճնշվեց արաբական տիրապետության դեմ ուղղված 747–750 թթ., համաժողովրդական ապստամբությունը:

Աբբասյանների դինաստիան ոչ միայն թեթևություն չբերեց Հայաստանին, այլև ավելի դաժան ու խիստ հարկային քաղաքականություն սկսեց վարել, քան Օմայանները: Խալիֆայությունն արքունիքի աճող հսկայական ծախսերն ու շռայլությունները հոգալու համար անընդհատ եկամտի նորանոր աղբյուրներ էր փնտրում և հաճախ էր դիմում հարկերը ծանրացնելու միջոցին[21]*: Ղևոնդը հարկային այդ ծանր քաղաքականության և դրա պատճառով Հայաստան եկած արաբ հարկահանի մասին գրում է. «... նախ ելեալ յաշխարհս Հայոց՝ բազում վշտօք և և նեղութեամբ վտանգէր զամենեսին և հասուցանէր ի չքաւորութիւն տնանկութեան, մինչև պահանջել հարկս և ի մեռելոցն: ... Խոշտանգէր և զընակիչս աշխարհիս բռնադոյն և դաւն հարկապահանջութեամբ, առնուլ բռա զլխոյ բազում գուզէս արծաթոյ, և գնել կնիք կապարեայ յամենեցուն պարանոցս»*[22]*: Այսպիսով, արաբները հայերից պահանջում էին ոչ միայն ապստամբության երեք տարիների*

---

[21] Б.Н. Заходер, История средневековья (Халифат и Ближний Восток), Москва, 1944, էջ 40:

[22] Ղևոնդ, էջ 127:

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ

հարկերը, այլև անգամ ստիպում էին այդ տարիներին մեռածների փոխարեն գլխահարկ վճարել: Աբբասյանները հրաժարվեցին հայոց հեծելազորի պահպանման համար դեռևս 652 թ. սահմանված 100.000 դահեկանը վճարելուց[23]*, որի ծանրությունը ևս հարկերի ձևով ընկավ ժողովրդի վրա, ավելի ծանրացնելով նրա վիճակը: Որոշ նախարարներ հալածանքների պատճառով թողնում էին իրենց հողերը և անցնում Բյուզանդիայի սահմանները: «Էին ոմանք ի նախարարացն Հայոց,— գրում է Ղևոնդը,— որք մերժեալ լքին զժառանգութիւնս իւրեանց և փախստեայ անկան յաշխարհն Յունաց, ապաւինեալք առ կայսրն Կոստանդին»*[24]*:*

Ավելի շատ ծանրանում է գյուղացիների դրությունը, մանավանդ, որ առևտրի ու դրամաշրջանառության թույլ զարգացման և բնատնտեսության գերիշխանության պայմաններում նրանց ստիպում էին հարկերի մի զգալի մասը դրամով վճարել, որի հետևանքով գյուղացին ծայրահեղ աղքատացման և գրեթե ստրկական վիճակի մեջ էր ընկնում: Աբբասյանների այս քաղաքականությունը, հասկանալի է, որ տարածվում էր ոչ միայն Հայաստանի, այլև Խալիֆայության կազմի մեջ մտնող մյուս երկրների ու ժողովուրդների վրա: Այդ է պատճառը, որ Աբբասյան դինաստիայի գոյության հենց սկզբնական շրջանից Խալիֆայության ներսում պարարտ հող ու նպաստավոր պայմաններ ստեղծվեցին ապստամբական շարժումների համար:

Խորասանում 755 թ. մեծ ապստամբություն է բռնկվում, որը դժվարությամբ է ճնշվում: Մոսուլում 765 թ. խոշոր ապստամբություն է սկսվում, որը քրդական ցեղերի աջակցության պայմաններում տարածվում է ամբողջ հյուսիս-արևմտյան Իրանում: Միայն 786 թ. Խալիֆայությանը հաջողվեց ճնշել այդ ապստամբությունը: Խալիֆայության դեմ բռնկած ապստամբությունների մեջ առանձնահատուկ տեղ է գրավում Մուկաննայի գլխավորած միջինասիական ժողովրդական ապստամբությունը (776–783): Մուկանան տարիներ շարունակ կատաղի դիմադրում էր, արաբա-

---

[23] Տես Բ. Առաքելյան, Ժամանակագրական դիտողություններ, ՍՍՌՄ ԳԱ հայկական ֆիլիալի «Տեղեկագիր», 1941, № 1, էջ 61–64:

[24] Ղևոնդ, էջ 133:

կան բանակին և Խալիֆայությունն ուժերի մեծ լարումով միայն կարողացավ ճնշել նրա ղեկավարած ապստամբությունը: Մուկանանան շրջապատման մեջ ընկնելով վերջ տվեց կյանքին՝ չցանկանալով դերի ընկնել[25]:

8-րդ դ. երկրորդ կեսին Խալիֆայության դեմ բռնկված ընդհանուր ապստամբությունների մեջ կարևոր տեղ է գրավում նաև 774–775 թթ. համաժողովրդական ապստամբությունը Հայաստանում: Այդ ապստամբության ազդանշանը տվեց Արտավազդ Մամիկոնյանը՝ սպանելով արաբ հարկահաններին ու ոչնչացնելով իր դեմ շարժվող արաբական պատժիչ զորքը[26]: Ապստամբությունն արագորեն տարածվեց Հայաստանի մյուս նահանգներում՝ ընդգրկելով երկրի մեծ մասը: Ապստամբներն ամենուրեք դատաստան էին տեսնում արաբ հարկահանների հետ, հարձակվում և գրավում այն ամրոցներն ու քաղաքները, ուր կենտրոնացված էին արաբական կայազորները: Սակայն 775 թ. վաղ գարնանը խալիֆ ալ–Մանսուրը (754–775) Ամիրի գլխավորությամբ 30 հազարանոց բանակ ուղարկեց Հայաստան: Արաբական զորքը Արճեշի մոտ 775 թ. ապրիլի 15-ին կատաղի մարտում հաղթեց հայերին: Ղևոնդի խոսքերով ասած՝ արաբները «կոտորեցին զմեծ մասն հետևակ զօրուն որ յաշխարհաբնակ մարդկանէն էին քանզի էին մերկք և առանց զինուց և անհմուտք պատերազմի»[27]:

Այնուհետև արաբական բանակը շարժվեց Կարինը պաշարող ապստամբների վրա, իսկ վերջիններս իմանալով այդ մասին՝ թողեցին քաղաքի պաշարումը և աշխատեցին փակել արաբական զորքի առաջընթացի ուղին: Հակառակորդ զորքերն իրար հանդիպեցին 775 թ. ապրիլի 24-ին՝ Բագրևանդ գավառի Արձնի գյուղի մոտ: Հայերը չնայած ճակատամարտի սկզբում գերակշռություն ունեին, այնուամենայնիվ, չկարողացան մինչև վերջ դիմադրել արաբական կանոնավոր բանակին և մեծ զոհեր տալով պարտվեցին[28]:

---

[25] Б. Н. Заходер, նշվ. աշխ. էջ 44:
[26] Ղևոնդ, էջ 138–139:
[27] Նույն տեղում, էջ 147:
[28] Նույն տեղում, էջ 149:

Խալիֆայությունն ապստամբների հետ խիստ դատաստան տեսնելով հանդերձ համոզվելով, որ անհնար է Հայաստանը բռնի միջոցներով հնազանդ պահել, գործնական քայլերի դիմեց արաբական տարրը երկրի ներսում ուժեղացնելու համար: Այսպիսով, Խալիֆայությունն իր տիրապետությունը Հայաստանում պահպանելու համար հարկադրված նոր մեթոդների էր դիմում:

Արաբները, ինչպես իրենց գրված մյուս երկրներում, այնպես էլ Հայաստանում հողային տարածություններն իրենց փաստական սեփականությունը չէին դարձնում: Նրանք հողի իրավական տնօրինումն էին վերցրել իրենց ձեռքը: Խալիֆին էր պատկանում բոլոր հայկական հողերի նկատմամբ գերագույն իրավունքը: Նա լավագույն հողերը նվիրում էր արաբական էմիրներին ու զինվորներին, որը վարձատրություն էր նրանց զինվորական ծառայության դիմաց և ուներ պայմանական բնույթ: Նման նպատակներով տնօրինելու համար խալիֆի ձեռքում հողային մշտական ֆոնդ էր լինում՝ պետության հանդեպ հանցավոր համարվող կամ իրենց կալվածքները թողած և Բյուզանդիայի սահմաններն անցած նախարարների հողերը բռնագրավելու միջոցով: Չնայած դրան, արաբական տիրապետության առաջին շրջանում՝ Օմայան դինաստիայի իշխանության ընթացքում, հողային հարաբերությունները մնում էին նախկինը: Հայ ֆեոդալները հիմնականում մնում էին իրենց հայրենական կալվածքներում և նրա ժառանգական տերերն էին, մանավանդ, որ արաբ էմիրներին հողեր նվիրելն ընդհանուր երևույթ չէր դարձել: Արաբներին այս շրջանում ոչ այնքան հողի սեփականությունն էր հետաքրքրում, որքան դրանից ստացված եկամուտը: Այդ պատճառով նրանք չէին հոդում հողի մշակումը, այլ բավարարվում էին միայն նրա եկամուտը ստանալով՝ որով և ապահովում էին իրենց ապրուստը: Հողի մշակումը մնում էր տեղի բնակիչների ձեռքում: Արաբ էմիրների գրված հողերում նույնպես մնում էին նախկին հայ գյուղացիները:

Արաբներն ամբողջ Անդրկովկասը դարձրին մի վարչական միավոր՝ «Արմենիա» անունով: Հայաստանը մտնում էր դրա մեջ, պահպանելով իր ինքնավարությունը: Այսինքն նրանք պահպա-

նեցին նաև երկրի վարչական ինքնավարությունը, որովհետև այդ հարմար էր հարկերի գանձման համար: Նախարարներին էր մնում ինչպես հողերի ժառանգական տիրապետության իրավունքը, այնպես էլ տվյալ գավառի իշխանությունը:

Արաբական տիրապետության ժամանակ Հայաստանում պահպանվում էին Հայոց իշխանի և սպարապետի պաշտոնները: Վերջինս ամբողջ հայկական զորքի գլխավոր հրամանատարն էր համարվում և խալիֆի պահանջով այն առաջնորդում էր դեպի պատերազմ: Հայոց իշխանը հավաքում էր հարկերը և դրանք հանձնում ոստիկանին կամ խալիֆին, հսկում երկրի ներքին կարգ ու կանոնը և միջնորդ էր նախարարների ու խալիֆի միջև: Հայոց իշխանի պաշտոնը ցկյանս տրվում էր զորեղ նախարարներից մեկին (եթե որևէ արտակարգ բան չէին պատահում), սակայն ոչ ժառանգական բնույթով: Այդ պաշտոնի հանձնումը կամ հետ վերցնումը խալիֆի միջոցով էր կատարվում: Նրա հաստատման հետ միաժամանակ, որը հանդիսավոր կատարվում էր խալիֆի կամ ոստիկանի կողմից, որպես պաշտոնի արտաքին նշաններ տրվում էին ձի, սուսեր ու հատուկ համազգեստ: Այդպիսի մի դեպքի նկարագրությունն է տալիս Թովմա Արծրունին. «...հրամայեաց ածել առաջի իւր (խալիֆը—Վ.Բ.) զԱշոտ և զորդի նորա Գրիգոր: Եւ զգեցոյց նոցա հանդերձս և կանգնեաց նշանակ իշխանական և էած սուսեր ընդ մէջ և կամար ականակապ և երիվար ընդիր մեծազարդ... և ի հնչիւնս փողոց. և քարոզքն բարձրացուցանէին զերգսն մեծ և սաստիկ գոչմամբ, եթէ տուաւ իշխանութիւն Վասպուրական աշխարհին Աշոտոյ և որդւոյ իւրոյ Գրիգորի»[29] Իշխանի հեղինակությունը մեծ էր ու տարածվում էր ամբողջ Հայաստանի բնակչության, այդ թվում և հոգևորականության վրա: Երբեմն իշխանի և սպարապետի պաշտոնները կենտրոնանում էր մի անձնավորության ձեռքում:

Արաբաններն իրենց տիրապետության հենց սկզբնական շրջանում ռազմական կարևոր նշանակություն ունեցող ամրոցներում, ինչպես նաև առևտրական կարևոր ճանապարհների վրա դնվող

[29] Թովմա Արծրունի, էջ 328:

բերդաքաղաքներում հաստատեցին արաբական կայազորներ, որոնք հսկողության տակ էին պահում կարևոր ստրատեգիական նշանակություն ունեցող վայրերն ու առևտրական ճանապարհները: Դրանք քանակական տեսակետից այնքան մեծ չէին և կղզիացած էին տեղական բնակչությունից: Արաբները Կարինում այդ կղզիացածությունից ու այն ապստամբների համար հենարան դառնալուց վախենալով՝ 758 թ. արաբ ընտանիքներ տեղափոխեցին ու հաստատեցին այնտեղ և միաժամանակ ամրացրին քաղաքը[30]:

Արաբական պահակազորեր էին հաստատվել նաև Դվինում, Նախճավանում, Շամքորում, Գանձակում, Արճեշում, Մանազկերտում և այլուր[31]: Այդպիսի ամրացված ռազմական կենտրոնների շուրջ բնակություն էր հաստատում զանազան տեղերից գաղթեցրած արաբ բնակչությունը: Այն մասնակցում էր արաբական պահակազորային զորամասերի անկարգություններին և իր հերթին պատուհաս դառնում տեղական բնակչության համար: Այնուամենայնիվ արաբ բնակչության գաղթեցումը կատարվում էր շատ սակավ քանակով և ուներ պատահական բնույթ: Այնպես որ այն չէր կարող քիչ թե շատ շոշափելի ազդեցություն գործել կամ խախտել արաբական կայազորների կղզիացած վիճակը:

Այսպիսով, Հայաստանում գրեթե մինչև 8-րդ դ. կեսերն օտար տիրապետողն իշխում էր միայն քաղաքականապես, բռնի ուժի միջոցով: Երկրում բռնկվող ժողովրդական ապստամբություններն արաբներին համոզեցին, որ իրենց տիրապետությունը կայուն չէ, և որ իրենք չունեն սոցիալական կայուն հենարան: Այդպիսին ստեղծելու համար նրանք որոշեցին արաբական տարրը ուժեղացնել երկրի ներսում և այդ նպատակով 8-րդ դ. վերջերից սկսվեց Խորասանից և Միջագետքից արաբական ցեղերի մասսայական գաղթեցումը դեպի Հայաստանի կենտրոնական գավառներ: 9-րդ դ. արաբ պատմագիր Յակուբին գրում է. «Ռաշիդը նշանակեց ... Յուսուֆ Սուլամիին Հայաստանի (կառավարիչ)..., որը գաղթեցրեց այդ երկիր Նիզարի (ցեղից) մարդկանց ... նիզարիտները, Յու-

---

[30] Լեոնդ, էջ 130:

[31] Տե՛ս Հ. Նալբանդյան, նշվ. աշխ., էջ 57–59:

սուֆի ժամանակ բազմացան: Հետո Ռաշիդը նշանակեց Ղազիդ իբն Մազայադ իբն Զայադ ալ - Շայբանիին, որը բոլոր կողմերից դաղթեցրեց Ռաբիա ցեղերը այնքան շատ, որ նրանք այսօր կազմում են (արաբ) բնակչության մեծ մասը: Առհասարակ նա հաստատ կարգի տակ դրեց երկիրը, մինչև որ խռովությունը միանգամայն վերացավ»[32]:

Արաբական ցեղերի դաղթեցման հետևանքով աստիճանաբար Հայաստանում մի շարք էմիրություններ առաջացան: Դվինում և նրա շրջակայքում ամրացել էին շահապյանները, Առբերանի շրջակայքն Ամյուկ և Բերկրի ամրոցներով գրավել էին ուլթմանի արաբական ցեղերը, Մանազկերտը, Արճեշը և Խլաթը զավթել էին կայսիկները, որի շեյխերից մեկը Մուսա-իբն-Զուրարան 9-րդ դ. սկզբներին գրավելով Արզանի շրջանը, նոր ֆեոդալական տան հիմք դրեց: Նրանից ոչ հեռու Ամիդում նստում էր Իսա-իբն-Շեյխը, իսկ Նախճավանում հաստատվել էր մի այլ ցեղ[33]: Այսպիսով, օտար էթնիկական էլեմենտն ամուր ամրանում էր երկրի ներսում և Հայաստանի քաղաքական ու էթնիկական ամբողջությանը մեծ վտանգ էր սպառնում:

Խալիֆայությունն արաբական այս ցեղերին աշխատում էր դարձնել իր նեցուկը տեղական ապստամբությունները ճնշելու և ընդհանրապես երկիրը հնազանդ պահելու գործում: Սակայն դա նրան չհաջողվեց:

Երկրում հաստատվող արաբական ցեղերը սկսեցին տիրանալ կալվածքների, որպիսիք շնորհում էր խալիֆը, կամ նրա օգնությամբ իրենք էին դրանք զանազան միջոցներով ձեռք բերում: Արաբական ռազմացեղային այդ ավագանին տեղական ազդեցության հետևանքով ժամանակի ընթացքում ֆեոդալականացման ենթարկվեց ու վերածվեց ռազմահողատիրական ազնվականության: Նրանք յուրացրել էին տեղական բնակչության կյանքի, սննդի, հագուստեղենի ու ընդհանրապես ֆեոդալական նիստ ու

---

[32] Արաբացի մատենագրերը Հայաստանի մասին, էջ 110–111:
[33] Տե՛ս П. К. Жузе, նշվ. աշխ., էջ 180, 203:

կացի ձևերը և իրենց հերթին փոխադարձ ազդեցություն էին գործում նրանց վրա:

Արաբական էմիրներն ու շեյխերն աստիճանաբար երես դարձնելով Խալիֆայությունից, թեքվում էին դեպի տեղական ֆեոդալական իշխանությունները, որոնց հետ կապվել էին նաև բարեկամական կապերով: Այդ էմիրությունների տնտեսական և քաղաքական շահերը նրանց մղում էր դեպի հայ ֆեոդալները: Նրանք ավելի նպատակահարմար էին համարում կապվել տեղական դինաստիաների, քան դեպի անկում ունեցող Խալիֆայության հետ: Այնպիսի դեպքեր, երբ արաբ էմիրներն իրենց ջոկատներով օգնության էին գալիս կենտրոնական իշխանության դեմ ապստամբած հայ ֆեոդալներին, եղակի չէին: Այսպես, օրինակ, 851 թ. հայ ֆեոդալներին օգնության եկան Տարոնի Բագրատ Բագրատունու վեսա, Արզանի էմիր Մուսա-իբն-Զուրարան և ուրիշ էմիրներ: 9-րդ դ. արաբական էմիրությունների ֆեոդալականացման պրոցեսն այնքան էր առաջ գնացել և որպես ինքնուրույն ֆեոդալական տներ նրանք այնքան էին կայացել, որ տեղական ֆեոդալների նման Խալիֆայությունից անկախանալու որոշակի ձգտումներով էին հանդես գալիս և այդ նպատակով հաճախ գործակցում էին նրանց հետ[34]:

Մյուս կողմից, Խալիֆայությունը 9-րդ դ. սկսած կանգնում է աստիճանական թուլացման ու քայքայման ուղու վրա: Չնայած Հարուն ալ-Ռաշիդը (786–809 թթ.) կարողացավ կարճ ժամանակով ուժեղացնել երկրի կենտրոնացումը, ամրապնդել պետական կարգն ու Խալիֆայության հեղինակությունը, այնուամենայնիվ դեռևս նրա կառավարման ժամանակ Խալիֆայությունը ցույց տվեց քայքայման առաջին նշանները: 800 թ. Հյուսիսային Աֆրիկան ընդմիշտ դուրս եկավ Աբբասյանների տիրապետությունից: Նրա կառավարման վերջին շրջանում Խորասանն ու Միջին Ասիան բռնկվում էին հզոր ժողովրդական ապստամբություններով, իսկ մի քանի տարի հետո սկսվեց Բաբեկի գլխավորած խու-

[34] Տե՛ս նույն տեղում, էջ 183:

ամյանների հուժկու շարժումը, (816–837 թթ.), որի նմանը չէր տեսել Խալիֆայությունը:

Այն սկսվեց Ատրպատականում, կարճ ժամանակում մեծ ծավալ ստացավ: Բաբեկն իր ջոկատներով ավելի քան քսան տարի շարունակ կատաղի կռիվներ մղեց արաբական բանակների դեմ, մի քանի անգամ պարտություն մատնելով նրանց: Խուռամյան շարժումը Խալիֆայությունից մեծ նյութական միջոցներ ու զորական ուժ կլանեց՝ արագացնելով նրա կործանումը: Շարժմանը մասնակցում էին նաև Աղվանքի ու Սյունիքի որոշ ազնվականներ, որոնք աշխատում էին օգտվել դրանից՝ արաբական լուծը թոթափելու համար: Սակայն, երբ տեսան, որ ապստամբությունն ուղղվում է նաև իրենց դեմ՝ հեռացան շարժումից: Նրանք անգամ Խալիֆայությանն օգնեցին ապստամբությունը ճնշելու գործում՝ բռնելով և արաբներին հանձնելով Բաբեկին[35]*:*

Բաբեկի շարժումը կենտրոնական իշխանության հեղինակությանը մեծ հարված հասցրեց և Աբբասյանների բոլոր թշնամիներին ցույց տվեց, որ հսկայածավալ Խալիֆայությունը կավե ոտքերի վրա է կանգնած:

Բաբեկի շարժման տարիներին Խալիֆայության չափազանցությունը և զբաղվածությունն օգտագործելով՝ ծայրամասային երկրներն ինքնուրույն դառնալու ավելի ուժեղ և ռեալ փորձեր կատարեցին: 9-րդ դ. 30-ական թվականներին Խալիֆայության ծայրամասերում և, առաջին հերթին, արևմուտքում այնքան էր ուժեղացել անկախության համար մղվող պայքարը, որ արաբական զորքերի գլխավոր հրամանատարը խալիֆից պահանջում էր իրեն ազատել հրամանատարությունից, որովհետև չէր կարողանում ապստամբներին հնազանդեցնել[36]*:*

Խալիֆայության ատիճանական թուլացմանը զուգահեռ աճում էր ֆեոդալական իշխանությունների թիվը, ամրապնդվում նրանց անկախությունը: 9-րդ դ. երկրորդ քառորդին վատորեն

---

[35] Տես Հովսեփ պատմութեան Վարդապետ Հայոց թուականաց, Վենետիկ, 1862, էջ 79, (այսուհետև՝ Վարդան վարդապետ), Очерки истории СССР период феодализма, часть первая (IX–XIII вв.), Москва 1953, էջ 647:

[36] Տես նշվ. աշխ., էջ 178:

Խալիֆայության ամբողջ տերիտորիան, այդ թվում նաև Հայաստանը, բաղկացած էր սեփական բերդերում ու ամրոցներում ամրացած բազմաթիվ իշխանություններից ու էմիրություններից: Նրա քայքայումն այնքան էր առաջ դնացել, որ ակնհայտ էր դարձել նաև մեր պատմիչներին: Ասողիկն այդ մասին գրում է. «Իսկ յայնմհետէ և յառաջ թէ և ոչ այլ ազգք տիրեցին ի վերայ նոցա՝ այլ ինքեանք յինքեանս բաժանեալ՝ հակառակ ինքեանց եղեալ»[37]:

Արաբների տիրապետության շրջանում հայ նախարարությունների տնտեսական և քաղաքական կյանքում զգալի տեղաշարժեր էին կատարվել: 8-րդ դ. սկսած որոշ նախարարական տների ոչնչացման, նրանց մի մասի Բյուզանդիա հեռանալու և ֆեոդալական հողատիրության համար մղվող ներքին պայքարում աստիճանաբար շարքից դուրս գալու հետևանքով ֆեոդալական այդ տների կազմն ու դերը զգալիորեն փոփոխվել էին:

Ծանոթանանք մի քանի խոշոր նախարարական տների կրած փոփոխությունների հետ:

Արաբների կողմից Հայաստանը գրավվելու ժամանակ Արծրունիները հաստատված էին փոքր Աղբակում և Կղարճքում: Աբբասյան դինաստիայի հաստատման ժամանակ, երբ Բագրատունիները որպես Օմայանների կողմնակիցներ մի առ ժամանակ հետ մղվեցին, Արծրունիներն օգտվեցին հարմար պայմաններից և Վասպուրականում հաստատեցին իրենց իշխանությունը: Սահակ, Համազասպ և ապա Գագիկ Արծրունի եղբայրները հաջող մարտեր մղելով Ատրպատականից Վասպուրական արշաված արաբ զորավար Սուլեյմանի դեմ, նրան դուրս քշեցին երկրից և ընդարձակեցին իրենց կալվածքները[38]: 774–775 թթ. ժողովրդական ապստամբությունից հետո նրանք տիրեցին նաև Ռշտունիքին: Արծրունիներն իրենց տիրույթների ընդարձակումը շարունակեցին նաև հետագայում և 9-րդ դ. կեսերին Բուղայի արշավանքի ժամանակ,

---

[37] Ասողիկ, էջ 136: Տե՛ս նաև Պատմութիւն Հայոց, արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ, Թիֆլիս, 1910, էջ 76–77:

[38] Տե՛ս Ղևոնդ, էջ 130–131, 133–134, հմմտ. Ասողիկ, էջ 132–133:

իրենց իշխանությունը տարածել էին գրեթե ամբողջ Վասպուրականի վրա:

Ուշագրավ են նաև Մամիկոնյան ֆեոդալական տան կրած փոփոխությունները, մանավանդ առաջնություն ձեռք բերելու համար նրանց և Բագրատունիների միջև առաջացած երկարատև պայքարը: Արաբական արշավանքների սկզբնական շրջանում Մամիկոնյաններին էին պատկանում Տարոնը[39], Բագրևանդը և Արտաձոռնը[40]: Նրանք հողեր ունեին նաև Արշարունիքի և Տայքի հարավում: Այս ընդարձակ կալվածքներին համապատասխան նրանք Համազասպ ու Գրիգոր Մամիկոնյանների ժամանակ (7-րդ դ. երկրորդ կես) մեծ ազդեցություն ունեին և երկրում կարևոր դեր էին խաղում[41]: Օմայանների և Աբբասյանների գահակալական կռիվների շրջանում և վերջիններիս իշխանության գլուխ անցնելուց հետո Մամիկոնյանները մի կարճ ժամանակ շահեցին: 744 թ., երբ իշխան Աշոտ Բագրատունին գտնվում էր Ասորիքում, ուր օգնում էր իր հովանավոր Մրվան-իբն-Մուհամմեդին, ոստիկան Իսահակ-իբն-Մուսլիմն, Աշոտ Բագրատունու փոխարեն սպարապետ նշանակեց Գրիգոր Մամիկոնյանին[42]: Շուտով Մրվանն իր հակառակորդներին հաղթելով մեծ պարգևներով Աշոտ Բագրատունուն վերադարձրեց Հայաստան և սպարապետի պաշտոնը կրկին հանձնեց նրան՝ դժգոհեցնելով Գրիգոր Մամիկոնյանին ու նրա կողմնակիցներին. «Եւ յայնմհետէ ոչ դադարէր Գրիգոր յերկնելոյ զհակառակութիւն ... թէպէտև վասն երկիւղի բռնաւորացն ասնէր խաղաղութիւն ընդ Աշոտոյ բանիւք միայն.»[43]: Արաբական երկու դինաստիաների բորբոքված պայքարի ժամանակ Խալիֆայության բռնակալությունից ազատագրվելու համար: Հայաստանում Գրիգոր Մամիկոնյանի գլխավորությամբ ապստամբություն սկսվեց. Նախարարների ճնշման տակ Աշոտ Բագրատունին ևս միացավ ապստամբներին, սակայն շուտով նրանց դավաճանելով

---

[39] Ասողիկ, էջ 62:
[40] Ղևոնդ, էջ 15:
[41] Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 88–93, հմմտ. Ղևոնդ, էջ 12, 14–16:
[42] Այս Գրիգոր Մամիկոնյանին չպետք է շփոթել մյուս Գրիգորի հետ: Նրանք տարբեր անձնավորություններ են:
[43] Ղևոնդ, էջ 121:

իր փոքրաթիվ համախոհների հետ փորձեց անցնել արաբների կողմը: Գրիգոր Մամիկոնյանը իմանալով այդ մասին՝ բռնեց ու կուրացրեց նրան և ստանձնեց Հայոց իշխանի ու սպարապետի պաշտոնը[44]:

Աբասյաններն իշխանության դլուխ անցնելով աշխատում էին Հայաստանի ազդեցիկ ֆեոդալական տներից որևէ մեկին իրենց հենարան դարձնել: Հարմար թեկնածու կարող էին լինել Բագրատունիները, սակայն նրանք Աբբասյանների հակառակորդ Օմայանների կողմնակիցները և ժամանակին նրանց իշխանության պաշտպաններն էին հանդիսանում: Մամիկոնյանները, ընդհակառակը, պայքարում էին Օմայան դինաստիայի դեմ, սակայն որանք էլ հայտնի էին իրենց հակաարաբական և բյուզանդասիրական քաղաքականությամբ: Այդ պատճառով էլ Աբբասյանները որոշեցին կրկին առաջ քաշել դեպի Խալիֆայություն թեքված և արաբների համար նպաստավոր քաղաքականություն վարող Բագրատունիներին, քան հենվել անբարեհույս Մամիկոնյանների վրա: Գրիգոր Մամիկոնյանի եղբայր Մուշեղի կարճատև իշխանությունից (756–753) հետո Հայոց իշխանի պաշտոնը հանձնվեց Սահակ Բագրատունուն (753–775)[45], իսկ սպարապետությունը՝ Սմբատ Բագրատունուն[46]: Սրանք ստիպված եղան դրավել Մամիկոնյանների Վանա լճի արևմտյան մասում ընկած տիրույթները, առաջին հերթին Տարոնը և Խլաթը:

Մամիկոնյանների հակվածությունը դեպի Բյուզանդիա հիմնականում բացատրվում էր նրանով, որ նրանց պատկանող գավառները գտնվում էին երկրի արևմտյան մասում, ուր ուժեղ էր կայսրության ազդեցությունը: Խալիֆայության կողմը թեքվելու դեպքում Բյուզանդիան ամեն ժամանակ կարող էր ավերել նրանց կալվածքները: Բացի այդ, նրանք անմիջապես սահմանակից չլինելով Խալիֆայությանը՝ համեմատաբար ապահով էին նրա արշավանքներից, իսկ անհրաժեշտության դեպքում ապաստանում էին կայսրության սահմաններում:

---

[44] Նույն տեղում, էջ 120–124:
[45] Նույն տեղում, էջ 128:
[46] Նույն տեղում, էջ 138

Սրաբների տիրապետության դեմ բռնկված 774–775 թթ. ժողովրդական ապստամբության կազմակերպիչներն ու հիմնական ոգեշնչողները, ինչպես գրեթե միշտ, Մամիկոնյաններն էին: Այս ապստամբության ճնշումից հետո Մամիկոնյան ֆեոդալական տունը, որը մինչ այդ խոշոր դեր էր խաղում Հայաստանի քաղաքական կյանքում, այնպիսի մեծ հարված ստացավ, որ ընդմիշտ հեռացավ քաղաքական ասպարեզից: Նրանք գրանից հետո կորցրին սեփական ժառանգական հողերի մեծ մասը, որոնք գերազանցապես անցան Բագրատունիներին ու իրենց խղճուկ գոյությունը շարունակեցին պահպանել Բագրևանդում և այլ տեղերում:

Բագրևանդի Մամիկոնյանների վերջին ժառանգը Գրիգորն էր, որին Բուղան մյուս ձերբակալված հայ իշխանների հետ ուղարկեց Սամարա: Ազատված նախարարների հետ Սամարայից հայրենիք վերադարձավ նաև Գրիգոր Մամիկոնյանը և յոթ օր իր գավառում բնակվելուց հետո բնական մահով մահացավ: Դրանից հետո խալիֆի հրամանով ոստիկան Մահմետը «պատուէ զԱշոտ, տալով նմա զդաւառն Բագրևանդ, և արծաթ բիւրս հինգ. և յայնմհետէ բարձաւ ի Հայոց յաշխարհէս ազգն Մամիկոնէից»[47]:

Պատմական ասպարեզից հեռացած Մամիկոնյանների փոխարեն ֆեոդալական ժառանգական հողատիրության համար մղվող պայքարում հաղթող դուրս եկան նախկինում ոչ այնքան հզոր Բագրատունիները, ինչպես նաև Արծրունի ու Սյունյաց ֆեոդալական տները: Դրանց մեջ քաղաքական ու տնտեսական հզորության տեսակետից առավել կարևոր դեր սկսեցին կատարել Բագրատունիները: Նրանք արդեն Հայաստանի կառավարչի (իշխանի) և սպարապետի պաշտոնները դարձրել էին իրենց ֆեոդալական տան ժառանգական արտոնությունը:

774–775 թթ. հակաարաբական ապստամբությանը մասնակցում էին և մարտի դաշտում Մուշեղ ու Սամվել Մամիկոնյանների հետ հերոսի մահով ընկան նաև Հայոց իշխան Սահակ ու սպարապետ Սմբատ Բագրատունիները[48]: Այդ պատճառով էլ, ապստամբության պարտությունից հետո, Բագրատունիներն էլ հար-

---

[47] Վարդան վարդապետ, էջ 81:
[48] Ղևոնդ, էջ 150:

ված ստանալով ժամանակավորապես թուլացան: Սակայն որոշ ժամանակ անց նրանք ավելի ամրապնդեցին իրենց դիրքերը՝ ձեռք բերելով Հայոց իշխանի ու սպարապետի պաշտոնները:

806 թ. Հայոց իշխան նշանակվեց վերոհիշյալ սպասամբության ժամանակ զոհված Սմբատ սպարապետի որդի Աշոտ Մեծակը Բագրատունին, որը գնեց Կամսարականների կալվածքները և իր աթոռանիստը Կոգովիտ գավառից տեղափոխեց Շիրակի Բագավան ավան՝ հիմնադրելով Բագրատունիների Շիրակի ճյուղը[49]: Նրա եղբայր Շապուհը վարում էր սպարապետության պաշտոնը:

Բաբեկի շարժման ժամանակ «Արմենիայի» ոստիկանն ամբողջովին զբաղված էր նրա դեմ մղվող պայքարով և ժամանակ ու հնարավորություն չուներ զբաղվելու իրեն հանձնարարված երկրների ներքին գործերով: Այդ իսկ պատճառով խալիֆը ոստիկանի ֆունկցիաներն ամբողջովին վերապահեց իշխան Բագարատ Բագրատունուն[50] (826–851) նրան հանձնելով Հայոց իշխանի տիտղոսը և ամբողջ «Արմենիայից» հավաքվող հարկերի պատասխանատվությունը: Դրա պատճառը նաև այն էր, որ Խալիֆայությունն այս ժամանակվանից սկսած սիրաշահում էր Բագրատունիներին, վախենալով, որ նրանք կթեքվեն դեպի Բյուզանդիա: Բացի այդ, Բագրատունիներն իրենց ռազմաքաղաքական գործունեությամբ անհրաժեշտ էին Խալիֆայությանը՝ արաբական էմիրներին հնազանդ պահելու գործում: Այս շրջանում հայ ֆեոդալներն այնքան էին ինքնուրույնացել ու տնտեսապես զորեղացել, որ անդամ արհամարհում էին Խալիֆայության ներկայացուցչին և հրաժարվում հարկ վճարելուց: Այդ մասին արաբ պատմագիր Բելաձորին գրում է. «Հայաստանի իշխանները նստած էին իրենց երկրներում և նրանցից ամեն մեկը պաշտպանում էր յուր գավառը: Երբ այստեղ էր գալիս ամիրապետի ոստիկանը, նրանք չանում էին նրա սերը գրավել և եթե նա նրանց հետ ազնիվ, բայց խիստ էր վարվում, նրանք նրան հարկ էին վճարում, հակառակ դեպքում նրան

---

[49] Ասողիկ, էջ 106:

[50] Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 116:

հրապարակորեն հայհոյում էին և արհամարհում նրա հրամանը»[51]:

Բաբեկի շարժումը ճնշելուց հետո կենտրոնական իշխանությունը նորից մտահոգվեց իր թուլացած դիրքերն ամրապնդելու հարցով: Խալիֆայությունը 850 թ. Աբու Սարդ ոստիկանին ուղարկեց Հայաստան երկրի ինքնավարությանը վերջ տալու և հարկեր հավաքելու համար: Այդ պատճառով նույն թվին Հայաստանում մի նոր, հզոր ապստամբություն բռնկվեց: Ապստամբությունը ճնշելու համար 851 թ. Մութավաքիլ խալիֆը (847–861) Հայաստան ուղարկեց Աբու Սաիդի որդի Յուսուֆին, որը եկավ Խլաթ, ննդությամբ բանտարկեց իշխանաց իշխան Բագրատ Բագրատունուն և ուղարկեց Սամարա: Այնուհետև Յուսուֆն անցավ Մուշ, սակայն այնտեղ հերոս սասունցիների կողմից արաբական բանակը ոչնչացվեց, ինքն էլ սպանվեց[52]:

Պատմական այս իրողությունն իր գեղարվեստական խոր արտացոլումը գտավ «Սասնա Ծռեր» ժողովրդական էպոսի մեջ, որը վիպականորեն արտացոլել է արաբական տիրապետության դեմ հայերի մղած քաջարի պայքարը: Չնայած այս հոյակապ էպոսի համար անմիջական նյութ են հանդիսացել 851 թ. Յուսուֆի դեմ սասունցիների մղած հերոսական կռիվները, սակայն, ինչպես այդ հատուկ է ընդհանրապես ժողովրդական էպոսներին, «Սասնա Ծռեր»-ում» միևնույն ժամանակ գեղարվեստորեն ընդհանրացվել է 7–10-րդ դդ. Հայաստանում, մասնավորապես Սասունում ու նրա հարևան գավառներում Խալիֆայության դեմ հայ ժողովրդի մղած հերոսական պայքարը:

Յուսուֆի սպանությունից ու արաբական բանակի ջախջախումից հետո ապստամբությունը տարածվեց ամբողջ Հայաստանում, Վիրքում ու Աղվանքում: Խալիֆն ապստամբների հետ դաստաստան տեսնելու համար թյուրքական ծագում ունեցող դաժան հրամանատար Բուղայի գլխավորությամբ մի մեծ զորամաս ուղարկեց Հայաստան: Բուղայի պատժիչ զորամասը ցրվեց ամ-

---

[51] Արաբացի մատենագրերը Հայաստանի մասին, էջ 63, հմմտ. П.К. Жузе, նշվ. աշխ. էջ 189:

[52] Տես Թովմա Արծրունի, էջ 199, 201-202:

բողջ երկրում, դաժանորեն հաշիվ տեսավ հերոսական դիմադրություն ցույց տվող ժողովրդի հետ, ապա հրով ու սրով հնազանդեցնելով նաև Վիրքն ու Աղվանքը 855 թ. գերիներով ու մեծ ավարով վերադարձավ Սամարա:

Հակաարաբական ապստամբությունների հետ նման կերպ դաժան դատաստան տեսնելով հանդերձ Աբբասյանները չէին կարողանում և չէին էլ կարող Խալիֆայության քայքայման առաջն առնել, նրա դրությունը կայունացնել: Առանձին դեպքերում Աբբասյանները Խալիֆայության կազմի մեջ մտնող ժողովուրդներին հնազանդեցնելու գործում ժամանակավոր հաջողություն կարող էին ունենալ, սակայն դա չէր կարող ընդհանուր քայքայման առաջն առնել, որովհետև Խալիֆայության քայքայումն 9-րդ դ. կեսերից սկսած անխուսափելի էր դարձել: Բանն այն է, որ Խալիֆայության մեջ մտնող տարբեր երկրներում ֆեոդալականացման պրոցեսն այնքան առաջ էր գնացել և ինքնուրույնության ձգտող աղնվականությունը տնտեսապես այնքան էր ուժեղացել ու կայունացել, որ նրան համար Խալիֆայությունը դարձել էր ավելորդ բեռ: Այդ ֆեոդալ-իշխաններն ամեն կերպ աշխատում էին վերջնականապես թոթափել կենտրոնական իշխանությունը: Ընդ որում, նույնանման ձգտումներով էին հանդես գալիս արաբական հատկապես ծայրամասային երկրների կառավարիչները որովհետև ինքնուրույն դառնալու տնտեսական նախադրյալներն առկա էին նաև նրանց մոտ: Խալիֆայության թուլացումն ու ստագնացիոն քայքայումը և հետևաբար հզորացող ֆեոդալական իշխանությունների անջատողական ձգտումները փոխպայմանավորված էին և միևնույն երևույթի երկու տարբեր կողմերն էին:

Տեղական խոշոր հողատերերի հետ համաձայնության գալու միջոցով խալիֆներն անհուսալի փորձեր էին կատարում պետության վիճակը բարելավելու ուղղությամբ, առանց հաշվի առնելու, որ այդ ֆեոդալական իշխանությունների քաղաքական նպատակը Խալիֆայությունից անջատվելն էր:

Մյուս կողմից, 9-րդ դ. կեսերից սկսած պետության համար կատարյալ պատուհաս էր դարձել թուրք վարձկաններից կազմված արքունական գվարդիան, որն ինքնակամ իրար հետևից գահ

էր բարձրացնում կամ դահավիրակում ցանկացած խալիֆի, դրանով իսկ նպաստելով պետության խառնակ վիճակին և առանձին երկրների ու էմիրությունների անկախ դառնալուն[53]:

Խալիֆայությունից անկախանալու և ինքնուրույն պետություն ստեղծելու համար Հայաստանում նպաստավոր պայմաններ էին ստեղծվել: Արաբական Խալիֆայության թուլացման և հայ իշխանական տների վրա նրա անմիջական վերահսկողություն ունենալուց զրկվելուն զուգընթաց, հայ ֆեոդալները հետզհետե վերականգնում ու ընդարձակում էին իրենց ժառանգական հողատիրության իրավունքը, այդ հողերից և ռազմական կարևոր բնակավայրերից աստիճանաբար դուրս քշելով արաբական էմիրներին: Նրանք դրա հետևանքով փաստորեն դարձել էին հայկական հողերի մեծ մասի տերն ու տնօրենը և ձեռք էին բերել հսկայական տնտեսական ու ռազմական միջոցներ:

Մասնավորապես Բագրատունիները 9-րդ դ. կեսերին այնքան հողեր էին ձեռք բերել ու միջոցներ կուտակել, որ տեր էին դարձել ոչ միայն Կենտրոնական Հայաստանի մեծ մասին, այլև միաժամանակ իրենց ձեռքն էին գցել տեղական իշխանությունն ու զինվորական վարչությունը, թեև դեռևս արաբներին ենթակա վիճակում:

Հայ իշխանական տներն իրենց ժառանգական հողատիրական իրավունքները հաստատելու և սեփական տիրույթներն ընդարձակելու համար մասնակցում էին բարդ քաղաքական խնդիրներին, կոալիցիաներ կազմելով ինտրիգներ ու դավադրություններ սարքում իրար նկատմամբ: Այնուամենայնիվ, հայ ֆեոդալների համար այս շրջանում կարևորը Խալիֆայությունից լիովին անկախանալու հարցն էր և նրանք այս խնդրում հիմնականում միասնաբար էին հանդես գալիս:

Խալիֆայության թուլացումն այնքան էր որոշակի դարձել, որ անգամ Բուղայի ավերիչ արշավանքներից մի քանի տարի հետո խալիֆը հարկադրված էր Աշոտ Բագրատունուն ճանաչել Հայոց

---

[53] Б. Н. Заходер, նշվ. աշխ., էջ 53–54:

իշխանաց իշխան, նրան հանձնելով երկրի հարկահանության ու կառավարման գործը[54]:

Այդ ժամանակվանից սկսած հարկերը Բագրատունիներն էին հավաքում և մուծում Խալիֆայության գանձարան: Դրանով հարկերի գանձումը կանոնավորվեց, կայուն չափեր ընդունեց: Վերացան հարկահանության ժամանակ արաբների ներկայացուցիչների կողմից կատարվող ծայրահեղ ապօրինություններն ու բռնությունները: Հարկահանության մեջ կատարվող փոփոխությունների նշանակությունը կարևոր էր դառնում մանավանդ այն պատճառով, որ կատարվում էր երկրի ընդհանուր տնտեսական վերելքի պայմաններում: Այդ հանգամանքները նպաստում էին ֆեոդալների տնտեսական ու ռազմական ուժի հզորացմանը, մանավանդ. եթե նկատի ունենանք, որ նրանց մի մասը բավականին եկամուտներ էր ստանում նաև առևտրից ու զարգացող արհեստագործությունից: Իրենց ձեռքում կենտրոնացնելով երկրի իշխանությունն ու ռազմական առումով զգալիորեն ուժեղանալով, Բագրատունիները քաղաքական մեծ ազդեցություն էին ձեռք բերել և գլխավորում էին երկրի անկախությունը վերականգնելու գործը: Նրանք ոչ միայն առաջնություն էին ստացել հայ իշխանների հանդեպ, այլև անգամ արաբական ոստիկանների ու խոշոր էմիրների նկատմամբ: Երկրի անկախությունը վերականգնելու համար պարարտ հող էին նախապատրաստել նաև արաբական լծի դեմ ուղղված ժողովրդական բազմաթիվ ապստամբությունները, որոնք խալիֆայության ընդհանուր թուլացման պայմաններում խարխլել ու անկայուն էին դարձրել արաբական տիրապետությունը Հայաստանում: Ժողովրդաազատագրական շարժման ու երկրի անկախության վերականգնման պայքարում հայ հասարակության բոլոր խավերը հիմնականում համատեղ էին հանդես գալիս:

Հայաստանի անկախության վերականգնման համար կարևոր նշանակություն ունեցան նաև ստեղծված միջազգային նպաստավոր պայմանները: Նախ, Խալիֆայության քայքայումն ու ան-

---

[54] Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 133: Հմմտ. Սամուէլի քահանայի Անեցւոյ հաւաքմունք ի գրոց պատմագրաց, հրատ. Արշակ Տեր-Միքելեանի, Վաղարշապատ, 1893, էջ 94, Վարդան վարդապետ, էջ 82:

կումն արագացավ մանավանդ 9-րդ դ. երկրորդ կեսին, երբ քիչ թե շատ հզոր արաբական էմիրությունների ինքնուրույն իշխանությունն ստեղծելու ձգտումները շատ էին ուժեղացել, իսկ Իրանում և Միջին Ասիայում սկսել էին իշխել Խալիֆայությունից փաստորեն անկախ տեղական դինաստիայի ներկայացուցիչները: Մյուս կողմից, Խալիֆայության թուլացումն օգտագործում էր նրա դարավոր հակառակորդն ու մրցակիցը՝ Բյուզանդական կայսրությունը:

Բյուզանդիայում այդ ժամանակ իշխանության գլուխ էր անցել մակեդոնական հզոր դինաստիան, որի հիմնադիր Վասիլ Ա-ն (867–886) օգտվելով Խալիֆայության թուլացումից՝ ակտիվ հարձակում էր սկսել նրա սահմանների վրա և բավականին առաջ էր խաղացել Վերին Միջագետքում ու Հարավային Հայաստանում: Հատկանալի է, որ նման պայմաններում Հայաստանի դիրքորոշումն ավելի քան կարևոր էր դառնում հակառակորդ կողմերի համար, մանավանդ եթե հաշվի առնենք նրա ռազմա-ստրատեգիական ու տնտեսական խոշոր նշանակությունը: Պատահական չէ, որ Վասիլ Ա-ը քաղաքական սերտ հարաբերություններ սկսեց Հայաստանի հետ և ամեն կերպ նպաստում էր նրա անկախության վերականգնմանը, ձգտելով ինչպես Հայաստանին, նույնպես և Անդրկովկասի մյուս ժողովուրդներին ոտքի հանել արաբների դեմ: Բագրատունիները հմտորեն օգտվում էին արաբա-բյուզանդական հակամարտությունից և աշխատում էին այն ծառայեցնել Հայաստանի անկախությունը վերականգնելու գործին: Ներքին ու արտաքին կարգի այս նախադրյալների շնորհիվ էր, որ Հայաստանի անկախությունը վերականգնվեց:

Դեռևս 869 թ. Զաքարիա Ա Զագեցի կաթողիկոսի (855–877) ղեկավարությամբ հայ խոշոր ֆեոդալների հատուկ ժողովը որոշել էր Աշոտ Բագրատունուն թագավոր հռչակել և այդ աստիճանը դիմել խալիֆին: Բ. Առաքելյանը հենվելով Գառնիում գտնված 879 թվականի մի արձանագրության վրա, որում Աշոտ Բագրատունու կին Կատրանիդեն իրեն թագուհի է անվանում և վկայակոչելով Սևանի 874 թ. արձանագրությունը, որտեղ Աշոտ Բագրատունին թագավոր է կոչվել, ցույց է տվել, որ նա թագավոր է հայտարար-

վել Շիրակավանի ժողովի կողմից 869 թ.[55]: Ինչպես էլ որ լինի, փաստ է, որ Մուհամմեդ Բիլլահ խալիֆը (870–892) հարկադրված Աշոտ Բագրատունուն պաշտոնապես թագավոր է ճանաչում և 886 թ. նրան ուղարկում արքունական թագ ու թանկարժեք զգեստներ[56]:

Վասիլ Ա կայսրը, որն ուշադիր հետևում էր այդ դեպքերին, իր հերթին շտապեց Աշոտ Բագրատունուն թագավոր ճանաչելով, նույնպես ուղարկեց թագավորական թագ ու արքունական զգեստներ և բարեկամական պայմանագիր կնքեց նրա հետ[57]:

Բագարանում Աշոտ Բագրատունուն մեծ հանդիսավորությամբ թագավոր օծեցին: Ժամանակակիցները խոշոր քաղաքական նշանակություն էին տալիս այդ հանդամանքին, դրա մեջ տեսնելով ինքնուրույն հայկական պետության վերականգնման փաստը: Աշոտ Ա-ի թագադրման ակտով Հայաստանը թոթափեց արաբական լուծը, սակայն դա չի նշանակում, թե դրանով վերացավ նրա անկախությանը սպառնացող ամեն մի վտանգ:

Երկրի ինքնուրույնությունը վերականգնելուց հետո հայ իշխաններն առաջվանից ավելի հզոր էին: Նրանք հայկական հողերից դուրս էին քշում արաբ ֆեոդալներին և աղատագրված տերիտորիաները դարձնում ժառանգական տիրույթներ կամ միացնում իրենց կալվածքներին:

Բագրատունիներն ակտիվորեն մասնակցում և նպաստում էին արաբների դեմ հայ ֆեոդալների այդ պայքարին ու դրավում երկրի ավելի կարևոր ռազմա-ստրատեգիական վայրերը: Հայաստանի ուժեղացումը նպաստավոր չէր Խալիֆայության համար, ուստի 9-րդ դ. վերջին և 10-րդ դ. սկզբներին Ատրպատականի Սաջյան էմիրները, ոչ առանց խալիֆի հանձնարարության, Հայաստանի անկախությունը ոչնչացնելու ուժեղ փորձեր կատարեցին:

Աշոտ Ա-ի մահից հետո գահ բարձրացավ նրա որդի Սմբատ Ա-ն (890–914) որի թագավորության ժամանակաշրջանն անցավ Հայաստանի ինքնուրույնությունը պահպանելու համար մղվող

---

[55] Տե՛ս Б.Аракелян, Гарни I, результаты раскопок 1949–1950 гг., Ереван, 1952, էջ 84-87:

[56] Տե՛ս Հովանես Դրասխանակերտցի, էջ 139:

[57] Տե՛ս Վարդան վարդապետ, էջ 85–86:

պայքարի մեջ: Սաջյան էմիր Աֆշինը Սմբատի թագավորության հենց առաջին տարիներին մի քանի անգամ արշավեց Հայաստան և կարողացավ ոչ միայն կասեցնել Սմբատ Ա-ի կողմից Դվինը գրավելու և իր պետության սահմաններն ընդարձակելու փորձերը, այլև նրան հարկադրեց գդալի քանակությամբ ռազմատուգանք վճարել:

Ատրպատականի ուժեղ այդ էմիրությունը ոչ մի կերպ չէր հաշտվում Հայաստանի հորացման հետ ու ամեն կերպ աշխատում էր խանգարել դրան, վերջ տալ Հայաստանի ինքնուրույն պետությանը: Դա ավելի ցայտուն արտահայտվեց Աֆշինի հաջորդ Յուսուֆի վարած պառակտողական քաղաքականությամբ: Վերջինս այդ նպատակին հասնելու համար աշխատեց հայ ֆեոդալներին հանել Սմբատ Ա-ի դեմ և նրան հատկապես հակադրեց Վասպուրականի հզոր իշխան Գագիկ Արծրունուն՝ հմտորեն օգտվելով Նախճավան քաղաքի պատճառով Գագիկի և Սմբատի միջև ստեղծված թշնամությունից: Նրա միջնորդությամբ 908 թ. խալիֆը թագավորական թագ ու շքեղ հագուստներ ուղարկեց Գագիկ Արծրունուն՝ նրան ճանաչելով Հայաստանի թագավոր[58]:

Յուսուֆը 909 թ. մեծ զորքերով, որոնց թվում քիչ չէին հայ իշխանների և առաջին հերթին Գագիկ Արծրունու ու նրա եղբայր Դուրգենի զորական ուժերը, շարժվեց Բագրատունիների ժառանգական հողերի վրա: Սմբատ Ա-ն իր կողմնակից սակավաթիվ ֆեոդալների հետ չկարողանալով դիմադրել թշնամու հզոր ուժերին, անձնատուր եղավ և 914 թ. երկար տանջանքների ենթարկվելուց հետո սպանվեց[59]:

Թվում էր, թե Խալիֆայությունը հասել է իր նպատակին և Յուսուֆի արշավանքների հետևանքով ավերված ու թալանված երկիրն այլևս ի վիճակի չէր դիմադրության: Սակայն Սմբատի որդի Աշոտ Բ-ը (914–928) կարողացավ կարճ ժամանակում իրեն հպատակեցնել անհնազանդ ֆեոդալներին և Բյուզանդիայի ընդհանուր աջակցության պայմաններում արաբներից մաքրել գրեթե ամբողջ երկիրը:

---

[58] Տես Թովմա Արծրունի, էջ 466–467:
[59] Տես Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 237–240:

Խալիֆայությունը տեսնելով, որ իր ջանքերն ապարդյուն անցան, ինչպես նաև հաշվի առնելով հայ-բյուզանդական մերձեցման վտանգը, հաշտվեց կատարված փաստի հետ և 922 թ. Աշոտ Բ-ին ուղարկեց ոչ միայն թագավորական թագ, այլև նրան շնորհեց «շահընշահ» (արքայից արքա) տիտղոսը[60], դրանով իսկ ճանաչելով հայ Բագրատունիների սուվերեն իրավունքները հայկական մյուս «թագավորությունների» ու իշխանությունների նկատմամբ[61]:

Հայկական թագավորության համար հետաղա ժամանակաշրջանը, մինչև 11-րդ դ. կեսերը հիմնականում հանդիսացավ խաղաղ զարգացման ժամանակաշրջան:

2. Արհեստագործության, առևտրի և քաղաքների զարգացումը

Բագրատունյաց թագավորության հիմնադրման ժամանակաշրջանից սկսած ներքին ու արտաքին նպաստավոր պայմանների շնորհիվ Հայաստանը հաստատուն կանգնեց տնտեսական ու կուլտուրական կյանքի զարգացման ուղու վրա: Ճիշտ է, Ատրպատականի էմիրների ռազմական արշավանքների հետևանքով կարճ ժամանակով այն ընդհատվեց, սակայն այդ վտանգը վերանալուց անմիջապես հետո երկրի նորմալ տնտեսական զարգացումը շարունակվեց: Բագրատունյաց շրջանում Հայաստանի տնտեսական կյանքի բարգավաճումը երևում է թե այդ շրջանի հնագիտական տվյալներից ու արաբական աշխարհագիրների հաղորդած տեղեկություններից և թե ժամանակակից հայ պատմիչների վկայություններից: Հովհաննես Դրասխանակերտցին այդ ժամանակվա տնտեսական կյանքի զարգացման մասին գրում է. Իսկ աշխարհիս Հայաստանեայց յաւուրսն յայնոսիկ այց արարեալ Տեառն և պատսպարեալ և յաջողեալ ի բոլոր բարութիւնս բնակեցան իւրաքանչիւրոք ի ժառանգութիւնս իւրեանց. և սնպհականեալ զերկիր

---

[60] Տե՛ս նույն տեղում, էջ 315:

[61] Հմմտ. Очерки истории СССР, период феодализма, часть первая, էջ 611:

տնկեցին այգիս և արմատացուցին բուրաստանս ձիթենեաց և պարտիզաց. հերկեցին հերկս արտաքոյ փշոց և կթեցին պտուղս հարիւրաւորս. զեղան չտեմարանք ցորենոյ ի ժամանակի լրութեան հնձոց. լցան դուբք գինւոյ ի կութս այդեստանեայց և լերինք ցնծութիւն զգեցան, զի բազմացան ի նմա արօտականք անդնայք արջառոց և հօտք ոչխարաց»[62]:

Ասողիկն իր հերթին վկայում է, որ այդ ժամանակ «... էր շինութիւն և խաղաղութիւն յաշխարհիս Հայոց ըստ մարդարէութեանն՝ հանդչել իւրաքանչիւր ուրուք ընդ որթով իւրով և ընդ թզենեաւ: Եւ այսպէս ազատակաց աւանացեալ և աւանաց քաղաքացեալ բազմամարդութեամբ և ընչեղութեամբ, մինչև հովուաց և անդէորդաց մեծաքսն այս զգենուլ պատմուճան»[63]: Պատմիչը, անշուշտ, չափազանցություններին մեջ է ընկնում, երբ ասում է, թե հովիվները ևս մեծաքսն պատմուճաններ էին հագնում:

Տնտեսական կյանքի բարգավաճումն արտահայտվեց գյուղատնտեսության, արհեստագործության, առևտրի, քաղաքների ու քաղաքային կյանքի զարգացմամբ: Արտադրողական ուժերի զարգացման շնորհիվ սկսվում է աշխատանքի հասարակական բաժանման՝ գյուղատնտեսությունից արհեստագործության բաժանման պրոցեսը: Հայաստանի տնտեսապես ավելի զարգացած կենտրոններում աշխատանքի հասարակական բաժանումն այնքան է խորանում, որ արհեստագործությունը գյուղատնտեսությունից զատվելով արտադրության ինքնուրույն բնագավառ է դառնում: Դա նշանակում է, որ արհեստագործությունը դադարում է գյուղատնտեսության համար օժանդակ լինելուց, նրան լրացնող և նրա հետ միաձուլված հանդես գալուց, իսկ արհեստագործության արտադրանքը ոչ թե զուտ ներքին սպառման նպատակ է հետապնդում, այլև վաճառքի համար շուկա է հանվում:

Գյուղատնտեսության և արհեստագործության բաժանման հիմքի վրա սկսվում է քաղաքի և գյուղի բաժանման պրոցեսը: Ընդ որում, այդ պրոցեսն այնքան է խորանում, որ առևտրի և արհեստագործության կենտրոն հանդիսացող մի շարք խոշոր քա-

---

[62] Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 198–199:
[63] Ասողիկ, էջ 161:

ղաքների՝ գյուղից տնտեսապես անջատվելը բավական ցայտուն և ակնառու է դառնում: Զարգանում են գյուղատնտեսությունը, արհեստագործությունն ու առևտուրը: Վերջինիս զարգացմանը մեծ չափով խթանում էր նաև միջազգային տարանցիկ առևտրական ճանապարհների Հայաստանով անցնելը: Ի դեպ ասենք, որ Բագրատունյաց շրջանում սկսված աշխատանքի հասարակական բաժանման, արհեստագործության, առևտրի, քաղաքների ու քաղաքային կյանքի և, մանավանդ, ֆեոդալական կալվածքային խոշոր հողատիրության երևան գալու ու զարգացման միջոցով է բնորոշվում ֆեոդալիզմի այս նոր էտապը՝ զարգացած ֆեոդալիզմի շրջանը Հայաստանում:

Այս շրջանում արհեստներից խոշոր զարգացման են հասնում հատկապես մետաղագործությունը, մանածագործությունը և կավագործությունն իրենց բազմաթիվ տեսակներով ու մասնաճյուղերով:

Մետաղագործության զարգացմանը նպաստում էին հայկական բնաշխարհի առատ հանքային հարստությունները, որոնց օգտագործմանը տեղական բնակչությունը ծանոթ էր դեռ շատ հին ժամանակներից: Մասնավորապես 9–11-րդ դդ. Հայաստանում արդյունահանվում էին ոսկի, պղինձ, երկաթ, մկնդեղ, բորակ, հանքակուպր, պղնձարջասպ և կապար[64]: Սյունիքի ընդերքը հարուստ էր պղնձի, արծաթի, կապարի, ոսկու հանքերով: Այս շրջանում պղնձահանքի մշակումը հայտնի էր Աճանանում (այժմ Ղափան): Տաշիր-Զորագետի պղնձի ու երկաթի հանքամշակությունից աչքի էր ընկնում մանավանդ Պղնձահանքը (այժմ Ալխաս) և Մանից գոմը (այժմ Ալավերդի)[65]: Մետաղագործության կենտրոններ էին Դվինը, Վանը, Անին, Արծնը, Կապանը և այլ քաղաքներ:

Մետաղագործությունից զարգացած էին դարբնությունը, զինագործությունը, ոսկերչությունը, արծաթագործությունը և այլ

---

[64] СМОМПК, вып. XXXI, Тифлис, 1902, էջ 39:

[65] J. Laurent, L'Armenie entre Byzance et L'islam depuis la conguUte arabe jusqu'en 886, Paris, 1919, էջ 41:

արհեստներ, որոնք իրենց հերթին բաժանվում էին ավելի մանր ճյուղերի:

Դարբնությունն իր ենթաճյուղերով շատ տարածված է եղել և գյուղացու երկրագործական աշխատանքի պահանջներն ու ընտանեկան-կենցաղային կարիքները բավարարող ամենաանհրաժեշտ արհեստն է համարվել: Դարբնի բազմատեսակ աշխատանքի մասին են խոսում մատենագրական վկայություններից և Անիի, Դվինի, Ամբերդի պեղումներից հայտնաբերված նյութական կուլտուրայի հարուստ մնացորդները: Միայն Դվինում պեղումների հետևանքով գտնվել են զանազան մեծության և գործածության տարբեր նպատակներ ունեցող կացիններ: Դարբնի արհեստանոցում հայտնաբերվել է դեռևս կիսապատրաստ վիճակում ձեռքի ուրագ, որից երևում է նրա տեղական ծագումը: Գտնվել են նաև երկաթյա խոփ, բահ, ինչպես նաև մի քանի մեծ ու փոքր դուրեր, երկաթի ողոցի մի քանի կտորներ, զանազան ձևի ու մեծության բազմաթիվ պայտեր[66]:

Անիի, Ամբերդի, Զվարթնոցի պեղումներից հայտնաբերվել են երկաթե շղթաներ, օղակներ, կեռեր, պղնձյա անոթներ, բուրվառներ, ջահեր, բազմաթիվ կողպեքներ, մոմակալներ և այլ իրեր: Դարբնի հիմնական աշխատանքը կատարվել է կռելու և զոդելու միջոցով, Դվինում ծանոթ չեն եղել ձուլելու տեխնիկային, որովհետև բաղնիքի երկաթե խողովակները զոդելու միջոցով են պատրաստել, սակայն Անիում հայտնաբերվել են պղինձ ձուլելու երկու արհեստանոցի մնացորդներ, որոնցից երևում է, որ այնտեղ ծանոթ են եղել մետաղ ձուլելու տեխնիկային:

Պեղումների ժամանակ հայտնաբերված երկաթե իրերի բազմաթիվ մնացորդներից և մատենագրական սակավաթիվ վկայություններից երևում է, որ երկաթը լայնորեն օգտագործվել է նաև շինարարության մեջ՝ շենքերին ամրություն տալու և այլ կառուցողական նպատակներով:

---

[66] Տե՛ս Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 156–157:

Թովմա Արծրունու վկայությունից հայտնի է, որ Գագիկ Արծրունին իր պալատի կառուցման համար հսկայական չափերով երկաթ է օգտագործել[67]:

Պատմական դրավոր աղբյուրների հատկապես այս շրջանի պատմիչներ Հովհաննես Դրասխանակերտցու և Թովմա Արծրունու հաղորդած բավական առատ տեղեկություններից ու միջնադարյան մանրանկարներից հայտնի է, որ Հայաստանում գործածվել են զենքերի բազմաթիվ տեսակներ: Հասկանալի է, որ մետաղների մշակման գործում կարևոր տեղ պետք է բռներ նաև զենքեր պատրաստելու արհեստը: Կատարված պեղումներից համեմատաբար լավ արդյունքներ է տվել Դվինը, որտեղ գտնվել են նիզակներ, դաշույններ, նետեր, սլաքներ, նիզակի ու տեգի ծայրեր և այլ զենքեր: Մասնավորապես նետերի սլաքները այնքան առատ և բազմաթիվ են, որ Կ. Ղաֆադարյանը դրանք վեց տարբեր կարգերի է բաժանել[68]:

Բագրատունյաց շրջանում ֆեոդալական-պալատական վերնախավը վարում էր բավական փարթամ ու շռայլ կյանք: Նրա համար ազնիվ մետաղներից պատրաստվում էին բազմաթիվ զարդեր ու պերճանաքի այլ առարկաներ: Դրա հետևանքով զարգանում ու նրբանում է ոսկերչության, մատամբ նաև արծաթագործության արհեստը: Ուշագրավ է, որ Դվինում հայտնաբերված ոսկե մանյակը, հյուսածո ապարանջանները, մատանիները, ականջողերը և ուլունքները, որոնք աչքի են ընկնում իրենց օրինակների բազմազանությամբ ու կատարելության հասած արվեստով, առանց բացառության պատկանում են 10–11-րդ դարերին[69]:

Մանածագործության զարգացման համար նույնպես Հայաստանը հարուստ պայմաններ ուներ: Երկրի կլիմայական պայմանները նպաստում էին կուլտուրական մշակաբույսերի աճեցմանը, իսկ արոտավայրերով հարուստ լեռնային վայրերում պահվում էին հարյուր հազարավոր ոչխարներ, որոնցից ստացվում էր մեծ քանակությամբ բուրդ: Պեղումները, հասկանալի պատճառով, չա-

---

[67] Տե՛ս Թովմա Արծրունի, էջ 482–483:
[68] Տե՛ս Կ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., էջ 161–162:
[69] Տե՛ս նույն տեղում, էջ 174:

վիճակից քիչ տվյալներ են տվել մանվածքային արտադրության վերաբերյալ, սակայն տեղական և արտաքին աղբյուրների առատ տվյալներից երևում է, որ Բագրատունյաց շրջանում խոշոր զարգացման ու կատարելության էր հասել նաև արտադրության այս ճյուղը: Հովհաննես Դրասխանակերտցու վկայությամբ Սմբատ Ա-ն Ատրպատականի Յուսուֆ էմիրին նվիրել է չքնաղատես երևելի զարդեր, կարմիր որդանով ներկված իրեր, համակ ոսկուց թասեր, գոտի[70]:

Հայաստանում արտադրվող բրդե և մետաքսե բանվածքների ու գործերի մասին արժեքավոր տեղեկություններ են հաղորդում արաբ աշխարհագիրները: X դ. մատենագիր Ալ Իստահրին Դվին քաղաքի մասին գրում է. «Այս քաղաքում արտադրվում են բրդյա շորեր և գորգեր. բարձեր, բազմոցներ (մինդար), ժանյակներ և հայկական արտադրության այլ առարկաներ: Այստեղ է արդյունահանվում «կըրմըզ» կոչվող ներկը, նրանով են ներկում մահուդը: Ես տեղեկացա, որ դա որդ է, որն իր շրջապատը հյուսում է շերամի որդի նման, իսկ բացի այդ, ևս իմացա, որ հենց այստեղ էլ արտադրում են բազմաթիվ մետաքսյա բանվածքներ»[71]: Նույն դարի արաբ հեղինակ Իբն — Հաուկալը հայտնում է, որ Հայաստանում արտադրում են բազմաթիվ մետաքսյա շորեր, գորգեր, ծածկոցներ, կարպետներ և բարձեր[72]:

Մանածագործական արդյունագործության զարգացման համար Հայաստանը ոչ միայն ուներ առատ հումք՝ բուրդ, բամբակ և մետաքս, այլև հարուստ էր լավագույն ներկերով և, առաջին հերթին, Ալ-Իստահրու հիշատակած «կըրմըզ» կոչված ներկով: Այդ ներկի մասին, դարձյալ 10-րդ դ. արաբ մատենագիր Իբն-ալ-Ֆակիհը գրել է. «Դա կարմիր որդն է, որը հայտնվում է դարնան օրերին, նրան հավաքում են, եփում և նրանով բուրդ են ներկում»[73]:

---

[70] Տես Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 198:

[71] Տես СМОМПК, вып. XXIX, Тифлис, 1901, էջ 19.

[72] Տես նույն տեղում, вып. XXXVIII, Тифлис, 1908, էջ 22:

[73] Տես նույն տեղում, вып. XXXI, Тифлис, 1902, էջ 39:

Արաբ հեղինակների հաճախակի հիշատակած «կլրմրզ»-ը հայկական նշանավոր «որդան կարմիր» ներկն է, որի արտադրության ամենախոշոր կենտրոնը Դվինի մոտ գտնվող Արտաշատ գյուղն էր[74]:

Չնայած պղնձագործությունը բավականին զարգացած էր, այնուամենայնիվ, Դվինի և Անիի պեղումներից հայտնաբերված հսկայական քանակությամբ կերամիկայի մնացորդներն իրենց բազմաթիվ տեսակներով ցույց են տալիս, որ կավագործության արտադրանքը 9–11-րդ դդ. ավելի լայն տարածում ու զարգացում է ունեցել: Այս շրջանում կերամիկայի նուրբ հախճապակյա ամաններից սկսած մինչև մեծ կավե կարասների արտադրանքն ավելի է նրբանում և կատարելագործվում: Առանձնապես զարգանում է ջնարակած խեցեղեն անոթների արտադրանքը, որի մի քանի տեսակները իրենց բազմազան գույներով երևան են գալիս և գեղարվեստական կատարելության հասնում 10–11-րդ դ.:

Անիի պեղումներից հայտնաբերված նյութերի մասին խոսելով, ակադեմիկոս Հ. Օրբելին գրել է. «Զարմանալի են հախճապակյա ամաններն իրենց թափանցիկ կողերով և ուռուցիկ ու խոր դծած նկարներով, և ճենապակիից ամանները՝ իրենց հարուստ և բազմազան ոսկեզօծ ու բազմերանգ նկարներով, նույնպես և ուռուցիկ ու ներս ընկած զարդարանքներով (օրնամենտ), դրանք գտնված են թագավորական ապարանքի պեղումներում: Բեկորներից երևում է, որ ամանների մեծագույն մասը թափովի է, և աչքի են ընկնում թափման (որ հինգ տեսակից ավելի է) բարձր կատարելությամբ, նույնպես և գեղարվեստորեն կատարված լիներով ու ներկերի պայծառությամբ: Գտնված ամանների խեցիների թիվը արդեն մի քանի հազարների է հասնում»[75]:

Անիի և Դվինի պեղումներից հայտնաբերվել է ձվաձև անոթ-ամաններ, որոնք տեղական ծագում ունեն և օգտագործվել են միայն հասարակության վերին խավին պատկանող մարդկանց կողմից, որպես օծանելիքի և անդիկի ամաններ: Գտնված են նաև

---

[74] Տե՛ս Баладзори, Книга завоевания стран, текст и перевод П. К. Жузе, Баку, 1927, էջ 10:

[75] Յ. Օրբելի, Անոյ աւերակները, Վաղարշապատ, 1911, էջ 19:

մարգու և բույսերի բարձրաքանդակներով հախճապակյա ամանները, որոնց մի մասը տեղական ծագում չունի և ներմուծված է Չինաստանից, Բյուզանդիայից, Սիրիայից ու այլ երկրներից: Պեղումների հետևանքով հայտնաբերվել են նաև մեծ քանակությամբ խոհանոցային նշանակություն ունեցող հատուկ կավանոթներ՝ սափոր, քրեղան, թաս, փարչ, ափսե, աղաման, կճուճ և այլ իրեր:

Կերամիկան, հատկապես Դվինում, խոշոր չափով օգտագործվել է նաև ճարտարապետական նպատակներով:

Արհեստագործական խոշոր քաղաքներում արհեստավորների միջև իրենց արտադրանքի որակը բարձրացնելու ուղղությամբ բավական ուժեղ մրցություն է ծավալվել, որն արհեստների կատարելագործման և արտադրանքի գեղարվեստական ձևավորման պատճառ է հանդիսացել: Այդ եղանակով է հանդես եկել գեղարվեստական կերամիկայի, ոսկերչության, գորգագործության, զինագործության, ասեղնագործության և այլ արհեստների բարձրորակ արտադրանքը: Նշված արհեստներից բացի, 9–11-րդ դդ. խոշոր չափով զարգանում և առանձին ենթաճյուղերի են բաժանվում նաև քարակոփության ու կաշվեգործության արհեստները:

Արհեստագործության զարգացման հիման վրա և միջազգային նպաստավոր պայմանների հետևանքով Հայաստանում ծավալվում է արտաքին, մասամբ նաև ներքին առևտուրը: Միջազգային պայմանների նպաստավորությունն արտահայտվում էր նրանով, որ Բյուզանդական կայսրության, Խալիֆայության ու Առաջավոր Ասիայի երկրների, ինչպես նաև Մերձվոլգյան շրջանների հետ կատարվող առևտրական գլխավոր ուղիներն անցնում էին Հայաստանով:

Բագրատունյաց շրջանում Հայաստանի վրայով երկու հիմնական առևտրական ուղիներ էին անցնում: Դրանցից առաջինը, որն ավելի կարևոր նշանակություն ուներ, գալիս էր Խոյից և Նախիջևան-Դվին-Անի-Կարս-Արծն ուղիով անցնում էր առևտրի հանդուցային կենտրոն Տրապիզոն քաղաք և նրա միջոցով կապվում Սևծովյան երկրների հետ: Այս առևտրական ճանապարհը Դվինում բաժանվում էր երկու մասի, որոնցից մեկն անցնում էր հյու-

սիսային առևտրի գլխավոր կենտրոն Պարտավ քաղաք և ապա Դերբենդի վրայով կապվում Մերձվոլգյան բուլղարների հետ, իսկ մյուսն անցնում էր Թրիլիսի-Արտանուջ ուղղությամբ՝ կրկին դեպի Սևծովյան երկրներ:

9–11-րդ դդ. դարերում կարևոր նշանակություն ուներ հարավային առևտրական ուղին, որն անցնում էր Խոյից, դեպի Վան ու Արճեշի, Խլաթի, Բաղեշի, Նփրկերտի վրայով ձգվում էր դեպի Հարավ և միանալով Ամիդին՝ կապվում Միջերկրական ծովի ափերի երկրների հետ[76]:

Միջազգային աշխույժ առևտուրը մեծ չափով նպաստեց առևտրի ու առևտրական ճանապարհների վրա ընկած քաղաքների զարգացմանը: Միջազգային տարանցիկ առևտրի ազդեցությունը զգալի էր մանավանդ այն պատճառով, որ առևտրի զարգացման համար Հայաստանում աշխատանքի հատարակական բաժանման և արհեստագործության կատարելագործման շնորհիվ ներքին նպաստավոր պայմաններ էին ստեղծվել:

Հայաստանն իր արհեստագործական արտադրանքով մեծ չափով մասնակցում էր ծավալված միջազգային այդ առևտրին: Հայաստանից արտահանվող արտադրանքի մի քանի տեսակներ, ինչպես երևում է օտար պատմիչների և, հատկապես, արաբ մատենագիրների վկայություններից, արտաքին շուկայում բավական մեծ համբավ ունեին: Ալ-Իստահրին խազարների մասին խոսելիս գրում է. «Խազարներն իրենք շոր չեն պատրաստում, այլ նրանք իրենց շորերն ստանում են բացառապես Գուրջանից (Վրաստանից) Տարարիստանից, Հայաստանից, Ադերբեյջանից և Ռումից (Բյուզանդիայից)»[77]: Նույն դարի արաբ մատենագիր Ալ-Մուկադասին իր հերթին նշում է. «Ինչ վերաբերվում է Հայաստանին, ապա նա մեծ երկիր է... այնտեղից արտահանում են ծածկոցներ, բրդյա ծածկոցներ, որոնք նշանավոր են և ունեն ստանձին հատ-

---

[76] Sh'u Я. А. Манандян, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен (V в. д. н. эры XV в.н. эры), Ереван, 1930, էջ 165–169:

[77] СМОМПК, вып. XXIX, Тифлис, 1901, էջ 51.

կությունները»[78]: Ալ-Մուկադասին քիչ հետո հայտնում է, որ Դվինից արտահանում են մահուդներ, գորգեր, բազմոցներ և նշանավոր ժանյակներ[79]:

Հայտնի է, թե Իբն-Հաուկալը Դվինի մանածագործական արտադրանքն ինչքան բարձր էր դասում, որ նրա նմանը չէր գտնում «աշխարհի մի ծայրից մինչև մյուսը»: Առանձնապես հայտնի են եղել հայկական գորգերը, որոնց հիշատակությունը հանդիպում ենք Կամա-Վոլգյան բուլղարների մոտ, անգամ Թուրքմենստանում, որտեղ նրանք բարձր են գնահատվել և իբրև շատ թանկարժեք իրեր դասվել են արքային տրվող նվերների մեջ[80]: Հայաստանից արտահանվող արդյունագործական արտադրանքից օտար երկրներում հայտնի են եղել և մեծ տեղ են գրավել նաև «Կարմիր որդան» ներկը ու «դիպակ» և «բողյան» կոչվող շքեղ մետաքսյա գործվածքները:

Որոշ վկայություններ կան նաև Հայաստանից արտահանվող անասունների, գյուղատնտեսական մթերքների, անգամ չինափայտի մասին, որով այնքան էլ հարուստ չէր Հայաստանը:

Երկրում հատկապես միևնույն առևտրական ճանապարհների վրա ընկած քաղաքների մեջ ևս զգալի չափով զարգացել էին առևտուրն ու ապրանքափոխանակությունը: Սակայն առևտրական ուղիներով իրար հետ չկապված քաղաքների միջև համանաբար առևտրական սերտ կապեր չեն եղել: Ավելի հավանական է, որ առանձին գավառների կենտրոն քաղաքների ու տվյալ գավառի միջև ապրանքափոխանակություն և որոշ առևտուր է եղել: Այսինքն գավառների կենտրոններ քաղաքները, առևտրական տեսակետից, այս կամ այն չափով սպասարկել են տվյալ գավառի բնակչությանը: Միաժամանակ կատարվել է նաև հակառակ պրոցեսը: Տվյալ քաղաքը շրջապատող գավառը նրան սպասարկել է գյուղատնտեսական մթերքներով: Գավառի գյուղերն ու ավանները, գյուղատնտեսական մթերքներ են մուծել իրենց գավառի

---

[78] Նույն տեղում, вып. XXXVIII, Тифлис, 1908, էջ 6–7:

[79] Տե՛ս նույն տեղում, էջ 14:

[80] Տե՛ս Материалы по истории туркмен и Туркмении, т. I, Москва-Ленинград, 1939, էջ 238:

կենտրոն հանդիսացող քաղաքներ և դրանով բավարարել նրա բնակչության պահանջները:

Արհեստային արտադրության ու առևտրական հարաբերությունների զարգացման հիման վրա և միջազգային առևտրի բավական զգալի նպաստավոր ազդեցության պայմաններում Հայաստանում զարգանում են քաղաքներն ու քաղաքային կյանքը: Ինչպես ցույց է տվել Հ. Մանանդյանը այս շրջանում ոչ միայն նոր հանդես եկած քաղաքներն են բարգավաճում, այլև զարգանում են հները: Տնտեսական կյանքի մեջ առաջացած նոր երևույթներն իրենց զարգացման ոլորտի մեջ են առնում Հայաստանի նախկին քաղաքները (Դվինը, Վանը, Արճեշը, Խլաթը, Մուշը, Նախճվանը և այլն) նրանց տալով զարգացած ֆեոդալիզմի բնույթին համապատասխան քաղաքների տեսք: Նոր առաջացած քաղաքներից նշանակալից զարգացում են ապրում Անին, Կարսը, Արծնը և ուրիշներ:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Բագրատունյաց շրջանի Հայաստանի քաղաքների մի մասն իրենց ժամանակաշրջանի առումով զարգացած ու շքեղ արհեստագործական քաղաքներ են եղել: Այդ տեսակետից ընորոշ է Անին, ուր պեղումների հետևանքով հայտնաբերվել են անգամ արհեստավորական առանձին թաղամասեր, խանութներ, իջևաններ ու հյուրանոցներ:

Ժամանակակի պատմիչների անուղղակի վկայություններից երևում է, որ հայկական քաղաքները բավական մեծ թվով բնակչություն են ունեցել: Հ. Մանանդյանը հենվելով հայ պատմիչների կողմից տարբեր առիթներով քաղաքների բնակչության թվի մասին հայտնած տվյալների, Արծնի բնակչության մասին Գեորգի Կեդրենիուսի վկայության վրա, ինչպես նաև հաշվի առնելով Անիի և մյուս քաղաքների ընդարձակ արվարձանները, Բագրատունյաց շրջանի խոշոր քաղաքների բնակչության թվի վերաբերյալ մոտավոր հաշիվներ է կատարել և եզրակացրել է. որ դրանք ունեցել են ավելի քան 50.000 և մինչև իսկ 100.000 բնակիչ[81]:

Քաղաքները բավական ընդարձակ տարածություններ են բռնել: Մերձավոր Արևելքի քաղաքների նման դրանք բաղկացած

---

[81] Տես Հ. Մանանդյան, Հայաստանի քաղաքները 10-11-րդ դարերում, Երևան, 1940, էջ 24:

են եղել երեք մասից: Միջնաբերդում բնակվել են առավելապես իշխող խավերը, նրան շրջապատող շահրիստանում տեղավորված են եղել արհեստավորական և առևտրական թաղամասերն ու խանութները: Քաղաքների երրորդ մասը շահրիստանի պարիսպներից դուրս ընկած, այսպես կոչված արվարձանային թաղամասերն են եղել: Դրանցում խղճուկ հյուղակներում ու գետնափոր տնակներում բնակվել են աղքատ խավերը, որոնց մեծ մասի հիմնական զբաղմունքը երկրագործությունն է եղել: .

Դժբախտաբար Հայաստանի միջնադարյան քաղաքներից միայն Անին է քիչ թե շատ սիստեմատիկ պեղվել: Պատերազմի տարիների դադարից հետո 1946 թ., վերսկսվել և այժմ էլ շարունակվում են Դվին քաղաքի պեղումները: Սակայն այս շրջանի մնացած քաղաքների նյութական կուլտուրան, նրանց զարգացման բնույթն ու կոնկրետ աստիճանը դեռևս հիմնականում անհայտ է մնում:

9–11-րդ դդ. քաղաքների ու քաղաքային կյանքի զարգացման և տնտեսական կյանքի ընդհանուր աճի ու աշխուժացման պայմաններում, մանավանդ երկրի ներսում հսկայական հարստությունների կուտակման շնորհիվ սկսում են ծավալվել շինարարական լայն աշխատանքներ: Այդ մասին են խոսում ոչ միայն բազմաթիվ մատենագրական վկայություններն ու վիմական արձանագրությունների հազորդած տեղեկությունները, այլև այդ դարերի նյութական կուլտուրայի մնացորդներն ու մասնավորապես պահպանված հոյակապ կոթողները: Բազմաթիվ օրինակներից բերենք միայն մի քանիսը: Միայն Անիում Բագրատունյաց շրջանում են կառուցվում Աբուղամրենց ս. Գրիգորի, ս. Փրկիչի, Հովվի առաքյալ եկեղեցիները, Անիի հոյակապ կաթողիկեն և այլ կոթողներ: Աշխարհիկ շինություններից նշանավոր են Բագրատունիների ապարանքը, շենքի ներսում կառուցված բաղնիքը, ջրմուղը, Ախուրյան գետի կամուրջները, Անիի աշտարակավոր հսկայական պարիսպները և այլն: Հայտնի է, որ Շիրակի թագավորությունից բացի, Հայաստանի տարբեր շրջաններում ֆեոդալ-իշխանների կողմից նշանավոր եկեղեցիներ ու տաճարներ են կառուցվել: Հիշատակության արժանի են Գագիկ Արծրունու կառուցած Աղթա-

մարի հոյակապ կենտրոնական գմբեթավոր տաճարը, Կարսի տաճարը, Մարմաշենը, Ամբերդի, Կեչառիսի վանքերը և, վերջապես, Խոսրովանուշ թագուհու կողմից Զորագետի հովտում հիմնված Սանահնի ու Հաղբատի վանքերը և շատ ուրիշներ:

Ճարտարապետական հետաքրքիր հորինվածքի շինությունների հետ մեկտեղ տարածվում է նուրբ ու բավական բարձր կատարելության հասած քանդակագործությունը: Բազմատեսակ քանդակները ներկայացրել են նռան, տանձի, խաղողի ողկույզի, ապա ընտանի կենդանիների՝ կովի, եզան, ոչխարի բարելիֆները: Քանդակների մեջ պատկերված են գյուղատնտեսական աշխատանքի զանազան պրոցեսներ՝ խաղողի մշակումը, այգեկությունը, ինչպես նաև կենցաղային զանազան տեսարաններ: Ուշադրավ և հետաքրքիր են Աղթամարի գոտեզարդ գեղաքանդակները և նման տիպի այլ քանդակներ: Թագավորների և իշխանների ապարանքներում բավական տարածում է ստանում որմնանկարչությունը, որը հիմնականում աշխարհիկ բնույթ ուներ:

9–11-րդ դդ. Հայաստանի քաղաքների բնույթը, դրանց զարգացման աստիճանն ու առանձնահատկությունները որոշելիս չպետք է Անիի տվյալները ենթադրաբար վերագրել նաև մյուս քաղաքներին կամ դրանց էլ անվերապահորեն դիտել Անիի պեղումներից հայտնաբերված նյութերի լույսի տակ: Նախ ասենք, որ այդ շրջանի քաղաքներն իրենց բնույթով իրարից տարբերվում և առանձին խմբերի էին բաժանվում: Այնպիսի «քաղաքներ», ինչպիսիք են Արուճը, Բագարանը, Բջնին, Երազգավորսը և ուրիշներ, որոնք հաճախ ռազմավարչական կամ հայրենիք-կալվածքի կենտրոններ էին, հիմնականում երկրագործական բնույթ ունեին: Արհեստագործության ու առևտրի կենտրոններ հանդիսացող քաղաքներից Նախիջևանը, Բաղեշը, Մուշը, Լոռին ու Կապանը ևս ընդգծված երկրագործական բնույթ ունեին:

Անգամ արհեստային արտադրության և առևտրի բավական խոշոր կենտրոններ Դվինը, Վանը, Արծնը, Արճեշը, Խլաթն ու Կարսը քաղաքային կյանքի զարգացման տեսակետից չի կարելի Անիի հետ լիովին հավասարեցնել: Տնտեսապես ու քաղաքականապես ավելի հզոր Բագրատունիներն Անին իրենց մայրաքաղաքը

դարձնելով լայն միջոցներ էին տրամադրում քաղաքի բարեկարգման ու շինության գործին, ամեն կերպ նպաստում առևտրի և արհեստագործության զարգացմանը, իսկ Հայաստանի մյուս քաղաքների զարգացմանն այդպիսի ուղղակի նպաստող ուժ չկար:

Ուշագրավ է, որ Դվինը, որն Անիից հետո երկրորդ նշանավոր քաղաքն էր համարվում, ինչպես ցույց են տալիս պեղումները, տնտեսական կյանքի զարգացման մի շարք կողմերով հետ էր մնում Անիից: Այս շրջանում անգամ Անիում երկրագործությունն արհեստագործական աշխատանքի ու առևտրի կողքին խոշոր դեր էր խաղում, իսկ Անիի դրամա-ապրանքային տնտեսության վերաբերյալ հայտնի փաստերի մեծ մասը վերաբերվում է 12–13-րդ դդ. և ոչ թե Բագրատունյաց շրջանին: Ինչ խոսք, որ Հայաստանի մյուս խոշոր քաղաքներում ևս երկրագործական աշխատանքը խոշոր դեր է խաղացել, իսկ նրանց արհեստագործական արտադրանքի մի մասն էլ միայն ինքնասպառման նպատակ է ունեցել: Ճիշտ է, այդ խոշոր քաղաքները երկրագործությունից արհեստագործության զատվելու հենքի վրա էին առաջացել, սակայն աշխատանքի հասարակական բաժանումը դեռևս բավականաչափ խորացած չլինելու հետևանքով երկրագործությունն այդ քաղաքների բնակչության մի ստվար մասի զբաղմունքն էր:

3. Միասնական համահայկական պետություն ստեղծելու փորձերը

Երկրի ինքնուրույնությունը վերականգնելու հետ միաժամանակ պարզ էր դառնում, որ Բագրատունիների քաղաքական գլխավոր նպատակը խալիֆայությունից լիովին անկախ դառնալն ու բոլոր հայկական հողերը մեկ միասնական կենտրոնացած թագավորության մեջ միավորելն է: Հայ ֆեոդալական իշխանություններն իրենց տիրապետության տակ համախմբելու ուղղությամբ առաջին Բագրատունի թագավորների ջանքերը մասամբ արդեն տեսանք, որ հանդիպեցին Ատրպատականի էմիրների լուրջ դիմադրությանը: Ճիշտ է, Ատրպատականի էմիրներին չհաջողվեց

հասնել Հայաստանի անկախությանը վերջ տալու իրենց նպատակին, սակայն նրանք հայ իշխանների մեջ պառակտում առաջացնելու և նրանց մի մասին թագավորական իշխանությանը հակադրելու միջոցով կարողացան խափանել երկիրը միավորելու ուղղությամբ Բագրատունիների գործնական քայլերը:

Վասպուրականի Արծրունիները, որոնք իրենց տիրույթների լրիվ տեր ու տնօրինողներն էին, 10-րդ դ. սկզբում թագավորի տիտղոս ստանալով ավելի ինքնուրույն դարձան: Դեռ 10-րդ դ. սկզբներին Սյունյաց իշխանությունը և արաբական Ջահապյան ու Կայսիկների ֆեոդալական տները ևս ձգտում էին իրենց տերիտորիաների լրիվ անկախ տերերը դառնալ և գնալով դա նրանց ավելի էր հաջողվում:

Աշոտ Բ-ի մահից հետո դահ բարձրացավ նրա եղբայր Աբասը (928–953): Նրա թագավորության ժամանակաշրջանը խաղաղ անցավ, և ինքն էլ զբաղված էր իր մայրաքաղաք Կարսի շինարարությամբ: Աբասին հաջորդեց որդին՝ Աշոտ Գ-ը (953–977), որը պետության կենտրոնացման համար ավելի վճռական միջոցների դիմեց: Նրա առաջին կարևոր միջոցառումն Անի քաղաքի ընդլայնումն ու այն Բագրատունիների մայրաքաղաք դարձնելը եղավ: 9-րդ դ. վերջերից Հայաստանը փաստորեն համահայկական մայրաքաղաք չուներ: Դվինի համար մղվող պայքարն առայժմ հաջող չէր ընթանում, և, բացի այդ, այն Բագրատունյաց թագավորության կենտրոն հանդիսացող Շիրակից դուրս էր, ուստի չէր կարող նրանց թագավորության մայրաքաղաքը դառնալ: Այդ էր պատճառը, որ Բագրատունիները դահանիստ դարձրին բոլոր կողմերից հարմար Անի ամրոցը:

Նոր մայրաքաղաք տեղափոխվելով Բագրատունիները ուշխատում էին իրենց թագավորությունը համահայկական թագավորություն հռչակելու քաղաքական ընույթ տալ: Այդ նպատակով 961 թ. Անի մայրաքաղաք հռչակվելու հանդեսները, որոնց հրավիրված էին ոչ միայն Հայաստանի, այլև հարևան Վիրքի ու Աղվանքի ֆեոդալները, դուդադիպեցին Աշոտ Գ-ին «թագաւոր ամենայն Հայոց» հռչակելու շքեղությամբ կատարված հանդեսների

հետ[82]: Դրանով Աշոտը կամենում էր ընդգծել երկիրը միավորելու իր ձգտումը և իր առաջնությունն ու այլազգերին իրավունքները մյուս իշխանների հանդեպ: Նա կազմակերպեց կանոնավոր զորք թագավորության շահերը ներքին ոտնձգություններից և արտաքին թշնամիների հարձակումներից պաշտպանելու համար:

Միասնական պետություն ստեղծելու համար մղած պայքարում Բագրատունիները լայնորեն օգտվում էին եկեղեցու ծառայությունից, որի շահերին համահայկական կենտրոնացված պետության ստեղծումը միանգամայն համապատասխանում էր: Իզուր չէ, որ հոգևորականությունն ամեն կերպ եկեղեցու հեղինակությամբ ամրապնդում էր թագավորական իշխանությունը, ապացուցում Բագրատունիների թագավորելու անառարկելի իրավունքը: Եկեղեցին ավելի հարմար ձևով իրենց քաղաքական ձգտումներին ծառայեցնելու համար Բագրատունիները կաթողիկոսական աթոռը կրկին տեղափոխեցին իրենց մոտ՝ Շիրակ: Անանիա Մոկացի կաթողիկոսը 945 թ. թողեց Աղթամարը կողմին և տեղափոխվեց Կարս[83]:

Բագրատունիները, այդ թվում նաև Աշոտ Գ-ը, տեսնելով համեմատաբար ուժեղ իշխանական տների անջատողական ձգտումները, միասնական պետություն ստեղծելու պայքարում աշխատում էին հենվել իրենց սեփական տիրույթներում ապրող հպատակ իշխանների ու մանր ազնվականության վրա: Սակայն այդ ազնվականությունն էլ հենց սկզբից վտանգավոր հանդիսացավ Բագրատունիների համար: Վերջիններս շուտով համոզվեցին, որ հնազանդ ազնվականներն ուժեղանալով ինքնուրույնության էին ձգտում և սկսում պայքարել կենտրոնական իշխանության դեմ: Նոր ալյմանները Բագրատունիներին հարկադրեցին, տիրապետության տարածքային ամբողջությունը պահպանելու նպատակով առանձին դավառների կառավարումը տալ թագավորական տան անդամներին: Սակայն, թույլ տնտեսական կապերի և կենտ-

---

[82] Տես Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, Վաղարշապատ, 1898, էջ 3-4 (այսուհետև՝ Մատթեոս Ուռհայեցի):

[83] Տես Անդրանիկ Օրմանեան, Ազգապատում, Կ. Պոլիս, 1912, էջ 1087, (այսուհետև՝ Ազգապատում):

ռոնից ծայրամասային մարզերի կտրվածության պայմաններում այդ քաղաքականությունը ևս հակառակ արդյունքի հանգեցրեց: Գավառների կառավարիչ նշանակված թագավորական տան անդամները մի սերունդ հետո կորցնում էին կապը կենտրոնի հետ և իրենց անկախ հայտարարում: Այդ սեպարատիզմն ամեն կերպ աջակցություն էր գտնում ինչպես Բյուզանդիայի և Խալիֆայության, այնպես էլ շրջակա ֆեոդալական իշխանությունների կողմից[84]*:*

Տնտեսական համապատասխան նախադրյալների բացակայության հետևանքով Հայաստանը միավորելու և պետական իշխանությունն իրենց ձեռքը կենտրոնացնելու գործում Բագրատունիները չկարողացան լուրջ հաջողություններ ունենալ: Քանի որ նրանց ձգտումները չէին ելնում ռեալ իրականությունից ու երկրի տնտեսական զարգացման ժամանակի պահանջներից մասնատման պրոցեսը դնալով ավելի ու ավելի էր ուժեղանում: 10-րդ դ. երկրորդ կեսին, մասնավորապես երկրի կենտրոնացման համար լուրջ փորձեր կատարող Աշոտ Գ-ի օրոք միավորման փոխարեն Հայաստանում մի շարք մանր թագավորություններ առաջացան՝ հիմնականում Բագրատունյաց թագավորության հաշվին: Ստեփանոս Օրբելյանը Բագրատունյաց թագավորության այդ մասնատման առթիվ գրում է. «Ապա ի նուազել տէրութեանն Բագրատունեաց ... հատեալ, բարժանեալ եղեն ամենայն գահք զլխաւոր նախարարացն Վասպուրականին ... և Զորոյգետացիքն որ Կիւրիկեանքն կոչին, նաև Կարուցն և Վանանդայն որ Բասենք կոչի»[85]*:*

Թեկուզ շատ համառոտակի կանգ առնենք տարաբաժանման այդ պրոցեսի վրա:

Աշոտ Գ-ը մայրաքաղաք տեղափոխելով Անի Կարսի կառավարիչ նշանակեց իր եղբորը՝ Մուշեղ Բագրատունուն, որը երկու տարի հետո՝ 963 թ. իրեն Կարսի ու Վանանդ գավառի թագավոր հռչակեց: Աշոտ Գ-ը հարկադրված էր ճանաչել նրա թագավո-

---

[84] Տե՛ս Очерки истории СССР, период феодализма, часть первая, էջ 599:
[85] Ստեփանոս Օրբելյան, էջ 299:

լությունը, բավարարվելով միայն վասալական հարաբերություններով նրան դահի հետ կապելով[86]: Մուշեղի (963–989) հաջորդների օրոք Վանանդի թագավորությունը ստեղծեց իր սեփական ռազմական ուժը և ավելի հզորացավ:

Վանանդի թագավորության առաջացումից մի քանի տարի հետո՝ 970 թ., Սյունիքի դահերեց իշխան Սմբատը հիմնեց Սյունիքի թագավորությունը: Այդ թագավորությունը համեմատաբար փոքր տերիտորիա էր գրավում, սակայն բավականաչափ խիտ բնակչություն և հարմար լեռնային պայմաններ ուներ, որի շնորհիվ հայկական թագավորությունների մեջ այն բոլորից երկար պահպանեց իր գոյությունը: Սյունիքի թագավորությունը բաժանված էր մանր իշխանությունների և տիպիկ ֆեոդալական նույնպիսի մի թագավորություն էր, ինչպիսին Բագրատունիների և Արծրունիների թագավորություններն էին: Սյունիքի թագավորությունը բարգավաճում և իր ծաղկման գագաթնակետին է հասնում հատկապես Վասակ թագավորի օրով (998–1040)[87]:

Աշոտ Գ-ի թագավորության վերջին տարիներին Հայաստանի հյուսիսային մասում ստեղծվեց Կյուրիկյանների կամ Տաշիր-Զորագետի հայկական թագավորությունը: Աշոտ Գ-ը Տաշիր և Զորագետի գավառները Վիրա-աբխազական թագավորների ոտնձգություններից ազատելու և իր իրավունքներն այդ տերիտորիաների վրա ամրապնդելու նպատակով դեռ 972 թ. այնտեղ կառավարիչ էր նշանակել իր որդի Սմբատին, նրան տալով լայն լիազորություններ՝ Տաշիրից արևելք մինչև Կուր ընկած հողերին տիրելու համար: Աշոտ Գ-ի մահից հետո, երբ Անիում Սմբատ Բ-ը (970–990) դահ բարձրացավ իր կրտսեր եղբայր Գուրգենին նշանակեց Տաշիրի վերակացու, որն էլ իրեն թագավոր հռչակեց[88]:

Այդպիսով, հիմնադրվեց Կյուրիկյանների թագավորությունը, որն իր գոյությունը պահպանեց մինչև 13-րդ դ. սկիզբը: Այն իր առավելագույն հզորությանը հասավ Դավիթ Անհողինի (989–1048)

---

[86] Տես Ադոնիկ, էջ 180:
[87] Տես Ստեփանոս Օրբելյան, էջ 300–309:
[88] Տես Վարդան վարդապետ, էջ 90:

ժամանակ, երբ ի հաշիվ Գանձակի և Թբիլիսի էմիրությունների, հսկայական չափով մեծացրեց իր թագավորության սահմանները[89]:

10-րդ դ. երկրորդ կեսին առաջացած այդ երեք թագավորություններից բացի, ինչպես նշվել է, դեռևս 10-րդ դ. սկզբին (908 թ.) առաջացավ Վասպուրականի թագավորությունը, որի թագավոր Գագիկ Արծրունին ամբողջ Հայաստանի թագավոր դառնալու հավակնություններ ուներ: Սակայն երբ Աշոտ Բ-ը «չահնչահ Հայոց» հռչակվեց, նա ստիպված էր բավարարվել միայն «թագուոր Վասպուրականի» տիտղոսով: Վասպուրականի թագավորությունը հայ Բագրատունիներից հետո, հայկական իշխանությունների մեջ ամենահզորն էր և ընդգրկում էր Վանա և Կապուտան լճերի միջև ընկած բարձր լեռնային շրջաններից մինչև Արաքս գետի հարավային ափերն ու Վանա լճի մերձափնյա բարեխառն կլիմա ունեցող հովիտները:

Հատկապես 10-րդ դ. առաջին կեսին՝ Գագիկ Արծրունու ժամանակ (908–943), Վասպուրականի թագավորությունը տնտեսական և կուլտուրական անշեղ վերելք էր ապրում: Դրան մեծ չափով նպաստում էր նաև այն հանգամանքը, որ միջագետքյան կարավանային առևտրի հարավային ուղին նրա վրայով էր անցնում[90]:

Վասպուրականի, ինչպես նաև Սյունիքի թագավորությունները Բագրատունիների հանդեպ ըստ էության միանգամայն ինքնուրույն իրավունքներից էին օգտվում: Վանանդի և Տաշիր-Զորագետի թագավորությունները թեև համարվում էին Բագրատունիների նկատմամբ վասալական կախման մեջ գտնվող թագավորություններ, սակայն դա հաճախ ձևական բնույթ էր կրում:

Այսպիսով, Հայաստանը 10-րդ դ. վերջերին հինգ առանձին թագավորություններ և գրեթե նույնքան էլ արաբական էմիրություններ ուներ, թեև դրանք լրիվ անկախ չէին Շիրակի Բագրատունիներից և ձևականորեն համարվում էին նրա վասալները: Չնայած երկրի նման տարաբաժանման ու մասնատման աստիճա-

---

[89] Տե՛ս Ասողիկ, էջ 256–257:
[90] Տե՛ս Թովմա Արծրունի, էջ 453–471, 474–477, 477–483, 483–487:

նական ուժեղացմանը, այնուամենայնիվ, Բագրատունիները չէին կորցրել միասնական պետություն ստեղծելու հույսերը:

Սմբատ Բ-ը հարձակվեց Կարսի թագավորության վրա և գրավելով Կարսը՝ փորձում էր վերացնել Վանանդի թագավորությունը և նրա հողերը միացնել Անիի թագավորությանը: Սակայն Անիի թագավորության ուժեղացումից վախենում էին շրջակա բոլոր խոշոր ու մանր ֆեոդալները և, մասնավորապես, Տայքի կյուրոպաղատ Դավիթը (961–1000), որը Վանանդի թագավորությանն օգնելու նպատակով իր բանակով եկավ Շիրակ: Սմբատ Բ-ը հարկադրված էր Մուշեղին վերադարձնել Կարսը և խաղաղության պայմանագիր կնքել նրա հետ[91]:

Սմբատ Բ-ի հաջորդ Գագիկ Ա-ի ժամանակ (990–1020) Բագրատունյաց թագավորությունը հասավ իր տնտեսական ու քաղաքական հզորության գագաթնակետին: Ասողիկը Գագիկ Ա-ի մասին գրում է. «Եւ տիրեաց նա յոլով բերդից և գաւառաց ի սահմանացն Վայոց ձորոյ, Խաչենոյ և Փառիսոսոյ՝ առավել քան զեղբայր իւր. և ոչ ոք էր, որ զարհուրեցուցանէր զՀայաստանեայս մինչև ցօր գրելոյ իմոյ զբան յիշատակիս այսորիկ»[92]:

Անիի թագավորներից ամենից ավելի Գագիկ Ա-ն կարողացավ նրկրի միավորման ուղղությամբ զգալի հաջողությունների հասնել: Նա 1001 թ. ռազմական արշավանքի միջոցով երեք ամսում կարողացավ գրավել իր դեմ ապստամբած Տաշիր-Զորագետի թագավորության գրեթե բոլոր հողերը և նրա թագավոր Դավիթ Անհողինին հարկադրեց ճանաչելու Անիի Բագրատունիների այդ երկրին իրավունքները[93]: Գագիկ Ա-ը համառ ու հետևողական քաղաքականությամբ զգալիորեն ընդլայնեց իր տերության սահմանները: Նա վերջ տվեց Վայոց-Ձորի իշխանությունը և նրա հողերը միավորեց իր թագավորությանը, ապա միացրեց Խաչեն գավառը:

Փառիսոսի արքայական տոհմը 1003 թ. ընդհատվեց. որից օգտվեցին Գագիկ Ա-ն և Գանձակի էմիր Փաղլունը և Փառիսոսի

---

[91] Տե՛ս Ասողիկ, էջ 188:
[92] Նույն տեղում, էջ 256:
[93] Տե՛ս նույն տեղում, էջ 279–280:

թագավորության տարածքը բաժանեցին իրար միջև: Այդ թագավորության հյուսիս-արևմտյան ծայրագավառները մինչև Շամքոր քաղաք անցան Բագրատունյաց թագավորությանը[94]: Գագիկը հարավում Վասպուրականի թագավորությունից գրավեց Կոգովիտ և Ծաղկոտն գավառները[95]:

Այսպիսով, Անիի թագավորության սահմանները Գագիկ Ա-ի ժամանակ տարածվում էին Մանազկերտից մինչև Շամքոր և Բասենից մինչև Խաչեն, իսկ մայրաքաղաք Անին իր զարգացումն ու բարգավաճումն էր ապրում հատկապես այդ ժամանակաշրջանում:

Թվում էր, թե 11-րդ դ. սկզբներին Անիի թագավորության հզորացումն ու հայկական հողերի սկսած միավորումը շուտով իր հաջող վախճանին էր հասնելու: Սակայն Գագիկ Ա-ի անմիջական հաջորդների օրոք դա ոչ միայն չի շարունակվում, այլև հակառակն է կատարվում:

Գագիկ Ա-ի ժամանակավոր հաջողությունից հետո Բագրատունյաց թագավորության մասնատումը ոչ թե բացատրվում է նրա հաջորդների ապաշնորհությամբ (չնայած դա էլ որոշ նշանակություն ուներ), այլ նրանով, որ երկրի միավորման համար դեռևս չկային անհրաժեշտ տնտեսական նախադրյալներ:

Գագիկի մահից հետո նրա որդիների միջև դահակալական վեճեր սկսվեցին: Դրանք ավարտվեցին նրանով, որ Գագիկ Ա-ի ավագ որդի՝ Հովհաննես-Սմբատը (1020–1041) ժառանգեց հոր գահը՝ Անի քաղաքը և Շիրակը, իսկ կրտսեր որդի Աշոտին բաժին ընկան Սևանի ավազանի և Կուր գետի հովտի որոշ գավառներ[96]: Դրանով Բագրատունյաց թագավորությունը երկու մասի բաժանվեց և թուլացավ, իսկ վասալ թագավորություններն ավելի քան անկախ դարձան:

Անիի թագավորության հզորացմանը խանգարում և նրա մեջ ներքին երկպառակություններ առաջացնելուն նպաստում էր Բյուզանդական կայսրությունը: Այն գերադասում էր Հայաստա-

---

[94] Տե՛ս նույն տեղում, էջ 283:
[95] Տե՛ս նույն տեղում, էջ 278:
[96] Տե՛ս Արիստակես Լաստիվերտցի, էջ 9:

նում գործ ունենալ իրար հետ պայքարող և իր անմիջական օգնությանն ու միջամտությանն անընդհատ դիմող թույլ դինաստիաների հետ: Նրա այդ քաղաքականությանը նպաստում էին հայկական և վրացական ֆեոդալական տները, որոնք առաջին շրջանում ողջունում էին Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը և իրենց հերթին օժանդակում էին դեպի Հայաստանի խորքեր նրա առաջխաղացմանը: Նրանց այդ քաղաքականությունը, ինչպես ցույց տվեցին հետագա դեպքերը չափազանց տխուր հետևանքներ ունեցան հենց այդ տների համար[97]*:*

Այդ տեսակետից չափազանց բնորոշ է Բյուզանդիայի կողմից Կայսիկների էմիրության գրավման պատմությունը: Տարոնի Բագրատունիներն աշխարհագրական տեսակետից ընկած լինելով Բյուզանդիայի և Կայսիկների միջև՝ աշխատում էին երկու կողմերի հետ էլ խաղաղ հարաբերություններ պահպանել: Միևնույն ժամանակ նրանք Բյուզանդիայի համար քաղաքական հետախուզության դեր էին կատարում, որի համար հատուկ վարձատրություն էին ստանում: Վասպուրականի Արծրունիները նույնպես իրենց հարևան Կայսիկներին թուլացնելու նպատակով ամեն կերպ աշխատում էին Բյուզանդիային հանել նրանց դեմ: Այդ քաղաքականությունը հանգեցրեց նրան, որ Բյուզանդիան գրավելով Կայսիկների էմիրությունը և քանդելով Բերկրին ու թուլացնելով Խլաթը, դեռևս 10-րդ դ. 30-ական թվականներին հաստատվեց Հայկական լեռնաշխարհի կենտրոնական մասում և ցանկացած ժամանակ կարող էր սպառնալ ինչպես հայկական, այնպես էլ վրացական իշխանությունների ու թագավորությունների գոյությանը: Ինչպես հայտնի է, Տարոնի իշխան Աշոտ Բագրատունու մահից հետո Բյուզանդիան՝ վերջ տալով այնտեղի ֆեոդալական ինքնուրույն իշխանությանը, այն միացրեց իրեն. «Եւ ապա ՆԺԵ (996 – Վ.Բ.) թուականին խաւարեցաւ արեգակն. և վախճանեցաւ Տարօնոյ իշխանն Աշոտ: Եւ Տարօնոյ Հոռոմք տիրեցին»[98]*:*

---

[97] Հմմտ. Очерки истории СССР, период феодализма, часть первая, էջ 613:
[98] Ասողիկ, էջ 183:

Տարոնի իշխանությունը ոչնչացնելուց հետո բյուզանդացիները գրավեցին Մանազկերտը և հիմնովին ավերեցին նրա պարիսպները՝ «...ի հիմանց բրնալ խրամատեաց զպարիսպ նորա»[99]:

Հայ ֆեոդալների համար պարզ դարձավ, որ Հայաստանի արևմտյան ու կենտրոնական շրջանների գրավմանն անխուսափելիորեն հետևելու են Բյուզանդիայի նոր հարձակումները նաև մյուս հայկական և վրացական թագավորությունների և անկախ իշխանությունների վրա: Իրոք, Վասիլ Բ կայսրը (976–1025) Դավիթ Կյուրոպաղատին հարկադրեց, որպեսզի Տայքը կայսրությանը կտակի: 1021 թ. Բյուզանդիային հաջողվեց վերջ տալ Արծրունիների թագավորությանը և Վասպուրականը կցել կայսրությանը, իսկ մինչ այդ նրան արդեն հաջողվել էր գրավել նաև Տայքը: Վրաց Բագրատունիները իրենց համարելով Դավիթ Կյուրոպաղատի օրինական ժառանգորդը, չէին հաշտվում Տայքը Բյուզանդիային կցվելու փաստի հետ և Անիի ու Վանանդի թագավորների օգնությամբ պայքարում էին այն Բյուզանդիայից հետ խլելու համար: Սակայն բյուզանդական բանակը Վանանդի վրայով Վրաստանի սահմաններ խուժելով հաղթանակ տարավ, իսկ պարտված վրաց թագավոր Գեորգի Ա-ը (1014–1027) նահանջեց երկրի խորքերը:

1022 թ. Տրապիզոնում, երբ Վասիլ Բ-ի և Գեորգի Ա-ի միջև հաշտության բանակցություններ էին ընթանում, Անիի թագավորությունից այդ բանակցություններին մասնակցող Պետրոս Ա Գետադարձ կաթողիկոսը (1019–1054) համաձայնվեց Անիի թագավորությունը Բյուզանդիային անցնելու կայսեր պահանջի հետ, իսկ թուլամորթ Հովհաննես-Սմբատը Բյուզանդիայի և բյուզանդամետ կենտրոնախույս ֆեոդալների, ինչպես նաև կաշառված կաթողիկոսի ճնշման տակ ստորագրեց այն չարաբաստիկ կտակը, որի համաձայն Անիի Բագրատունյաց թագավորությունն իր մահից հետո պետք է միացվեր կայսրությանը[100]:

Անիի թագավորության մեջ, հատկապես նրա գոյության վերջին տասնամյակում շատ ուժեղ էր բյուզանդական ազդեցությու-

---

[99] Նույն տեղում:
[100] Տե՛ս Արիստակես Լաստիվերտցի, էջ 11–13:

նը, որը թագավորության ներսում ներքին ուժեղ պայքարի տեղիք էր տալիս: Սակայն բյուզանդական ազդեցության ուժեղացումն առաջին հերթին Անիի Բագրատունյաց թագավորության թուլության հետևանք էր: Այդ առումով միանգամայն բնական է, որ Գագիկ Ա-ի օրոք Շիրակի թագավորության առավել հզորացման շրջանում բյուզանդական ազդեցությունը երևան չէր գալիս, իսկ նրա թույլ հաջորդների ժամանակ այն բավական ուժեղ զգացվում էր: Բացի այդ, եթե երկրի կենտրոնացման համար հարմար պայմաններ լինին, ապա այն կարող էր միավորվել՝ մինչև Բյուզանդիան կկարողանար իր սահմաններն ընդարձակել ու ազդեցությունը տարածել կենտրոնական Հայաստանում: Հետևաբար, Հայաստանի միավորումը խանգարելու գործում Բյուզանդական կայսրության խաղացած դերը չժխտելով հանդերձ, չենք կարող այն դլխավոր պատճառ համարել: Դրա հիմնական պատճառները պետք է այլ երևույթների մեջ փնտրել:

Անտարակուսելի է, որ համահայկական միասնական պետություն չստեղծվելու հանգամանքը երկրի ներքին կյանքի զարգացման պայմաններից էր բխում և նրա ուղղակի արդյունքն էր: Հայաստանի տնտեսական զարգացումը 9—11-րդ դդ. ոչ միայն միավորման հիմք չէր տալիս, այլև ընդհակառակը նրա մասնատման հարմար նախադրյալներ էր ստեղծում:

Երկրի առանձին նահանգների, հաճախ նաև գավառների միջև բացակայում էր տնտեսական կապը և յուրաքանչյուր նահանգ ինքնաբավ տնտեսական միավոր էր՝ համախմբված սեփական կենտրոնի շուրջը:

Քաղաքների գերակշռող մասը դարձել էին ֆեոդալական կալվածքի կենտրոններ և իրենց շուրջը համախմբելով շրջակա գավառները, նպաստում էին նրա տնտեսական ու քաղաքական ուժեղացմանը և տվյալ իշխանի անջատողական ձգտումներին: Ամեն մի խոշոր իշխան ուներ հսկայական տնտեսական հնարավորություններ, տեր էր դարձել ընդարձակ գավառների, ուներ սեփական զորք ու սեփական վարչական իշխանություն: Այդ իշխանները միանգամայն անկախ պատերազմ էին հայտարարում, հաշտություն կնքում, հպատակ բնակչությունից հարկեր հավաքում, մի

խոսքով, իրենց տիրույթների սահմաններում լրիվ տեր ու տնօրինող էին: Նրանց իշխանություններն ինքնուրույն, գերպետական նատուրալ կյանք էին վարում և տնտեսական կապերով կապված չէին միմյանց հետ: Նման պայմաններում պարզ է, որ երկրի միավորման խնդիրը ոչ միայն չէր կարող հաջողություն ունենալ, այլև այն աստիճանաբար պիտի ավելի մասնատվեր, քանի որ առաջացած թագավորություններից ու իշխանություններից բացի, նոր բարձրացող ֆեոդալները տնտեսապես ու ռազմապես ամրապնդվելով նույնպես ինքնուրույնության էին ձգտում: Պատահական չէր, որ չնայած Բագրատունյաց թագավորների ջանքերին, երկրի տարաբաժանումն աստիճանաբար ավելի ու ավելի էր խորանում: Մասնատման պրոցեսն այնքան ուժեղ էր, որ 10-րդ դ. երկրորդ կեսին անկախություն ձեռք բերած թագավորություններից բացի, նույն դարի վերջին Վասպուրականը բաժանվեց երեք անկախ իշխանությունների, իսկ քիչ անց, ինչպես նշվեց հենց ինքը՝ Շիրակի թագավորությունը, երկու մասի բաժանվեց:

Այնքանով, որքանով Բագրատունյաց թագավորների ձգտումները չէին ելնում ժամանակի իրական կյանքի պահանջներից, ավելի ճիշտ քանի որ Հայաստանի տնտեսական կյանքի զարգացումը դեռևս երկրի միավորման անհրաժեշտությանը չէր հասել, կենտրոնախույս ուժերին սանձահարելու, և հայկական հողերը միավորելու Բագրատունիների ձգտումները կարող էին միայն մասնակի հաջողություն ունենալ, ինչպես, օրինակ, Գագիկ Ա-ի ժամանակ, սակայն ընդհանուր առմամբ այն անհաջողության էր հանգելու:

Բագրատունիների համար սոցիալական հենարան պետք է հանդիսանային քաղաքային առևտրավաշխառուական և արհեստավորական շերտերը, որոնք տուժում էին երկրի մասնատվածությունից, հետևաբար և շահագրգռված էին նրա միավորման մեջ: Արհեստագործությունն ու առևտուրը, ինչպես արդեն տեսանք, բավականին զարգացած էին, սակայն դրանց վերելքը նախ սահմանափակ բնույթ ուներ և, երկրորդ, այնպես ընթացավ, որ չկարողացան սերտորեն կապվել ու ուղղություն տալ երկրի ամբողջ տնտեսությանը:

Արհեստագործությունը, առևտուրն ու ընդհանրապես քաղաքային կյանքն ուժեղ զարգացան Հայաստանի կենտրոնական մասի, գլխավորապես առևտրական ճանապարհների վրա գտնվող մի քանի խոշոր քաղաքներում, որոնցից ոչ մեկը չկարողացավ երկրի ընդհանուր առևտրի և արհեստագործության կենտրոնի դեր կատարել, իսկ դրանց մի մասն ինքնամփոփ նատուրալ կյանքով էր ապրում:

Ծայրամասային հատկապես լեռնային շրջանները, ուր բնակչության բացարձակ մեծամասնությունն անասնապահությամբ էր զբաղվում հին, նատուրալ տնտեսական կյանքով էին ապրում:

Առաջ եկած խոշոր քաղաքներն ամբողջ երկրի և, առանձնապես, ծայրամասային շրջանների տնտեսություն իրենց ոլորտում չէին ընդգրկել, ուստի չէին կարողացել վերջիններիս տնտեսական զարգացման մեջ քիչ թե շատ շոշափելի փոփոխություն մտցնել:

Առևտրի ու արհեստագործության զարգացումը ոչ թե հանգեցրեց երկրի տարբեր շրջանների միջև տնտեսական կապերի առաջացման ու միասնական կենտրոնի շուրջ դրանց համախմբմանը, այլ տվյալ էտապում հանգեցրեց այնպիսի քաղաքների առաջացմանը, որոնք կարողացան իրենց շուրջը համախմբել միայն շրջակա գավառները կամ տվյալ նահանգը:

Միասնական պետության բացակայությունն ու ֆեոդալական երկպառակությունները երկիրը ոչ միայն զրկել էին հետագա լուրջ ու երկարատև զարգացման հնարավորությունից, այլև այն խիստ թուլացրել էին արտաքին վտանգի հանդեպ: Սելջուկյան արշավանքների վտանգի առաջացման ու Բյուզանդական կայսրության նվաճողական քաղաքականության ուժեղացման պայմաններում Բագրատունյաց պետությունը յուրահատուկ քաղաքական ճգնաժամ էր ապրում:

Մինչև սելջուկյան ռեալ վտանգի վրա հասնելը, Բյուզանդիան կարողացավ նվաճել Շիրակի թագավորությունը: Հովհաննես-Սմբատի և նրա եղբայր Աշոտի մահից հետո (1041 թ.) Բյուզանդական կայսրությունը Հովհաննես-Սմբատի կտակը հիմք ընդունելով հատուկ բանակ ուղարկեց գրավելու Անին: Քաղաքի բնակչությունը ծերունի սպարապետ Վահրամ Պահլավունու

գլխավորությամբ հանկարծակի հարձակեց ու մեծ ջարդ տվեց բյուզանդական բանակին և Անիում թագավոր հռչակեց Աշոտի տասնվեցամյա որդի Գագիկ Բ-ին (1042–1045): Սակայն, Բյուզանդիայի Կոստանդին IX Մոնոմախ կայսրին (1042–1054) հաջողվեց իր կողմնակից հայ ֆեոդալների օժանդակությամբ ենթադրաբար իր մոտ հրավիրել ու բանտարկել Գագիկ Բ-ին: Դրանից հետո էլ Անիի բնակչությունը Վահրամ Պահլավունու գլխավորությամբ կարողացավ մի քանի անգամ հետ մղել բյուզանդական զորքերի գրոհները: Սակայն վերջիվերջո անեցիների հերոսական դիմադրությունը խորտակվեց և 1045 թ. քաղաքն ու ամբողջ Շիրակի թագավորությունը միացվեցին Բյուզանդական կայսրությանը[101]:

Բյուզանդիան Շիրակի թագավորությանը վերջ տալով, կարողացավ Հայաստանն իր տիրապետությանը ենթարկել մի կարճ ժամանակով միայն, որի ընթացքում այն երկիրը կառավարում էր հատուկ կառավարիչների՝ կատապանների միջոցով: Բյուզանդացիներն իրենց կարճատև տիրապետության հենց սկզբնական շրջանից սկսած Հայաստանը ռազմական ուժից զրկելու քաղաքականություն էին վարում, որի վտանգավորությունը զգացին սելջուկյան արշավանքների ահավոր վտանգի կապակցությամբ և վերջում փոխեցին իրենց քաղաքականությունը, սակայն արդեն ուշ էր:

Քանի որ բյուզանդական տիրապետությունը Հայաստանի հասարակական ու տնտեսական կյանքի զարգացման մեջ քիչ թե շատ զգալի փոփոխություններ չմտցրեց, այդ շրջանը պետք է ուսումնասիրել Բագրատունյաց էպոխայի հարցերի ուսումնասիրությանը համատեղ: Հաստատված սելջուկյան տիրապետությունը զգալի փոփոխություններ մտցրեց Հայաստանի տնտեսական կյանքում, ուստի և այդ շրջանի հողային հարաբերությունների քննարկումը մեր քննության շրջանակներից դուրս է:

Այսպիսով, Բագրատունյաց տիրապետության ժամանակաշրջանում երկրի տնտեսական ու քաղաքական կյանքում վճռական դեր էին խաղում ֆեոդալ իշխանները: Նրանց տնտեսական կարողության ուղղակի բազան էր արտադրության հիմնական միջոց հողին մասնավոր սեփականության իրավունքով տիրելը:

---

[101] Տես նույն աեղում, էջ 54–56, 58–62:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԽՈՇՈՐ ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ՀՈՂԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ

1. Գյուղատնտեսությունը և գյուղատնտեսական տեխնիկան

Հնուց ի վեր հայ ժողովրդի հիմնական զբաղմունքը երկրագործությունն է եղել, որն անասնապահության հետ երկրի հարստության ամենակարևոր աղբյուրն է հանդիսացել: Հայաստանում զարգացած են եղել հողագործության այնպիսի կարևոր ճյուղեր, որպիսիք էին դաշտավարությունը և այգեգործությունը: 9–11-րդ դդ. հայ ժողովուրդն ուներ երկրագործական զբաղմունքի հարուստ փորձ ու դարավոր կուլտուրա և զարգացման բավական բարձր աստիճանում գտնվող գյուղատնտեսական տեխնիկա:

Հայաստանում վաղուց էին անցել գութանի կիրառությանը, սակայն մանավանդ լեռնային շրջաններում դեռևս գերիշխում էր փայտե արորը: Անիի պեղումների ժամանակ գտնվել են ծանր գութանի մնացորդներ[102]: Նույն տիպի գութանի մի քանի պատկեր պահպանվել են բարձրաքանդակների մեջ, «որոնք բոլորն էլ վկայում են այն մասին, որ այդ ծանր գութանը գոյություն է ունեցել նաև Հայաստանում Բագրատունյաց տիրապետության օրով՝ 9-ից մինչև 11-րդ դարերում»[103]:

9-րդ դ. երկրագործության մեջ ծանր գութանի մուտ գործելը խոշոր առաջադիմական քայլ էր: Ծանր գութանը, որն աշխատեցնում էին երեք լուծ եզների՝ «վեցկէի» միջոցով, հնարավորություն էր տալիս հողն ավելի խորը հերկելու, ինչը բարելավում էր հողի մշակման տեխնիկան և բարձրացնում նրա բերքատվությունը[104]:

---

[102] Ի. Օրբելի, Каталог Анийского музея древностей, СПБ, 1910, էջ 115:

[103] Կ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., էջ 156:

[104] Տես Очерки истории СССР, период феодализма, часть первая, էջ 590:

Մատենագրական աղբյուրներում վկայություններ կան, այն մասին որ այդ ժամանակ կատարվում էր հողերի պարարտացում՝ մոխրով և գոմաղբով: Դավիթ Ալավկա որդու ԿԴ կանոնով արգելվում է գոմաղբի վաճառքը և գնումը. «... ոմանք որ զախտ իշոյ և ձիոյ վաճառեն և գնեն այլոց անիծի վաճառն նոյնպէս և գնաւղն ...[105]:

Անշուշտ, գոմաղբը գնում էին հողերը պարարտացնելու համար և ոչ թե մի այլ նպատակով: Հողերի պարարտացումը երկրագործության առաջադիմության տեսակետից նշանակալից երևույթ էր:

Առանց արհեստական ոռոգման Հայաստանի հատկապես հարթավայրային շրջանները վեր էին ածվում անմշակ տարածությունների: Այդ է պատճառը, որ դեռ նախնադարյան շրջանից ֆիզիկական հսկայական աշխատանքի գործադրումով, պրիմիտիվ աշխատանքային գործիքներով, ճեղքել էին ժայռերը և տասնյակ կիլոմետր հեռավորությունից անցկացրել ջրանցքներ ու առուներ և օգտվում էին արհեստական ոռոգման սիստեմից:

Այս շրջանում վերանորոգում ու օգտագործում էին գործածությունից դուրս եկած հին ջրանցքները և միաժամանակ նոր ջրանցքներ անցկացնում, ինչպես Այրարատում, այնպես էլ Սյունիքում ու Վասպուրականում:

Հայաստանում ջրի կատարած խոշոր դերով է բացատրվում այն հանգամանքը, որ այստեղ հողատիրությանն այս կամ այն չափով ջրային իրավունքի հետ միաձուլված էր հանդես գալիս: Ոռոգման նպատակով ջրից օգտվելը կալվածատիրոջ և գյուղական համայնքների միջև բավական բարդ հարաբերություն էր ստեղծում, մանավանդ, եթե ջրանցքն անցնում է տարբեր սեփականատերերի հողերի միջով:

Սմբատ Գունդստաբլը հավանաբար, նկատի ունենալով ջրի համար վաղուց ի վեր մղվող պայքարն ու չլուծվող վեճերը, նրան տիրելու հետևյալ կարգն է սահմանել: «Եւ ջուր հանել ի գետոյ

---

[105] ՀՍՍՌ Սինիստրների սովետին կից պետական Ձեռագրատուն (Մատենադարան) ձեռ. № 839, էջ 70 բ (այսուհետև՝ Մատենադարան):

ջրելոյ կամ ջաղցնոց համար, չկարէ ոք արգելուլ, կամ ասել թէ՝ սինոօն իմ է, մի հանել ջուրը, կարեն հանել և տանել խանդկով ընդ ամէն մարդոյ գնտոնները՝ ի յիւր հողն և չինել դինչ իր պետնայ և չէ այն ջուրն քանց այնոր, որ տարաւ զայն ջուրն հայրենիք իւր սեփական»[106]:

Ցեղդալը եթե իր միջոցներով էր անցկացնում կամ վերանորոգում ջրանցքը, գյուղական համայնքին սովորաբար միայն ավելցուկ ջուր էր տալիս և դրա փոխարեն պատկառելի հարկ վերցնում, իսկ իրեն անհրաժեշտ եղած դեպքում համայնքին կարող էր ամբողջովին զրկել ջրից օգտվելու իրավունքից, ինչը բողոք ու դիմադրություն էր առաջացնում վերջինիս կողմից:

Առանձին գյուղերի միջև ևս ջրից օգտվելու առթիվ վեճեր ու դժտություններ էին առաջանում: Արուճի 867 թվակիր արձանագրության մեջ խոսվում է մի այդպիսի բնորոշ դեպքի մասին: «ՅԺԶ թուականին Հայոց յիշխանութեան (Աշ)ոտոյ եւ տերութեան Սմբատայ Հայոց սպարապետի Բագրատունոյ եւ կաթողիկոսութեան Զաքարիայի եղեւ կռիւ ընդ յԱրուճ եւ ընդ Կոշ եւ գաւառն: Եհար Արուճ զԿոշ եւ զգաւառն եւ կալաւ յԿոշայ վանականն եւ ի Քրթավանին ընդ Անկին մինթանի վաճառեցին: Եւ Գրիգոր որդի Վռամայ, ծառայ Սմբատայ Բագրատունոյ եկի հրամանաւ Սմբատայ եւ ես հաւասարեցի զՋուրն ընդ Կոշ և ընդ յԱրուճ... Ա եւ կէս Կոշայ եւ Ա արուճ ...»[107]: *Ինչպես տեսնում ենք, ջրից օգտվելու համար հարևան համայնք-գյուղերի միջև կռիվ է սկսվում, որը վերջանում է նրանցից մեկի Արուճի հաղթանակով: Դրանց ներքին պայքարին ու վեճերին միջամտում է Սմբատ սպարապետը, որն ուղարկում է իր գործակալին ու ջրի նոր վերաբաժանում կատարում:*

Հայաստանի հարթավայրային շրջաններում ջրի կատարած խոշոր դերով է բացատրվում այն հանգամանքը, որ Սխիթար Գոշն «Աշխարհական յօդուածք»-ի Ժ հոդվածում հատուկ շեշ-

---

[106] Սմբատ Գունդստաբլ, Դատաստանագիրք, էջ 20:

[107] Օգտվում ենք Կ. Ղաֆադարյանի Արձանագրությունների ժողովածու, ձեռագիր աշխատությունից, հմմտ. Վիմական տարեգիր, էջ 3:

տում է. «Այլ գետք յորոց հոսին սահմանայ ոչ է, բայց ասա որ հասանեն»[108]:

Մեր երկրի լեռնային պայմանների պատճառով գետերը լեռնային մասերից էին սկիզբ առնում, որտեղ տեղանքի անբարենպաստության և տեղումների համեմատաբար սաստության հետևանքով արհեստական ոռոգումից դրսեթե չէին օգտվում:

Հարթավայրային շրջաններում, ուր տեղումների քանակը համեմատաբար քիչ էր, ընդհակառակը, արհեստական ոռոգումը գյուղատնտեսության համար ոչ միայն կարևոր նշանակություն էր ստանում, այլև կենսականորեն անհրաժեշտ էր: Այդ է պատճառը, որ Դատաստանագրքի հեղինակը գետերից օգտվելու իրավունքը վերապահում է հենց հարթավայրերում բնակվողներին՝ «առ որ հասանեն» գետերը: Իսկ նրա ասածը, հասկանալի է, որ լեռնային մասերի բնակչությանն է վերաբերվում:

Երկրագործության մեջ հիմնական զբաղմունքը հացահատիկային կուլտուրաների՝ ցորենի, գարու, կորեկի մշակումն էր: Ախուրյանի հովիտը՝ Վանանդ և Շիրակ գավառները, Բասենի դաշտը, Տարոնն ու Ալաշկերտի հովիտը համարվում էին հացի շտեմարաններ: Դաշտավարությունը ոչ միայն բավարարում էր երկրի հացի պահանջը, այլև այն արտահանվում էր նաև ուրիշ երկրներ: Արաբ մատենագիր Տաբարին վկայում է, որ Հայաստանն այնքան հարուստ էր հացահատիկներով, որ իր ցորենն արտահանում էր մինչև իսկ Բաղդադ[109]: Ցորենը սովորաբար պահվում էր տիրոջ տան մոտ հատուկ պատրաստված հորերում[110]: Հացահատիկների աղումը ջրաղացի միջոցով էր կատարվում, իսկ տնային կարիքները հոգալու համար որպես օժանդակ միջոց օգտագործվում էր երկանքը:

Սկզբնաղբյուրներից երևում է, որ ջրաղացը մասնայական մասշտաբով երևան է գալիս Բագրատունյաց շրջանում, քանի որ մատենագրության մեջ դրանից առաջ նրա հիշատակությանը

---

[108] Սխիթար Գոշ, Դատաստանագիրք, էջ 327:
[109] Տե՛ս J. Laurent, նշվ. աշխ., էջ 38:
[110] Սխիթար Գոշ, Դատաստանագիրք, էջ 329:

գրեթե չենք հանդիպում: Հետևաբար այն հնում ընդհանուր գործածություն չի ունեցել:

Ջրաղացի հանդես գալով հացահատիկային կուլտուրաների իրացումը խոշոր չափով հեշտանում է, թեթևանում նրանց աղալու վրա ծախսվող աշխատանքը, և դրա շնորհիվ տնտեսվում է հսկայական բանվորական ուժ: Այդ իսկ տեսակետից ջրաղացի կիրառումն ընդհանրապես գյուղատնտեսության, մասնավորապես գյուղատնտեսության տեխնիկայի զարգացման տեսակետից խոշոր առաջադիմական քայլ էր:

Երկրագործությամբ էին զբաղվում ոչ միայն գյուղերում, այլև, ինչպես նշվել է, քաղաքում, քանի որ միջին դարերում երկրագործությունը քաղաքի բնակչության մի ստվար մասի հիմնական զբաղմունքն էր: Ինչպես նկատել է Կ. Ղաֆադարյանը «Դվինում երկրագործությամբ են պարապել ոչ միայն քաղաքի արվարձանների բնակիչները, այլև քաղաքի կենտրոնական թաղում ապրողները»[111]:

Հայաստանում խոշոր չափով մշակում էին նաև յուղատու և թելատու բույսեր՝ քունջութ, կտավատ, բամբակ, կանեփ, ինչպես նաև զանազան պարտեզային կուլտուրաներ ու խոտաբույսեր:

Երկրագործության մյուս կարևոր ճյուղն՝ այգեգործությունն էր, որը շատ դավառներում բնակչության հիմնական զբաղմունքն ու եկամտի գլխավոր աղբյուրն էր:

Հայաստանը միշտ էլ հայտնի է եղել, որպես խաղողով ու մրգատու այգիներով հարուստ երկիր: Մատենագրական բազմաթիվ վկայություններից ու պեղումների ժամանակ ի հայտ եկած այգեգործական կուլտուրաների ոչ սակավ մնացորդներից երևում է, որ Հայաստանի տաք կլիմա ունեցող մի շարք վայրերում՝ մասնավորապես Արաքսի հովտի Արևիք գավառում, տարածված էր ենթաարևադարձային կուլտուրաների՝ թզի, սեխի, ձմերուկի, տանձի, խնձորի, սալորի, ծիրանի և դեղձի մշակումը: Միայն Դվինում 1949 թ. պեղումների ժամանակ ի հայտ եկան մեծ քանակությամբ գյուղատնտեսական մթերքների մնացորդներ: Բայի

---

[111] Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, էջ 242:

Դվինի համար սովորական դարձած ցորենի և կորեկի պաչարներից, այնտեղ գտնվեցին նաև խաղողի, ձմերուկի, սալորի կորիզներ և կաղնի կճեպ: Նույն տեղում գտնվեցին նաև երկանքի բեկոր, սանդաքար և կենդանիների ու թռչունների բազմաթիվ ոսկորներ[112]:

Արարատյան դաշտում մշակվում էին խաղողի տարբեր տեսակներ: Խաղողը և նրա հիման վրա զարգացող գինեգործությունը տնտեսության մեջ շատ կարևոր դեր էին խաղում: Պատահական չէ, որ նրա ողկույզը հայկական քանդակագործության ամենասիրված մոտիվն է եղել:

Փաստերը ցույց են տալիս, որ Հայաստանում ծանոթ են եղել գյուղատնտեսական վնասատուների դեմ պայքարելու ժամանակի առումով, բավականաչափ բարդ ձևերին: Ներսես Շնորհալին իր քարոզներում այգեգործ կրոնավորներին հանդիմանում էր նրա համար, որ նրանք հանդիպելիս ոչ թե աղոթքի, հոգու ողջության, պատերազմի կամ խաղաղության մասին էին հարցնում իրար, այլ «... թէ յայսմ ամի՝ ով եղբայր զի՞ արդ է պտղաբերություն քոյին տնկոցն. առաւե՞լ է՝ թէ նուազ: Եւ նա թախծեալ սրտիւ պատասխանէ, զինչ ասացից (ասէ) զաղէտսն՝ որ պատուհեցան, զի ոմանք ի խճճեաց վնասեցան, և յոմանց ծաղիկքն թօթափեցան, և այլքն արևակէզ եղեալ ողկուզաց չորացան, և կէսք՝ նեխութեամբ ապականեցան, և թէ զի՞նչ արարից՝ անգիտանամ զելս վտանգիս եղելոյ: Եւ ընկերն թելադիր եղեալ նմին՝ խրատ տայ, զոմանս պատուաստել ի տնկոցն՝ որք պտղակորոյսք լինին և զայլսն՝ զանազան փորձեալ հնարիւք բժշկեալ ի պատահելոց կրիցն»[113]: Հետևաբար, այգեգործությամբ զբաղվողները պտղատու ծառերի որոշ հիվանդությունների առաջն առնելու համար գիտեին օգտվել տնկիների պատվաստումից կամ ուրիշ այլ միջոցներից:

Ճիշտ է, Ներսես Շնորհալու խոսքերը 12-րդ դ. են պատկանում, սակայն հավանական է, որ վնասատուների դեմ պայքարելու այդ եղանակը գոյություն է ունեցել նաև 10–11-րդ դդ., մանավանդ, որ գյուղատնտեսության մեջ փոփոխությունները շատ

---

[112] Տե՛ս նույն տեղում, էջ 72:

[113] Թուղթ ընդհանրական, արարեալ Ներսիսի Շնորհալւոյ, ի ս. Էջմիածին, 1865, էջ 31:

դանդաղ էին կատարվում, և ժամանակագրական տեսակետից նրանք այնքան էլ հեռու չեն ընկած իրարից:

Այդիններն արորով կամ գութանով նպատակահարմար չէր հերկել, որովհետև մրգատու ծառերը դրանից կվնասվեին: Այդ իսկ պատճառով էլ դրանք հիմնականում բահով էին մշակվում: Աղթամարի տաճարի 10-րդ դ. պատկանող քանդակազարդ գոտու հատվածաններից մեկում շինականը բահով խաղողի այգի է փորում: Ճիշտ նույն ձևի բահ գտնվել է նաև Դվինի միջնաբերդում 1949 թ. պեղումների ժամանակ:

Սակայն Հայաստանի շրջանները տարբեր տնտեսական բնույթ ու ընդգծված տեղական առանձնահատկություններ ունեին և երկրագործական զարգացման նույն աստիճանների վրա էին կանգնած: Այն ժամանակ, երբ երկրի հարթավայրային մի շարք գավառներում երկրագործական ու հացահատիկային կուլտուրաների մշակումը բավականաչափ զարգացած էր, լեռնային շատ շրջաններ երկրագործական զարգացման տեսակետից պրիմիտիվ աստիճանի վրա էին գտնվում: Թովմա Արծրունու վկայությամբ Սասունի և Խութի բնակիչները 9-րդ դ. կեսերին «զպէտս կերակրոցն վճարեն ի սերմանց ինչ, առաւել ի կորնակ կոչեցեալ սերմանէն, զոր ոմանք ի սով ժամանակի հաց անուանեն. և զնոյն ուռդեալ ոտիւք ի միջոցս պրակացն, կամ երկմատնի փայտատովք սերմանեալ»[114]:

Այնուամենայնիվ երկրագործությունն իր երկու գլխավոր ճյուղերով՝ դաշտավարությամբ ու այգեգործությամբ եղել է հայ ժողովրդի հիմնական զբաղմունքը և նրա եկամտի գլխավոր աղբյուրը:

Հարթավայրային շրջաններում տնտեսության մեջ երկրորդ տեղը գրավում էր անասնապահությունը, իսկ լեռնային շրջաններում այն բնակչության հիմնական զբաղմունքն էր: Անասնապահությունը սերտորեն կապված էր երկրագործության հետ և կարևոր նշանակություն ուներ հենց իր՝ հողագործության, գոյության ու զարգացման համար, որովհետև նրանց մեկը մյուսից կախված

[114] Թովմա Արծրունի, էջ 203:

ու իրար պայմանավորող՝ տնտեսության անհրաժեշտ երկու կարևոր ճյուղերն էին: Անասնապահությունը նախ և առաջ դիտվում էր որպես երկրագործությանը քաշող ուժ մատակարարող ընտանավան: Թերևս այդ նկատառումով՝ գաշտավարության դոյության ու զարգացման նկատառումով էր, որ Հայաստանի բոլոր մասերում, անգամ այնպիսի վայրերում, ուր այն զբաղմունքի հիմնական ընտանավան չէր, նրան մեծ ուշադրության ու հոգատարության էին արժանացնում:

Խոշոր եղջյուրավոր անասուններից եղն ու դոմեշը երկրագործության մեջ կիրառվող հիմնական քաշող ուժն էին և տնտեսությունը վարելու հիմք: Կովն իբրև մթերատու անասուն դիտվում էր որպես ընտանիքի ապրուստը հոգալու աղբյուր: Խոշոր եղջյուրավոր անասունները համարվում էին նաև մսացու, իսկ նրանց կաշին օգտագործվում էր արհեստագործական նպատակներով:

Հայտնի էին Հայաստանի ձիերն ու ջորիները, որոնք ծառայում էին հեծնելու և բեռնելու համար: Հատկապես առաջինը մեծ չափով օգտագործվում էր նաև ռազմական նպատակներով: Տրանսպորտի հիմնական միջոցը սայլն էր: Հունձը կատարվում էր գերանդու և մանգաղի միջոցով, իսկ կալսելու համար օգտագործվում էր կամը[115]: Լեռնային գավառներում, որտեղ սայլը չէր աշխատում, բերքը տեղափոխում էին ձիերի, ջորիների ու էշերի միջոցով: Հայաստանի ձիերն ու ջորիներն արտահանվում էին նաև երկրի սահմաններից դուրս, ուր նրանք իրենց դիմացկունության շնորհիվ մեծ գին ունեին[116]:

Խաշնարածությունը, որը տալիս էր կաթ, կաթնամթերք, բուրդ, մազ, միս, կաշի անասնապահության շատ կարևոր, իսկ որոշ տեղերում՝ նրա գլխավոր ճյուղն էր հանդիսանում: Սյունիքի, Սասունի, Տաշիր-Ջորագետի, Արցախի և Վասպուրականի ալպյան ընդարձակ արոտավայրերը հարմար էին խաշնարածության, իսկ ցածրադիր ոչ լեռնային շրջանները՝ խոշոր եղջյերավոր անասնապահության զարգացման համար:

---

[115] И. Орбели, նշվ. աշխ., էջ 115:

[116] Տե՛ս J. Laurent, նշվ. աշխ., էջ 39: Ջորիների մասին, տե՛ս СМОМПК, вып. XXXVIII, Тифлис, 1908, էջ 97:

Հայաստանը հարուստ էր ամառային արոտավայրերով, իսկ Արաքսի միջին և ստորին հովիտները՝ մանավանդ Կարինը, անասունների լավագույն ձմեռային արոտավայրեր էին: Աղբյուրներից երևում է, որ Անդրկովկասի ժողովուրդները համերաշխ օգտագործվում էին ամառային և ձմեռային այդ արոտավայրերից[117]:

Խոզաբուծությունն արաբական տիրապետության ժամանակ մեծ հարված ստացավ և դրա հետևանքով այս ժամանակաշրջանում թույլ էր զարգացած:

Հայաստանը հարուստ էր որսի կենդանիներով ու թռչուններով, սակայն որսորդությունը տնտեսության մեջ կարևոր դեր չէր խաղում: Տնտեսական խոշոր նշանակություն ուներ ձկնորսությունը, որով հարուստ էին դեռ հին ժամանակներից ի վեր ձկնորսության վայրեր հանդիսացող Հայաստանի գետերը և, մանավանդ, լճերը: Երկրի ծաղկավետ սարերն ու դաշտերը հարմար պայմաններ էին ստեղծել մեղվաբուծության զարգացման համար, որը նույնպես նշանակալից դեր էր խաղում տնտեսության մեջ:

Այսպիսով, Հայաստանի քննվող ժամանակահատվածի գյուղատնտեսության մեջ ակնառու արտահայտվում էր միջնադարին բնորոշ տեխնիկայի ցածր ու հնամոլ վիճակը: Դա ավելի որոշակի երևում էր Հայաստանի ծայրամասային շրջաններում:

Միևնույն ժամանակ նկատվում էր գյուղատնտեսության աստիճանական առաջադիմություն, որն այս շրջանում բավական որոշակի էր արտահայտվում:

2. Աշխարհիկ և եկեղեցական խոշոր հողատիրություն

ա. Հողի սեփականատիրության հարցը

Տնտեսական և քաղաքական խնդիրներում խոշոր ֆեոդալների ինքնուրույն հանդես գալու պատճառները հասկանալու համար սկզբունքային կարևոր նշանակություն ունի հողի սեփակա-

---

[117] Լ. Սնիքսեր-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի յեվ հայերի մասին, հ. Ա, Յերեվան, 1934, էջ 217:

նության հարցի պարզաբանումը: Հողի պետական կամ ֆեոդալական սեփականության գոյության խնդրի լուսաբանումը կօգնի նաև սոցիալական այլ երևույթների ուսումնասիրությանը:

Այս հարցով հատկապես զբաղվել է Խ. Սամուելյանը՝ հայ իրավունքի պատմության հարցերին նվիրված իր աշխատության մեջ[118]*: Նա միանգամայն ճիշտ է մոտենում հարցին, երբ ֆեոդալական հասարակարգում հողը դիտում է իբրև արտադրության հիմնական միջոց ու հողային իրավունքին տալիս է դերակշռող, կենտրոնական նշանակություն հայ իրավունքի պատմության մեջ՝ չնայած Հայաստանում ֆեոդալիզմի տևողության հարցում նա սխալ տեսակետի վրա է կանգնած: Խ. Սամուելյանը գտնում է, որ Հայաստանում պետական սեփականություն եղել է հողի դեռևս Արշակունյաց շրջանում: Ապա պատմիչներից միակողմանորեն քաղելով իր տեսակետը հաստատող որոշ փաստեր, աշխատում է ապացուցել, որ մինչև 13-րդ դ. հողի սեփականության ձևը չի փոփոխվել: Նա երևույթն ուսումնասիրում է ստատիկ վիճակում և այնքան է տարվում իր այդ տեսակետով, որ չի նկատում, թե փաստերն, ինչպես են հակասում դրան: Դա ակնառու է մանավանդ Բագրատունյաց շրջանի հողատիրության հարցերը քննելիս: Խ. Սամուելյանը մի առանձին վերնագրի տակ, որը կոչվում է «Հողի պետական սեփականությունը Բագրատունյաց ժամանակաշրջանում», կոնկրետ քննում է այդ շրջանի հողային սեփականության հարցը և որպես եզրակացություն գրում հետևյալը. «Բագրատունյաց Հայաստանում դերադույն հողային իրավունքի սկզբունքը հայ թագավորների կողմից անխախտ էր պահպանվում: Ամբողջ հողային տերիտորիան համարվում էր պետական սեփականություն՝ հանձին սուվերեն թագավորի, որ հենվում էր իր դեսպոտական իշխանության վրա: Թագավորն էր սովորաբար բաշխում հողերը և վավերանցնում իրեն ենթակա ֆեոդալ իշխանների հողատիրության իրավունքը»*[119]*:*

---

[118] Խ. Սամուելյան, նշվ. աշխ., հ. 1, էջ 157–164, 170–173:
[119] Նույն տեղում, էջ 173:

Իր այս թեզը ապացուցելու համար նա նախ և առաջ բերում է Նախճավանը Սմբատ Ա Թագավորի կողմից Սյունիքի իշխան Սմբատին հանձնելու փաստը: Սակայն դա չի կարող բավարար հիմք հանդիսանալ Բագրատունիներին հողի պետական սեփականատերեր անվանելու համար, թեկուզ հենց այդ պատճառով նրանք, որ աղբյուրներում ոչ մի տեղ չեն համարվում Նախճավանի «սեպհական» կամ «բնիկ» տերեր, ինչպես նրանք սովորաբար անվանվում էին իրենց սեփական տիրույթների, ասենք՝ Երազգավորսի և այլնի դեպքում: Դա պատահական չէ, որովհետև նրանք երբեք Նախճավանի փաստական տերերը չեն եղել և նրա նկատմամբ սեփականատիրական իրավունքներ չեն ունեցել: Նախճավան քաղաքը գտնվում էր Սյունիքի և Վասպուրականի սահմանում և այդ երկու իշխանությունների վեճի ու պայքարի առարկա էր՝ մի քանի անգամ անցնելով ձեռքից ձեռք: Սմբատ Ա Թագավորին Գագիկ Արծրունու խնդրանքից[120] պարզ երևում է, որ այդ երկու իշխանություններից յուրաքանչյուրը քաղաքը համարում էր իր հայրենի ժառանգությունը և պահանջում, որ այն իրեն պատկանի:

Հասկանալի է, որ վեճը պետք է լուծվեր Բագրատունի թագավորի միջոցով, որը, ինչպես Հայաստանի մյուս մասերի, այնպես էլ այդ քաղաքի վրա ուներ որոշ իրավական իշխանություն և իր հետաքրքրությունները վեճի լուծման գործում: Միայն այդ է պատճառը, որ Նախճավանի հանձնումը Սյունիքի իշխանին կատարվում է Սմբատ Ա Թագավորի միջոցով և ոչ թե մեկ ուրիշի:

Երկրորդ փաստը, որ բերում է Խ. Սամուելյանն իր տեսակետը հաստատելու համար՝ Տաթևի վանքի սահմանների «գիր վճիռն» է: Սյունիքի իշխան Աշոտը Տաթևի վանքի կառուցումն ավարտելու առթիվ (906 թ.) իր որդիների և եղբայրների հետ միասին կազմում է վանքի կալվածքների արձանագրությունը՝ «սիգելը» դրանց ճշտված սահմաններով: Այդ արձանագրության տակ ստորագրում են ներկա եղած բոլոր ֆեոդալները: Այն ստորագրում և իրենց կնիքով հաստատում են Հայոց կաթողիկոսը, Աղվանից արքեպիս-

[120] Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 208–209:

կոպոսը և Սմբատ Ա թագավորը[121], հենց դրա մեջ էլ Խ. Սամուելյանը տեսնում է Բագրատունիների՝ հողի գերագույն սեփականատիրական իրավունքը: Նա իզուր է թագավորի ստորագրությանը հատուկ նշանակություն վերագրում, որովհետև այն տվյալ դեպքում ունի գրեթե նույն նշանակությունը, ինչ մյուս ներկա եղողներինը: Դա երևում է նաև արձանագրության տեքստից մի քանի տող առաջ բերված Աշոտ իշխանի խոսքերից, որը վանքի կալվածքների մասին ասում է. «Ահա այս իսկ են սահմանք զոր մեք ոտիւք մերովք կոխեալ և աչօք մերովք տեսեալ ... և կնքեցաք մատանեաւ մերոյ արքայիս և կաթողիկոսիս և մեր իսկ»[122]: Պարզ է, որ թագավորը վանքի սահմաններն իրենց կնիքով վավերացնող մյուս անձնավորությունների նման հանդես է գալիս որպես վկա և ոչ թե հողի գերագույն սեփականատեր: Եթե նա ներկա չլիներ վանքի կառուցումն ավարտելու հանդեսին, արձանագրության տակ չէր էլ ստորագրի:

Ինչպես ներկա գտնվող ֆեոդալներն են վանքին նվերներ տալիս, նույնպես և Սմբատ Ա թագավորն է գնում մի քանի գյուղեր և նվիրում վանքին: Այդ առթիվ պատմիչը գրում է. «Ընծայէ թագաւորն ի սուրբ եկեղեցին զմեծ աւանն Կարճաւան յԱրևիք գաւառի, ի Մեղրաձորի ընդ գնոյ ստացեալ, գնէ և զՀաղբիս ի տէրանցն Սիւնեաց և զայն ևս ընծայէ ազատ յամենայն հարկաց, տայ և ի Գեղաքունի, ի Սօղից գաւառի գՍորասանկիրակ. և ի Դաւնոյ ձորի զ Գոտող վանս»[123]:

Ակնհայտ է, որ տվյալ դեպքում Սմբատ Ա-ն իր հողային իրավունքներով հանդես էր գալիս որպես մի սովորական խոշոր ֆեոդալ և Սյունիքի հողերի նկատմամբ, ոչ մի ռեալ սեփականատիրական իրավունք չուներ: Նա որպես Հայոց թագավոր, ինչպես Հայաստանի ծայրամասային մյուս իշխանությունների, այնպես էլ Սյունիքի հողերի վրա միայն որոշ իրավական իշխանություն ուներ: Բագրատունի թագավորների այդ իրավունքը հաշվի էր առնվում զանազան ձևական արարողությունների ժամանակ, իսկ

---

[121] Տե՛ս Ստեփանոս Օրբելյան, էջ 230–234:
[122] Նույն տեղում, էջ 232:
[123] Նույն տեղում, էջ 228–229:

հողերի նվիրման, գնման կամ վաճառման իրական հարցերում նրան ոչ մի նշանակություն չէին տալիս: Պատահական չէ, որ նույն Սյունիքի իշխանները իրենց ցանկությամբ նվիրում կամ վաճառում էին հողերը, որպես նրանց լրիվ սեփականատերերի առանց որևէ թագավորի հարցնելու:

Այսպես, օրինակ, Փիլիպպե իշխանը 844 թ. Տաթև գյուղն իր վարելահողերով ու արոտավայրերով նվիրում է համանուն վանքին. «...կամ եղև ինձ Փիլիպպէի որդւոյ Վասակայ, Սիւնեաց տեառն, նոու գՏաթև ... ի ձեզ ի Տէր Դաւիթ Սիւնեաց եպիսկոպոս»[124]: Նույն թվականին Հրահատ իշխանը վանքին նվիրում է Կովսական գավառի Նորաշինիկ գյուղը[125]: Երկու դեպքում էլ որպես նվիրատվությունը հաստատող վկաներ Սյունիքի իշխաններն են հանդես գալիս, իսկ թագավորի անունը ոչ մի տեղ չի հիշատակվում:

Խ. Սամուելյանն իր տեսակետն ապացուցելու համար կռվան է դարձրել երկու նվիրատվական արձանագրություններում Սմբատ թագավորի անվան հիշատակումը, իսկ դրան հակասող բազմաթիվ փաստերի կողքով լռությամբ է անցել[126]:

Միանգամայն այլ հարց է, որ Բագրատունիներն իրենց աստիճանական բարձրացման և մյուս հայկական իշխանությունների նկատմամբ գերիշխող դիրք ձեռք բերելու հետ մեկտեղ, մասնավորապես թագավորական իշխանության հասնելուց հետո, ձգտել են ամբողջ հայկական հողերի տերը դառնալ:

Խալիֆայության թուլացմանը և Հայաստանի ինքնուրույնության վերականգնմանը զուգահեռ, հայ ֆեոդալները ներքին և արտաքին նպաստավոր պայմաններում աստիճանաբար վերահաստատում և ընդլայնում էին իրենց նախկին ժառանգական հողային իրավունքները: Բարձրացող հայկական ֆեոդալական իշխանություններից հատկապես զորեղացան և մյուսների նկատմամբ իշխող դիրք ստացան Բագրատունիները, մանավանդ, երբ ձեռք բերեցին

---

[124] Նույն տեղում, էջ 206–207:

[125] Տես նույն տեղում, էջ 208–209:

[126] Նույնանման փաստեր տես նաև նույն տեղում, էջ 204–205, 228, 236–237, 239 և այլն:

«չահնչահ» տիտղոսը: Նրանք արդեն արաբական ժամանակաշրջանի հողի սեփականությունն իրենց իշխանությամբ փոխարինելու ամբողջ Հայաստանն իրենց տիրապետությանը ենթարկելու որոշակի ձգտումներով էին հանդես գալիս:

Սակայն, մյուս նույնպես բավականաչափ ուժեղացած ֆեոդալ իշխաններն ամեն կերպ պայքարում էին Բագրատունիների այդ ձգտումների դեմ և ոչ միայն կարողանում էին պահել հողի սեփականատերերի իրենց իրավունքները, այլև ավելի էին ընդլայնում այն:

Մանր թագավորությունների գոյացումով Բագրատունյաց թագավորների գերիշխանությունն, ավելի խախտվեց իսկ հողի սեփականության տեսակետից ըստ էության ոչինչ չփոփոխվեց: Տեղական խոշոր ֆեոդալներն իրենց իշխանությունները թագավորություն հռչակելով ձևական տեսակետից ավելի ակնառու դարձրին արդեն փաստորեն գոյություն ունեցող հողի մասնավոր ժառանգական սեփականության իրենց իրավունքը:

Բագրատունիներին հաջողվեց միայն սեփական կալվածքները զգալի չափերով մեծացնել (Գագիկ Ա–ի օրոք), բայց ոչ երբեք հայկական հողերի գերագույն սեփականատեր դառնալ: Նրանք միասնական հայկական պետություն ստեղծելու գործում հաջողություն չունեցան, որովհետև չկարողացան ֆեոդալների տնտեսական հզորության ու քաղաքական ինքնուրույնության հիմք հանդիսացող հողի ժառանգական մասնավոր սեփականության իրավունքը փոխարինել իրենց գերագույն իրավունքով և բոլոր հայկական հողերը միավորել մեկ միասնական կենտրոնացված պետության մեջ:

Աղբյուրներում պահպանված հողեր նվիրելու, կտակելու, փոխարինելու և վաճառելու բազմաթիվ փաստերը, որոնք ֆեոդալները կատարում էին առանց թագավորին հարցնելու կամ նրա անունն անգամ հիշատակելու, ցույց են տալիս, որ հողի իրական սեփականատերերը եղել են ֆեոդալները, որոնք ինչպես ցանկացել, այնպես էլ վարվել են նրա հետ:

բ. Աշխարհիկ խոշոր հողատերեր. հողատիրության բնույթը

Արդ, ո՞վքեր են եղել և ի՞նչպես են կոչվել հողի խոշոր սեփականատերեր ֆեոդալները:

Աղբյուրներում պահպանված բազմաթիվ փաստերի հիման վրա հնարավոր է պարզել այս շրջանի հայ մատենագրության մեջ խոշոր ֆեոդալներին տրվող տերմինները, դրանցից յուրաքանչյուրի պարունակած կոնկրետ սոցիալական բովանդակությունը, ինչպես նաև որոշել ֆեոդալների հողային սեփականության բնույթը:

Հայաստանի այս շրջանի ամենախոշոր ֆեոդալները, ինչպես տեսանք, եղել են Բագրատունի թագավորները: Նրանք հսկայական հողային տարածություններ ունեին Շիրակում ու մերձակա գավառներում: Երկրի ծայրամասերի առավել ինքնուրույն դառնալու ժամանակվանից սկսած դրեթե նույնանման հզոր ֆեոդալներ են եղել նաև Վասպուրականի, Սյունիքի, Տաշիր-Զորագետի և Վանանդի թագավորները: Սակայն խոշոր ֆեոդալների ամենահիմնական խավը սոցիալական այն շերտն էր, որի անդամներն աղբյուրներում անվանվել են «իշխան» ընդհանուր տերմինով: Իշխանները եղել են աշխարհիկ խոշոր ֆեոդալների ամենատարածված դասը և երկրի հասարակական-քաղաքական կյանքում տոն տվող հիմնական ուժը: Ֆեոդալական խոշոր հողատերերին իշխան տերմինով անվանելն այնքան ընդունված ու սովորական է եղել, որ աղբյուրներում նրանք սովորաբար նույնացվել են: Անգամ օտար երկրների ազնվականական ծագում ունեցող և իրենց երկրներում տարբեր տիտղոսներով հորջորջվող բարձրաստիճան իշխողներին մեր պատմիչներն իշխաններ են անվանել՝ ցանկանալով շեշտել նրանց խոշոր ֆեոդալի դիրք ունենալու հանգամանքը: Ժամանակի աղբյուրներում իշխան անվանման հետ հաճախ հանդիպում ենք «տէր» տերմինի գործածությանը՝ դրեթե միևնույն նշանակությամբ:

Բերենք համապատասխան օրինակներ: 850–855 թթ. ապստամբությունը դաժանորեն ճնշող արաբական զորավար Բուղան «... հրոսակս առաքէ Վասակայ Սիսական իշխանի և եղբօր նորա

Աշոտոյ և այլոց ևս տերանց աշխարհի նոցա[127]»: Նա բանտարկում է «... տերանց և իշխանացն Հայոց և Աղուանից»[128]: Իմանալով Ահմադի Հայաստան մտնելը (9-րդ դ. 70-ական թթ.) «ելեալ իշխանքն Հայոց ... Դերանիկն, տէր Գագիկ և միւս այլ տէր Գրիգոր Վասպուրական իշխան Մոկաց, Շապուհ եղբայրն իշխանաց իշխանի ...»[129]: Աղթամարի տաճարը կառուցելուց հետո Գագիկ Արծրունին հրաման է տալիս «Ժողովեալ ի դուռն արքայի իշխանաց և տէրանց, ազատաց և ռամկաց»[130]:

Այս և նմանօրինակ բազմաթիվ վկայություններից երևում է տէր և իշխան տերմինների համազոր օգտագործվելու և միևնույն սոցիալական բովանդակությունն ունենալու, այսինքն՝ իշխաններին տերեր կոչելու հանգամանքը: Այսպես օրինակ, Ցիլիպկի իշխանը 844 թ. Տաթևի վանքին նվերներ է տալիս և այն հաստատուն դարձնում հատուկ «գիր վճիռ»-ով: Այդ վավերագրում վկաների թվում հանդես եկող Սահակի որդի Հրահատն անվանված է տէր, իսկ մի փոքր հետո նույն վանքին գյուղեր նվիրելու առթիվ կոչված է իշխան[131]:

Իշխաններին տեր տիտղոսը տալով շեշտվել է նրանց խոշոր հողատեր լինելու հանգամանքը: Հավանաբար այդ է պատճառը, որ Ցիլիպկի իշխանի 844 թ. վավերագրում վկաների երկրորդ կատեգորիայի՝ ազատների անվան առաջ «տէր» տիտղոսը չի գրված և նրանք այնտեղ հիշատակված են սոսկ անուն հայրանունով:

Տաթևի վանքի սահմանների 906 թ. վերոհիշյալ «սիգել»-ի մեջ Սյունիքի իշխաններ Աշոտի, Գրիգորի ու Գագիկի անվան առաջ գրված է «տէր» կոչումը, իսկ նրանց որդիները հիշված են առանց տիտղոսի՝ սոսկ անուններով: Այդ իշխանների մահից հետո, երբ նրանց կալվածքներից որպես ժառանգություն անցնում են իրենց որդիներին, այսինքն՝ հենց որ վերջիններս դառնում են հողի սեփականատերեր՝ կոչվում են «տէր»: Այսպիսով հասկանա-

---

[127] Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 125-126:
[128] Նույն տեղում, էջ 128:
[129] Թովմա Արծրունի, էջ 353:
[130] Նույն տեղում, էջ 480:
[131] Տես Ստեփանոս Օրբելյան, էջ 207-208:

լի է, որ «տէր» անվանումն արտահայտում էր տվյալ անձի հողային սեփականության իրավունքը: Պատահական չէ, որ Ստեփանոս Օրբելյանի բերած գրեթե բոլոր վավերագրերում, որպես վկաներ հանդես են գալիս Սյունիքի, երբեմն նաև Հայաստանի մյուս մասերի խոշոր ֆեոդալները և նրանց անվան առաջ դրվում է ոչ թե «իշխան», այլ «տէր» տիտղոսը: Ֆիլիպպե իշխանի վերը հիշված նվիրատվությունից անմիջապես հետո կարդում ենք. «Եւ վկայք լիցին աստուածապահ տէր Գրիգոր՝ Սիւնեաց տէր, տէր Ատրներսեհ՝ Վասակայ որդի, Սիւնեաց տեառն, տէր Գրիգոր՝ Սահակայ որդի, տէր Հրահատ և տէր Արուման՝ Սահակա որդիք. տէր Հրահատ և Գագիկ՝ Գրիգորոյ Սիւնեաց տեառն որդիք, տէր Վահան՝ Վարդանայ որդի»[132]:

Նույն ձևով «տէր» են անվանվում նաև. Վասակ Սյունեցու դուստր Բուպղիդուխտը և նրա կողմից Մաճ գյուղը Տաթևին նվիրելու փաստը հաստատող ֆեոդալները. «Եւ դրեցին 316 թուականութեանն Հայոց վկայութեամբ իմ եղբօրորդեացս՝ տեառն Վասակայ և տեառն Աշոտի և տեառն Գրիգորոյ և տեառն Սահակայ և իւրեանց ազատաց և ամենայն Շնհէրեցեաց»[133]:

Այս վկայությունները կազմվել են հողերի նվիրման կամ փոխանակման կապակցությամբ, ուստի նվիրումը կամ փոխանակումը հաստատող ֆեոդալները տվյալ դեպքում հողատիրոջ ֆունկցիայով էին հանդես գալիս և այդ պատճառով էլ «տէր» էին անվանվում: Այսպիսով պարզ է, որ «տէր» անվանումն արտահայտում էր տվյալ անձի հողային սեփականության իրավունքը:

«Իշխան» կոչումն ավելի շեշտում էր տվյալ տերիտորիայի սահմաններում հողի սեփականատիրոջ ունեցած քաղաքական իշխանության հանդամանքը և հաճախ ժամանակի աղբյուրներում այդ իմաստով էլ գործածվում էր: Այսպես օրինակ, Աշոտ Բ թագավորը գնում է «յՈւտի գաւառ առ ի հնազանդել զբիրտ ապստամբութիւնն Մովսիսի, զոր իւր խակ կացուցեալ էր զնա իշխան և հրամանատար ճուտազաբարոյ ազգացն այնոցիկ Ուտի գաւառի»[134]:

---

[132] Նույն տեղում, էջ 207:
[133] Նույն տեղում, էջ 220:
[134] Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 301:

Կամ՝ «Ապա ոմն ի պատուական նախարարաց անտի՝ Հասան անուն, - որ իշխան և հրամանատար էր բոլոր տէրութեանն արքայի »[135]: Հասկանալի է, որ նման դեպքում երբեք չէր կարող «տէր» տիտղոսն օգտագործվել, քանի որ խոսքը ոչ թե ֆեոդալների հողային իրավունքների, այլ որոշ տերիտորիայի վրա նրանց քաղաքական իշխանության մասին է:

Մեծ կալվածքներ ունեցող «տէր»-երը, սովորաբար իշխաններ էին կոչվում, ուստի զարմանալի չպետք է թվա, եթե միևնույն ֆեոդալը երկու տերմինով էլ անվանվեր: Աղբյուրներում հաճախ հենց այդպես էլ հանդիպում է, միևնույն ֆեոդալը մի դեպքում «իշխան» է կոչվում, մի այլ դեպքում՝ «տէր», կախված այն բանից, թե իր որ ֆունկցիայով է հանդես գալիս:

Ինչպես նախորդ գլխում տեսանք, «իշխան» կոչումն արաբական տիրապետության շրջանում պաշտոն էր, որը տրվում էր Հայաստանի կառավարչի ֆունկցիաներ կատարող խոշոր ֆեոդալներից որևէ մեկին: Երկրի անկախանալու և ֆեոդալական ժառանգական հողատերերի իրավունքների ու ինքնուրույնության ամրապնդման հետ մեկտեղ «իշխան»-ը դառնում է խոշոր ֆեոդալներին տրվող հասարակ տիտղոս: Սակայն, ինչպես երևում է, դեռևս պահպանվում էր «իշխան»-ի նախկին հասկացությունը, քանի որ առավել հզոր, քաղաքական որոշ ֆունկցիաներ ունեցող ֆեոդալներին որպես կանոն «իշխան» էին անվանում, իսկ համեմատաբար փոքր կշիռ ունեցողներին՝ «տէր»:

Պատմագիրները խոշոր հողատերերին որպես կանոն «իշխան» անվանելու հետ մեկտեղ նրանցից ավելի հզորներին «մեծ», «գահագլուխ», «գահերէց» և «իշխանաց իշխան» տիտղոսներով են կոչում: Այսպես, օրինակ, 9-րդ դ. կեսերին Վասպուրականում իշխող Աշոտ Արծրունի իշխանը երբեմն «մեծ» անվանումով է հանդես գալիս: Ստեփանոս Օրբելյանը պատմում է , որ Բուղան նաև «... զԱշոտ՝ մեծ իշխանն Արծրունի ի Կապանս եդեալ»[136]: Այդ տերմինն ավելի շատ օգտագործվում է Գագիկ Արծրունու վերաբերյալ՝ մինչև նրա թագավոր դառնալը:

---

[135] Նույն տեղում, էջ 205:
[136] Ստեփանոս Օրբելյան, էջ 170:

Ըստ Թովմա Արծրունու չափազանցրած տեղեկությունների, արաբական բոլոր էմիրությունները «խաղացին պատերազմունք ի վերայ քաջին Գագկայ իշխանին մեծի»[137]: Հովհաննես Դրասխանակերտցին նրա մասին գրում է. «գլխաւոր և գահերէց իշխանն Գագիկ Արծրունի»[138]:

Նույն կոչումները, հատկապես վերջինը, շատ օգտագործել են Սյունիքում՝ կրկին մյուսների հանդեպ տվյալ իշխանի առաջնությունն ընդգծելու նպատակով: Ստեփանոս Օրբելյանի Պատմության մեջ հաճախ կարելի է հանդիպել. «...մեծ իշխանին Սիւնեաց Վասակա» (էջ 170), «մեծ իշխանքն գահագլուխք Սիւնեաց տէրութեան Աշոտ և որդի իւր՝ Սմբատ» (էջ 183), «եւ կացուցանեն զՍմբատ գահագլուխ իշխան Սիւնեաց» (էջ 185), «գահերէց իշխանն Սիւնեաց Սմբատ» (էջ 185), «յիշխանութեան Սիւնեաց գահերէց իշխանին Սմբատայ՝ որդւոյ Աշոտոյ» (էջ 240), «գահերէց իշխանին Սիւնեաց Աշոտոյ՝ եղբօր Վասակայ» (էջ 293), և նման տիպի այլ դասդվածքների:

«Մեծ», «գահերէց», «գահակալ» կոչումները թե Սյունիքում և թե Վասպուրականում ժառանգաբար էին անցնում, ուստի այդ անվանումները ոչ թե սոսկ քաղաքական տերմիններ էին, այլ ունեին նաև կոնկրետ սոցիալական բովանդակություն: Գահերէց կամ գահագլուխ անվանումները հիմնականում նույն իմաստով էին գործածվում: Պատահական չէ, որ Սյունիքի Սմբատ իշխանը մի դեպքում «գահագլուխ», մյուս դեպքում՝ «գահերէց» է անվանվում, իսկ Գագիկ Արծրունին միաժամանակ երկու ձևով էլ անվանվում է:

Հողեր նվիրելու, գնելու կամ բարձրաստիճան եկեղեցական պաշտոնյաներ ընտրելու ժամանակ և նմանօրինակ այլ դեպքերում, բնականաբար, նախ հիշատակվում էին տիտղոսներ կրող իշխանների անունները, ապա թվարկվում էին սովորական իշխանները: Նշանավոր իշխանների առաջնությունը գլխավորապես տվյալ երկրամասի բոլոր իշխանություններից արքունիքին (հալիֆայությանը), իսկ հետագայում էլ Բագրատունիներին տրվող

---

[137] Թովմա Արծրունի, էջ 460:
[138] Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 208:

հարկերը հավաքելու, ինչպես նաև նրանց ենթակայությամբ կառավարչական որոշ ֆունկցիաներ ունենալու մեջ էր:

Նրանք իրենց հողային սեփականություններով, տնտեսական ընդհանուր կարողությամբ և զորական ուժով առաջնակարգ հզոր ֆեոդալներ էին: Դահերեց կամ գահակալ իշխանները տվյալ նահանգի մեջ մտնող մյուս իշխանների կալվածքների վրա ևս որոշ իրավական իշխանություն ունեին: Շարքային այդ իշխանները ենթարկվում էին գահերեց կամ գահակալ իշխանին, իսկ վերջիններս սյուզերենի որոշ իրավունքներ ունեին նրանց նկատմամբ և ընդհանուր պատասխանատվություն էին կրում ամբողջ նահանգի համար: Այդպիսին էին Սյունյաց գահերեց իշխանները Սյունիքի, իսկ Արծրունի իշխանները Վասպուրականի նկատմամբ: Սակայն գահերեց, գահակալ կամ մեծ իշխանների իրավունքների զգալի մասը սոսկ իրավական, ձևական բնույթ ուներ: Նրանք մյուս շարքային ֆեոդալների ժառանգական կալվածքների վրա որևէ ռեալ իշխանություն չունեին:

«Իշխանաց իշխան» տիտղոսը, որը խալիֆի կողմից տրվում էր նշանավոր հայ իշխաններին, ինչպես տեսանք, դեռ 9-րդ դ. սկզբներին Բագրատունիները դարձրին իրենց տոհմի ժառանգության արտոնությունը:

Իշխանաց իշխանը հսկում էր հարկերի հավաքման, աշխատանքային պարհակի կատարման գործերը, այսինքն արաբական ոստիկանի փոխարեն կատարում էր տեղական կառավարչության ֆունկցիաները: Արաբական խալիֆայության թուլացումից օգտվելով Բագրատունիներն իրենց այդ իրավունքներն աստիճանաբար այնքան ընդարձակեցին, որ իշխանաց իշխան Աշոտ Բագրատունին 9-րդ դ. վերջերում թագավոր հռչակվեց: Դրանից հետո իշխանաց իշխանի պաշտոնն անցնում է թագավորի եղբայրներից որևէ մեկին կամ թագաժառանգին, իսկ 10-րդ դ. երկրորդ կեսից սկսած Անիի թագավորության հովանավորությունը վայելող Պահլավունիների ֆեոդալական տանը:

Իշխանաց իշխանը Բագրատունի թագավորի առաջ պատասխանատու էր վասալ իշխանների կողմից պարտավորությունների կատարման, թագավորական կալվածքների ու պետական գանձա-

ության համար: Նա էր գլխավորում հպատակ իշխաններին և գյուղի ու քաղաքի զանազան պաշտոնյաներին: Իշխանաց իշխանն ըստ էության թագավորի տեղակալն էր և փաստորեն ղեկավարում էր երկրի ամբողջ կառավարչությունը:

Իշխանաց իշխանի տիտղոսը կրող ֆեոդալները թե՛ Այրարատում և թե՛ Սյունիքում իրենց ֆունկցիաներով ու հզորությամբ մոտավորապես հավասար էին գահերեց կամ դահակալ իշխաններին: Վասպուրականում և Հայաստանի մյուս մասերում հզոր ֆեոդալներին տրվող այս կոչմանը չենք հանդիպում:

Հետաքրքիր է, որ Աշոտ թագավորի որդի սպարապետ Շապուհ Բագրատունին Վանեվանի 903 թ. արձանագրության մեջ իշխանաց իշխանի փոխարեն իրեն նույն առումով «տէրանց տէր»[139] է անվանվում:

Աղբյուրներում հանդիպում ենք նաև «նախարար» տերմինի գործածությանը: Ուշագրավ է, որ 8-րդ դ. պատմիչ, Ղևոնդը միայն Խալիֆայության կողմից նշանակված կառավարիչ Աշոտին է իշխան կոչում, իսկ ֆեոդալների ամբողջ դասին մշտապես նախարար է անվանում:

Արաբական տիրապետության ժամանակաշրջանում, առանձնապես 9-րդ դ. սկսված տնտեսական նոր պայմաններն ամբողջովին տակն ու վրա են անում նախարարական սիստեմը: Հանդես են գալիս նոր ֆեոդալական տներ, նախկիններից շատերը քայքայվում ու անհայտանում են, իսկ մնացածները մեծացնում են իրենց հողային տիրույթները և ստեղծում խոշոր իշխանություններ: Նախարարական սիստեմի նորմերը, որոնք արաբական տիրապետության շրջանում սկսել էին քայքայվել՝ կյանքի նոր պայմանների ճնշման տակ մոռացվում էին:

Ավելորդ չի լինի, թեկուզ ընդհանուր ձևով հետևել, օրինակ, Վասպուրականի նախարարական տների կյանքում կատարված փոփոխություններին: Երբ արաբները գրավեցին Հայաստանը, Վասպուրականում կային մի շարք նախարարություններ: Դրանց մեջ մեծ ազդեցություն ուներ և երկրի հասարակական-քաղաքա-

---

[139] Ստեփանոս Օրբելյան, էջ 181:

կան կյանքում խոշոր դեր էր խաղում Ռշտունյաց նախարարական տունը: Արծրունիներն Անձավացյաց, Բզնունի, Խոռխոռունի, Ամատունի և մյուս այլ նախարարությունների նման ավելի համեստ կարողություն ու դիրք ունեին: Ատրպատականի արաբ գրավար Սուլեյմանը երբ 762 թ. ներխուժեց Վասպուրական և սկսեց կողոպտել բնակիչներին, Վահան Արծրունու որդիներն անցնելով մի փոքր ջոկատի գլուխ հերոսաբար կռվեցին ու փախուստի մատնեցին թշնամուն[140]*: Այս դեպքից հետո Վասպուրականում Արծրունիների հեղինակությունը, աճեց նրանք ընդարձակեցին իրենց ժառանգական հողերը:*

Արաբական տիրապետության դեմ 774–775 թթ. բռնկված համաժողովրդական ապստամբության ժամանակ նրանք իրենց տիրապետությանը ենթարկեցին Ռշտունիքը: Դրանից հետո Ռշտունյաց նախարարական տունը վասալական կախման մեջ ընկավ Արծրունիներից:

Արծրունիներն աստիճանաբար ընդլայնում էին իրենց իշխանության սահմանները, իսկ նրանց ազդեցությունն ամրապնդվում ու աճում էր: 9-րդ դ. կեսերին արդեն Վասպուրականի Ռշտունյաց, Խոռխոռունի, Վարաժնունի, Ամատունի, Գնունի, Տրունի, Հավնունի և այլ նախարարական տներ վասալական կախման մեջ էին նրանցից: Մոկաց ֆեոդալական տունը ևս այս ժամանակ վասալական կախման մեջ է ընկնում Արծրունիներից, որովհետև 9-րդ դ. վերջում և 10-րդ դ. սկզբին Գագիկ և նրա եղբայր Աշոտ Արծրունիների ժամանակ հիշվում է արդեն կախյալ վիճակում: «Իշխանն Մոկաց՝ Գրիգոր,– գրում է Հովհաննես Դրասխանակերտցին,– եղբարբ իւրով Գուրգենաւ բազումս յարկարէր ընծայէր զսակ հարկի ծառայութեան առաջի Գագկայ»[141]*:*

Անձավացյաց նախարարական տունը երկար ժամանակ ոչ միայն դիմադրում էր Արծրունիների բարձրացմանը, այլև նույնիսկ Գուրգեն Անձավացին 9-րդ դ. կեսերին աշխատում էր հարևան ֆեոդալների հաշվին իր տիրույթների սահմաններն

---

[140] Տես Ղևոնդ, էջ 130–131:

[141] Հովհաննես Դրասխանակերտցի. էջ 292:

ընդարձակել, որի պատճառով ուժեղ ընդհարումներ էր ունենում Արծրունիների հետ: Սակայն վասալ իշխանների օգնությամբ Աշոտ Արծրունին կարողացավ իրեն ենթարկել նաև ֆեոդալական այս տունը:

Կայսիկների վրա 902 թ. Սմբատ Ա թագավորի կատարած արշավանքի ժամանակ ինչպես Մոկաց, այնպես էլ Անձավացյաց ֆեոդալական տները հիշվում են արդեն Արծրունիների հպատակների թվում: Թովմա Արծրունին գրում է, որ Սմբատին այդ արշավանքի ժամանակ օգնության էին եկել նաև «...մեծ իշխանն Վասպուրական Աշոտ, որդի Դերանկին, և ընդ նմա Գրիգոր իշխանն Մոկաց և զօրքն Անձաւացեաց: Վասն զի իշխանն Մոկաց և իշխանն Անձաւացեաց նուաճեալ էին ընդ ձեռամբ Վասպուրական իշխանութեանն»[142]:

Այսպիսով, Արծրունիներին աստիճանաբար հաջողվեց գերիշխանություն ձեռք բերել Վասպուրականում: 9-րդ դ. վերջերին արաբական լուծը թոթափելու ժամանակ Վասպուրականի բոլոր մեծ ու փոքր նախարարական տները վասալական կախման մեջ էին նրանցից: Արծրունիների գերիշխող դիրքերն ավելի ամրապնդվեցին թագավորություն ստանալուց հետո: Գագիկ Արծրունու մասին պատմիչը գրում է. «Սա զօրութեամբ Աստուծոյ զամենայն դրացիս և որք շուրջ զկողմամբ իւրոյն էին տէրութեանն, նուաճեալ ընդ իշխանասատ հրամանաւ՝ ի ծառայութիւն գրաւ է իւրոյն տէրութեան»[143]: 9-րդ դ. կեսերից մինչև 11-րդ դ. 90-ական թթ. Վասպուրականի պատմությունն անցավ Արծրունիների գերիշխանության ներքո:

Վասպուրականում «մեծ» իշխանի և մյուս ֆեոդալների փոխհարաբերությունը սենյորի ու վասալի հարաբերություն էր՝ չնայած մեզ մոտ վասալական սիստեմն այնպիսի ցցուն ձևով հանդես չէր գալիս, ինչպես Արևմտյան Եվրոպայի երկրներում: Այնուամենայնիվ, նրանց փոխհարաբերության հիմքում ընկած էր յուրաքանչյուրի դասային շահերը, որոնք ոչ միայն միշտ չէ որ

---

[142] Թովմա Արծրունի, էջ 394–395:
[143] Նույն տեղում, էջ 457:

համընկնում, էին այլև հաճախ հակադրվում էին: Այդ տեսակետից միանգամայն բնական է, որ վասալ իշխաններն իրենց շահերի պահանջած դեպքում դեմ էին դուրս գալիս Վասպուրականի մեծ կամ գահերեց իշխանի դեմ ու պայքարում: Ահա նրանց միջև տեղի ունեցած ներքին պայքարի մի բնորոշ օրինակ: Վասպուրականի իշխաններն իմանալով, որ Բուղան պատրաստվում է իրենց վրա արշավել՝ համաձայնության են գալիս և Աշոտ մեծ իշխանից գաղտնի արաբական զորավարին ուղարկում հետևյալ նամակը. «Եւ արդ մենք, նահապետք ազատաց Վասպուրական իշխանիս՝ Մուշեղ ի ցեղէ Վահեւունեաց, Վահրամ յազգ է Տրունեաց, Վահրամ միւս, որ և Թիկնապահ իշխանիս, և այլ դունդք ազատաց և զօրական պետութեանց, ի ձեռս մեր է հոգաբարձութիւն աշխարհիս, գրեցաք առ քեզ Բուխայ գլուխ զօրավարաց Տաճկաց և բարձակից մեծ թագաւորին. միայն թէ ընդարձակեսցես մեզ և տոհմի մերոյ, բնակաց երկրի մերոյ՝ մնալ յիւրաքանչիւր տունս բնակութեանց կալ խաղաղութեամբ՝ մեք տացուք զԱշոտ ի ձեռս քո առանց զինու և մարտից և ճակատուց կազմութեան, և մի ինչ յայնոսիկ աշխատ լինիցիս»[144]:

Դժվար չէ հասկանալ, որ վասալ իշխանները գաղտնի համաձայնության են գալիս՝ սյուզերեն իշխանին թշնամուն հանձնելու միջոցով իրենց կալվածքները թալանելուց ու ավերումից ապահովելու համար: Դեռ ավելին, նրանց հիմնական ձգտումն էր Աշոտ Արծրունուն արաբական զորավարի ձեռքը հանձնելու հանգամանքն օգտագործել սեփական կալվածքները մեծացնելու համար: Այդ պարզ երևում է այն բանից, որ նրանք նամակում խոստանում են Աշոտ իշխանին բռնել և հանձնել Բուղային, վերջինիս առաջ պայման դնելով՝ «...միայն թէ ընդարձակեսցես մեզ և տոհմի մերոյ, բնակաց երկրի մերոյ»[145]: Բուղան կարդալով իշխանների նամակը, համաձայնվում է նրանց պահանջի հետ, ասելով՝ «...միայն ոչ ելցէ ի ձեռաց իմոց Աշոտ հանդերձ ազգականօք իւրովք»[146].

---

[144] Նույն տեղում, էջ 223-224:
[145] Նույն տեղում 224:
[146] Նույն տեղում, էջ 225:

Աշոտ մեծ իշխանը լսելով այս ամենը, հանդիմանում է իր հպատակներին: Նա ասում է. «զի՞նչ է այդ, զոր դուք ի ծածուկ գործէք, և ընդէ՞ր խորհուրդք դաղտնիք ընդ միմեանս խորհիք. եթէ չար ինչ թուիցիմ յաչս ձեր, և ապիրատս գործեալ եմ առ ձեզ և խարդախութեամբ բնակեալ ընդ ձեզ՝ աւասիկ յանդիման երեսաց իմոց տուք պատասխանի, և ցուցէք յականէ յանուանէ մի ըստ միոջէ իւրաքանչիւր զվնասս զոր գործեալ եմ, դիք ի լսելիս համագունդ զօրականացս, և մի պատկառէք խօսել զճշմարտութիւնն: Ապա թէ իբրև զհայր դրգեալ և գգուեալ էի զձեզ, և ժողովեալ իբրև հաւ զձագ ընդ թեւովք ի պատճառս պահպանութեան, և դուք ամենայն ուրեք ամրացեալ ի զգուշութիւն իբրև յամուր քաղաքի ընդձեռամբ իմով յանհոգս լեալ լինել ձեզ. և դուք զայսքան հատուցումն հատուցանէք ինձ»[147]:

Աշոտ Արծրունու մեջբերված այս խոսքերից երևում է, որ նա սյուզերենի իրավունքներ է ունեցել Վասպուրականի մյուս իշխանների վրա և այդ կերպ էլ մոտենում էր նրանց: Այնուամենայնիվ, նա չի կարողանում ազդել նրանց վրա և տեսնելով, որ հպատակ իշխանները հաստատ են իրենց որոշման մեջ, հանձնվում է արաբական զորավարին:

Մոտավորապես նույն դերիշխանություն ունեին նաև գահակալ կամ, գահերեց իշխանները Սյունիքում:

Վասպուրականի և Սյունիքի գահերեց իշխանները մինչև ինքնուրույն թագավորություններ հիմնելը նույն եղանակով ենթարկվում էին Բագրատունիներին, չնայած նրանց վասալական կապն ավելի թույլ էր, իսկ ինքնուրույն թագավորություններ հիմնադրելուց հետո սոսկ ձևական բնույթ ընդունեց և պահպանվում էր միայն ավանդույթի ուժով:

Այն հանդամանքը, որ 8-րդ դ. պատմիչ Ղևոնդը «նախարար» տերմինը հին իմաստով է օգտագործում, նշանակում է նրա մոտ այս կամ այն չափով արտահայտվել են Հայաստանի նախարարական, թեկուզ և արդեն քայքայվող, կարգերը: Հետագա պատմիչների մոտ առաջացած նոր վիճակն է արտահայտվում և «նախա-

---

[147] Նույն տեղում, էջ 226–227:

բար»-ի փոխարեն գլխավորապես «իշխան» տերմինն են օգտագործում: «Նախարար» տերմինի գործածությունը հիմնականում գալիս է հին շրջանի պատմիչներին հետևելուց, իսկ մեծ մասամբ նրանք այս տերմինի տակ նկատի ունեին նոր հողատեր իշխանին:

Մեր պատմիչների երկերում շատ սակավ հանդիպում ենք «նահապետ», «մեծ նախարար», «մեծ նահապետ» տերմինների օգտագործմանը ևս: Սակայն վաղ ֆեոդալիզմի էպոխային հատուկ այս կոչումները բնորոշ չէին մեզ հետաքրքրող ժամանակաշրջանին և հնչում էին սոսկ որպես անցյալի վերապրուկներ:

Ինչպե՞ս են կոչվել վերոհիշյալ խոշոր ֆեոդալների հողային տիրույթները և ի՞նչ եղանակով էին նրանք տիրում այդ հողերին:

Մեր աղբյուրներում իշխանների տիրապետության տակ եղած հողերը հիշատակվել են «հայրենիք», «հայրենի ժառանգություն» տերմիններով: Հայրենիքին (ՊՕՊԿԱՒԱ) ֆեոդալները տիրում էին լիակատար մասնավոր սեփականության իրավունքով: Նրանք կարող էին այն նվիրել, փոխանակել, վաճառել, մի խոսքով օտարել: Արոտավայրերը, դաշտերը, առանձին դեպքերում նաև ջրերը մտնում էին հայրենիք կոչված հասկացության մեջ:

Հայրենիքն անցնում էր ժառանգաբար: Նախարարական շրջանում «հայրենիք» էին կոչվում միայն ժառանգաբար անցնող տոհմական սեփականատիրական հողերը[148]*: Հետագայում «հայրենիք» տերմինն ավելի լայն իմաստ է ձեռք բերում: Բագրատունյաց շրջանում բացի ժառանգաբար անցնող հողերից «հայրենիք» էին կոչվում նաև գնման, նվիրման ու փոխանակման միջոցով ձեռք բերված հողերը: Այսինքն այն հողերը, որոնք տվյալ ֆեոդալի լիակատար մասնավոր սեփականությունն էին, անկախ նրանից, թե ինչպիսի միջոցներով էր այն ձեռք բերվում: Որոշ արձանագրություններում, օրինակ, շեշտվում է գնման ճանապարհով ձեռք բերված հողերը «հայրենիք» դառնալու փաստը: Տաթևի եպիսկոպոս Սողոմոնի 881 թ. թողած արձանագրության մեջ կարդում ենք. «Առի զ Դարատաւի ի Հրահատայ՝ Սիւնեաց տեառն... ի Հալալ վաստակոց իմոց, ոչ հոգեցատուր և ոչ յերախայրեաց. այլ*

---

[148] Տե՛ս А. Адонц, Армения в эпоху Юстиниана, Петербург, 1908, էջ 457–458:

գնեցի ընդ հազար և երկերիւր դրամի. և սուրբ նշանիս Հայրենիք արարի»[149]:

Հետագա դարերում «Հայրենիք»-ի իմաստն. ավելի է ընդլայնվում այս տերմինի տակ հասկացվում էր նաև մասնավոր սեփականություն հանդիսացող շարժական գույքը:

Խ. Սամվելյանը չի առարկել քսակագին կամ դրամագին հողերը Հայրենիք դառնալուն, սակայն գտնում է, որ նման հողերի մասին հիշատակություններ ունենք միայն 12-րդ դ. սկսած[150] և որպես իր ասածի ապացույց մատնացույց է արել այդ մասին վիմական արձանագրություններում և Ստեփանոս Օրբելյանի Պատմության մեջ եղած 12–13-րդ դդ. փաստերը: Նա զարմանալիորեն անուշադրության է մատնել հենց նույն այդ աղբյուրներում պահպանված այն անհերքելի փաստերը[151], որոնք անառարկելիորեն հաստատում են, որ Հայաստանում 9–11-րդ դարերում ևս հողերն առ. ու ծախի առարկա են եղել:

Բերենք այդ փաստերից միայն մեկը: Վասակ Սյունեցու (Գարուսի) կին Մարիամը 9-րդ դ. վերջում իր կառուցած ս. Պետրոս եկեղեցու համար գնում է «զգեօղն Շողուաղայ ընդ 60,000 դրամի ազատ յամենայն աշխարհական հարկաց՝ ընծայէ ի սեպհական ժառանգութիւն սուրբ եկեղեցւոյն. նմանապէս և զեօղ մի ի Մաղաղ գաւառի ընդ 3,000 դահեկանի գնէ և տայ ի սուրբ եկեղեցին»[152]:

Միանգամայն այլ խնդիր է, որ 9–11-րդ դդ. համեմատաբար սակավ կատարվող հողերի գնումներն ապրանքադրամական տնտեսության զարգացմանը զուգընթաց ավելի լայն ծավալ են ստանում և մեծ մասշտաբներ ընդունում 12–13-րդ դդ.:

Ֆեոդալների միջև եղած հարկատվության փաստերի ուշադիր քննությունը ցույց է տալիս, որ ալաբական տիրապետության վերջին շրջանում՝ 9-րդ դ., Հայաստանի իշխաններն անմիջապես հարկատու չէին Բագրատունի թագավորներին: Սակայն վերջին-

---

[149] Տե՛ս Ստեփանոս Օրբելյան, էջ 215:
[150] Խ. Սամուելյան, նշվ. աշխ., հ. I, էջ 188:
[151] Վիմական տարեգիր, էջ 14, Ստեփանոս Օրբելյան, էջ 174, 204, 215, 228 և այլն:
[152] Ստեփանոս Օրբելյան, էջ 174:

ներիս էր պատկանում ամբողջ Հայաստանից Խալիֆայության համար հավաքվող հարկերի իրավունքը, որից նրանք մեծ օգուտներ էին ստանում՝ հարկերի որոշ մասն իրենց պահելով: Այդ պատճառով էլ նրանք աշխատում էին այդ իրավունքը միշտ իրենց ձեռքում պահել և խստորեն հետևում իշխանների հարկային պարտավորությունների կատարմանը:

Որևէ իշխանի կողմից հարկեր չվճարելը դիտվում էր որպես անհնազանդություն ու ապստամբություն կենտրոնական թագավորության դեմ: Այսպես օրինակ, երբ Սյունիքի Սմբատ իշխանը հրաժարվում է Սմբատ Ա Բագրատունի թագավորին հարկ վճարելուց, վերջինս բավական մեծ զորքով գալիս է նրա դեմ: Գործին միջամտում է թագավորին օգնության եկած Վասպուրականի իշխան Աշոտը (Գագիկ Արծրունու ավագ եղբայրը) և հարցը լուծվում է խաղաղ ճանապարհով: «Եւ իշխանն Աշոտ գրէ առ իշխանն Սմբատ, անօգուտ զապստամբութիւնն համարելով. համոզեաց ի մէջ երկոցունց և գլխաւորեաց զխաղաղութիւն առ նոսա, մինչ գալ Սահակայ եղբօր իշխանին Սիւնեաց, ընդ իւր բերելով զհարկսն»[153]*:*

Ի դեպ, արաբական էմիրությունները ևս հայկական իշխանությունների նման հարկային պարտավորություններ ունեին, որը նույնպես իրագործվում էր Բագրատունիների միջոցով: Այդ նույն ժամանակ, ինչպես նշվեց, Սմբատ Ա թագավորը զորք է գումարում նաև Կայսիկների վրա շարժվելու համար, որովհետև նրանք ևս հրաժարվել էին հարկ վճարելուց: «Ընդ այն ժամանակս զօրաժողով եղև թագաւորն Հայոց Սմբատ... Զի որդիքն Աբդռահմանի, որ Կայսիկքն անուանին՝ ապստամբեալ էին ի պետութենէ թագաւորին, տալ հարկս և զինուորել որպէս օրէն էր»[154]*:*

Հավանական է, որ արքունական այդ հարկերը Վասպուրականի իշխաններից հավաքում էին Գագիկ Արծրունին ու նրա նախորդները, իսկ Սյունիքում գահերեց իշխանը և հանձնում Բագրատունիներին:

---

[153] Թովմա Արծրունի, էջ 398:
[154] Նույն տեղում, էջ 394:

10-րդ դ. սկզբին Խալիֆայության առավել թուլացման և երկրի անկախության ամրապնդման հետևանքով Հայաստանում դադարեցնում են արաբներին հարկերի վճարումը: Դրանով ընդմիշտ վերանում է Խալիֆայության հարկային սիստեմը: Այդ ժամանակվանից սկսած՝ արքունիքի համար հավաքվող հարկերը Բագրատունիների օգտին էին: Սակայն երկրի ծայրամասերում ինքնուրույն թագավորություններ առաջանալուց հետո, Բագրատունիների համար գանձվող արքունի հարկը խիստ նվազում, ավելի շուտ նվերների բնույթ է ընդունում, մանավանդ Վասպուրականի և Սյունյաց թագավորությունների կողմից:

Այսպիսով 9–11-րդ դդ. խոշոր հողատեր ֆեոդալներ էին թագավորները, իշխանաց իշխան, «մեծ», «դահագլուխ», «գահերէց» իշխանները և ոչ մի տիտղոս չկրող շարքային իշխանները: Անշուշտ, սրանց մեջ թե իրավական և թե տնտեսական տեսակետից խոշոր տարբերություն կար: Բացի այն, որ Բագրատունի թագավորներն իրավաքաղաքական իշխանություն ունեին ամբողջ երկրի վրա, «գահակալ» կամ «գահերէց» իշխանները տվյալ նահանգի վրա, իսկ շարքային ֆեոդալները միայն իրենց իշխանության սահմաններում, նրանք իրարից տարբերվում էին նաև տնտեսական հզորության տեսանկյունից:

Թագավորներն ավելի շատ կալվածքներ, զորական ուժ ու տնտեսական կարողություն ունեին, քան ասենք գահակալ կամ գահերեց իշխանները, որոնք էլ ավելի հզոր էին շարքային իշխաններից: Այսինքն նրանց միջև փաստորեն առաջացել էր ֆեոդալական հասարակարգին բնորոշ աստիճանակարգը: Դրա գլուխ կանգնած էր Բագրատունի թագավորը, որն իր կարողությամբ ու իրավունքներով բոլորից բարձր էր կանգնած և մյուս ֆեոդալների վրա որոշ սուվերեն իրավունքներ ուներ: Երկրորդ աստիճանում կանգնած էին Բագրատունյաց թագավորի գերիշխանությունն ընդունող գահերեց, դահագլուխ, մեծ իշխանները և իշխանաց իշխանը: Չնայած սրանց ներսում էլ որոշ տարբերություններ կային, դրանք այնքան աննշան էին, որ ամբողջությամբ վերցրած նրանց միևնույն աստիճանում կարելի է դնել:

Երրորդ աստիճանը կազմում էր շարքային իշխանների բազմամարդ դասը:

Ֆեոդալական այս դասերի միջև եղած տարբերությունը, սակայն ոչ թե հողի սեփականության ձևից էր բխում, այլ նրանց քանակից ու հողի նկատմամբ ունեցած ձևական որոշ իրավունքից: Թագավորը կամ գահերեց իշխանները ռեալ իրավունքներ չունեին մյուս ֆեոդալների կալվածքների վրա:

Հողի սեփականության տեսակետից կարևորն այն էր, որ «բոլոր այդ իշխաններն ու թագավորները խոշոր «հայրենատեր» էին և իրենց հողերին տիրում էին ժառանգական, լիակատար սեփականության իրավունքով»:

գ. Եկեղեցական խոշոր հողատերեր. եկեղեցական հողատիրության առանձնահատկությունները

Եկեղեցին որպես յուրահատուկ կազմակերպություն ինչպես ուրիշ երկրներում, նույնպես և մեզ մոտ աշխարհիկ ֆեոդալականության համեմատությամբ ուներ մի շարք առանձնահատուկ կողմեր ու բնորոշ գծեր: Նրա տարբերիչ կողմերն ամենայն լրջությամբ պետք է ուսումնասիրել ու պարզաբանել, որպեսզի այդ կազմակերպության բուն էությունը մեզ համար հասկանալի դառնա: Սակայն, երբեմն եկեղեցու և հոգևորականության առանձնահատկությունները լիովին վեր հանելու նպատակով ամբողջ ուսումնասիրությունը կատարվում է այն աշխարհիկ ֆեոդալական կազմակերպությանը միակողմանիորեն հակադրելու եղանակով, որը հանգեցնում է հոգևորական դասերին միևնույն ձևով դիտելուն, նրանց ներսում եղած սոցիալական խոր տարբերություններն անտեսելուն:

Իրականում քրիստոնեությունը 4-րդ դ. սկզբին Հայաստանում հաղթանակ տանելուց և պետական կրոն դառնալուց հետո շատ կարճ ժամանակամիջոցում տեր դարձավ բավական խոշոր հողային տարածությունների ձևավորվելով որպես ֆեոդալական ուրույն կազմակերպություն իր հոգևոր դասերով ու հիերարխիկ սիստեմով: Ն. Ադոնցը խոսելով նախարարական շրջանի եկեղեցա-

կան կազմակերպության մասին, ցույց է տվել, որ եկեղեցին ամբողջովին հարմարվել էր երկրի քաղաքական կարգին ու վարչական բաժանմանը[155]:

Ինչպես հայտնի է, Հայաստանում 5–7-րդ դդ. ամեն մի նախարարական տուն իշխում էր տվյալ տան ժառանգական սեփականությունը հանդիսացող մեկ կամ մի քանի գավառի վրա: Դրան համապատասխան գրեթե յուրաքանչյուր գավառ, որպես ինքնուրույն նախարարական միավոր, ուներ իր եպիսկոպոսությունը: Եպիսկոպոսներից մեկը կրում էր կաթողիկոսի տիտղոսը, այնպես, ինչպես առաջնակարգ նախարարներից մեկը կրում էր թագավորի տիտղոսը:

Ըստ Ն. Ադոնցի 450 թ. Հայաստանում կար տասնութ եպիսկոպոսություն, 505 թ. այդ թվին ավելացավ ևս հինգը, իսկ 555 թ. չորսը, այնպես որ 6-րդ դ. կեսերին երկրում կար մինչև քսանութ եպիսկոպոսություն: Ինչպես եպիսկոպոսներն էին հանդիսանում նախարարական որևէ գավառի հոգևոր ներկայացուցիչը, այնպես էլ կաթողիկոսն ամենից առաջ հանդիսանում էր թագավորական գավառի եպիսկոպոսը: Որքան ուժեղ էր նախարարական տունը, այնքան ուժեղ ու ազդեցիկ էր տվյալ եպիսկոպոսությունը և ընդհակառակը[156]:

Հասկանալի է, որ ամեն մի եպիսկոպոսությունն իր դիրքի ու տվյալ նախարարության մեծության համապատասխան էլ հասույթներ և կալվածքներ ուներ:

Հնարավոր է, երկրի եպիսկոպոսությունների, հետևաբար այս կամ այն չափով էլ նախարարությունների ընդհանուր թվին հետևել նաև հետագա դարերում՝ արաբական տիրապետության ժամանակաշրջանում: Այդպիսի հնարավորություն ընձեռում են եկեղեցական կարևոր հարցերի լուծման նպատակով հրավիրված ժողովները, որոնցից պարզ է դառնում եպիսկոպոսների քանակն ու նրանց կազմը: Դվինի 645 թ. եկեղեցական ժողովին, որը նվիրված էր եկեղեցու կալվածքների փոփոխմանը և նրա հասույթների

---

[155] Տե՛ս Н. Адонц, նշվ. աշխ., էջ 322, 359:

[156] Տե՛ս նույն տեղում, էջ 333, 367–370:

հափշտակումն արգելելու խնդրին, մասնակցում էին սասունվնց եպիսկոպոսներ:

726 թ. հրավիրված Մանազկերտի եկեղեցական ժողովին եկել էին հայոց կաթողիկոսը, քսաներեք եպիսկոպոսներ և ութ վարդապետներ: Ուշագրավ է, որ եպիսկոպոսները, միայն մի քանի բացառությամբ, բոլորն էլ անվանվում են ոչ թե իրենց ծննդավայրի անունով (ինչպես սովորաբար լինում էր), կամ ուրիշ կերպ, այլ նախարարությունների անունով: Այսպես, ժողովին մասնակցում էին Թադեոս Ոստանցի, Եսա Բասենցի, Սարգիս Տայեցի, Գրիգոր Վանանդեցի, Թեոդորոս, Բզնունի, Գրիգորիս Արշարունի, Դավիթ Ռշտունի, Նարկիսոս Խոխոռունի, Հովսեփ Արծրունի եպիսկոպոսները և ուրիշները: Հետևաբար. նախարարական կարգերն այնքան ուժեղ էին պահպանվում, որ նախարարության անունով էր կոչվում ոչ միայն գավառը, այլև եպիսկոպոսությունը: Նախարարությունն իր գաղափարական հիմնարկով եպիսկոպոսությամբ և ներքին կառավարչությամբ դեռևս հանդես էր գալիս որպես տնտեսական ու քաղաքական ինքնուրույն միավոր: Պատահական չէ, որ ժողովին մասնակցող վարդապետները կրում են սովորական ազգանուններ (Խոսրովիկ Թարգմանիչ, Դավիթ Սուփրի, Ռաֆայել Վանեցերեց և այլն):

Պարտավի եկեղեցական ժողովին (768 թ.) եկել էին ընդամենը մի քանի եպիսկոպոսներ և ութ նախարարներ: Սիոն կաթողիկոսը ժողովականների սակավաթվությունը բացատրում է նրանով, որ երկրում բռնությամբ իշխող արաբները եպիսկոպոսների մի մասին թույլ չէին տվել ժողովի գալու[157]: Կաթողիկոսի պատճառաբանությունը ճիշտ լինելով հանդերձ թերի ու միակողմանի է: Մեր կարծիքով դրա հիմնական պատճառներից մեկն էլ այն էր, որ 8-րդ դ. կեսերից Աբբասյանների սկսած դաժան քաղաքականության ու արաբական բնակչության ներգաղթի հետևանքով, ինչպես մի շարք նախարարական տներ, այնպես էլ բավական թվով եպիսկոպոսություններ ցրվել, դադարել էին գործելուց:

---

[157] Կանոնգիրք Հայոց, խմբեց Արսէն Ղլտճեան, Թիֆլիս, 1914, էջ 165:

Ընդունված է ասել, որ եկեղեցին իր առանձնահատուկ դերի ու ազդեցության շնորհիվ անգամ ստար տիրապետության շրջանում տնտեսական տեսակետից անձեռնմխելի է մնում, մի բան, որը այնքան էլ ճիշտ չէ: Խալիֆայության ծայրամասային երկրներում Աբբասյան դինաստիայի դաժան ու հարստահարիչ քաղաքականությունից տնտեսական մեծ վնասներ է կրել նաև հայ եկեղեցին: Մեզ են հասել այդ բանը հաստատող փաստեր: Հովհաննես Դրասխանակերտցին պատմում է, որ Հովսեփ Բ Փարպեցու կաթողիկոսության շրջանում (795–806), արաբական Խուզիմա ոստիկանը գնելու պատրվակով աշխատում էր յուրացնել կաթողիկոսության երեք գյուղերը՝ իրենց վարելահողերի հետ միասին: «Եւ տեսեալ զզեղեցկութիւն մեծամեծ դաստակերտիցն տան կաթողիկոսարանին՝ զԱրտաշատն և զԿաւակերտն և զՀոռոմոց Մարգ հանդերձ նոցունց ագարակօք... յինքն ի հայրապետէն Յովսէփայ խնդրէր տալ նման զմեծ դաստակերտս իբր ի պատճառս գնոց արծաթոյ»[158]:

Խուզիմա ոստիկանը տեսնելով, որ կաթողիկոսը չի համաձայնվում իր պահանջի հետ, բանտարկում և ամեն տեսակ տանջանքի ու բռնություններին է ենթարկում նրան: Սակայն այդ միջոցներով էլ իր նպատակին չհասնելով Խուզիման կաթողիկոսին ազատում է բանտից և անհիմն հրապարակայնորեն հայտարարում, թե վերոհիշյալ գյուղերը գնել է նրանից: Բանտից ազատվելով Հովսեփ Բ կաթողիկոսը շարունակում է պայքարել ոստիկանի ապօրինի արարքների դեմ և կարողանում է նրանից հետ ստանալ Կավակերտն ու Հոռոմոց Մարգը, իսկ Արտաշատը մնում է ոստիկանին, դրանով իսկ դուրս գալով կաթողիկոսության սեփականությունից[159]:

Չնայած կատարված գնելքը բացառություն չէր, այնուամենայնիվ, եկեղեցու ունեցվածքի նման ապօրինի հափշտակումներն ընդհանուր երևույթ չէին դարձնել և արաբական տիրապետության ամբողջ ժամանակաշրջանում հայ եկեղեցին ընդհանուր

---

[158] Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 111–112:

[159] Տես նույն տեղում, էջ 112–113:

առմամբ ավելի քիչ է տուժել և անհամեմատ ավելի է պաշտպանել իր դիրքերն ու հողատիրությունները, քան աշխարհիկ ֆեոդալները:

Խալիֆայության թուլացման և երկրի ստիպանաբար ինքնուրույնացման նպաստավոր հանգամանքը եկեղեցին ևս հմտորեն օգտագործում էր իր տնտեսական կարողությունը մեծացնելու համար: Նրա տնտեսական հզորությունն ու կալվածքներն աճեցին մանավանդ Հայաստանի ինքնուրույնության վերջնական հաստատման և նրան հաջորդող մեկ ու կես դար հարատևող խաղաղ ժամանակաշրջանում՝ եկեղեցաշինության զուգընթաց:

Ինչպես նախարարական շրջանում ու արաբական տիրապետության ժամանակաշրջանում, այնպես էլ 9–11-րդ դդ. եկեղեցին ենթարկվում էր երկրում ստեղծված վարչաքաղաքական կարգին: Բագրատունյաց շրջանում, ինչպես նշվել է, նախկին բազմաթիվ նախարարական տների փոխարեն առաջ են գալիս ամբողջ նահանգը ընդգրկող խոշոր իշխանություններ: Նույնանման փոփոխություններ ու խոշորացում է կատարվում նաև եկեղեցու կազմակերպության մեջ: Այսպես, օրինակ, Սյունիքում ստեղծված խոշոր իշխանությանը համապատասխան ստեղծվում է Տաթևի նշանավոր եպիսկոպոսությունը: Ինչպես Հայոց կաթողիկոսությունն էր ծառայում կենտրոնական թագավորության՝ Բագրատունիների քաղաքական նպատակներին այնպես էլ Տաթևի եպիսկոպոսությունն էր օժանդակում Սյունյաց իշխանների տիրապետությունն ամրապնդելու գործին: Այս եպիսկոպոսությունը Հայոց կաթողիկոսի հետ մոտավորապես այնպիսի հարաբերության մեջ էր, ինչպես Սյունյաց դահակալ կամ մեծ իշխանները Բագրատունիների հետ:

Եկեղեցին իր ընդհանուր տնտեսական զարգացման, մասնավորապես հողատիրության զարգացման տեսակետից ևս, աշխահիկ ֆեոդալական հողատիրությանը համընթաց էր քայլում՝ իր վրա ամբողջովին կրելով ֆեոդալիզմի զարգացման տվյալ էտապին բնորոշ գծերն ու առանձնահատկությունները: 9–11-րդ դդ. Հայաստանի տնտեսական կյանքի, հատկապես կալվածային տնտեսության հետ կապված հարցերը հավասարապես արտայոլվել են թե՛ աշխարհիկ, և թե՛ եկեղեցական հողատիրության մեջ: Վերջինս

մասնակի առանձնահատկություններ (նոր հողեր ու հարստություններ ձեռք բերելու ու պահպանելու մեթոդները և այլն) ունենալով հանդերձ, որպես հողատիրության առանձին ձև աշխարհիկ ֆեոդալական հողատիրության հետ մի այնպիսի ամբողջություն է կազմել, որ հնարավոր չէ մեկը մյուսից անջատ ուսումնասիրել ու հասկանալ: Ավելին, աշխարհիկ ֆեոդալական հողատիրությունը բազմակողմանիորեն ուսումնասիրել ու նրա մասին հատուկ դասավանդ կազմել կարելի է միմիայն եկեղեցական հողատիրության ուսումնասիրության միջոցով:

Ֆեոդալական հողատիրության աճի ու զարգացման հետևանքով նրա մեջ ավելի ակնառու դարձած դասային տարբերություններն առանց վարանելու պետք է տարածել նաև հոգևորականության վրա:

Մեր իրականության մեջ եկեղեցական խոշոր հողատիրության աճի ու ֆեոդալիզմի զարգացման ընդհանուր ազդեցության պայմաններում հոգևորականության վերին շերտերի ձեռքում հսկայական հարստություններ, մասնավորապես ընդարձակ հողային տարածություններ էին կուտակվել, որով և ավելի պարզորոշ էր դարձել նրանց տարբերությունը եկեղեցական մյուս շերտերից: Այդ տարբերությունը բավական ցայտուն արտահայտվել է անդամ ժամանակակից կամ գրեթե ժամանակակից հոգևորական հեղինակների կողմից գրված երկերում: Մովսես Կաղանկատվացին[160], Ստեփանոս Օրբելյանը[161], ինչպես նաև Մխիթար Գոշը[162] և Սմբատ Գունդստաբլը[163] եկեղեցականներին ըստ պաշտոնի ու հոգևոր կոչման ինը տարբեր դասերի են բաժանում:

Հոգևորականներն իրենց աստիճաններին համապատասխան գիրք ունեին ու տարբեր հեղինակություն էին վայելում, անդամ հագուստով տարբերվում իրարից: Սակայն նրանց տարբերությունը միայն հոգևոր գործերում չէ, որ երևան էր գալիս: Այն ամենից առաջ հանդես էր գալիս եկեղեցու ընդհանուր ունեցվածքի

---

[160] Տե՛ս Մովսես Կաղանկատվացի, էջ 302:

[161] Տե՛ս Ստեփանոս Օրբելյան, էջ 108–111:

[162] Տե՛ս Մխիթար Գոշ, Դատաստանագիրք, էջ 251–258:

[163] Տե՛ս Սմբատ Գունդստաբլ, Դատաստանագիրք, էջ 36:

նկատմամբ նրանց իրավունքների ու անձնական տնտեսական կարողությունների մեջ:

Տնտեսական կարողությամբ, ամենից առաջ հողային սեփականություններով ու իրենց բաղում իրավունքներով ամենազորեղ հոգևոր շերտերը դասային բաժանման առաջին աստիճաններում կանգնած կաթողիկոսները, արքեպիսկոպոսները և եպիսկոպոսներն էին: Սրանցից հետո եկող հոգևոր շերտերը, այսինքն՝ հոգևորականության դասային բաժանման միջին աստիճանում կանգնած եկեղեցական խավերը ևս թեև ավելի նվազ չափով գտնվելով արտոնյալ վիճակում, տեր լինելով տնտեսական բավական միջոցների, նույնպես շահագործող դասեր էին: Վերջին շերտերը որևէ եկեղեցական պաշտոն չէին վարում, ուստի բավականաչափ դիրք ու ազդեցություն չունեին և գրեթե չէին էլ օգտվում եկեղեցու հարստություններից: 976 թվակիր հիշատակարաններից մեկում հոգևորականության ստորին աստիճանում գտնվող սպասավորներից մեկը դիմելով մյուսին ասում է. «Յառաջ մատիր, զի դու աստիճանաւ ի վեր ես, աստիճան ասաց և ոչ աթոռ. զի երիցու կարգս սարկաւագի և դպրի՝ աստիճան է ոչ աթոռ: Յորժամ ձեռնադրի եպիսկոպոս կամ կաթողիկոս, յայնժամ լինի աթոռոյն տուն օրհնութեան»[164]:

Ինչպես երևում է պատմիչների վկայություններից և մեջբերված հիշատակարանից, հենց այս սարկավագներն ու դպիրները մասամբ, նաև երեցներն էին եկեղեցու ոչ արտոնյալ, ցածրաստիճան սպասավորները:

Կաթողիկոսների, արքեպիսկոպոսների և եպիսկոպոսների տնտեսական կարողության, առավելապես նրանց խոշոր հողատեր լինելու հանգամանքը ցույց տալու, ինչպես նաև աշխարհիկ հողատիրության նկատմամբ նրա առանձնահատկությունները հասկանալու համար անհրաժեշտ է թեկուզ շատ թնթևակի գաղափար կազմել վանքապատկան հողատիրության մասին, մանավանդ որ նման հողերի հիմնական իրավունքը հոգևոր այդ դասերին էր պատկանում:

---

[164] Հիշատակարանք ձեռագրաց, սյուռնակ 124:

Սկզբնաղբյուրներից, մասնավորապես շատ հարուստ նյութ ավող վիմական արձանագրություններից երևում է, որ վանքերի հողային հարստության հիմնական աղբյուրը նրանց օգտին նվիրատվություններն էին: Դրանց մասին աղբյուրներում այնքան շատ փաստեր են պահպանվել, որ ավելորդ է անգամ օրինակներ բերելը, մանավանդ, որ այդ մասին խոսք կլինի ներքևում:

Նոր վանքեր կառուցելու, հները վերանորոգելու և զանազան այլ առիթներով աշխարհիկ ֆեոդալները եկեղեցիներին էին նվիրում գյուղեր ու այլ հարստություններ: Նրանք իրար մրցում էին վանքերի օգտին կատարվող նվիրաբերություններով, որի շնորհիվ եկեղեցին խոշոր հարստություններ էր կուտակում: Նման եղանակով վանքերի ձեռքում հսկայական հողեր կուտակվելու: Այդ առումով հատկանշական է Տաթևի վանքի օրինակը: Այս ճանապարհով եկեղեցական հողատիրության աճի ընդհանուր ապացույց կարող է հանդիսանալ 9-11-րդ դդ., ինչպես նաև հետագա երկու դարերի ընթացքում, Հայաստանում բուռն թափով ծավալված վանքերի ու տաճարների շինարարությունը, քանի որ դրանց շրջակա տարածությունները սովորաբար նրան էին անցնում:

Հաճախ ֆեոդալները, մանավանդ ոչ նշանավոր, եկեղեցուն հողեր ու այլ հարստություններ էին հանձնում թագավորի կամ խոշոր իշխանների հարկադրանքի հետևանքով: Վանքին հողեր կտակելու բովանդակություն ունեցող վիմագրերի վերջում կարելի է հանդիպել «եւս զայս իմ կամաւորութեամբ ոչ ի հարկէ, ոչ յաւադայ բռնութենէ» դարձվածքին: Նշանակում է, որ ավելի բարձր կանգնած ֆեոդալի կողմից այնպիսի բռնություն, ճնշում էր գործադրվում, որ անհրաժեշտություն էր զգացվում արձանագրությունում շեշտելու նվիրաբերության կամավորությունը:

Այս մասին ունենք ուղղակի վկայություններ ևս, 1089 թ. վավերագրերից մեկում կարդում ենք. «...ես Աշոտ իշխան որդի Կարապետայ, եւս զիմ հայրենի ժառանգութիւնն զԱմբրաւաքար ի սուրբ նշանն ի Տաթեւ ի ձեռն Տեառն Գրիգորոյ Սիւնեաց եպիսկոպոսի, հրամանաւ աստուածապսակ թագաւորին Սենեքերի-

մայ»[165]: Նույն թագավորի հրամանով Հասան իշխանը երկու գյուղ է նվիրում Տաթևի վանքին. «Ես Սենեքերիմ թագաւոր իմ ձեռովս հաստատեցի զՀասանայ վճիռս որ ... ի Տաթև երևտ իմ հրամանաւ»[166]:

Եկեղեցու կողմից հողեր ձեռք բերելու մյուս աղբյուրը սեփական միջոցներով հողեր գնելն է եղել: Պահպանված բազմաթիվ փաստերը ցույց են տալիս, որ մեզ մոտ վանքերը ոչ միայն աշխարհիկ ֆեոդալներից հետ չեն մնացել, այլև ավելի շատ են օգտագործվել դրամով հողեր դնելու միջոցից (քսակադին): Բերենք համապատասխան վկայություններ: 839 թ. Տաթևի եպիսկոպոս Տեր Դավիթը խնդրում է «Տեառնէ Փիլիպպէէ՝ իշխանէն Սիւնեաց, ընդ գնոյ տալ զմերձակայ ագարակն. զոր և լուսալ կատարէ զխնդիրն. և առեալ 10,000 դրամ որ լինի ի մէն մի 6 դանկ. և տայ ի ձեռս նորա զԱրծիւ գիւղ և զԲերդկաներէչ որ ի վերոյ վանիցն, բոլորն ընդ ջրթափովն՝ ազատ յամենայն աշխարհական հարկաց և ի նեպակաց»[167]:

Երրորդ կարևոր աղբյուրն այդ գյուղական համայնքների հաշվին վանքերի հողային տարածությունների ընդարձակման կամ ուղղակի նրանց բռնագրավման միջոցն է եղել[168]: Վերջին երկու այս մեթոդներով հողեր ձեռք բերելը բնորոշ էր նաև աշխարհիկ ֆեոդալներին, իսկ առաջին կարևոր, վանքերին ամենից ավելի օգտավետ միջոցը հատուկ էր միայն հոգևոր ֆեոդալներին:

Բոլոր այդ հողերը եկեղեցուն էին անցնում ընդմիշտ տիրելու իրավունքով և ենթակա չէին օտարման, բաժանման: Այն դեպքում, երբ աշխարհիկ ֆեոդալական կալվածքները մասնատման, քայքայման էին ենթարկվում օտարելու և ժառանգների միջև բաժանելու հետևանքով, վանքապատկան հողային տարածություն-

---

[165] Ստեփանոս Օրբելյան, էջ 331:
[166] Նույն տեղում, էջ 327:
[167] Նույն տեղում, էջ 204–205:
[168] Դրա լավագույն ապացույն է Ցուր, Տամալեկ ու Ավելադաշտ գյուղերի բնակչության բռնի տեղահանումը և նրանց հողերի ապօրինի յուրացումը Տաթևի վանքի կողմից: Տե՛ս Ստեփանոս Օրբելյան, էջ 228–230, 247–252–258, 266–274:

ները, ընդհակառակը, այդ առանձնահատկությունների շնորհիվ աստիճանաբար աճում էին:

Բոլոր այս միջոցներով բարձրաստիճան հոգևորականներն իրենց ձեռքում ընդարձակ հողեր էին կուտակել և ոչ միայն տնտեսապես էին զորեղացել, այլև երկրում քաղաքական խոշոր ուժ էին դարձել: Նրանք դրա հետևանքով անջատվել և որոշակիորեն տարբերվում էին հոգևոր մյուս շերտերից:

Եկեղեցական հողերը աղբյուրներում սովորաբար կոչվել են «ժառանգութիւն սրբոյ եկեղեցւոյ» անունով[169]: Օգտագործվել են նաև «սեպհականութիւն», «հայրենիք»[170], տերմինները թեև ավելի սակավ քանակով:

Վանքի տրամադրության տակ եղած հողերն օգտագործվել են տվյալ վանքի հոգևորականության կողմից: Սակայն եպիսկոպոսության սահմաններում գտնվող վանքապատկան հողերի գլխավոր տնօրենը համարվում էր տվյալ եպիսկոպոսության արքեպիսկոպոսը կամ եպիսկոպոսը, իսկ զուտ կաթողիկոսության սահմաններում կաթողիկոսը: Հողն ընդմիշտ ամրացվում էր վանքին և համարվում նրա սեփականությունը:

Եկեղեցու առաջնորդները կարող էին վանքապատկան հողերից ստացվող եկամուտն իրենց իրավասության սահմաններում այս կամ այն ձևով տնօրինել, լավագույն դեպքում դրանց փոխանակում կատարել: Սակայն նրանք վանքապատկան հողերի սեփականատերը չլինելով չէին կարող նրա հետ այնպես վարվել, ինչպես աշխարհիկ ֆեոդալներն, իրենց կալվածների հետ: Վանքապատկան հողերի սեփականատերը վանքն էր հանդիսանում և ոչ թե դրա հոգևոր առաջնորդը, հետևաբար վերջինս իրավունք չուներ եկեղեցական հողերը օտարելու կամ նման մի այլ ձևով տնօրինել: Տվյալ վանքի վանահայրը կամ եպիսկոպոսը վանքի հողերի վրա իրավունք ուներ այնքան ժամանակ, քանի դեռ գտնվում էր այդ պաշտոնում, իսկ պաշտոնն ընտրովի-ժառանգական բնույթ ուներ: Ձևական տեսակետից հոգևոր առաջնորդները, ինչպես կաթողիկոսը, այնպես էլ եպիսկոպոսներն ու վանահայրերը ընտրը-

---

[169] Տե՛ս նույն տեղում, էջ 217, 231, 321 և այլն:
[170] Նույն տեղում, էջ 224, և այլն:

վում էին, սակայն փաստորեն այդ պաշտոնը ժառանգական բնույթ ուներ, քանի որ, որպես կանոն, հոգևոր պաշտոնյայի ժառանգներից կամ ազգականներից մեկն ու մեկն էր ընտրվում: Այս կամ այն անձնավորության ընտրությունը մեծ չափով կախված էր վանքի հովանավոր թագավորի կամ իշխանի կամքից: Վերջիններիս համար երկրորդական նշանակություն չուներ այն հարցը, թե ո՞վ կդառնա վանքի հոգևոր առաջնորդը, և նրանք ակտիվ մասնակցում ու միջամտում էին այդ, այսպես կոչված ընտրության հարցին և սովորաբար անց էին կացնում իրենց ցանկացած մարդուն: Այնուհանդերձ, եթե այս կամ այն պատճառով վանքի առաջնորդները հեռացվում էին իրենց պաշտոնից, զրկվում էին վանքի հողերից օգտվելու իրավունքից: Այդ իրավունքն անցնում էր նրանց փոխարինողներին:

Վանքապատկան հողերի այդ յուրահատկությունը երևում է նաև իշխանների կողմից վանքերին գյուղեր նվիրելու առթիվ գրված արձանագրություններից: Այսպես, օրինակ, Փիլիպպ իշխանը Տաթևի վանքին համանուն գյուղը նվիրելու կապակցությամբ կազմած «վճիռ»-ի մեջ շեշտում է հետևյալը. «Ես ետու ամենայն սրտի մտօք ի ձեզ ի Տէր Դաւիթ Սիւնեաց եպիսկոպոս, վայելել խաղաղական կենդանութեամբ, և որ յետ ձեր այլք նստին յաթոռդ... զգիւղդ սահմանաւդ յեկեղեցւոյդ մի իշխեսցեն հեռացուցանել, մի վաճառել, մի փոխել, մի գրաւական դնել. այլ որ եկեղեցւոյն սպասաւորքն լինին, իշխան լիցին ամենայն սահմանացն»[171]: Այս վկայությունից պարզ երևում է, որ նվիրվող գյուղն ընդմիշտ անցնում է վանքի գերիշխանության տակ: Վկայության վերջին մասում նշված է, որ հետագայում ովքեր վանքի հոգևոր առաջնորդներ լինեն, այդ գյուղի տերը կհանդիսանան: Այսինքն վանքի սպասավորությունից հեռացվող հոգևորականը զրկվում էր նրա հողերի վրա ունեցած իրավունքից:

Այս փաստից միաժամանակ երևում է, որ վանքի հողերի իրավունքը հիմնականում պատկանելիս է եղել բարձրաստիճան հոգե-

---

[171] Նույն աղբյուր, էջ 207: Նույնանման փաստեր տես նաև 217, 219, 267 էջերում:

վորականներին, քանի որ տեքստի վերջում եկեղեցու սպասավորներ ասելով հեղինակը հենց նրանց է նկատի ունեցել:

Վանքի սեփականությունը համարվող հողերի եկամուտի փաստական տնօրինողը լինելուց բացի, կաթողիկոսները, արքեպիսկոպոսներն ու եպիսկոպոսներն ունեին անձնական կալվածքներ և տնտեսություններ, որոնք նրանց ժառանգական սեփականությունն էին համարվում:

Կաթողիկոսը խոշոր կալվածքներ ուներ ոչ միայն Բագրատունյաց թագավորության մեջ, այլև հայկական մյուս թագավորություններում և իշխանություններում: Բավական է միայն հիշել Հովհաննես Դրասխանակերտցի և Պետրոս Ա. Գետադարձ կաթողիկոսների անձնական հսկայական կալվածքները:

Կաթողիկոս պատմիչն արաբ զորահրամանատար Նրսրի արշավանքների կապակցությամբ իր մասին գրում է. «Եւ զարձեալ չուլուղի անկեալ չոդաք մինչև ի ձեռակերտ ամրոցիկն իմ Բիւրական, զոր ստացեալն էր իմ զանձի գնոյ, ուր և շինեալ յարդարեալ իսկ էի եկեղեցի»[172]: Անկասկած Հովհաննես Դրասխանակերտցուն էին պատկանում նաև իր ամրոցի ու կառուցած եկեղեցու շրջակայքի հողերը:

Մատթեոս Ուռհայեցու վկայությամբ Պետրոս Ա.-ն իր կաթողիկոսության շրջանում Հայաստանի տարբեր մասերում հսկայական չափերի հասնող կալվածքներ ուներ[173]:

Այս բոլորից բացի, կաթողիկոսին Հայաստանի բոլոր եպիսկոպոսներն ու իշխանները զանազան առիթներով նվերներ էին տալիս, որի շնորհիվ նա բավական եկամուտներ էր ստանում: Հիշենք այդպիսի մի դեպք: Սյունիքի Հակոբ եպիսկոպոսի անհնազանդության պատճառով Անանիա կաթողիկոսը գալիս է Տաթև, որտեղ հարցը հաշտությամբ լուծվելուց հետո, նա Հակոբ եպիսկոպոսից ու Սյունիքի Սմբատ իշխանից մեծամեծ նվերներ է ստանում և կրկին վերադառնում իր աթոռանիստ[174]:

---

[172] Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 336:
[173] Տես Մատթեոս Ուռհայեցի, էջ 153–158:
[174] Տես Ստեփանոս Օրբելյան, էջ 277:

Այսպիսով, եկեղեցու բարձրաստիճան դործիչներն աշխարհիկ ֆեոդալների նման խոշոր ֆեոդալական հողատերեր էին և մեծ դեր էին խաղում երկրի սոցիալ-տնտեսական կյանքում:

դ. Ֆեոդալական կալվածք

Աղբյուրներում պահպանված առատ տեղեկությունները ոչ միայն տարակուսանքի տեղիք չեն տալիս, այլև լիովին համոզում են, որ ֆեոդալները ժառանգական սեփականության իրավունքով տիրապետում էին հսկայական չափերի հասնող տերիտորիաների: Սակայն սկզբունքային կարևորություն ունեցող հարց է առաջանում խոշոր ֆեոդալների կողմից իրենց տիրապետության մեջ կազմակերպած տնտեսության բնույթի վերաբերյալ: Ի՞նչ ձևով էին ֆեոդալները վարում տնտեսությունն իրենց հայրենիք-կալվածքում:

Ֆեոդալիզմի ընդհանուր պատմությունից հայտնի է, որ նման դեպքերում տնտեսության կազմակերպման երկու հիմնական ձև գոյություն ունի: Մի դեպքում ֆեոդալն իր կալվածքում[175] *խոշոր տնտեսություն է կազմակերպում՝ կախյալ դյուղացիների կամ ճորտերի անմիջական աշխատանքը շահագործելու միջոցով (աշխատավճար ռենտա), մյուս դեպքում՝ հրաժարվելով խոշոր տնտեսություն վարելուց՝ իր հողերը մանր մասերի բաժանելով տալիս է կապալով կամ թողնում իրեն ենթակա դյուղացիների անմիջական տրամադրության տակ, որոնք մշակում և համապատասխան տուրքեր են վճարում տիրոջը (բնամթերքային կամ նատուրալ ռենտա): Այս վերջին դեպքում կալվածատիրոջ ապրուստի հիմնական միջոցն անմիջական արտադրողի մուծած հարկերն են, իսկ տնտեսության կազմակերպման առաջին ձևի ժամանակ՝ սեփական տնտեսությունից ստացված եկամուտները:*

---

[175] Այստեղ և այսուհետև, երբ խոշոր ֆեոդալների կապակցությամբ է օգտագործվում կալվածք տերմինը, այն գործածվում է հայրենիք-կալվածքի, ռուսական вотчина-ի իմաստով:

9-11-րդ դդ. Հայաստանում ֆեոդալական տնտեսության բնույթի, կալվածքի կառավարչության, նրա ներսում աշխատանքի կազմակերպման և առհասարակ կալվածքի հետ կապված բազմաթիվ կարևոր այլ հարցերի ուսումնասիրությունը դրանց մասին ուղղակի աղբյուրներ չունենալու պատճառով բավական դժվարանում է: Մենք ֆեոդալական կալվածքային տնտեսության հետ կապված գրեթե բոլոր հարցերի մասին հարկադրված ենք խոսել պատմիչների և վիմական արձանագրությունների հաղորդած կողմնակի, հաճախ շատ ընդհանուր ու բնորոշ, տվյալների հիման վրա:

Բագրատունյաց էպոխայում հայրենատեր իշխանների սեփական տնտեսություն ունենալու առթիվ աղբյուրների տվյալները, թեև շատ ընդհանուր են, սակայն այնքան համոզիչ ու անժխտելի են, որ պետք է այդ հարցին դրական պատասխան տալ:

Բերենք ֆեոդալների անձնական խոշոր տնտեսության գոյությունը հաստատող կարևոր փաստերը:

Սյունիքի իշխան Փիլիպպեից Տաթևի նոր եպիսկոպոս Հակոբը 932 թ. գնում է Վարարակ ջուրը և այդ մասին գրում. «...Բաղում ծախիւք և մեծամեծ աշխատութիւնամբ վերին օգնականութեամբն ածի զջուրն ի լեռնէն Զաղէձորոյ և բերի ի Վարդուտս»[176]: Նա այդ ջրի շնորհիվ նոր այգիներ ու ծառեր է գցում, մինչ այդ ամայի, փշատ վայրերը ևս մշակում, օգտագործելի դարձնում: Հակոբ եպիսկոպոսը խստիվ արգելում է չորսի գյուղերի, որոնք հավանաբար ջրի ընթացքի վրա էին գտնվում, և. ուրիշ մարդկանց, դաշտավարական նպատակներով ջուրն օգտագործել, թույլատրելով նրանից օգտվել միայն խմելու համար: Փիլիպպե իշխանն իր հերթին արձանագրում է, որ Վարարակ ջուրը վաճառել է և այլևս ո՛չ ինքը, ո՛չ իր որդիները և ոչ էլ այլ օտար մարդիկ իրավունք չունեն այդ ջրից օգտվելու: Այսինքն ջրի ամբողջ իրավունքն անցնում է եկեղեցուն:

Եկեղեցին ծախսեր է անում ու ջուրը գնում (12.000 դրամ և մեկ դոհար), մեծ դժվարություններով այն հասցնում իր հողերին

---

[176] Ստեփաննոս Օրբելյան, էջ 254:

և ուրշներին խստիվ արգելում դրանից օգտվել, միմիայն վանքի սեփական տնտեսությունը նրանով ոռոգելու նպատակով. Ընդ որում, այդ տնտեսությունը պետք է որ բավական մեծ լիներ, որովհետև վանքի ունեցած հին այգիների վրա ավելանում են գնված ջրի շնորհիվ ոռոգվող նորանոր տարածություններ և եթե այդ մեծությունն ու եկամտաբերությունը չլիներին՝ եկեղեցին մեծ ծախսերի գնով այն ջրովի չէր դարձնի: Ուրիշ ոչ մի կերպ հնարավոր չէ պատճառաբանել Տաթևի վանքի կողմից Վարարակ կոչված ջուրը գնելու այս փաստը:

Մատթեոս Ուռհայեցին վկայում է, որ սելջուկները 1049 թ. Հայաստան կատարած երկրորդ արշավանքի ժամանակ ամբողջովին ավերեցին ու թալանի մատնեցին Արծն քաղաքը, այդ թվում նաև տեղի քորեպիսկոպոս Դավթակի հսկայական դանձերը: Դավթակի մասին պատմիչն մեծ չափազանցությամբ ավելացնում է. «... ութ հարիւր վեցկի եզանց ելանէին ի տանէ նորա»[177]: Սա միանգամայն պարզ վկայություն է ֆեոդալների սեփական և այն էլ շատ խոշոր տնտեսություններ ունենալու մասին, քանի որ Դավթակը բազմաթիվ լուծ եզներ կարող էր պահել միայն և միայն իր տնտեսությունը մշակելու համար: Այլ կերպ չի կարելի հասկանալ նրա տնից բազում «վեցկէ» դուրս գալու հանգամանքը:

Աղբյուրներում հաճախ ենք հանդիպում կոռի միջոցով կատարված աշխատանքների վկայության: Տեղեկություններ կան ոչ միայն կախյալ գյուղացու հարկադրական աշխատանքի մասին (մարդոյ կոռ), այլև նրանց արտադրական միջոցների շահագործման վերաբերյալ: Անիի 11-րդ դ. պատկանող արձանագրություններից մեկում կարդում ենք «... Եւ ապատեցին զվեցկէ կոռ. եւ զսայլի, եւ զկամին. եւ զանդարիոն...»[178]:

Այս վկայությունից երևում է, որ ֆեոդալից կախված մի քանի ընտանիք միասին կամ ավելի ճիշտ գյուղական համայնքը պարտավոր էր սեփական եզներով ու դութանով վարել տիրոջ հողը (վեցկէ կոռ), կալսել նրա կալը (կամին կոռ) դաշտից տեղափոխել բերքը կալսելու համար, ապա պատրաստի հացահատիկը փո-

---

[177] Մատթեոս Ուռհայեցի, էջ 103:
[178] Ղ. Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 70:

խաղրել տիրոջ շտեմարան կամ նրա տնտեսության մեջ սայլով փոխադրելու այլ անհրաժեշտ աշխատանքներ կատարել (սայլին կու)[179]:

Անիի վիմական տեքստերում պահպանված այս պերճախոս փաստը որոշակի վկայություն է ֆեոդալների խոշոր տնտեսություններ վարելու և դրանք կախյալ բնակչության աշխատաուժով ու միջոցներով մշակելու վերաբերյալ, քանի որ այդ բազմազան կոռային աշխատանքները կարող էին գործադրվել միայն նման տնտեսության մեջ: Կոռային աշխատանքների մասին մեզ հասած փաստերը ֆեոդալ իշխանների սեփական տնտեսության գոյության լավագույն ապացույց են որովհետև եթե կալվածատիրոջ ամբողջ տնտեսությունը կառուցված լիներ իրեն ենթակա բնակչությունից պատրաստի մթերքներ ստանալու հիման վրա, ապա կոռի ու կոռային աշխատանքի ոչ մի անհրաժեշտություն չէր լինի: Այդ աշխատանքը կոռային է կոչվում հենց այն պատճառով, որ կատարվում էր ֆեոդալի անձնական տնտեսության մեջ և ոչ թե մի այլ վայրում:

Ֆեոդալների մասնավոր տնտեսության առկայության օգտին են խոսում նաև անհատական սեփականության իրավունքով նրանց ունեցած այգիների, բանջարանոցների, ձկան որսատեղերի, անասունների հոտերի մասին եղած բավականաչափ առատ փաստերը:

Հայ ֆեոդալների ժառանգական սեփականատիրական հողերն այնքան մեծ ու ընդարձակ տարածություններ էին բռնում, որ հաճախ ընդգրկում էին մի քանի տասնյակ գյուղեր: Ուսումի փաստերին օբյեկտիվ մոտենալու դեպքում պարզ երևում է, որ աշխարհիկ և եկեղեցական ֆեոդալների տիրապետություններն ամբողջովին չեն ընդգրկվել ու տարրալուծվել նրանց անհատական խոշոր տնտեսությունների մեջ: Այսինքն՝ կալվածատերն իր տիրույթի մի մասում խոշոր տնտեսություն էր կազմակերպում ու սեփական արտադրական միջոցներով այն մշակում, իսկ մյուս՝ ավելի մեծ մասում, պահպանվում էին համայնական կազմակեր-

---

[179] Տե՛ս Очерки истории СССР, период феодализма, часть первая, էջ 591:

պության մեջ ընդգրկված գյուղերն ու գյուղական մանր տնտեսությունները:

Ֆեոդալիզմի ամենուրեք հանդիպող հիմնական առանձնահատկություններից է, այն երբ ֆեոդալական կալվածքում հողը երկու մասի էր բաժանվում տիրոջ հողերի, որի վրա իր տնտեսությունն էր վարում կալվածատերը և կախյալ գյուղացիության կողմից օգտագործվող հողերի:

Որպես ասվածի ապացույց վերցնենք մեզ արդեն ծանոթ Տաֆեվի վանքի ֆեոդալական տնտեսության օրինակը: Հակոբ եպիսկոպոսն առու անցկացնելու և նոր այգիներ գցելու միջոցով վանքի հողերն ընդարձակելով չի բավարարում: Նա Սմբատ իշխանի օգնությամբ շրջակա երեք գյուղերի (Յուրաբերդ, Ավելադաշտ, Տամալեկ) բնակչությունը դուրս է քշում և նրանց հողերը ևս միացնում վանքի հողերին, դրանով իսկ ստեղծելով խոշոր վանքային տնտեսություն: Սակայն այդ տնտեսությունից բացի Տաֆեվի վանքն իր տիրապետության ներքո սեփականատիրական իրավունքով ուներ նաև մեծ մասամբ նվիրատվությունների միջոցով ձեռք բերած բազմաքանակ գյուղեր, որոնք նրան, որպես տիրոջ ֆեոդալի ենթակա էին: Նրանց ենթարկվածությունն արտահայտվում էր պարբերաբար հարկեր վճարելու և հարկադրական աշխատանք կատարելու միջոցով:

Վանքին հարկեր էին վճարում (պտուղ) Սյունիքի եպիսկոպոսության մեջ գտնվող մյուս գյուղերը, ևս սակայն ոչ իբրև իրենց տեր ֆեոդալի, այլ որպես հոգևոր առաջնորդի: Այդ գյուղերը գտնվում էին Սյունիքի աշխարհիկ ֆեոդալների տիրույթներում և նրանց սեփականությունն էին համարվում:

Կալվածատիրոջ կողմից իր տիրապետության մեջ խոշոր տնտեսություններ կազմակերպելուն զուգահեռ կալվածքի մյուս սովորաբար ավելի մեծ մասում համայնքի մեջ համախմբված մանր գյուղական տնտեսություններ ունենալը և պահպանելը հիմնականում բնորոշ էր նաև աշխարհիկ ֆեոդալական իշխանություններին:

Կալվածքի այս երկրորդ մասը նրա ընդհանուր տնտեսությունից կտրված և մեկուսացած բան չէր: Ընդհակառակը, այն սերտո-

րեն շաղկապված ու հարմարեցված էր կալվածատիրոջ ընդհանուր տնտեսության շահերին՝ հանդիսանալով նրա բաղկացուցիչ մասը:

Սակայն միշտ չէ, որ ֆեոդալների կալվածքները նրանց ինքնուրույն խոշոր տնտեսություններ վարելու հնարավորություն չէին ընձեռնում: Հաճախ կալվածատիրոջ ամբողջ հողային ֆոնդը բաղկացած էր լինում տարբեր գյուղերի տերիտորիաներում ցրված փոքր հողակտորներից: Այդպիսի դեպքում նա հարկադրված էր այդ հողամասերն օգտագործել ոչ թե խոշոր տնտեսություններ կազմակերպելու եղանակով, այլ մանրատված ձևով՝ մանր հողագործների միջոցով: Նման պարագաներում խոշոր հողատերերն իրենք անհատական մեծ տնտեսություն չէին կարող վարել: Իշխանների հողերի շերտընդմեջ ցրվածությունը երևում է վանքերի օգտին նրանց կատարած նվիրատվական վավերագրերից:

Իշխանաց իշխան Աշոտ Բագրատունին 874 թ. Մաշտոց կաթողիկոսին այցելության գալով Սևանի ս. Աստվածածնի եկեղեցու «տայ ի ժառանգութիւն ... գեօղս՝ զՎարսերն, զՑամաքարերդ, զԳոմաձորն, զԲերդքն, զՈւռնաց տափ և զորան կռակծին, և այգիս ի Գառնի և յԵրևան և յայլ տեղիս»[180]*: Այս վկայությունից որոշակիորեն երևում է, որ Աշոտ Բագրատունու տիրույթները շատ մասնատված և տարբեր տեղերում ցրված են եղել: Ինչ խոսք, որ Սևանի վանքի կալվածքն էլ նույն ձևով պետք է կազմակերպված լիներ, քանի որ վանքն իրեն մոտ գտնվող գյուղերի հետ մեկտեղ ստանում է որսատեղ, այգիներ, իրենից բավական հեռու ընկած Գառնիում, Երևանում և ուրիշ վայրերում:*

Բերենք նույնանման մի այլ փաստ ևս. «ես Սուփան՝ Սիւնեաց իշխան, չինեցի զՄաքենոցաց եկեղեցիս և անխնայաբար զարդարեցի... և ետու զսեփական տեղն մեր ի սա որ ըստ անուան եկեղեցւոյ Աստուածածին ասի, ... և ետու որս ձկանց զԲողաշէն սեղանոյն, ... ետու և 5 կուզպակս ի յԱնի և 5 այգի յԵրևան և 500 առու այգի ի գիւղաքաղաքն Գառնի, և 2 այգի յԵղեգիս»[181]*: Հետաքրքիր է, որ նա տալիս է նաև «ջուլիրս եղանց և ջոկս գուարա-*

---

[180] Ստեփանոս Օրբելյան, էջ 174:
[181] Նույն տեղում, էջ 179:

կաց և անդեայս և հօտս ոչխարաց»[182]: Ինչպես տեսնում ենք Մոքենոցած վանքի այգիներն առավել ևս ցրված և տարբեր վայրերում էին ընկած:

Իշխանների հողային տարածությունների մասնատվածությունը Հայաստանում գերիշխող է եղել և այդ է պատճառը, որ ֆեոդալական խոշոր կալվածքներն ավելի շատ կառուցված են եղել մանր գյուղական տնտեսությունների արտադրության հիման վրա, քան թե անձնական խոշոր տնտեսություններ կազմակերպելու ձևով:

Ինչպես տեսանք, մեզ մոտ կազմակերպված են եղել նաև ֆեոդալական խոշոր տնտեսություններ, անգամ այդպիսիք չունեցող ֆեոդալը հատկապես իր կալվածքի կենտրոնական մասում անձնական տնտեսություն՝ այգիներ ու բանջարանոց է ունեցել: Սակայն բանն այն է, որ ֆեոդալական այդ խոշոր անհատական տնտեսությունները գերիշխող չեն եղել ու երկրում լայն տարածում չեն ստացել: Դրանց սահմանափակ բնույթի հետևանքով էլ կալվածքի ներքին կառուցվածքի, նրա վարչական ապարատի մասին բավարար փաստեր չունենք:

Ֆեոդալական կալվածքի և ընդհանրապես ագրարային հարաբերությունների ուսումնասիրման ժամանակ պետք է ելնել համայնք-գյուղից՝ որպես կալվածքային տնտեսության և, առհասարակ, հայ միջնադարյան հասարակության հիմնական կազմակերպական միավորի: Ի վերջո համայնք-գյուղը և ոչ թե կալվածքն էր ընկած հողային հարաբերությունների հիմքում: Կալվածքային տնտեսության մեջ տեղի ունեցած փոփոխությունները գյուղական համայնքի մեջ կատարված տեղաշարժերի արդյունք էին, ավելի ճիշտ՝ դրանք միևնույն պրոցեսի երկու տարբեր կողմերն էին:

Բագրատունյաց էպոխայում հայկական գյուղական համայնքը՝ լինի նա մեծ թե փոքր, այն հիմնական հասարակական բջիջն էր, որի մեջ ու որի հետ կողք-կողքի աճում և զարգանում էր կալվածքային տնտեսությունը: Հետևաբար, ֆեոդալական կալվածքի կառուցվածքի անգամ նրա մի մասը կազմող տիրոջ անհատական

[182] Նույն տեղում, էջ 180:

տնտեսության մասին, որի վերաբերյալ աղբյուրները բավարարվում են շատ աղոտ ու կցկտուր տեղեկություններ հաղորդելով, կարելի է դաղափար կազմել միայն գյուղի ու գյուղական համայնական կազմակերպության ուսումնասիրության միջոցով:

Գյուղերն իրենց համայնական կազմակերպությամբ, տիրապետած հողերով ու դաշտերով ամեն տեսակ հարաբերությունների, դժվարությունների ու պայքարի օբյեկտ են հանդիսացել և այդ առումով ուժեղ հետք են թողել մեր աղբյուրներում: Ինչպես հնում՝ վաղ ֆեոդալիզմի էպոխայում, նույնպես և Բագրատունյաց շրջանում գրանք հիմնականում կոչվել են նույն տերմինով: Սակայն շատ հաճախ գյուղ տերմինի հետ մեկտեղ հանդիպում ենք «շէն», «աւան», «ագարակ», «դաստակերտ» անվանումներին, որոնք կամ նույն առումով կամ նրան շատ մոտ իմաստով են օգտագործվում: Այն ժամանակվա պատմական գրականության մեջ «շէն» տերմինի օգտագործման իմաստից ելնելով կարելի է անվերապահորեն ասել, որ այն գյուղին համազոր նշանակություն ու գործածություն է ունեցել: Մանավանդ Ստեփանոս Օրբելյանի Պատմության մեջ եղած արժեքավոր փաստերը նման դատողության համար որոշակի հիմք են:

Իշխան Հրահատը 844 թ. Տեր Դավթին ընծայում է «... գեօղ մի ի Կովսական գաւառի Նորաշինիկ անուն»[183] որից հետո վերջինս իրավունք է ստանում այն «ուտել և վայելել, պահել և ունել, գնոյ տալ և գրաւական դնել...»[184]: Ինչպես տեսնում ենք, պատմիչն առաջին դեպքում հիշատակած Կովսական գյուղին մի քանի տող հետո շեն է անվանում: Հայտնի է, որ Օրբելյանը Տաթևի վանքի արխիվի կարևոր փաստաթղթերը բառացիորեն բերում է իր Պատմության մեջ, իսկ մինչ այդ սեփական բառերով պատմում է նրա բովանդակությունը: Մի քանի այդպիսի դեպքերում միևնույն վայրին հեղինակը գյուղ է անվանում, իսկ մեջբերված արձանագրության մեջ այն շեն ձևով է վկայվում կամ հակառակը:

Օրբելյանը պատմում է, որ 871 թ. Սյունիքի իշխան Ջուանշերը Սաղոմոն եպիսկոպոսին խնդրում է «զգիւղն Բեխ որ ի Կովսա-

---

[183] Նույն տեղում, էջ 209:
[184] Նույն տեղում, էջ 210:

կան գաւառի, որ էր սեպհական ժառանգութիւն սուրբ Խաչին... փոխանակէ զիւր սեպհական գիւղն Արուքս որ ի Բաղք գաւառի. որ հաւանեալ եպիսկոպոսին՝ տայ զԲեխ և առնու զԱրաքս գիւղ»[185]: Փոխանակության առթիվ կազմած արձանագրության մեջ կարդում ենք. «... կամ եղև ինձ Ջուանշէրի ... զիմ զշէն մի որ ի Բաղք գաւառի Արուքս անուն... փոխանակել ընդ Բեխոյ շինոյն որ Կովական գաւառի էր»[186], և որ այսուհետև Տեր Մատոմոնը իրավունք ունի «...ժառանգել զայդ շէնդ...»[187] և այլն: Այս տերմինները, եթե անգամ ունեցել են իմաստային որոշ տարբերիչ գծեր ու երանգներ, ապա դրանք այնքան աննշան են եղել, որ տվյալ դեպքում մեզ այդ չի հետաքրքրում: Ի դեպ, բառարաններում էլ նրանց միևնույն բովանդակությունն է վերագրված:

«Աւան» տերմինը նմանապես շատ է հանդիպում, սակայն ոչ թե գյուղի փոխարեն է օգտագործվում, ինչպես «շէն»-ը, այլ մեծ մասամբ նրա հետ ու գրեթե նույն իմաստով: Հովհաննես Դրասխանակերտցին, որը մեր պատմիչների մեջ ամենից ավելի է գործածում այս տերմինը, Սմբատ Ա-ի սպանությունից (914 թ.) անմիջապես հետո կատարված Յուսուֆի ավերիչ արշավանքի առթիվ ասում է, որ «աւանք և շէնք մեր եղեն իբրև զանդաստան մացառախիտ»[188], որովհետև քանդում էին «զքաղաքս և զգեօղս և զաւանս և զագարակս»[189]:

Թովմա Արծրունին հայտնում է, որ արաբական զորավար Բուղան իր պատժիչ արշավանքի ժամանակ զորքերին հրամայում է «զբազմամարդի գեօղս և աւանս առնել անմարդիս» և որ նրանք Հայաստանում «զշէնս և զաւանս և զագարակս հրձիգ արարեալ՝ անապատ կացուցանեն ի մարդոյ և յանասնոյ»[190]:

«Գեօղ և աւան» ընդունված գործածության ձևը մի կողմից ցույց է տալիս դրանց իմաստային մոտիկությունը, իսկ մյուս

---

[185] Նույն տեղում, էջ 216–217, նմանօրինակ վկայություններ տես նաև 269–270, 291 էջերում:
[186] Նույն տեղում, էջ 217:
[187] Նույն տեղում, էջ 185:
[188] Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 257:
[189] Նույն տեղում, էջ 259:
[190] Թովմա Արծրունի, էջ 213–214:

կողմից կարծես թե ընդգծում է, որ այնուամենայնիվ նրանց միջև որոշ տարբերություն կա:

Հ. Աճառյանի Արմատական բառարանում «աւանը» բացատրված է «գիւղաքաղաք, մեծ գիւղ»[191] իսկ Հայկազյան բառարանում՝ «Գիւղ մեծ, քաղաք փոքր կամ անպարիսպ, գիւղաքաղաք, քաղաքագիւղ»[192] ձևով: Այս բացատրությունները պետք է հիմնականում ճիշտ համարել, մանավանդ որ դրանք հաստատվում են պատմիչների վկայություններով: Հովհաննես Դրասխանակերտցին Շիրակի Բագրատունիների Բագարան ձեռակերտին, որն իրոք մեծ գյուղ էր, անվանում է ավան[193], իսկ մեկ այլ տեղ՝ քաղաքագյուղ[194]: Ասողիկը վկայում է, որ ագարակներն, ավանների, իսկ ավանները՝ գյուղաքաղաքների էին վերածվում[195]: Դա նշանակում է ավանները կոչվում էին գյուղեր, սակայն միայն մեծ գյուղերը, որոնք փոքրիշատ աճելու դեպքում դառնում էին գյուղաքաղաքներ:

9-11-րդ դդ. աղբյուրներում նույնպես առատորեն հանդիպող «ագարակ» բառն իմաստային առումով տարբերակումներ է տալիս: Այդ տերմինին ճիշտ մեկնաբանություն կարելի է տալ, եթե նկատի ունենանք հնում նրա ունեցած բովանդակությունը:

Ս. Երեմյանն ուսումնասիրելով մինչարաբական ժամանակաշրջանի Հայաստանում ագարակ և դաստակերտ տերմինները և հետևելով դրանց էվոլյուցիային, ցույց է տվել, որ «ագարակ»-ը ծագել է սումերա- ակկադական agar տերմինից և ունեցել է վարելահողի, դաշտի, ցանցի նշանակություն: Հայերենում այդ տերմինը ստացել է մասնատիրական վարելահողի, տնտեսության, կալվածքի, կայքի իմաստ: Հետագայում, ագարակների անմիջական արտադրողներն ավելի ու ավելի հողին ամրացվելու հետևանքով դրանք վեր են ածվում գյուղական բնակավայրերի: Արդեն 4-րդ դ. «ագարակ»-ը գյուղական տիպի բնակավայր, էր որի

---

[191] Հ. Աճառյան, Արմատական բառարան, հ. Ա, Երևան, 1926, էջ 794:
[192] Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. առաջին, Վենետիկ, 1836, էջ 389:
[193] Տե՛ս Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 143:
[194] Տե՛ս նույն տեղում, էջ 194:
[195] Տե՛ս Ասողիկ, էջ 161:

բնակիչները, սակայն, դառնվում էին ավելի ստորացված վիճակում, քան գյուղերի, շենների ու քաղաքների բնակիչները[196]:

Հետագա դարերում ագարակի այս վերջին իմաստն ավելի է ամրապնդվում ու տարածվում: «Ագարակ»-ը 9–11-րդ դդ. գործ է ածվում հենց գյուղի կամ գյուղատիպ բնակավայրի նշանակությամբ: Ըստ Ասողիկի 994 թ. երկրաշարժն ավերեց «ամենայն չինուածք քաղաքաց, գիւղից և ագարակաց»[197]: Նսրը զորավարը նվաճում է Բեղյա ամրոցը «... և շուրջանակի զգեօղս և զաւանս և զագարակս յիւր անուն պայազատէ»[198]: Բազմիցս ագարակն օգտագործվում է գյուղի կամ շենի հետ միասին, որպես նույն տիպի բնակավայրի[199]:

Ուսումնասիրվող շրջանում, սակայն, դեռևս պահպանվում էր ագարակի նախկին՝ վարելահողի, տնտեսության կալվածքի իմաստը: Այսպես, օրինակ, Վահրամ Պահլավունին իր կառուցած Մարմաշենի եկեղեցուն 1029 թ. գանձադին գյուղերի ու ագարակների թվում նվիրում է նաև «զԲագարանի գեղ եւ զիւր ագարակն»[200]: Անշուշտ այստեղ ագարակն օգտագործվում է իր նախկին բովանդակությամբ, որը, սակայն, այս շրջանում հնչում էր լոկ որպես անցյալի վերապրուկ:

Ըստ երևույթին, հետագա դարերում ագարակ, եղրույթն ամբողջովին կորցնում է իր նախկին իմաստը և լրիվ նույնացվում գյուղ հասկացողության հետ: Այսպես օրինակ, 1223 թ. իշխանաց իշխան Բուպակը գրում է, որ «զԱղբերիս գիւղ իւր ամեն սահմանաւն... ի սուրբ Նախավկայս տուի՝ ազատ յամեն հարկաց»[201]: Ստեփանոս Օրբելյանն այդ նույն դեպքի մասին պատմում է. «մեծ իշխանն Բուպակ ընծայէ սուրբ և նոյակերտ քաւարանին...

---

[196] Տես С. Т. Еремян, О рабстве и рабовладении в древней Армении, Вестник древней истории, 1950, № 1, էջ 13–14:

[197] Ասողիկ, էջ 264:

[198] Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 360:

[199] Տես Թովմա Արծրունի, էջ 214, 222, 242, 251, 327 Արիստակես Լաստիվերտցի, էջ 26, 57–58, 126–127: Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 259, 261 և այլուր:

[200] Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 148:

[201] Ստեփանոս Օրբելյան, էջ 357:

զգարակն Աղբերիս իւրով սահմանօքն»[202]: Դա նշանակում է, որ 13-րդ դ. ագարակն արդեն այն աստիճան էր նույնացվում գյուղի հետ, որ միևնույն Աղբերիս բնակավայրը մի դեպքում գյուղ է անվանվում, մյուս դեպքում ագարակ, մի բան որն ինչպես տեսաք, 9–11-րդ դդ. կիրառվում էր գյուղի և շենի նկատմամբ:

Ըստ Ս. Երեմյանի «դաստակերտ» տերմինը ծագել է հին պարսկական dastakrta և պահլավական dastkart բառից, որը նշանակում է ձեռքով (dasta) կերտած (karta): Այդ պատճառով էլ հայերն այդ տերմինը թարգմանել են ձեռակերտ բառով: Դաստակերտ բառի տակ հնում հասկացվել է ամեն մի մասնատիրական հողը, անշարժ գույքը և կայքը: Դա կարող էր լինել փոքր տնտեսություն՝ վարելահող, պտղատու ծառեր, խաղողի այգի կամ կարողություն, կայք, ինչպես նաև մեծ լատիֆունդիա վարելահողերով, այգիներով, աթոռանիստով կամ ամրոցով, որի շուրջ, ժամանակի ընթացքում, աճում է խոշոր բնակավայր՝ գյուղ կամ քաղաք[203]:

«Դաստակերտ»-ը 9–11-րդ դդ. հիմնականում գործածվում է թագավորի, խոշոր իշխանի կամ կաթողիկոսի աթոռանիստի, երբեմն նաև ամրոցի իմաստով, որն ունենում էր ամեն տեսակ ծառայողներ և սովորաբար շրջապատված էր լինում այգիներով ու վարելահողով: Դրա լավագույն օրինակ է Հովհաննես Դրասխանակերտցու Բյուրականի դաստակերտը: «Եւ դարձեալ չու յուղի անկեալ,– գրում է պատմիչը,– չոգաք մինչև ի ձեռակերտ ամրոցիկն իմ Բիւրական, զոր ստացեալն էր վիմ գանձի գնոյ, ուր և շինեալ յարդարարեալ իսկ էի եկեղեցի ... և վանս կուսակրօն միանձնայելոց զնա հաստատեալ»[204]:

Կաթողիկոսի հետագա պատմածից պարզվում է, որ իր ձեռակերտում բացի կառուցած եկեղեցուց ու այնտեղ հաստատված հոգևորականներից կային նաև բավական աշխարհիկ բնակիչներ և չնայած նրան, որ մոտեցող վտանգի հետևանքով բնակչության մի մասը թողել, հեռացել էր, նրա պաշտպանությանը մասնակ-

---

[202] Նույն տեղում, էջ 356–357:

[203] Տե՛ս Ս. Տ. Еремян, О рабстве и рабовладении в древней Армении, էջ 14, 19:

[204] Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 336:

ցում էր մոտ երկու հարյուր մարդ: Դրասխանակերացին նույն ձևով Աշոտ Բ-ի մասնավոր սեփականություն հանդիսացող Կողբն անվանում է «մեծ դաստակերտ Կողբ», «սիրելի դաստակերտ իւր»[205]:

Դաստակերտը նույն իմաստով է օգտագործում նաև Ստեփանոս Օրբելյանը: Ըստ նրա երբ Ատրպատականի Էմիր Յուսուֆի արշավանքից հետո Սյունիքի իշխանները վերադառնում են իրենց բնակավայրեր՝ տեսնում «աւերեալ դեկեղեցիս և անբնակ անապատացեալ զմեծամեծ աւանսն, և զգեղեցիկ դաստակերտն»[206]:

Ըստ Արիստակես Լաստիվերտցու սելջուկները «...եկեալ մինչև ի գաւառն Բասեան, և մինչև ի դաստակերտն մեծ՝ որ կոչի Վաղարշաւան...»[207]:

Դաստակերտը մասնավոր սեփականատիրական տիրույթ է եղել: Պատմիչներից միայն Լաստիվերտցին է դաստակերտին որոշ դեպքերում վերագրում տնտեսության, մշակելի հողերի իմաստ: Օրինակ, նա գրում է. «Ի սորա թագաւորութեան (Միքայել կայսեր – Վ. Բ.) եղև մեծ կոտորած զօրացն Հոռոմոց՝ ի բերդաքաղաքն որ կոչի Բերկրի, որ է ի վիճակի Արծրունեաց աշխարհիկ, զոր վաղնջուց յափշտակեալ էր Պարսից՝ հանդերձ իւրովք դաստակերտօքն, և ունէին ընդ ձեռամբ»[208]: *Ուշագրավ է, որ պատմիչը դաստակերտը խոշոր վարելահողերի իր նախկին իմաստով օգտագործվում է միայն Հայաստանի արևմտյան շրջանների վերաբերյալ*[209]: *Բանն այն է, որ երկրի բյուզանդապատկան մասում հողային հարաբերությունների մեջ փոփոխություններն ավելի դանդաղ էին կատարվում, և այնտեղ սոցիալական տերմինները դեռևս պահպանում էին իրենց նախկին իմաստը:*

Ընդհանուր առմամբ վերցրած, դաստակերտն ուսումնասիրվող շրջանին բնորոշ չէ և սակավ է օգտագործվում: Գյուղերն ու գյուղատիպ վայրերը, որոնք իրենց հողատարածքներով վճռական

---

[205] Նույն տեղում, էջ 293, 294:
[206] Ստեփանոս Օրբելյան, էջ 193:
[207] Արիստակես Լաստիվերտցի, էջ 65:
[208] Նույն տեղում, էջ 40–41:
[209] Տես նույն տեղում, էջ 23, 123, 139:

դեր էին խաղում 9–11-րդ դդ. Հայաստանի ագրարային հարաբերությունների և, մասնավորապես, կալվածքային տնտեսության մեջ, աղբյուրներում հիմնականում հիշատակված հասկացությունների միջոցով են արտացոլվել:

Արդեն տեսանք, որ կալվածքի մի մասը ֆեոդալի անհատական տնտեսությունն էր զբաղեցնում, իսկ ողորբաբար ավելի մեծ մասն օգտագործվում էր կալվածատիրոջ իշխանությանը ենթարկված գյուղացիության կողմից:

Տիրոջ տնտեսության կենտրոնական մասը կազմում էր ֆեոդալի աթոռանիստը ուր որպես կանոն գտնվում էր նրա բնակարանը՝ շրջապատված տարատեսակ տնտեսական բնույթի շինություններով: Իշխանական անձնական տնտեսության այդ կենտրոնական մասը ոչ միայն տվյալ կալվածատիրոջ բնակատեղն էր, այլև տվյալ ֆեոդալական տիրապետության վարչատնտեսական կենտրոնը, ուր նստում էին ֆեոդալը, նրա ծառայողներն ու գործակալները: Տիրոջ բնակարանի մոտ գտնվում էր նրա շտեմարանը, կալվածքը սպասարկող, արհեստավորների արհեստանոցը, եկեղեցին, հաճախ նաև ջրաղացը, բանջարանոցը, և ապա այգին ու վարելահողերը, որոնք ցրված էին շրջակայքում՝ տարբեր գյուղերի տերիտորիաներում:

Արհեստը ֆեոդալի տնտեսությանը սպասարկող, անհրաժեշտ ընագավառներից մեկն էր, առանց որի անհնար էր ինչպես կալվածատիրոջ սպառողական կարիքների բավարարումը, այնպես էլ գյուղատնտեսության տարբեր ճյուղերի զարգացումը: Այդ պատճառով էլ պատահական չէ, որ կալվածքի կենտրոնական մասում ֆեոդալը հյուրանոց (խանապար), շտեմարան (համբարանոց) և դանձատուն շինելու հետ մեկտեղ առաջին հերթին հոգ էր տանում արհեստանոցներ (գործատներ) կառուցելու մասին: Կան փաստեր, որոնք հավաստում են կալվածատիրոջ տնտեսության տարբեր ճյուղերին ծառայող այդ շինությունների գոյությունը: Տաթևի վանքի կառուցումն ավարտելուց հետո, ինչպես Օրբելյանն է վկայում, «շինէ և դաղտանոցս գետնափորս ի ներքոյ վանիցն ծածուկ երկրաւ՝ բազում տունս և դարանս ի պէտս եկեղեցւոյն և հարթեալ հաւասարեալ գվայրն՝ շինէ և սրբաշէն արապէպս

և գործատներս, համբարանոցս և սրբատունս և գրատունս»[210]. 1000 թ. Սյունիքի Շահանդուխտ թագուհին ս. Ստեփանոսի եկեղեցու շինությունը ավարտելուց հետո «Շինէ եւ ... համբարանոցս և գործատունս և շուրջ պարսպէ զվանքն[211]:

Հայաստանի առանձին իշխանություններում կալվածքի կենտրոնական մասը տարբեր ձևով է անվանվել, որովհետև այս հասկացության համար ընդհանուր գործածվող տերմին գոյություն չուներ: Անհավանական չէ, որ որոշ դեպքերում այն դատատակերտ կամ ուղղակի կալվածք կոչված լինի, իսկ երբեմն էլ բերդերն ու ամրոցներն այդպիսի դեր կատարած լինեն: Վերջիններս օգտագործվում էին ոչ միայն արտաքին, այլև ներքին թշնամուց պաշտպանվելու, համար:

Ֆեոդալական կալվածքային տնտեսությունների կենտրոնի դեր կատարել են գլխավորապես քաղաքներն ու քաղաքատիպ վայրերը: Հատկապես խոշոր ֆեոդալների բնակության մշտական վայրերը քաղաքներն էին, որտեղից նրանք կառավարում էին իրենց իշխանությունները:

Ամբողջ կալվածքի համար չնայած գոյություն է ունեցել ընդհանուր գործածություն ունեցող «հայրենիք» տերմինը, սակայն այն միշտ չէ, որ ընդգրկել է խոշոր կալվածք հասկացությունը: Սովորաբար «հայրենիք» տերմինով բնորոշվող կալվածքը կոչվել է նաև գավառ, աշխարհ (այս հասկացությունը, որպես կանոն, հավասար էր գավառին, որոշ տեղերում մի քանի գավառ, երբեմն էլ գավառի մի մասին), կալվածք, գյուղ և այլ տերմիններով: Ամեն մի դեպքում դրանց պետք է մոտենալ կոնկրետ՝ հաշվի առնելով գործածման անմիջական վայրն ու հանգամանքները:

Ահա մի օրինակ, աղբյուրներում կալվածքը համանուն տերմինով կոչվելու վերաբերյալ: 10-րդ դ. առաջին կեսին արաբական մի զորավար արշավում է Դվին և այնտեղից «վաղվաղակի հարկապահանջս և ոստիկանս առաքեալ յԱյրարատեան գաւառ և մինչև ցԱրագածն կոչեցեալ ոտն, որ է բաժին կալուածոց Աբասայ

---

[210] Ստեփանոս Օրբելյան, էջ 225:
[211] Նույն տեղում, էջ 302:

որպես Սմբատայ»[212]: Այս դեպքում կալվածք կոչվող վայրը հենց մի գավառ է կազմում:

Հովհաննես Դրասխանակերտցին Տայքն Աարոնբասեհի կալվածքն է համարում: Նա գրում է, որ Սմբատ թագավորն իմանալով Շիրակի վրա Աֆշինի հարձակման լուրը «սաստիկ տագնապաւ անկանէր ի կողմանս ամրոցացն Տայոց ի կալուածս կուրապաղատին Աարոնբասեհի՝ սիրեցելոյն իւրոյ»[213]:

Ինչպես տեսանք, 8-րդ դ. կեսերից սկսած խոշոր հողատիրության ձևավորումն արագորեն թափ էր հավաքում երկրի ինքնուրույնության համար մղած պայքարի և արաբական էմիրությունների ու ցեղերին հայկական հողերից արտաքսելու միջոցով: Որքան երկրի անկախացման գործընթացն առաջ դիմում էր, այնքան խոշոր հողատիրության կազմավորումը հաջողություն էր ունենում: 9-րդ դ. վերջում 10-րդ դ. սկզբին, երբ արաբական լուծը վերջնականապես թոթափվում է, հիմնականում ձևավորվում է նաև խոշոր իշխանական հողատիրությունը, չնայած Հայաստանի տարբեր շրջաններում դրա կազմավորումը տարբեր ժամանակներում է իրականանում:

Ինքնուրույն թագավորությունների առաջացումը խոշոր իշխանական հողատիրության ձևավորումն ավարտելու և դրանց իշխողների՝ հսկայական հողային տարածությունների ու ռազմական ուժի տեր դառնալու քաղաքական հետևանքն էր:

10-րդ դ. վերջերին և 11-րդ դ. ֆեոդալական խոշոր հողատիրության հետագա զարգացում, խորացում ու ընդլայնում է կատարվում: Աղբյուրները մեզ հնարավորություն են ընձեռում հետևելու ֆեոդալական խոշոր տնտեսությունների ստվինճանական կազմավորմանն ու նրանց էվոլյուցիոն զարգացմանը:

Վերցնենք Տաթևի վանքի օրինակը, որպես 9–11-րդ դդ. հայ ֆեոդալների, մասնավորապես եկեղեցու, հարստացման ու խոշոր հողատեր դառնալու բնորոշ օրինակ:

Դավիթ եպիսկոպոսը 839 թ. տեսնելով, որ «յոյժ նեղ և անձուկ էր սահման վանքից Տաթևոյ, և ոչ էր բաւական պիտոյից

---

[212] Թովմա Արծրունի, էջ 488:
[213] Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 185:

աթոռոյն»[214] գնում է Արծիվ և Բերդկաներեչ գյուղերը: Հինգ տարի հետո Փիլիպպե իշխանը վանքին նվիրում է Տաթև գյուղը[215]: Ընդ որում գյուղերը, ինչպես շեշտվում է արձանագրություններում, նվիրում են իրենց «ամենայն սահմանօք, լերամբ և դաշտիւ, այգօք և ընկոյզեօք, մարգագետնովք և ջաղացանով և որ ինչ համարէն սահմանք են»[216]:

Ուրեմն, գյուղերը լիակատար սեփականության իրավունքով նոր տիրոջն անցնելու դեպքում միշտ նվիրել են իրենց ամբողջ հարստությամբ՝ զանազան տեսակ հողերով, այգիներով, ջրաղացով և այլն: Այս եղանակով նրանք եկեղեցուն անցնելուց հետո դառնում են անբաժանելի, անօտարելի, քանի որ, ինչպես արդեն ասվել է, նվիրատվական ակտերում միշտ շեշտվում է, որ վերջիններս «մի իշխեսցեն հեռացուցանել, մի վաճառել, մի փոխել, մի գրաւական դնել. այլ որ եկեղեցւոյն սպասաւորքն լինին, իշխան լիցին ամենայն սահմանացն»[217]:

Վասակ իշխանի դուստր Քուպղիդուխտը 867 թ. Տաթևի վանքին նվիրում է Բաղք գավառի Մաճ գյուղը[218]: Վանքը 871 թ. Արուքս գյուղը փոխանակում է Ջուանշեր իշխանի Բեխ գյուղի հետ, որը պատճառաբանվում է հետևյալ կերպ. «Վասն զի մեր երջոցունցս մէջաւոր էր փոխանակեցաք»[219]: Սյունյաց եպիսկոպոս Տեր Սաղոմոնը 881 թ. Հրահատ իշխանից 12000 դրամով գնում է Դարատափ գյուղը[220]: 906 թ. Տաթևի կառուցումն ավարտելու առթիվ հանդեսներին Հայաստանի բոլոր ծայրամասերից ներկա գտնվող իշխանների և Հայոց թագավորի կողմից վանքին է նվիրվում տասնվեց գյուղ[221]: Սմբատ իշխանը 920 թ. վանքին է հանձնում իր սեփական Կոկոյս գյուղը[222]:

---

[214] Ստեփանոս Օրբելյան, էջ 204:
[215] Տե՛ս նույն տեղում, էջ 206:
[216] Նույն տեղում, էջ 207: Նույնը տե՛ս նաև 179, 205, 209, 217 էջերում:
[217] Նույն տեղում, էջ 207:
[218] Տե՛ս նույն տեղում, էջ 218–219:
[219] Նույն տեղում, էջ 217:
[220] Տե՛ս նույն տեղում, էջ 215:
[221] Տե՛ս նույն տեղում, էջ 228–230:
[222] Տե՛ս նույն տեղում, էջ 267:

Տեր Հակոբը 925 թ. «վասն հեռաւորութեան» Ջուանշերի որդի Զապիկ իշխանին է տալիս Վաղավեր գյուղը և վերցնում Տաշտակերտը[223]:

Տաթևի եպիսկոպոսներին 10-րդ դ. 20–30-ական թ. հաջողվեց Սյունիքի իշխանների զինված ուժերի միջոցով դուրս քշել սահմանակից սպստամբ երեք գյուղերի բնակիչներին և նրանց հողերը միացնել վանքին: Փիլիպպե իշխանը 943 թ. Տաթևին է նվիրում Աղվերծ և Հուբականխոռ գյուղերը[224]: 10-րդ դ. վերջերին և 11-րդ դ. սկզբներին վանքին են նվիրվում նոր գյուղեր[225]: Սակայն խառը դրությունից օգտվելով՝ աշխարհիկ ֆեոդալները յուրացրել էին նրա հողերի մի մասը, ուստի հնարավոր չէ որոշել՝ վանքի տնտեսությունը 10-րդ դ. կեսերից հետո մեծացել է, թե փոքրացել:

Պետք է նկատի ունենալ, որ Օրբելյանը, ինչպես ինքն է ասում, ընթերցողին չձանձրացնելու նպատակով, բոլոր փաստաթղթերը չի բերել իսկ դրանց որոշ մասն էլ պարզապես ընթեռնելի չեն եղել: Բերված փաստերը բավական են պարզ պատկերացում կազմելու, թե 9-րդ դ. սկզբներին շատ համեստ տնտեսություն ունեցող Տաթևի վանքն ինչպես է աստիճանաբար մեծացնում իր հողային տարածքները, որ մինչև 10-րդ դ. կեսերը տեր է դառնում մոտ երեսուն գյուղերի՝ ստեղծելով տիպիկ ֆեոդալական, խոշոր կալվածքային տնտեսություն: Միաժամանակ պարզ է դառնում, որ վանքն իր հողային տիրություններն ընդարձակելու համար ինչպիսի բազմազան մեթոդների ու միջոցների է դիմում: Նա սեփական տնտեսությունը մեծացնում ու կլորացնում է իշխանների նվիրատվությունների, գնումների, հարևան գյուղերի հողերը բռնագրավելու, նոր՝ մինչ այդ ամայի տարածությունները մշակելի դարձնելու, գյուղերը փոխանակելու միջոցներով՝ կանգ չառնելով ոչ մի խոչընդոտի առաջ:

---

[223] Տե՛ս նույն տեղում, էջ 272:
[224] Տե՛ս նույն տեղում, էջ 269:
[225] Տե՛ս նույն տեղում, էջ 305–307:

Նույն ձևերով, առանձնապես ֆեոդալների նվիրատվությունների միջոցով, խոշոր տնտեսություն է ստեղծում նաև Սևանի Աստվածածնի եկեղեցին[226].

Վիմական արձանագրություններում պահպանված փաստերը ցույց են տալիս, որ վանքերի գյուղերից ու այգիներից բացի նվիրվում էին նաև տարբեր բնույթի այլ հարստություններ՝ խանութներ, ձիթհանքեր, ձկնորսարաններ, անասունների հոսեր ու որսատեղեր:

Անիի 1036 թ. արձանագրություններից մեկում կարդում ենք. «... Ես Ապլղարիպ մարզպան... շինեցի զսուրբ Փրկիչս ի մայրաքաղաքս յԱնի ... եւ գնեցի կուղպականի գ. և ձիթհանք և այգի և հողեար, և ետու ի սուրբ Փրկիչս...»[227]: Մի այլ արձանագրության համաձայն «Ի ՆՂԱ (1042) թուին... կամ եղեւ իմ Գրիգորոյ Ծաղկանս, եւ իմ որդեացս, որ տուի զիմ գանձագին կուղպականին, որ Վասլին Փնգկին ընդդէմ է, ի Բգնայրին վանս՝ ի սուրբ Աստուածածինն ...»[228] և այլն:

Անշուշտ, Հայաստանի մյուս մասերում ևս եկեղեցիները Տաթևի վանքի նման հարստացել, խոշոր ֆեոդալական տնտեսություններ էին կազմակերպել: Սակայն համապատասխան փաստերի բացակայության պատճառով չենք կարող նրանց խոշոր հողատեր դառնալու պրոցեսին հետևել: Այդուհանդերձ, եկեղեցու և առանձին բարձրաստիճան հոգևորականների հարստությունների մասին կան ընդհանուր փաստեր, որոնց վկայությամբ նրանք խոշոր հողային տարածքների ու մեծ հարստությունների տեր են եղել:

Արծն քաղաքի քորեպիսկոպոս Դավթակի տնից 1049 թ. սելջուկների դուրս հանած հարստությունների մասին, Մատթեոս Ուռհայեցու վերը բերված վկայությունը որքան էլ չափազանցված լինի, այնուամենայնիվ պարզ է, որ ֆեոդալները հսկայական մեծության տնտեսություններ են ունեցել: Պատմիչի ասելով՝ սելջուկ զորավար Իբրահիմ Ինալը գրավեց Դավթակի գանձը և քա-

---

[226] Տե՛ս նույն տեղում, էջ 174, 178, 189:
[227] Վիմական տարեգիր, էջ 19:
[228] Կ. Յ. Բասմաջեան, նշվ. աշխ., էջ 137–138:

ասան ուղտ բեռնելով դուրս տարաւ, որ նրա տնից դուրս էր գալիս ութ հարյուր վեցկէ եզ[229]:

Նույն ժամանակաշրջի հաղորդած տվյալների համաձայն, Հայոց կաթողիկոսարանը Պետրոս Գետադարձ կաթողիկոսի ժամանակ ուներ հինգ հարյուր գյուղ[230]. *բազմաթիվ հոգևոր ու աշխարհիկ աշխատողներ և այդ պատճառով, «չէր նուազաս աթոռ Հայրապետութեանն քան զթագաւորութեանն Հայոց»*[231]:

Ի դեպ, պատահական չէ, որ ֆեոդալական խոշոր տնտեսությունների մասին մեր ունեցած բոլոր փաստերը վերաբերվում են 10-րդ դ. կեսերից հետո ընկած շրջանին: Դրանում, հավանաբար, արտացոլվել է պատմական իրականությունը՝ 10-րդ դ. վերջում և 11-րդ դ. որոշակիորեն կազմավորված խոշոր տնտեսությունների առկայությունը, որպիսիք 9-րդ դ. հավանաբար գոյություն չունեին՝ ձևավորման ընթացքում գտնվելու պատճառով:

Խոշոր ֆեոդալական կալվածատիրության ձևավորման համար, ինչպես տեսանք, մեծ նշանակություն ունեցավ արաբական տիրապետությունից վերջնականապես ազատագրվելն ու երկրի ինքնուրույնության ամրապնդումը:

Աշխարհիկ ֆեոդալական խոշոր հողատիրության աճն իր աղբյուրների տեսակետից տարբերվում էր եկեղեցական տնտեսություններից:

Սկզբնական շրջանում հայ իշխանների հողերն ընդարձակվում էին արաբ ֆեոդալների տիրույթները սահմանափակելու կամ երկրից դուրս քշելու, նրանց տիրապետած տարածությունները սեփական ժառանգություն դարձնելու, ինչպես նաև նոր հողերի յուրացնելու միջոցով: Սակայն, դրանք մանավանդ երկրի ինքնուրույնությունը վերականգնելուց հետո, ինչպես աշխարհիկ, այնպես էլ հոգևոր ֆեոդալների համար սեփական տնտեսությունները մեծացնելու երկրորդական աղբյուրներ էին:

---

[229] Տես Մատթեոս Ուռհայեցի, էջ 103:

[230] Անշուշտ Մատթեոս Ուռհայեցին կարողիկոսության սեփականությունն է համարել նրա հոգևոր առաջնորդության սահմաններում գտնվող ու եկեղեցական հարկ մուծող, սակայն այլ ֆեոդալների պատկանող գյուղերը, որի հետևանքով էլ նրանց քանակն այսպիսի անհավատալի չափերի է հասել:

[231] Մատթեոս Ուռհայեցի, էջ 154:

Աշխարհիկ ֆեոդալների հողային տարածությունների սեր մեզ հետաքրքրող շրջանում կատարվել է գերազանցապես գյուղական համայնական հողերի հաշվին: Բոլոր գյուղերը համայնքների մեջ էին ընդգրկված: Յուրաքանչյուր գյուղ կազմում էր առանձին համայնական կազմակերպություն, որը և տնօրինում էր իր շրջակայքի հողային տարածություններն ու անտառները:

Սովորաբար համայնքը տվյալ գյուղին պատկանող վարելահողերը բաժանում էր առանձին մասերի և օգտագործելու համար տալիս համայնքի անդամներին իսկ խոտհարքները, արոտավայրերը, անտառներն ու ոռոգման նպատակների ծառայող ջուրն ամբողջ համայնքը միասին էր օգտագործում: Սկզբնական շրջանում ֆեոդալը գյուղի տերիտորիայում ձեռք էր բերում փոքր հողամաս և դեռևս իր իրավունքներով հավասար էր համայնքի մյուս անդամներին: Սակայն շուտով, չնայած գյուղացիների համառ դիմադրությանը, ֆեոդալը համայնքի մյուս անդամների նկատմամբ արտոնություններ էր ձեռք բերում և աստիճանաբար իրեն ենթարկում ամբողջ համայնքը: Նա սկզբում իր իշխանությունը տարածում էր վարելահողերի, իսկ ավելի ուշ՝ նաև խոտհարքների, արոտավայրերի, ապա անտառների վրա:

Եթե այս տեսանկյունով մոտենանք Հայաստանի Բագրատունյաց շրջանի պատմությանը, ապա պարզ կդառնա, որ հայ ֆեոդալները, որոնք վաղուց էին թափանցել գյուղ 9-րդ, առավել ևս 10-11-րդ դարերում կիսաանկախ և դեռևս ազատ վիճակում գտնվող համայնքները հիմնականում իրենց իշխանությանն են ենթարկում: Մխիթար Գոշի Դատաստանագրքի Ժ «Յաղագս դատաստանաց գաւառաց եւ գեղից եւ նոցանց իրաց» ու ՃԹ՝ «Յաղագս դատաստանաց ի փայտ հանելոյ» հոդվածներից երևում է, որ 12-րդ դ. արդեն անտառներն ու արոտավայրերը ևս ֆեոդալների կողմից սկսել էին յուրացվել, մասնավոր սեփականություն դարձվել: Եթե 12-րդ դ. անգամ անտառները մասնավոր սեփականության էին վերածվում, նշանակում է, որ համայնքի վարելահողերն մինչ այդ, ամենայն հավանականությամբ, 10–11-րդ դդ. էին նման վիճակի արժանացել:

Իշխանների միջև սեփականատիրական գյուղերի համար մղվող ուժեղ պայքարը, որ մենք տեսնում ենք 10–11-րդ դդ. անուղղակի ցույց է տալիս ֆեոդալների կողմից ազատ համայնքներն իրենց իշխանությանը հպատակ դարձնելու հանգամանքը, քանի որ պայքարը մեծ մասամբ ֆեոդալական գյուղերն իրար ձեռքից խլելու և ոչ թե ազատ գյուղերին տիրելու համար էր:

Ֆեոդալ իշխանների տնտեսությունները նույնպես շատ մեծ չափերի էին հասնում: Նրանք, ինչպես նշվել է, սովորաբար իշխում էին մեկ կամ մի քանի գավառների վրա: Այսպես, օրինակ, Դերենիկ Արծրունու մահից հետո նրա երեք որդիներից յուրաքանչյուրը հետևյալ բաժինը ստացավ: Աշոտը ստացավ Վասպուրականի միջին մասի գավառները, «Իսկ Գագիկ զկողմանս Ռշտունեաց այլովք մօտակացիւք գաւառօք ...Եւ Գուրգէն զկողմանս արևելից, յելից Աղբակոյ և որ շուրջ զնովաւ»[232]: Կամ «...իշխանք Սիւնեաց Սմբատ և Սահակ, և բաժանեալ էին զՀայրենի ժառանգութիւնս աշխարհին, աւադն Սմբատ զաւագագոյն մասն Սիւնեաց ընդ արևմուտս կողմն և զբոլոր Վայոց ձոր ունէր ի բաժնի. իսկ Սահակ՝ ընդ արևելս մինչ ի Հակարի. բայց փոքրիկն Բաբգէն սակաւ ինչ ունէր մասն ի բաժնի»[233]:

Աշխարհիկ ֆեոդալները չէին կարողանում հաշտվել եկեղեցու օրավուր հարստացման հետ: Դա գրեթե բոլոր երկրների ֆեոդալիզմի պատմությանը հատուկ միանգամայն բնական ու հասկանալի երևույթ է, եթե նկատի ունենանք, որ եկեղեցու հարըստությունը, առաջին հերթին նրա հողային տարածությունները, օտարելու և բաժանման ենթակա չլինելու հետևանքով անընդհատ մեծանում էին, իսկ աշխարհիկ ֆեոդալների հողերն աճելով հանդերձ, ինչպես նշվել է, զանազան պատճառներով և հենց ժառանգներին անցնելու միջոցով մասնատվում երբեմն էլ քայքայվում էին: Այդ պատճառով էլ ֆեոդալ իշխանները մի կողմից նպաստում էին եկեղեցու հարստացմանը օգնում գյուղացիությանը հնազանդ պահելու գործում, իսկ մյուս կողմից տեսնելով նրա

---

[232] Թովմա Արծրունի, էջ 374:
[233] Ստեփանոս Օրբելյան, էջ 197:

խիստ հզորացումը նպաստավոր պայմաններում յուրացնում էին եկեղեցապատկան հողերը:

Բաղմաթիվ փաստերից բերենք միայն մի բնորոշ օրինակ. Սյունիքի Սենեքերիմ թագավորն իշխանների զավթած Տաթևի կալվածքները 1091 թ. նորից վանքին է վերադարձնում այդ մասին գրելով հետևյալը. «Ես ընթերցայ զառաջնոցն զգրեալսն և զյափշտակեալ ժառանգութիւնսն սուրբ եկեղեցւոյս և երկնաշնչաշ աթոռոյս Սիւնեաց, դարձուցի անդրէն ի մայրաքաղաքս Տաթև. և կրկին հաստատեցի իմով ձեռամբս անխախտ հայրենիք սմա զՀարժիս, զԲերդկաներեչի, զՑուրայ գետ. և էր այս չորրորդ անգամ հաստատութիւն»[234]:

Երբ թագավորը գալիս է վանք, Գրիգոր եպիսկոպոսը նրան ցույց է տալիս բոլոր հին նամակները, որոնք հաստատում էին վերոհիշյալ գյուղերի վրա վանքի սեփականատիրական իրավունքները: Ըստ այդ փաստաթղթերի, առաջին հաստատողները եղել են Հայոց թագավոր Սմբատը և Սյունիքի իշխան Աշոտը, երկրորդը՝ Սյունյաց Սմբատ թագավորը, երրորդը՝ իշխան Հրահատը, իսկ չորրորդ անգամ արդեն Սենեքերիմն է հաստատում: Վերջինիս հաստատող վճռին անմիջապես հետևում է Մահևան և Գևորգ իշխանների գրությունը, որտեղ նրանք հայտնում են թագավորի հրամանով վանքից զավթած գյուղերը վերադարձնելու մասին: «ես Մահևան և ես Գէորգ,– գրում են նրանք,– հրամանաւ աստուածապահ թագաւորիս մերոյ Սենեքերիմայ դարձուցաք զՀարժիս, զԲերդկաներեչի, զՑուրայ գետ ի Տաթևոյ սուրբ առաքելոցս որ զրկեալ էին յաւերման եւ ի նեղ ժամանակի, եւ այժմ կայր առ մեզ»[235]: Միևնույն գյուղերը տարբեր ժամանակներում չորս անգամ վանքից խլելը ցույց է տալիս, որ իշխաններն օգտվելով հոգևորականության համար ստեղծված դժվարին («ի նեղ ժամանակի») պայմաններից, ամեն կերպ զավթում էին նրա հողերը:

Արձանագրությունների վերջում նվիրվող գյուղերի ֆեոդալի ու նրա որդիների ունեցած իրավունքն ամբողջովին վանքին անց-

---

[234] Նույն տեղում. էջ 329: .
[235] Նույն տեղում. էջ 330:

նելու հանգամանքը մշտապես շեշտելը հենց նման զավթումները կանխելու նպատակ ուներ:

Վանքին հովանավորող թագավորը կամ խոշոր իշխաններն էին պաշտպանում նրա շահերը, վերադարձնում խլած հողերն ու սանձահարում աշխարհիկ ֆեոդալների ոտնձգությունները:

Հողի համար ներքին պայքարում էին նաև աշխարհիկ ֆեոդալները: Նրանցից յուրաքանչյուրը, մանավանդ տնտեսապես ու ռազմական տեսակետից ավելի զորեղները, ինտրիգների ու բացահայտ պայքարի զանազան ձևերով աշխատում էին իրենց կալվածքները հարևանի հաշվին, մեծացնել թուլացնել ու հարվածել նրան: Իշխանական գժտությունների համար դյուրին պայմաններ էին ստեղծում նաև ժառանգներին անցնելու առթիվ կալվածքի բաժանման կամ ժառանգ չունեցող ֆեոդալի տնտեսության տնօրինման խնդիրները:

Ահա Վասպուրականում կատարված մի այդպիսի բնորոշ դեպք: Մուշեղ Անձավացի իշխանը մահվանից առաջ սեփական կալվածքի մի մասը՝ Նորաբերդ ամրոցն իր շրջակայքով, հանձնել էր Դերենիկ Արծրունուն, որպեսզի նա մնացած մասում իր մանուկ որդուն ժառանգ դարձնի: Սակայն նրա կինն ամուսնու մահանալուց հետո դիմում է Գուրգեն իշխանին, որ իր հետ ամուսնանա և տիրի Անձավացյաց երկրին: Գուրգենն առանց վարանելու կատարում է նրա ցանկությունը: Դա պատճառ է դառնում Գուրգենի և Դերանիկի միջև մղվող երկար պայքարի, որը վերջանում է փոխադարձ համաձայնությամբ Մուշեղ Անձավացու կալվածքն իրար մեջ կիսելով: Այդ պայքարից քիչ հետո դերությունից նոր վերադարձած Աշոտ Արծրունին որդու շահերը պաշտպանելու նպատակով զորքով գալիս է Գուրգենի դեմ, սակայն վերջինս չի կատարում երկիրը թողնելու նրա պահանջը և ուղարկում է հետևյալ պատասխանը. «Ի հայրենեացն արտաքս հանեալ էք ի ժառանգութենէ և մերժեալ ի բաժնէ եղբայրական հասէ. զա՞յս ևս բռնաղբօսել ջանայք, զոր Աստուած ժառանգեցոյց ինձ: Միթե զո՞ւ միայն բնակելոց ես յերկրի»[236]: Գուրգենի այս խոսքերի մեջ

[236] Թովմա Արծրունի, էջ 344:

վառ արտահայտվել է խոշոր ֆեոդալների կողմից համեմատաբար պակաս կարողություն ունեցող իշխաններին ճնշելու, հնարավոր պարագաներում նրանց հողերը յուրացնելու, այս շրջանի համար բավական բնորոշ երևույթը:

Իշխաններն իրենց կալվածքները մեծացնելու համար օգտագործում էին նաև ամուսնությունը: Երբեմն արու զավակ չունեցող իշխանի դստեր հետ մի այլ ֆեոդալի ժառանգ ամուսնանում էր ոչ այնքան սիրելով, որքան ուրիշ իշխանի կալվածքն իր հայրենի ժառանգությանը միացնելու նպատակով:

Հողի համար խոշոր ֆեոդալների ներքին պայքարն ագրարային հարաբերությունների տեսակետից քիչ է հետաքրքրական է, որովհետև դասակարգային առումով գրեթե ոչինչ չէր փոփոխվում: Իշխանական դասի և գյուղացիության միջև մղված պայքարն ու վերջիններիս սոցիալական վիճակի մեջ կատարված փոփոխություններն էին ագրարային հարաբերությունների մեջ կատարվող տեղաշարժերի հիմք և այդ պատճառով էլ շատ կարևոր են: Այնուամենայնիվ, ի տարբերություն եկեղեցական հողատիրության, աշխարհիկ ֆեոդալական շերտերի համար ժառանգականության հարցը տվյալ կալվածքի հետագա բախտի կապված կարևոր խնդիր էր:

Աշխարհիկ ֆեոդալի մահվանից հետո նրա թողած ամբողջ ժառանգությունն անցնում էր որդիներին: Ընդ որում, ամենից ավագը հոր իշխանական կոչումն ու տիրույթային ավելի մեծ բաժին էր ստանում, քան մյուս որդիները: Ավագ որդու նման արտոնությունը Հայաստանի բոլոր մասերում տարածված անխախտ օրենք էր համարվում: Կրտսերների իրավունքն անտեսելու մասին ունենք նաև ուղղակի վկայություններ: 1040 թ. Անիի արձանագրություններից մեկում հայոց մարզպան Ապլղարիպը հայտնում է, որ «Թէպէտ եւ անտես էի ի հաւրէ իմէ յաղագս կրսերութեան» չինեցի նրա համար հանդստարան[237]*:*

Մխիթար Գոշը հատուկ հոդվածում (կԹ) զգուշացնում է, որ եթե ֆեոդալը երկրորդ անգամ է ամուսնանում և անգամ շատ է

---

[237] Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 53:

սիրում իր կրտսեր որդուն, հանուն սիրո իրավունք չունի նրան ադրանիկ դարձնելու[238]:

Իշխաններին արու գավակ չլինելու դեպքում ժառանգությունն անցնում էր նրա դստերը, իսկ դուստր չունենալու դեպքում հանգուցյալի եղբորը: Մխիթար Գոշը ԿԻ «Յաղագս դատաստանաց բաժանման ժառանգութեան արանց» հոդվածում նույն կերպ է որոշում ժառանգորդին և միաժամանակ ստույգ սահմանում ժառանգությունը որդուն անցնելու պայմաններում նրա մորը և քրոջը հասնող բաժնեմասը: Հեղինակը 42 հոդվածով խստիվ արգելում է հայրենի ժառանգության սահմանների փոփոխումը:

Ժառանգության հարցը պատմիչների և առհասարակ մեր աղբյուրների ուշադրության կենտրոնում լինելը և հետագայում Գոշի կողմից այդ խնդրին մի շարք կարգավորիչ հոդվածներ նվիրելը միանգամայն հասկանալի կդառնա, եթե նկատի ունենանք, որ աշխարհիկ ֆեոդալների կալվածքային տնտեսությունների սահմանների հետագա փոփոխությունը, նրա զարգացումը կամ քայքայումը սերտորեն կապված էր ժառանգության հարցի հետ: Այս հարցերի ճշտորոշ սահմանումը նպատակ ուներ կանխելու արյունակից ֆեոդալների դժգոհություններ ու ներքին պայքարը:

Կալվածքի ներքին կառավարման ու նրա վարչական սիստեմի մասին մանրամասն տվյալներ չունենք, սակայն կան կալվածապրոշը ենթակա վարչական աշխատողների գոյությունը հաստատող ընդհանուր փաստեր: Այսպես, օրինակ, վերոհիշյալ Մուշեղ Անձավացու մահից հետո նրա ժառանգության համար Արծրունյաց Դերանիկ և Գուրգեն իշխանների միջև սկսած պայքարը վերջանում է հետևյալ փոխադարձ համաձայնությամբ. «...զերկրորդ մասն Անձաւացեաց հանդերձ Նորաբերդ ամրոցաւն Դերանկին նուճեալ ընդ իւր գործակալօք, և զՄարգառատան գաւառ զբուն բաժին տուեալ ցԳուրգէն, և նորա զիւր գործակալս թողեալ անդր»[239]: բաժանումից մի քիչ անց Գուրգենին հաջողվում է հա-

---

[238] Տե՛ս Մխիթար Գոշ, Դատաստանագիրք, էջ 384–385:
[239] Թումա Արծրունի, էջ 339:

նել «զնորա (Դերանիկի – Վ. Բ.) գործակալսն և միապետէ զաէրութիւնն Անձաւացեաց...»[240]:

Անտարակույս, հիշատակված գործակալները ֆեոդալի անմիջական ղեկավարությամբ գործող կալվածքի կառավարիչներն էին, որոնք հսկում էին տվյալ կալվածատիրոջ տնտեսությունը և պատասխանատու էին տնտեսական բոլոր աշխատանքների ու կալվածատիրոջ ունեցվածքի պահպանման համար:

Խոշոր կալվածատիրոջ տիրույթում գործակալի ֆունկցիաներ են կատարել նաև նրան ենթակա մանր ֆեոդալները, ձեռնավորները, իսկ գյուղական համայնքի սահմաններում՝ գյուղի ավագները:

3. Կալվածքային տնտեսության դերը և առանձնահատկությունները

Ինչպես տեսանք Հայաստանում ագրարային հարաբերությունների մեջ կատարված մեծ փոփոխությունները 9–11-րդ դդ. ստեղծեցին ֆեոդալական բազմաքանակ կալվածքներ: Սակայն, երկրի շրջանների պայմանների տարբերության պատճառով ֆեոդալական հողատիրական տնտեսությունների առաջացումն ամբողջ Հայաստանում միաժամանակ չկատարվեց: Այդ պրոցեսը մի շրջանում կարող էր ավարտվել, իսկ մեկ ուրիշ մասում նոր սկսված լինել: Կային այնպիսի շրջաններ, որտեղ խոշոր կալվածքը որոշակի դեր չէր խաղում, տնտեսությունը դեռևս կալվածքային բնույթ չէր ստացել և գերիշխում էին ազատ տարածությունները: Այդուհանդերձ, կալվածքային տնտեսությունների բուռն զարգացման հետևանքով դրանք աստիճանաբար կլանվեցին կալվածքների կողմից և արդեն 10-րդ դ. կեսերից հետո նշանակալից դեր չէին խաղում երկրի տնտեսական կյանքում:

Հողագործությունից բացի կալվածքը կարող էր հիմնված լինել նաև անասնապահության վրա. երկու դեպքում էլ անհրաժեշտ են հողամասեր, արտադրության միջոցներ և ուենտա վճարող անմիջական արտադրող: Այս բոլորի առկայությունը լիովին թույլ

---

[240] Նույն տեղում:

են տալիս խոսելու կալվածքի մասին՝ առանց շփոթվելու նրանց կառուցվածքային տարբերություններից ու յուրահատկություններից:

Կալվածքը կարելի է բնորոշել, որպես ֆեոդալական ռենտան իրացնող կազմակերպություն: Հայաստանում ֆեոդալական հարաբերությունների զարգացման այս շրջանի համար բնորոշ խոշոր ֆեոդալական կալվածքների, ինչպես նաև նրանց անհատական խոշոր տնտեսությունների ձևավորումն ու զարգացումը սերտորեն կապված էին երկրի արտադրողական ուժերի զարգացման հետ: Հողագործության մեջ վերջիններիս զարգացումն արտահայտվեց նախ և առաջ մշակվող հողա-տարածությունների ընդլայնումով: Մինչ այդ անմշակ հողերն արհեստական ոռոգման միջոցով դարձվում էին մշակելի: Մշակելի տարածությունների էին վերածում նաև անտառապատ հողերը: Երկրագործական տեխնիկաների ընդարձակումը նպաստեց դաշտավարության, այգեգործության, խաղողագործության ու բանջարաբուծության ճյուղերի ավելի ընդարձակմանը:

Աշխատանքի հասարակական բաժանման և դրա հետևանքով արհեստագործության զարգացման շնորհիվ կատարելագործվում էր դարբնի արհեստանոցում պատրաստվող գյուղատնտեսական գործիքների և մեքենաների տեխնիկան: Գյուղատնտեսական տեխնիկայի զարգացումն աշխատանքի մեթոդների կատարելագործման պատճառ էր հանդիսանում: Տնային և տնտեսական կարիքներ բավարարող իրերի արտադրությունն աստիճանաբար ընդլայնվում ու կատարելագործվում էր, բարելավվում էր կերամիկայի ու մանածագործական արդյունաբերության տեխնիկան, բարձրանում դրանց արտադրանքի որակը:

Խոշոր կալվածքային անհատական տնտեսությունների առաջացումն իր հերթին արտադրողական ուժերի զարգացման համար նպաստավոր պայմաններ էր ստեղծում: Խոշոր տնտեսություններում ավելի է բարելավվում գյուղատնտեսական իրաբանների մշակման տեխնիկան: Սկսվում է կիրառվել բերքաբերության բարձրացմանը խթանող յանքաշրջանառության հաղորդային սիստեմը: Այն փոխարինում է հողագործության պրիմիտիվ ձևին

և տարածվում է խոշոր հողային տիրություններում: Հողագործության այս սիստեմի ժամանակ հողերի մեկ երրորդը հանգիստ էր թողնվում, իսկ երկու երրորդն օգտագործվում էր աշնանացանի և գարնանացանի համար: Հանգիստ թողնվող ցելն ագրոնոմիական կարևոր միջոց էր մոլախոտների դեմ պայքարելու, հողի մեջ խոնավություն կուտակելու ու պահպանելու համար: Սակայն նրա հիմնական նպատակը հողի բերքատվության բարձրացումն էր:

Եռադաշտային սիստեմը ֆեոդալիզմի ժամանակ հողագործության տիրապետող ձև դառնալով իր գոյությունը հիմնականում պահպանում է մինչև այդ հասարակարգի քայքայման և կապիտալիզմի առաջացման շրջանը: Այդ ժամանակաշրջանում այն արդեն ոչ թե նպաստում, այլ խանգարում էր գյուղատնտեսության զարգացմանը, ուստի փոխարինվում է հողագործության ավելի առաջավոր ձևով՝ կերային ցանքաշրջանառությամբ:

Մեզ հետաքրքրող շրջանում Հայաստանի գյուղատնտեսության մեջ եռադաշտային սիստեմի գոյության վերաբերյալ փաստեր չունենք: Սակայն մեզ մոտ ընդունված է եղել վարելահողերի մի որոշ մասը խամ թողնելու, այսինքն մեկ, երբեմն նաև մի քանի տարի այնտեղ ցանքս չանելու պրակտիկան: Դա ըստ էության հենց ցանքաշրջանառության եռադաշտային սիստեմն է՝ միայն այն տարբերությամբ, որ մեզ մոտ հանգստացող հողամասն առանց հերկելու է հանգիստ թողնվել:

Նոր հողերի յուրացման և ընդհանրապես բերքատվության բարձրացման նպատակով ավելի շատ են դիմում արհեստական ոռոգման միջոցին: Այդ պատճառով էլ մաքրում և վերանորոգում են հնից եկող ջրանցքներն ու առուները, հեռավոր գետերից ու հորդ աղբյուրներից անց են կացնում նոր առուներ և դրանով իսկ ընդլայնում ոռոգման ցանցը:

Գյուղատնտեսական տեխնիկայի զարգացումը հողային հարաբերությունների մեջ կատարվող փոփոխությունների հիմք է ստեղծում, քանի որ հին հարաբերությունները հաճախ խանգարում են նոր տեխնիկայի կիրառմանը: Այսպես օրինակ, դաշտավարության մեջ ծանր գութանի կիրառմանը, որը խոշոր նշանակություն է ունենում գյուղատնտեսության առաջադիմության

տեսակետից, զարկ է տալիս խոշոր անհատական կալվածքային տնտեսությանը, քանի որ մանր երկրագործական տնտեսություններն ի վիճակի չէին նման դեր կատարելու: Պատահական չէ, որ Հայաստանի գյուղատնտեսության մեջ ծանր գումանը սկսում է առաջին անգամ կիրառվել 9–11-րդ դդ.:

Այս բոլորի հետևանքով գյուղատնտեսության մեջ բարձրանում էր աշխատանքի արտադրողականությունը, որը հնարավորություն էր ստեղծում մեծացնելու ստացվող մթերքների քանակը, ինչը վերջին հաշվով հանգեցնում էր հավելյալ արդյունքի ավելացմանը:

Դժվար չէ հասկանալ, որ գյուղատնտեսական տեխնիկայի զարգացումը կապակցված էր հողային հարաբերություններում կատարվող փոփոխությունների հետ:

Հայաստանում ֆեոդալական հողատիրության տիրապետող ձևը եղել են «հայրենիք» կոչվող խոշոր կալվածքային հողերը, որովհետև հողային ամենահիմնական ֆոնդերը կուտակված էին դրանցում: Հայրենիք-կալվածքներին պատկանող հողերը քանակական տեսակետից ավելի շատ էին, քան մանր ու միջին կալվածատերերի տիրապետած հողերի քանակությունը, չնայած հնարավոր չէ հողատիրության այդ երկու ձևերն իրարից խստատ անջատել:

Հայանի է, որ իր տնտեսական զարգացմամբ Հայաստանը 9-րդ դ. թևակոխում է զարգացած ֆեոդալիզմի շրջանը: Դա մի կողմից բնորոշվում էր արհեստագործության, դրամատպրանքային տնտեսության, առևտրի, քաղաքների ու քաղաքային կյանքի աճի և աշխուժացման միջոցով, իսկ մյուս կողմից, որ ավելի քան կարևոր է, նշանավորվում է խոշոր հայրենիք-կալվածքների առաջացմամբ ու դրանց հետագա զարգացմամբ: Տնտեսության մեջ կատարվող երկկողմյան այս զարգացումը մեկը մյուսից անջատված, մեկուսացված չէր կատարվում: Դրանք շատ թելերով կապված, փոխազդեցության պայմաններում էին գտնվում:

Ֆեոդալական խոշոր կալվածքն այս շրջանում դառնում է երկրի տնտեսական և քաղաքական կյանքի հիմնական, վճռական ուժը: Այն ոչ միայն տնտեսության կազմակերպման գլխավոր ձև

էր դարձել, այլև ֆեոդալական ամբողջ տնտեսական սիստեմի կենտրոնն էր: Խոշոր հայրենատեր ֆեոդալն իր կալվածքի ոչ միայն կազմակերպիչն ու ղեկավարն էր, այլև նրա անկախ, սուվերեն կարգադրիչը, իր տիրապետության սահմաններում ապրող բնակչության տերն ու տնօրենը, քանի որ ֆեոդալական հասարակարգում կալվածատերն իրավունք է ունեցել, նաև իր հողի վրա ապրող բնակչության նկատմամբ: Ինչպես բազմիցս նշվեց, հողը նվիրելու կամ գնելու ժամանակ փոխարինվող վայրի բնակչությունը հողի հետ միասին անցնում էր նոր տիրոջ իշխանության տակ և նրանք երբեք չէին առանձնացվում իրարից:

Առանձին ֆեոդալների ուժն ու կարողությունը, իհարկե, տարբեր էին, սակայն նրանց բոլորի հզորության հիմքում ընկած էր մասնավոր սեփականության իրավունքով հողին տիրելը: Իսկ հողի ֆեոդալական սեփականությունը, ֆեոդալական հարաբերությունների հիմքն էր:

Խոշոր ֆեոդալներն ընդարձակ կալվածքային տնտեսությունների տեր լինելով, ունեին հսկայական հարստություններ ու տնտեսական միջոցներ: Կալվածատերը հողային խոշոր սեփականության շնորհիվ քաղաքական ուժ է ձեռք բերում, և արդեն ոչ միայն կալվածքի տերը, վարչական ղեկավարն էր, այլև իշխանը՝ քաղաքական տերը:

Նատուրալ տնտեսության պայմաններում, որը ներքին առևտրի թույլ զարգացման հետևանքով դեռևս տիրապետող էր Հայաստանում, խոշոր ֆեոդալական հողատիրության աճը հանգեցնում էր ֆեոդալական մասնատվածության, քանի որ ֆեոդալական բաժանվածությունն ամենից առաջ սոցիալ-տնտեսական հասկացողություն է: Այն տնտեսական առումով միմյանց իրար կարիք չզգացող մեկուսացած ֆեոդալական տնտեսությունների արտահայտություն է:

Խոշոր ֆեոդալների տնտեսական ինքնուրույնությունն ու անկախությունը դարձավ նրանց քաղաքական ինքնուրույնության հիմք:

Տնտեսական և քաղաքական ինքնուրույնության հետևանքով կալվածքները դառնում են յուրահատուկ կալվածք պետություն-

ներ: Իշխանն իր կալվածքում կազմակերպում է պետությանը հատուկ պատժիչ միջոցներ (բանտ և այլն) և բավական զորեղ ռազմական ուժ: Անգամ մինչև ինքնուրույն թագավորությունների առաջացումն իշխաններն այնքան անկախ էին, որ իրենց տիրապետության սահմաններում կատարում էին ֆեոդալական պետությանը հատուկ որոշակի ֆունկցիաներ:

Մենք ունենք փաստեր՝ հայ իշխանների կողմից նման ֆունկցիաներ կատարելու վերաբերյալ: 10-րդ դ. սկզբներին, երբ Սյունիքում դեռևս ինքնուրույն թագավորություն չէր առաջացրել, Սմբատ գահերեց իշանն ու նրա հաջորդներն իրենց ռազմական ուժով դաժանորեն ճնշեցին խոշոր հողատեր Տաթևի վանքի դեմ դուրս եկած երեք գյուղերի ապստամբությունը և նրանց վանքի հպատակությանը ենթարկեցին: Իշխանները նման ձևով էին վարվում նաև այդ շրջանում Հայաստանի մյուս մասերում տեղի ունեցած գյուղացիական ապստամբությունների ու շարժումների հետ: Նրանց գինվորական ուժը ծառայում էր նաև արտաքին ֆունկցիան իրականացնելու, իրենց կալվածքները մեծացնելու խնդրին, սակայն դա կատարվում էր ոչ այնքան օտար պետությունների, որքան հարևան իշխանությունների հաշվին: Նմանապես հայտնի է, որ մինչև ծայրամասերի լիակատար անկախությունը ֆեոդալ-կալվածատերերը ներքին և արտաքին հարցերում ինքնուրույն էին, անգամ թագավորի դեմ կռվում էին որպես իրենց հավասար ֆեոդալի: Նրանք կարողանում էին այդպես վարվել, որովհետև վերջիվերջո հողային սեփականության իրենց իրավունքներով, հետևաբար նաև տնտեսական կարողությամբ, ըստ էության հավասար էին թագավորին: Ինքնուրույն թագավորությունների առաջացումն այդ հավասարության իրավաքաղաքական արտահայտությունն էր:

Ֆեոդալիզմի ընդհանուր պատմությունից հայտնի է, որ անգամ կենտրոնական պետության առկայության դեպքում խոշոր ֆեոդալները բավական լայն իրավունքներից էին օգտվում: Սակայն այդպիսի երկրներում կենտրոնական պետության կողմից ֆեոդալների անկախությունն այս կամ այն չափով սանձահարվում, սահմանափակվում էր:

Դրությունն այլ էր Հայաստանում: Մեզ մոտ յուրահատուկ պայմանների շնորհիվ իրականում միասնական կենտրոնացված պետություն չստեղծվեց, և հաղթանակ տարան խոշոր հողատերերի անջատողական ձգտումները: Դրա պատճառները պետք է երկրի ընդհանուր քաղաքական վիճակի և, մանավանդ, հողատիրության հետագա զարգացման առանձնահատկությունների մեջ տեսնել:

Սովորաբար այլ երկրներում խոշոր հողատիրությունը ձևավորվում ու զարգանում էր գյուղական համայնքների, մասամբ նաև մանր ֆեոդալների հողերի հաշվին՝ կենտրոնական պետության գոյության պայմաններում, որը երբեք չէր մոռանում նրանց սանձած պահելու խնդիրը:

Հայաստանում խոշոր հողատիրությունը ձևավորվեց արաբական տիրապետության անկման ժամանակ ֆեոդալների ժառանգական հողատիրական իրավունքները վերահաստատվելու. իսկ հետագայում այն ընդարձակելու միջոցով՝ միասնական կենտրոնական պետության բացակայության պայմաններում: Փաստորեն արաբական տիրապետությունը, վերացվել էր, իսկ տեղական միասնական պետություն դեռ գոյություն չուներ: Բագրատունիները զարգացող ֆեոդալական տներից մեկը լինելով, խոշոր հողատիրության ձևավորման հենց սկզբնական շրջանից փորձեցին ամբողջ Հայաստանը համախմբել մեկ միասնական պետության մեջ: Նրանք իրենց ձգտումների մեջ մանավանդ սկզբնական շրջանում, որոշ հաջողություն ունեցան սակայն հանդիպեցին ձևավորվող ու աստիճանաբար հզորացող խոշոր հողատերերի ուժեղ դիմադրությանը և երկարատև պայքարից հետո անհաջողության մատնվեցին:

Բագրատունիները չկարողացան ստեղծել միասնական պետություն՝ իր կենտրոնացված ապարատով, ֆինանսական, դատական ու վարչական օրգաններով: Ուստի ամեն ինչ վճռվում էր ֆեոդալների իրական ուժով: Միասնական պետություն չստեղծվելու պատճառով առանց այն էլ ինքնուրույն խոշոր հողատերերն ավելի քան անկախ դարձան, ինչի հետևանքով, Բագրատունիներ-

րի տիրապետության վերջին շրջանում երկրի մասնատումն ավելի ուժեղացավ:

Չնայած 9–11-րդ դդ. Հայաստանի տնտեսական և քաղաքական կյանքում խոշոր հողատիրության կատարած այս մեծ դերին, այն մեր պատմագիտության մեջ տարօրինակ կերպով ուշադրության չի արժանացել: Հ. Մանանդյանը Հայաստանի պատմության այս շրջանի վերաբերյալ գրած աշխատություններում ուսումնասիրել է առևտրի, արհեստագործության, քաղաքների ու քաղաքային կյանքի հարցերը, ընդգծել ֆեոդալիզմի զարգացման շնորհիվ տնտեսական կյանքի այդ բնագավառներում կատարված փոփոխությունները: Սակայն նա անուշադրության է մատնել հողային հարաբերությունների և հողատիրության ձևերի մեջ կատարված խոշոր տեղաշարժերը: Դեռ ավելին, ֆեոդալական հասարակարգը բաժանել է երեք տարբեր էտապների՝ տալով հետևյալ բացատրությունը. «Ֆեոդալական հասարակարգի վերոհիշյալ հաջորդականությունը և բաժանումը երեք շրջանների պայմանավորված են տնտեսական քաղաքների ու առևտրական-փողային հարաբերությունների զարգացմամբ»[241]:

Պարզ է, որ նա ֆեոդալիզմի զարգացման հիմքում դրել է քաղաքների դրամատապրանքային հարաբերությունների աճն ու աշխուժացումը, նշանակություն չտալով այդ խնդրում խիստ կարևոր դեր խաղացող հողատիրության ու հողային հարաբերությունների մեջ կատարվող փոփոխություններին:

Ի. Սամուելյանն իր վերոհիշյալ աշխատության առաջին հատորում թեև բավական ընդարձակ տեղ է հատկացրել ագրարային հարաբերությունների ուսումնասիրությանը, սակայն, ինչպես մասամբ արդեն տեսանք, այդ հարցերի մի մասին սխալ լուծում է տվել իսկ 9–11-րդ դդ. ֆեոդալական խոշոր կալվածքների ու կալվածքային տնտեսության զարգացման հետ կապված կարևոր խնդիրներն ամբողջովին դուրս են մնացել նրա հետաքրքրության շրջանակներից:

---

[241] Հ. Սանանդայան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, Երևան, 1934, էջ 304:

Բագրատունյաց էպոխայի Հայաստանի խոշոր հողատիրության հարցերը ճիշտ լուսաբանություն են ստացել Ս. Հակոբյանի «Հայ գյուղացիության պատմությունը (4–13-րդ դարեր) դոկտորական և Հ. Ուլմազյանի «Սյունիքը 9–10-րդ դարերում» թեկնածուական, դեռևս անտիպ, դիսերտացիոն աշխատություններում: Երկու հեղինակներն էլ իրենց թեմայի պահանջների ու սկզբնաղբյուրների ընձեռած հնարավորության սահմաններում բավականին տեղ են հատկացրել և ճիշտ մեկնաբանություն տվել, առաջինն ամբողջ 9–13-րդ դդ., իսկ երկրորդը՝ 9–10-րդ դդ. հողային հարաբերություններին:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՄԱՆՐ ՈՒ ՄԻՋԻՆ ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ՀՈՂԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ

1. Մանր ու միջին ֆեոդալական դասը

Մեր պատմագիտության մեջ ֆեոդալական մանր կալվածատիրության հարցն առաջին անգամ բազմակողմանիորեն ուսումնասիրել և գիտական հողի վրա է դրել Հ. Մանանդյանը[242]*: Մեջբերելով հայագիտական աշխատություններում այս հարցի առթիվ իրենից առաջ հայտնված կարծիքները և մանրազնին ուսումնասիրելով 5-րդ դ. պատմիչների համապատասխան տվյալները, նա հանդել է հետևյալ հիմնական եզրակացությունների:*

ա) Մանր կալվածատիրության շերտը հին Հայաստանում կազմել են «ազատ»-ները և «ոստանիկ»-ները, որոնք իրենց սոցիալական վիճակով նախարարներից ցածր, իսկ ռամիկներից բարձր դասվող հասարակական միջին դասն են հանդիսացել: բ) Ազատները զինվորական հիմնական շերտն են կազմել հին Հայաստանում և եղել նախարարական հեծելազորի կորիզը: գ) Խոշոր ֆեոդալներից ազատների ստացած հողամասը կոչվել է խոստակ, իսկ իրենք՝ պայմանական ձևով հող ստացող ազատները՝ խոստակդարներ:

Հ. Մանանդյանի այս եզրակացությունները վերաբերվում են Հայաստանի պատմության մինչև 7-րդ դ. ընկած ժամանակաշրջանին: Բանի որ, մոտ երկու դար տևած արաբական տիրապետությունը, ապա անկախանալուց հետո երկրի տնտեսությունում կատարված փոփոխությունները բավական տեղաշարժեր էին կատարել Հայաստանի իշխող դասերի կազմի մեջ, ճիշտ չէր լինի վերոհիշյալ եզրակացություններն անվերապահորեն Բագրատունյաց ժամանակաշրջանի Հայաստանի վրա տարածելը: Հ. Մանանդյանի

---

[242] Տե՛ս նույն տեղում, 20–124:

հետևությունները հիմք ընդունելով հանդերձ, սխալներից խուսափելու նպատակով, անհրաժեշտ է հարցը դիտել դրա մեջ կատարված փոփոխությունների տեսանկյունից՝ այն անմիջականորեն կապակցելով տվյալ էպոխայի կոնկրետ սոցիալ-տնտեսական խնդիրների հետ:

Աղբյուրների տվյալներից պարզ երևում է, որ Հայաստանում 9–11-րդ, ինչպես նաև հետագա 12–13-րդ դդ. մանր ազնվականության դասը վաղ ֆեոդալական էպոխայի նման ազատներն են հանդիսացել: Հ. Մանանդյանը ցույց է տվել, որ մինչև 7-րդ դ. ազատների հետ մանր ազնվականության դասի մեջ մտել են նաև ոստանիկները՝ թագավորական բուն երկրի «ոստանի», ապատները: Սակայն, Բագրատունյաց շրջանի վերաբերյալ աղբյուրներում և դրանից հետո եկող ժամանակաշրջանում ոստանիկներին որպես մանր ֆեոդալական դասի մեջ մտնող առանձին շերտի չենք հանդիպում: Պատմիչների կողմից այս տերմինի հատ ու կենտ օգտագործումը կատարվում է բացառապես հին շրջանի մատենագիրների ազդեցության հետևանքով:

Աղբյուրներից միաժամանակ որոշակի երևում է ազատների հասարակական միջին շերտ կազմելու, այսինքն՝ խոշոր ֆեոդալներից ցածր, իսկ անմիջական արտադրող շինականներից բարձր դասվելու հանգամանքը: Նրանք իշխաններից միշտ ցածր էին դասվում և հաճախ «ազատք նոցա» էին անվանվում, որն ընդգծում է վերջիններիս իշխաններին հպատակ, նրանցից ենթակա վիճակում գտնվելը: Սակայն նրանք ևս շահագործող դասեր էին և մտնում էին իշխող դասակարգի կազմի մեջ: Այդ պատճառով էլ նրանք օգտվում էին շահագործող դասակարգին հատուկ արտոնություններից և որպես այդպիսին միշտ առանձնացվում և բարձր էին դասվում շինականներից:

Ազատների հիմնական զբաղմունքը ռազմական գործն է եղել: Պատահական չէ, որ ֆեոդալական այս շերտը մեր մատենագրության մեջ հիշատակվում է գերազանցապես զինվորական խնդիրների կապակցությամբ: Այսպես, օրինակ, Ստեփանոս Օրբելյանը պատմում է, որ Յուսուֆի արշավանքների կապակցությամբ «...գահերէց իշխանն Սիւնեաց Սմբատ ժողովեալ զեղբարս,

զաղգային իւր և զազատագունդ զօրս ամենայն իւրոյ իշխանութեանն՝ ել ընդ յառաջ Իսմայելականացն»[243]:

Արաբական Բշլը զորավարը ցանկանալով Աշոտ Բ-ին կենդանի բռնել, մեծ զորքով հարձակվում է Սևանա կղզու ամրոցի վրա, իսկ Հայոց թագավորը «վազվազակի պատրաստէ նաւս մետասան, և ամբառնայ ի նաւս անդր իբրև արս հօթանասուն ազատս և զծառայս իւր լայնալիճ ազեղամբք՝ արս քաջակորովս և հմուտս ի ձգտումն նետաձգութեանց, որ գրեթէ ի մազոյ ոչ վրիպէին»[244]: Կամ Պետրոս Ա Գետադարձ կաթողիկոսը գնում է Վասպուրական «զի թագաւորն և ամենայն նախարարք և ազատազունդք զօրքն Հայոց ոչ լինէին ունկնդիր աստուածային պատուիրանացն»[245]: Կարելի է բերել նման բազմաթիվ այլ օրինակներ:

Այն հանգամանքը, որ մանր ազնվականությունը հիմնականում ռազմական գործով է զբաղվել, միանգամայն բնական ու հասկանալի է, հատուկ գրեթե բոլոր երկրների ֆեոդալիզմի շրջանին:

Ազատները վաղ ֆեոդալիզմի ժամանակաշրջանի նման հանդիսացել են իշխանների մշտական զորքի հեծելազորի հիմնական մասը, իսկ պատերազմի ժամանակ նրանց հավաքական բանակի միջուկը: Նրանք արշավանքների ժամանակ միշտ գնում էին իշխաններից անմիջապես հետո և նրանց հետ անձամբ կռիվների նմանակցելով հանդերձ, նրանց անմիջական պաշտպաններն ու օգնականներն էին: Այսպես, օրինակ, Վասակ Պահլավունին, երբ Դելմիկների դեմ արշավանքի էր դուրս գալիս, նրանից անմիջապես հետո շարժվում են ազատները՝ «Եւ կազմեցան ազատքն ցկնի Վասակայ»[246] և նոր ապա հեծելազորը:

Դժբախտաբար որևէ իշխանին ենթարկվող ազատների թիվը որոշելու համար կոնկրետ տվյալներ չունենք: Միայն Ստեփանոս Օրբելյանն է պահպանել վրաց իշխան Լիպարիտի ազատների թվի մասին մի կոնկրետ վկայություն, ըստ որի Լիպարիտ իշխանը

---

[243] Ստեփանոս Օրբելյան, էջ 185:
[244] Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 356:
[245] Մատթեոս Ուռհայեցի, էջ 75:
[246] Նույն տեղում, էջ 12:

1058 թ. մինչև 1060 թ. ընկած շրջանում սելջուկների դեմ պատերազմի ելնելուց առաջ զորահանդես է կազմակերպում և այդ ժամանակ «անցինի ի հանդիսին 700 ազատք մեծամեծք, որք էին սեպհական ծառայք նորին. և 16000 արք պատերազմողք[247]»: Այս փաստից երևում է, որ Լիպարիտ իշխանն ուներ 700 ազատ: Սակայն նկատի ունենալով, որ նա շատ մեծ կարողության տեր ֆեոդալ էր, և մյուս խոշոր ֆեոդալները նրա հզորությունը չունեին, հաշվի առնելով նաև այն, որ Օրբելյանը նրան բարձրացնելու հակում ունենալով, հավանաբար, թվերը մեծացրած է ներկայացրել, կարելի է եզրակացնել, որ հայ իշխաններն անհամեմատ ավելի պակաս թվով ազատներ են ունեցել:

Մատթեոս Ուռհայեցին պատմում է, որ 963 թ. երբ Վասակ Պահլավունին իր որդի Գրիգորի և ազատների հետ հանգստանում էր Բջնի ամրոցում, լուր ստանալով Դելմիկների արշավանքի և Նիգ գավառն ավերելու մասին յոթ ազատներով ու հինգ հարյուր զինվորով շտապ դուրս է գալիս նրանց դեմ՝ չսպասելով իր զորքի հավաքմանը, քանի որ, պատմիչի խոսքերով ասած՝ «կային ընդ ձեռամբ նորա արք իբրեւ հինգ հազար»[248]: Վասակ Պահլավունին եթե իր մոտ պատրաստի վիճակում ուներ հինգ հարյուր զինվոր և յոթ ազատ, ապա, հասկանալի է, որ իր զորքի ընդհանուր թվի՝ հինգ հազարի համեմատ էլ ազատներ պետք է ունենար: Այնպես որ նրա ազատների թիվը մի քանի տասնյակից այն կողմ չէր անցնի:

Ազատների հետ կապված, բնականաբար, հարց է առաջանում ընդհանրապես իշխանական զորքի կազմի վերաբերյալ: Արդյո՞ք այն միայն ազատներով էր համալրվում, թե՞ նաև զինվորական այլ տարրով, ինչպես երևում է Վասակ Պահլավունու զորքի մեջ ազատների և զինվորների առկայությունից, կամ Լիպարիտ իշխանի զորքի կազմից, որի մեջ 700 ազատից բացի մտնում էին նաև 16000 պատերազմող այլ կարգի մարդիկ:

Պատերազմների ժամանակ այս կամ այն առթիվ գյուղական բնակչության հաճախակի հիշատակություններից երևում է, որ

---

[247] Ստեփանոս Օրբելյան, էջ 374:
[248] Մատթեոս Ուռհայեցի, էջ 12:

հատկապես արտաքին թշնամու դեմ մղվող կռիվների ժամանակ ֆեոդալները զինում էին գյուղացիներին, որոնք համալրում էին զինվորների կազմը և նրանց հետ դառնում հիմնական կռվող ուժը: Հիշենք Ղևոնդի հայտնած տեղեկությունները 8-րդ դ. կեսերին արաբական տիրապետության դեմ բռնկված ապստամբության ժամանակ հասարակ ժողովրդի մասնակցության ու եռանդուն պայքարի մասին: 850–855 թթ. ժողովրդական ապստամբության և Բուղայի գլխավորությամբ արաբական պատմիչ զորաբանակի Հայաստան գալու առթիվ Թովմա Արծրունին հայտնում է, որ դիմադրություն կազմակերպելու նպատակով հայ իշխաններն «ընդ ինքեանսն գումարեալ զզօրս և զբնակիչս աշխարհաց իւրեանց ամենայն պատրաստութեամբ»[249]:

Հովհաննես Դրասխանակերտցին վկայում է, որ Սմբատ Ա. թագավորը 10-րդ դ. սկզբներին իր որդիներ Աշոտի և Մուշեղի գլխավորությամբ «գումարէ զօր բազում»[250] և ուղարկում Հայաստան ներխուժած Ատրպատականի Էմիր Յուսուֆի դեմ «ոչ գիտելով զնեննդութիւն զօրաց իւրեանց բնակչաց Ուտի գաւառի, որք են Սևորդիք»[251]:

Աշոտ Արծրունու ազատները գաղտնի համաձայնության են գալիս Բուղայի հետ պատճառաբանելով, որ դիմադրության համար չունեն ամրություններ «...և ոչ պահպանաց ոմանց ոամկաց, որ պահիցեն զամուրքս»[252]:

Ֆեոդալական ներքին կռիվների ու արտաքին հանկարծակի փոքր արշավանքների դեպքում իշխանները սովորաբար դուրս էին բերում իրենց ունեցած մշտական պատրաստի զորքը, իսկ աշխատավոր բնակչությանը չէին զինում, մանավանդ որ դրա համար բավականին ժամանակ էր պահանջվում և, բաց այդ, նման զորաբանակն արագաշարժ ու մարտունակ չէր լինում:

Ֆեոդալական մշտական գործող զորքը բաղկացած էր լինում ոչ միայն ազատներից, այլև զինվորներից: Ինչպես արդեն տե-

---

[249] Թովմա Արծրունի, էջ 283:
[250] Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 218:
[251] Նույն տեղում:
[252] Թովմա Արծրունի, էջ 228:

սանք, Վասակ Պահլավունու և Լիպարիտ իշխանի զորական ուժերը բաղկացած էին ազատներից և զինվորներից: Բերենք այլ փաստեր ևս: Աշոտ Արծրունու վասալ իշխանները Բուղային ուղղած, մեզ արդեն ծանոթ, գաղտնի նամակում արաբական զորավարին զգուշացնում են, որ Արծրունյաց մեծ իշխանի եղբայր Գուրգենը և Արծրունյաց տան մյուս իշխանները բազմաթիվ ազատների հետ գնացել են Ատրպատականի կողմերը «և անդր գումարեալ են ամենայն զօրք և ռամիկք աշխարհիս»[253]: Այս դեպքում, ինչպես տեսնում ենք, պատմիչն ազատներից զատ առանձին հիշում է զինվորներին և սպասվող խոշոր ընդհարման պատճառով հավաքագրված ռամիկներին: Կամ նույն զորավարի արշավանքի պատճառով Հայաստանի մյուս իշխանները «ելին կալան զամրական տեղիս, ի բերդս և ի քաղաքս և ի լերինս, ընդ ինքեանս գումարեալ զզօրս և զբնակիչս աշխարհաց իւրեանց ամենայն պատրաստութեամբ»[254]: Հարց է առաջանում՝ թե արդյո՞ք ազատները ունեին իրենց հպատակ զինվորներ կամ թեկուզ պրոֆեսիոնալ զինվորներ չհամարվող մարդիկ, և անհրաժեշտության դեպքում միայնակ էին ներկայանում իշխանին, թե իրենց հետ բերում էին նաև որոշ թվով կռվողներ:

Մեզ հասած փաստերից երևում է, որ ազատները, որպես իշխող զինվորական դաս, իրենց տրամադրության տակ ունեին որոշ քանակությամբ զինվորներ, որոնք մտնում էին իշխանների մշտական գործող զորական ուժի մեջ: Այս մասին Թովմա Արծրունին պահպանել է մի ուշագրավ վկայություն: Խոսելով արաբական զորահրամանատար Յուսուֆին 851 թ. Սասունում սպանելու մասին, նա գրում է. «քանզի դեռ միաբանք և միախորհուրդք և հաւասարք առ միմեանս ընակէին իշխանք Հայոց ապատագունդ բազմութեամբ և զօրաց նոցա»[255]:

Պատմիչն ազատագունդ բազմություն ասելով ակներևաբար նկատի է ունեցել մանր ազնվականներին և ոչ թե ընդհանրապես իշխող դասերին, մանավանդ որ ազատներից առաջ առանձին հիշա-

---

[253] Նույն տեղում, էջ 224:
[254] Նույն տեղում, էջ 283:
[255] Նույն տեղում, էջ 205:

տակում է իշխաններին: Պարզ է, որ այս վկայության մեջ հիշատակված զորքը պատկանում է հենց այդ ազատներին: Վերջիններիս զինվորական որոշ ուժ ունենալը տեսականորեն ևս հիմնավոր ու համոզիչ է, քանի որ հակատրամաբանական կլիներ կարծել, որ իշխանն ազատներին բավական արտոնություններ ու հող կտրամադրի միայն նրանց անձնական զինվորական ծառայության համար: Եթե այդպես լիներ, ապա ֆեոդալները կգերադասեին գործ ունենալ միայն շարքային զինվորների հետ:

Զինվորները, որպես կանոն, անմիջական արտադրությանը չէին մասնակցում: Նրանք զինվորական պարտականության դիմաց ռոճիկ էին ստանում իշխանի կամ թագավորի կողմից, իսկ ավելի հաճախ սնվում այն վայրի բնակչության հաշվին, որտեղ գտնվում էին:

Իրենց իրավասոցիալական դրությամբ զինվորներն անմիջական արտադրողներից տարբերվում, սոցիալական առանձին խումբ էին կազմում՝ գտնվելով ազատներին ենթակա, իսկ շինականներից բարձր կանգնած, միջանկյալ վիճակում: Մխիթար Գոշն իր Դատաստանագրքում նրանց հենց այդպիսին էլ դիտում է: Նա թագավորների և իշխանների փոխհարաբերության մասին խոսելուց հետո անդրադառնում է ազատների, զինվորների և շինականների հարցին և այդ առթիվ գրում. «Իսկ ազատք զզինուորս ոչ իշխեն խլատել, այլ հանել յինքեանց. այլ խլատել իշխանաց լիցի: Նմանապէս զինուորք զշինականս ոչ կարեն աքսորել և ոչ խլատել, այլ աքսորել՝ ազատք եւ խլատել իշխանք»[256]:

Այսպիսով, զինվորները չնայած շինականներից բարձր են դասվել, նրանց վրա ոչ մի վարչական կամ իրավական իշխանություն չեն ունեցել:

Զինվորներն առաջանում էին գլխավորապես շինականների և քաղաքների արվարձանային բնակչության միջավայրից, ինչպես

[256] Մխիթար Գոշ, Դատաստանագիրք, էջ 422:

նաև հոգևոր կոչում չընդունող հոգևորականների սերունդներից ու ապադասակարգայնացած ազատներից[257]:

Ինչպես տեսանք, երկրի հիմնական ռազմական ուժ հանդիսացող մանր ազնվականության դասը, թե՛ վաղ ֆեոդալիզմի շրջանում, և թե՛ հետագա դարերում, ազատ տերմինով էր կոչվում: Այս տերմինը, սակայն, ամբողջովին չէր համընկնում ֆեոդալական այդ դասին և ավելի լայն իմաստ ուներ: Մասնավորապես 9–11-րդ դդ. ազատ տերմինը հիմնականում մանր ազնվականությանը վերաբերվելով հանդերձ, ուներ իմաստային մի քանի տարբերակներ:

Մարզպանության շրջանի նման 9–11-րդ դդ., մանր ֆեոդալներից բացի, ազատ էին կոչվում նաև ընդհանրապես իշխող, շահագործումից ազատ դասերը: Դրասխանակերտցին խոսելով Ատրպատականի էմիր Յուսուֆի արշավանքների հետևանքով 10-րդ դ. սկզբներին Հայաստանում առաջացած սովի ու ծանր դրության մասին, ավելացնում է. «Եւ ազատ մարդիկք այնպէս ուրայութեամբն ձաղեալք և հասեալք ի խոր աղքատութիւնս, մինչև ի դրունս տնանկաց շրջել և հաց մուրանալ»[258]: Պարզ է, որ հեղինակն ազատ ասելով նկատի է ունեցել իշխող դասերին ընդհանրապես: Ազատ տերմինը նույն իմաստով է գործածվել նաև հետևյալ կապակցությունների մեջ: Ատրպատականի էմիր Յուսուֆը պաշարում է Երնջակը, ուր գտնվում էին «մայր մեծ իշխանին Սիւնեաց Սմբատայ և կին նորուն՝ քոյր Գագկայ, և կին Սահակայ եղբօր Սմբատայ, և այլ ևս պատուականք յազատաց արք և կանայք»[259]: Ըստ Մատթեոս Ուռհայեցու «Իսկ որք առաքեցան առ վարդապետն հայոց (Հովհաննես Կոզեռնի մոտ Վ. Բ.) Գրիգոր Մագիստրոսն որդին Վասակայ և հայկազնին մեծն Սարգիս և այլք ոմանք յազատաց տանն Հայոց»[260]: Երբեմն հանդիպող «ի

---

[257] Տես Б. М. Арутюнян, Социально-экономическое исложение крестьян Армении XII в. по судебнику Мхитара Гоша, Вопроси Истории, 1952 , № 8, էջ 52:

[258] Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 256:

[259] Նույն տեղում, էջ 237:

[260] Մատթեոս Ուռհայեցի, էջ 67:

մոհմէ ազատաց» դարձվածքը նույնպես տրվում էր ընդհանրապես շահագործող դասակարգի ներկայացուցիչներին:

Պատմիչներն իշխող դասերից բացի ազատ տերմինով են կոչում նաև առանձին իշխանների՝ թեև ավելի սահմանափակ քանակով: Ստեփանոս Օրբելյանը հայտնում է, որ Հարժիք ու Բերդկանների գյուղերը և Ցուրա գետը հատկապես եկեղեցուց և գանվում էին «առ ազատացն Սենեքերիմայ մեծ իշխանին Մահեւանայ և միւս ազատին Գէորգեայ»[261]: Նույն էջում նա Հասան իշխանին, իշխանաց իշխան Վասակի ազատն է համարում: Նշանակում է, որ ազատ տերմինն օգտագործվում էր նաև այս կամ այն չափով կախման վիճակում գտնվող իշխանների նկատմամբ: Տվյալ դեպքում վերոհիշյալ երկու իշխանները Սենեքերիմ թագավորի ազատն են համարվում, որովհետև ենթարկվում են նրան և եթե այդ ենթարկվածությունը չլիներ, հավանաբար նրանք ազատ չէին անվանվի:

Ըստ երևույթի ազատ համարվող մանր ֆեոդալական դասի միշտ վասալական կախման մեջ լինելն այնքան էր տարածվել, որ ենթակա վիճակում գտնվող խոշոր ֆեոդալներն անգամ, երբեմն ազատ էին համարվում: Այսինքն՝ ազատ հորջորջումը դարձել էր վասալական կախման անբաժանելի հայտանիշը: Պատահում էր նաև, որ իշխանների որդիները նրա կենդանության ժամանակ, այլ խոսքով ասած՝ մինչ հոր իշխանության ժառանգելն ու իշխան կամ տեր տիտղոսի հասնելն ազատ էին անվանվում: Այնպես որ ազատ տերմինն օգտագործելիս պետք է նկատի ունենալ նաև նրա մյուս իմաստային կողմերը:

Միջնադարյան բոլոր պետություններում գինվորական ուժի և նրա հրամանատարական կազմի վարձատրման հարցը կարևոր պրոբլեմ է եղել: Որոշ տեղեր նրանց դրամով են վարձատրել, իսկ ավելի հաճախ ծառայության դիմաց հող են հատկացրել կամ պետության հաշվին բնամթերքով անել:

Փաստերը ցույց են տալիս, որ Հայաստանում մանր ազնվականության գինվորական շերտը խոշոր ֆեոդալների կողմից ծա-

---

[261] Ստեփանոս Օրբելյան, էջ 328:

ությունն դիմաց հողաբաժիններ է ստացել: Ինչպես արդեն նշվել է, այս կարևոր հարցի վրա առաջին անգամ լուրջ ուշադրություն է դարձրել և հետաքրքիր բացատրություն տվել Հ. Մանանդյանը: Խոսելով ազատների սոցիալական դրության մասին և այդ առթիվ հիշատակելով իր նախկին ուսումնասիրությունները, նա գրել է. «Իմ ուշադրությունը գրավել էր Ստեփանոս Օրբելյանի պատմության մեջ «խոստակղար» բառը, որի նշանակությունը, իմ կարծիքով, վերջնական կերպով դեռ լուսաբանված չէ: Այն նշանակությունը, որ ես վերագրելու եմ «խոստակղար» բառին, այնքան կարևոր է հայկական ֆեոդալիզմի պարզաբանման համար, որ ես անհրաժեշտ եմ համարում մանրամասն առաջ բերել մատենագրական, ինձ հայտնի, բոլոր հատվածները, որոնց մեջ հիշատակված են «խոստակղար» և «խոստակ» բառերը»[262]:

Ապա նա բերել է Մովսես Կաղանկատվացու պատմության մեջ պահպանված 7-րդ դ. վերաբերվող Աղվանից Վաչագան արքայի 6-րդ կանոնը, որի համաձայն վանքի նկատմամբ մոլորության մեջ ընկնող հանցավոր վանականին պետք է անարգել, պաշտոնից հեռացնել ու «զխոստակն յեկեղեցին կալցեն»[263], և Ստեփանոս Օրբելյանի երկի մեջ 9–10-րդ դդ. չորս տարբեր տեղերում «խոստակղար»-ի մասին եղած հիշատակությունները: Այդ վկայություններից առաջինում Փիլիպպե իշխանը 839 թ. Բերդկաներեչ գյուղի կեսը տալիս է «Սառնաքարին վոխան», իսկ մյուս մասը եկեղեցուն և ապա ավելացնում է՝ «և չիշխէ ոք հեռայնել՝ ոչ եղբայր և ոչ որդի և ոչ յիմ խոստակղարաց»[264]: Երկրորդ վկայության մեջ նույն իշխանը 844 թ. Տաթև գյուղը նույնանուն վանքին նվիրելով արձանագրության մեջ չհիշատակում է. «և մի ոք իշխեսցէ յետ իմ անցման, իմ որդիք կամ եղբարք կամ այլ խոստակղարք հեռացուցանել զայդ գիւղդ յայդ եկեղեցւոյդ»[265]: Մյուս վկայության համաձայն, որը թվագրվում է 867-ով Հրահատ իշխանի կին Քուպղիդուխտը որդի չունենալով Մահ գյուղը նվիրում է

---

[262] Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 104:
[263] Մովսես Կաղանկատվացի, էջ 99:
[264] Ստեփանոս Օրբելյան, էջ 206:
[265] Նույն տեղում, էջ 207:

Տաթևի վանքին ու նույն կերպ իր եղբորորդիներին և այլ խոստակդարների արգելում այդ գյուղի նկատմամբ հավակնություններ ունենալ[266]: Խոստակդար բառի չորրորդ հիշատակությանը հանդիպում է Տաթևի վանքի սահմանների 905 թ. «դիր վճիռ»-ի մեջ, որտեղ հարևան գյուղերից պահանջելով, որ չհակառակեն վանքի որոշյալ սահմաններին, նշվում է նա «ոք ընդ հակառակս ելանէ ի մերոց կամ յօտարաց, յաւադաց կամ ի ձեռնաւորաց և ի խոստակդարաց կամ ի տանուտէրաց...»[267]:

Այս վկայությունների հիման վրա Հ. Մանանդյանը մերժել է Նոր Հայկազյան բառարանում «խոստակ»-ին տված զավակ, մանուկ, թոռունք բացատրությունը, Հ. Հյուբշմանի «ժառանգ» և Մ. Բրոսսեի «պաշտոնյա» մեկնությունները: Նա իրավացիորեն ցույց է տալիս, որ «խոստակ»-ը, եթե ժառանգ ձևով հասկանանք, ապա Օրբելյանի երկրորդ վկայությունում, որտեղ խոստակդարների հետ միաժամանակ հիշվում են իշխանի որդիները և եղբորորդիները, կստացվի ավելորդ կրկնություն, իսկ երրորդ վկայությունն ամբողջովին անհասկանալի կմնա, քանի որ Քուպղիդուխտը ժառանգ չուներ, սակայն արձանագրության մեջ խոստակդարներին արգելվում է վանքին նվիրաբերած գյուղը հետ վերցնել:

Վավերագրերի տակ, սովորաբար, իբրև վկաների հիշվում են արձանագրության մեջ շեշտված այն անձինք, որոնցից պահանջվում էր չառարկել կամ չընդդիմանալ նվիրատուի կամքին: Օրինակ, Քուպղիդուխտի փաստաթղթի վերջում ասված է, որ նվիրաբերությունը կատարվել է «վկայութեամբ իմ եղբօրորդեացս՝ տեառն Վասակայ և տեառն Աշոտի և տեառն Գրիգորոյ և տեառն Սահակայ և իւրեանց ազատաց և ամենայն Շնհէրեցեաց»[268]: Վերևում նվիրաբերությանը չառարկելու համար հիշված «եղբօրորդիք և այլ խոստակդարք»-ի փոխարեն ներքևում, ինչպես տեսնում ենք, ասված է՝ «վկայութեամբ իմ եղբօրորդեացս և իւրեանց ազատաց»: Այսինքն՝ «այլ խոստակդարք» են անվանված Քուխղպիդուխտի եղբորորդիների «ազատները»: Ազատների և խոստակ-

---

[266] Տե՛ս նույն տեղում, էջ 219:
[267] Տե՛ս նույն տեղում, էջ 233:
[268] Նույն տեղում, էջ 220:

դարների այդ զուգադիպմանը պատահում ենք նաև հիշատակված մյուս վավերագրերում: Հետևաբար, եզրակացրել է Հ. Մանանդյանը, «խոստակ»-ը պետք է որպես հողաբաժին հասկանալ, մանավանդ որ Վաչագան արքայի 6-րդ կանոնի «զխոստակն եկեղեցին կալցեն» դարձվածքը և գրեթե նույն ձևով Հայոց եկեղեցական կանոններում հանդիպող փաստերը հնարավոր է միայն հողաբաժնի կամ անշարժ գույքի իմաստով մեկնաբանել: Այստեղից էլ պարզ է, որ «խոստակ» նշանակել է հողաբաժին կամ կալվածք, իսկ «խոստակ-դարն» իր պարսկական dâr վերջավորությամբ հավանաբար նշանակել է խոստակ-առու: Այսպիսով, խոստակդարները խոշոր ֆեոդալներից այդպիսի հողաբաժիններ խոստակներ ստացող ազատներն են եղել[269]: Խոստակը որպես հողատիրության առանձին ձև պայմանական բնույթ է ունեցել, որովհետև ազատներին տրվել է ցկյանս օգտագործման: Նրանք զրկված էին այդ հողաբաժինները վաճառելու կամ փոխանակելու իրավունքից:

Խոստակ տերմինին Հ. Մանանդյանի տված նոր լուսաբանությամբ այն հիմնականում զինվորական պարտականություններ կատարող ազատների, մանր ֆեոդալական դասի հետ կապելը և դրա հիման վրա 9–10-րդ դդ. Հայաստանում պայմանական հողատիրության հաստատումը, ինչպես տեսնում ենք, ճիշտ է և շատ արժեքավոր:

Այդուհանդերձ, անհրաժեշտ է այդ տերմինի գործածության տեսակետից նրա մեջ որոշ լրացում կատարել: Ըստ երևույթին խոստակ և խոստակդար տերմինները Հայաստանի բոլոր մասերում լայն տարածում չեն գտել: Պատահական չպետք է համարել այն հանգամանքը, որ Ստեփանոս Օրբելյանից և Մովսես Կաղանկատվացուց բացի, որոնց երկերը վերաբերվում են Պարսկաստանին սահմանամերձ Սյունիքին և Հայոց Աղվանքին, ազատների մասին բավական առատ տվյալներ հաղորդող Հայաստանի մյուս մասերի մեր պատմիչների մոտ ոչ մի վկայություն չկա «խոստակ»-ի կամ «խոստակդար»-ի մասին: Հավանաբար պարսկական ազդեցության հետևանքով այդ տերմինը տարածվել է Հայոց Աղ-

---

[269] Տես Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, I,ջ 105–107:

վանքում և Սյունիքում, իսկ Հայաստանի մյուս մասերում մանր ազնվականության տիրապետած հողամասերը ոչ թե խոստակ, այլ ուրիշ տերմինով են կոչվել: Ճիշտ է նկատել Խ. Սամուելյանն, այս առթիվ, գրելով հետևյալը. «ըստ երևույթին «խոստակ» տերմինը մուտք էր գործել պարթևական գերիշխանության ժամանակ Ալվանից երկիրը և այստեղից արձագանք տվել հարևան Սյունիքում, չտարածվելով այլևս Հայաստանի մյուս մասերում»[270]: Ազատների հողամասերը, որոնք նրանք ստանում էին իշխաններից, Հայաստանի մյուս մասերում հավանաբար «պարգև» տերմինով են կոչվել:

Երբ Վասպուրականի մեծ իշխան Աշոտ Արծրունին մահանալով թողնում է երեք մանկահասակ զավակներ, Հայոց թագավոր Աշոտ Ա Բագրատունու որդի Շապուհը գալիս է Վասպուրական և նրա որդիների վրա խնամակալ նշանակում Գագիկ Ապումբվանին, նրան տալով ոստիկանի ֆունկցիաներ: Սակայն վերջինս օգտվելով դրանից, աստիճանաբար իր ձեռքն է գցում երկրամասի կարևոր վայրերը, և որից հետո, պատմիչի խոսքերով ասած՝ «ամրաբնակ ազատորերոյն պարգևս և պատիւս օր ըստ օրէ քաշէր, և ինքն յանգուցանել ախորժելով վարէր ընդ նոսա»[271]: Վասպուրականի իշխանները դժգոհելով սկսում են ելք որոնել ստեղծված դրությունից դուրս գալու համար: Անշուշտ բերված հղման մեջ «պարգև»-ը պայմանական կամ ավելի ճիշտ պայմանական-ժառանգական ձևով ազատներին տրվող հողաբաժնի իմաստ ունի: Մեկ այլ տեղ այս տերմինն օգտագործված է գրեթե նույն իմաստով, սակայն այստեղ հողերը նվիրվում են ոչ թե ազատներին այլ՝ եկեղեցուն և ոչ թե պայմանական-ժառանգական այլ դուստ ժառանգական սեփականության իրավունքով. «Ես Տեր Յակոբ... վկայ եմ հոգեցատուր պարգևացս տեառն Սմբատայ՝ որդւոյ Աշոտի Սիւնեաց տեառն, որ երեսս զիւր սեպհական գիւղն զ'Կոկոյս ի սուրբ եկեղեցիս»[272]: Տվյալ դեպքում, կարևորն այն է, որ նվիրվող հողամասը պարգև է անվանվում, հավանաբար, ազատներին

---

[270] Խ. Սամուելյան, նշվ. աշխ., հ. I, էջ 191:
[271] Թովմա Արծրունի, էջ 374:
[272] Ստեփանոս Օրբելյան, էջ 268:

տրվող «պարգև» հողամասի ազդեցության հետևանքով: Ի դեպ, բառարաններում էլ «պարգև»-ին նույն, պայմանական հողատիրության իմաստ է վերագրվում:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ պարգև, առավել ևս աղբյուրներում լայն գործածությունն ունեցող «պարգև և պատիւ» ձևը հաճախ օգտագործվում էր նաև ազատներին տրվող հողաբաժնի հետ ոչ մի կապ չունեցող այլ իմաստով: Օրինակ Աֆշինն իր մոտ է կանչում վերոհիշյալ Շապուհին «և նախախնամեալ մեծարէ զնա, իբրև հարազատի շնորհելով բարեվայելուչ պարգև և պատիւս»[273]: Կամ նրա նեքինապետը. «բաղում պարգևս և պատիւս ընկալեալ ի նմանէ (Սմբատ Թագավորից – Վ. Բ.) դնայր ի Փայտակարան քաղաք»[274]: Հեր քաղաքի տեր Ապումսարայի որդուն «այլ ոմանք Հայաստանեայք ինչս և պարգևս խոստանային[275]: Նման դեպքերում պարգևը կամ պարգևն ու պատիվը դարձ էին ածվում մեծարման և զուտ նվերների իմաստով, որը կարող էր լինել դրամ, գանձաղան զարդեր, հագուստեղեն, անասուններ և այլն:

«Պատիվ»-ն առանձին գործածվելիս մեծ մասամբ պաշտոնի իմաստ է ունեցել: Այսպես օրինակ, Գագիկ Ապումրվանի սպանությունից հետո Սմբատ Ա. թագավորը «զ Գագիկ ձգեալ ի պատիվ զօրավարութեան Հայոց մեծայ,... եւ Գուրգինի նորին եղբօրն զպատիւ մարզպանութեան զահակալութեան հաւատացեալ, ըստ կարգի բարձյաբերձութեան թագաւորացն Հայոց»[276]:

Մասամբ նույն իմաստն է դրվում «պարգև և պատիւ»-ի մեջ, երբ այս տերմիններն օգտագործվում են Խալիֆայության կամ Բյուզանդիայի կողմից Աշոտ Բագրատունուն Հայոց թագավոր ճանաչելու կապակցությամբ: Խալիֆն այդ առթիվ ուղարկում է «զգեստ թագաւորականս, և պարգևս և պատիւս, և երիվարս օգտապարիկս զինուք և զարդարուք»[277], իսկ բյուզանդական կայսրը

---

[273] Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 181:
[274] Նույն տեղում, էջ 187: Տե՛ս նաև էջ 160, 209, 249, 291, 306:
[275] Թովմա Արծրունի, էջ 423: Տե՛ս նաև էջ 447, 480 և այլուր:
[276] Նույն տեղում, էջ 384:
[277] Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 139:

«նմա ընձեռէր պարգևս և պատիւս գեղեցիկ զինուց և զարդուց և ոսկէհուռ հանդերձ զգեստուց»[278]: Նրանք Աշոտ Բագրատունուն հանձնում են թագավորի պաշտոնը (պատիւ) և դրա հետ միաժամանակ թագավորական նվերներ:

«Պարգև» կոչվող հողամասերը տրվում էին զինվորական ծառայության դիմաց պայմանական ձևով: Քանի որ ազատների ռազմական, ինչպես նաև վարչական պարտականությունները ժառանգաբար էին անցնում, նրանց տրամադրած հողամասերն էլ պայմանական-ժառանգական բնույթ էին կրում: Դրա հետևանքով պայմանական և ժառանգական հողատիրության ձևերի միջև եղած տարբերությունն աստիճանաբար անհայտանում էր: Մասնավորապես 9–11-րդ դդ. պայմանական հողերն արդեն ժառանգական բնույթ էին ստացել և դրեթե հավասարվել Հայրենիք կոչվող ժառանգական հողերին: Պատահական չէ, որ այս շրջանում պարգև կամ պարգևականք հողատիրությունը հետզհետե վեր է ածվում ժառանգաբար անցնող հողատիրության ու հաճախ նույնացվում է «Հայրենիք»-ի հետ՝ աստիճանաբար կորցնելով պայմանական հողատիրության իր նախկին իմաստը:

Փաստական տվյալներ չունենալու պատճառով ազատների տիրապետած հողամասերի կամ նրանց տնտեսության բնույթի մասին դժվար է հանգամանորեն խոսել: Այնուամենայնիվ, կցմնակի վկայություններից երևում է, որ նրանք խոշոր ֆեոդալների նման կալվածքային տնտեսություններ են ունեցել, չնայած տվերի փոքր մասշտաբներով:

Ստեփանոս Օրբելյանը վկայում է, որ Տաթևի վանքը սելջուկների կողմից ավերվելուց հետո «ժողովեալ ժամանեցին և ամենայն ազատք և զավառակալք Սիսական աշխարհիս, և տէր Սըմբատն և տէր Գրիգոր. և բազում մխիթարանօք սիրոփնցին զեպիսկոպոսն և յորդորեցին ի վերստին շինութիւն տանն ինքեանք օժանդակելով ամենայն պիտոյիւք»[279]: Այստեղ ազատներ ասելով հեղինակն ակներևաբար նկատի է ունեցել մանր ազնվականության դասին, ուստի իշխաններին անվանապես է նշել: Ազատ տեր-

[278] Նույն տեղում, էջ 158:
[279] Ստեփանոս Օրբելյան, էջ 314:

մինի ընդհանուր իմաստի դեպքում նա այդպես չէր վարվի: Հասկանալի է, որ ազատներն իշխանների հետ վանքի շինությանը կարող էին օգնել նրան աշխատուժ և տնտեսական միջոցներ տալու, հետևաբար և այդպիսիք իրենց տրամադրության տակ ունենալու դեպքում:

Ազատների հողային տիրույթների մեծության ու կառուցվածքի մասին խոսելը դժվար է, քանի որ համապատասխան փաստեր չունենք: Հաճախ խոշոր կալվածքները բաղկացած էին լինում մի շարք մանր միջին կալվածքներից, իսկ նրանց իրարից առանձնացնելը հնարավոր չէ: Սակայն պարզ է, որ նրանց կալվածքները համեստ չափեր են ունեցել, իսկ իրենք էլ չեն հանդիսացել հողի լրիվ սեփականատերեր, այլ նրա պայմանական-ժառանգական տերերն են եղել: Այս երկու պատճառով է հիմնականում բացատրվում այն հանգամանքը, որ մեր աղբյուրներում չենք հանդիպում ազատների կողմից հողեր նվիրելու, գնելու կամ փոխանակելու և ոչ մի փաստի:

Եթե եկեղեցու ընդհանուր կառուցվածքն ու առանձնահատկությունները որոշ չափով զանց առնենք և ազատներին հոգևորականության հետ համեմատության մեջ դնենք, ապա կտեսնենք, որ հոգևոր միջին շերտերն իրենց սոցիալ-տնտեսական դրությամբ մոտավորապես հավասար էին ազատներին:

Հ. Մանանդյանը Վաչագան արքայի 5-րդ կանոնի «զխոստակն եկեղեցին կալցեն» դարձվածքը համեմատելով Շահապիվանի ժողովի երկրորդ կանոնի այն մասի հետ, ըստ որի հանցավոր կրոնավորը «յեկեղեցւոյ բաժնէն հեռացեալ լիցի» և Ներսես կաթողիկոսի ու Ներշապուհ Մամիկոնէից եպիսկոպոսի կանոններում պահպանված տգետ եկեղեցականների «զՀայրենի հող եւ ջուր կալցեն» դարձվածքների հետ, ցույց է տալիս, որ հոգևորականներին դեռևս 5–6-րդ դդ. ազատների նման օգտագործման համար հողեր են հատկացվել: Ծառայության դիմաց նրանց ստացած հողամասը կամ անշարժ գույքը պայմանական բնույթ ուներ, որովհետև ինչպես հիշատակված փաստերից է երևում, եկեղեցու հանդեպ պարտականությունները չկատարելու կամ հանցավորության դեպքում նրանք հեռացվում էին պաշտոնից և զրկվում այդ

հարստություններից: Սակայն եկեղեցու պաշտոնեությունից չհեռացվելու դեպքում նրանք իրավունք են ունեցել այդ հողաբաժիններն իբրև ժառանգություն թողնել իրենց որդիներին կամ մերձավորներին, եթե նրանց էր անցնում նաև իր հոգևոր պաշտոնը: Այսինքն, պայմանական հողատիրությունն այս դեպքում ևս ինչ որ չափով ժառանգական բնույթ է ստանում:

Միաժամանակ Հ. Մանանդյանը հենվելով Վաչագան արքայի հինգերորդ կանոնում հոգևորականների հատկացված հողաբաժինները խոստակ կոչվելու փաստի վրա, հավանական է համարվում, որ Հայաստանում ևս այդպիսի հողամասերը նույն անունով լինեն կոչված[280]:

Հօգուտ Հ. Մանանդյանի տեսակետի ասենք, որ Հովհան Մանդակունու՝ «Կոչումն ապաշխարութեան» աշխատության ձեռագրերից մեկում, ուր խոսվում է հոգևորականների հանցանքների համար տարբեր պատիժներ սահմանելու մասին, կարդում ենք հետևյալը. «...Կամ խոստկան փոխեալ, կամ վաճառեալ կամ ընդ մարմինքս վանեալ, կամ տեսեալ զոք և գործեալ է է ամ»[281]: Այստեղ, ինչպես տեսնում ենք, խոստակ է կոչվել հոգևորականի հողաբաժինը և խոստակ ստացող հոգևորականն իրավունք չի ունեցել այն փոխանակելու կամ վաճառելու, հակառակ դեպքում նա կպատժեր: Սրանից ևս մի ավելորդ անգամ երևում է հոգևոր միջին շերտերի հողային իրավունքների պայմանականությունը:

9–11-րդ դդ. վերաբերյալ չունենք ոչ մի փաստ, որտեղ հոգևորականների ստացած հողաբաժինները խոստակ կոչված լինեին: Դրանով, սակայն, հարցի էությունը չի փոփոխվում: Աղբյուրների ընդհանուր վկայություններից պարզ երևում է, որ հոգևորական միջին շերտերն այս շրջանում ևս ժառանգաբար օգտվում էին վանքապատկան հողերից, որոնց դերադույն սեփականության իրավունքը նույնպես եկեղեցուն էր պատկանում: Եթե այս կամ այն պատճառով նրանք հեռացվում էին իրենց գրաված հոգևոր

---

280 Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 107–109:

281 Մատենադարան, ձեռ. № 659, էջ 275 բ: Մենք ուսումնասիրեցինք նաև նույն աշխատության ուրշ ձեռագիր օրինակներ (№ № 6409, 7615, 8926, 795, 837, 778), սակայն դրանցում խոստակ տերմինը բացակայում է:

պաշտոնից, ապա զրկվում էին նաև վանքի հողերից օգտվելու իրավունքից:

Մոտավորապես ազատների դրության մեջ գտնվող հոգևորականության այդ միջին շերտերի մեջ կարելի է դնել քահանաների ու վարդապետների դասին:

Պատահական չէ, որ քահանաներն ու վարդապետները մյուս շահագործող խավերի հետ հանդես էին գալիս զանազան պաշտոնական հարցերում: Դա նշանակում է, նրանք որպես տիրող դասակարգի մի առանձին խավ բավական արտոնություններ ու իրավունքներ ունեին և որպես այդպիսիք տարբերվում էին հոգևորականության ստորին մասից: Այսպես օրինակ, վանքերին հողեր նվիրելու վավերագրերում, որպես հաստատող վկաներ ազատների հետ մեկտեղ հանդես էր գալիս նաև հոգևորականության այս շերտը: Մի քանի անգամ արդեն հիշատակված Սյունիքի Փիլիպպե իշխանի 944 թ. նվիրատվությունը հաստատում են երեք տարբեր հասարակական շերտերին պատկանող անձնավորություններ: Նախ, որպես ամենից ավելի բարձր կանգնած դասի, վկայում են իշխանները, ապա հիշատակվում են ազատները և վերջում՝ քահանաները, վարդապետները, վանականներն ու քորեպիսկոպոսները[282]: Նույն կերպ նրանք որպես հաստատող վկաներ հանդես են գալիս նաև Հրահատ իշխանի նվիրագրի տակ[283]:

Տաթևի վանքի տիրույթների սահմանները Հայաստանի մեծամեծերի հետ հաստատում են նաև ազատները, քահանաները ու տանուտերերը: Պատմիչը Հայոց թագավորին, խոշոր իշխաններին, կաթողիկոսին ու եպիսկոպոսին նշելուց հետո ավելացնում է «...քահանայից և ազատաց և տանուտերաց արարաք զայս գիր պայմանի հաստատուն և անխախտ վճռի վասն շրջակայ սահմանի մեծի, սուրբ և առաքելական աթոռոյն Սիւնեաց՝ մայրաքաղաքին Տաթևոյ...»[284]:

Ուշագրավ է, որ եպիսկոպոսներն աշխարհիկ ֆեոդալների նման ազատներ են ունեցել: Պարտավի ժողովի (768 թ.) ԺԷ կանո-

---

[282] Տես Ստեփանոս Օրբելյան, էջ 207–208:
[283] Տես նույն տեղում, էջ 210:
[284] Նույն տեղում, էջ 231:

նում ազգատոների համար անկելանոցներ չինելու անհրաժեշտության մասին խոսելիս ավելացվում է. «Յայսմհետէ հոդ լեցի եպիսկոպոսաց և նոցին ազատաց և այլ գլխաւորաց հաստատել զնուիրեալ յարկսն չէնութեան, ժողովել զանկեալսն...»[235]:

Մխիթար Գոշի Դատաստանագրքի Աշխարհական օրենքի ՀԲ, ՀԳ և ՀԴ հոդվածներից, ինչպես մասամբ արդեն տեսանք, երևում է, որ տիրող սովորութային նորմերի համաձայն իշխանների ժառանգությունը նրանց մահից հետո բաժանվում էր որդիների միջև, որի ժամանակ ավագ որդին ժառանգում է հոր կոչումը և հայրական նյութական ժառանգության մեծ մասը: Կրտսեր որդիներին համեմատաբար փոքր բաժին էր հասնում, մանավանդ եթե նրանց թիվը բավական մեծ էր: Գնալով ճյուղավորումը բազմանում էր և ժառանգների կալվածքները համապատասխանաբար փոքրանալու հետևանքով նրանց միջև պայքար էր սկսվում իրար ձեռքից հողեր խլելու համար: Հաղթողները պահպանում էին իրենց իշխանական կարողությունն ու դիրքը, իսկ անհաջողության մատնվողները, որպես կանոն, ընկնում էին մանր կամ միջին կալվածատերերի վիճակի մեջ, թեև ավանդույթի ուժով երբեմն պահպանում էին «իշխան» կոչումը: Նրանք քայքայվելու և կարողությունից ամբողջովին զրկվելու հետևանքով հաճախ ընդհանրապես դուրս էին ընկնում տիրող դասակարգի շարքերից: Բերենք բնորոշ օրինակներ՝ իշխանական սերունդները ժառանգական պայքարի կամ այլ պատճառների հետևանքով, ազատների դասի մեջ հայանվելու վերաբերյալ: Փիլիպպե Իշխանը, երբ 839 թ. Արծիվ և Բերդկաներնչ գյուղերը վաճառում է Տաթևի վանքին՝ որպես հաստատող վկաներ հանդես են գալիս Սյունիքի նշանավոր իշխանները, ազատները և ցածրաստիճան հոգևորականները: Բնագրի այդ հատվածում կարդում ենք. «վկայութեամբ Ատրներսէհի՝ Սիւնեան տեառն, Վասակայ որդւոյ, և տեառն Հրահատայ՝ տեառն Սահակայ որդւոյ, և տեառն Ատրներսէհի՝ տեառն Վարդա-

---

[235] Կանոնագիրք Հայոց, էջ 170:

նայ որդւոյ, Արշակայ Վահանա որդւոյ. Ռաբբէի Սարգսի որդւոյ...»[286]:

Ինչպես տեսնում ենք, սկզբի վկայողներն իշխանական ծագում ունեցող խոշոր ֆեոդալներ են և նրա անվան ու հայրանվան առաջ դրված է տեր տիտղոսը, իսկ նրանցից հետո եկող Վահանի որդի Արշակը և Սարգսի որդի Ռուբենը, ինչպես բերված հատվածից էլ երևում է՝ ազատներ են և միայն այս վկայության մեջ են հանդես գալիս: Չնայած այս հատվածում չի ասված, սակայն մի քանի էջ հետո, այլ կապակցությամբ այդ երկու ազատի հայրերը՝ Վահանը և Սարգիսը, հիշվում են որպես իշխաններ: Նշանակում է, որ Արշակն ու Ռուբենն իշխանի որդիներ են, սակայն արդեն ընկել են ազատների շարքը:

Հինգ տարի հետո նույն Ֆիլիպե իշխանը Տաթև գյուղը նվիրում է նույնանուն վանքին: Այդ առթիվ կազմված արձանագրությունը հաստատող տարբեր կարգի վկաների թվում հիշատակվում են նաև տասերեք ազատներ[287]: Անուն, հայրանունով հիշատակվող այդ ազատները մանր ազնվական ծագում ունեն, որովհետև նրանց հայրերն էլ առանց տիտղոսի են հանդես գալիս և միայն հիշատակվում են այդ վկայության մեջ: Ազատներից միայն երկուսը՝ Ներսեհի որդի Հովհանը և Տիրոցի որդի Մուշեղն իշխանական ծագում ունեն, քանի որ նրանց հայրերն այլ առթիվ իշխան են անվանվում: Իշխան Տիրոցը հենց նույն վկայության մեջ էլ «տեր» է անվանվում: Պարզ է, որ այս երկու իշխանի որդիները ևս, իշխանական ծագում ունենալով հանդերձ, ընկել են մանր ազնվականության շարքը:

Խոշոր ֆեոդալական տների անդամներից մանր կալվածատերերի՝ ազատների շարքն ընկնելու հետ մեկտեղ կատարվում էր նաև հակառակ պրոցեսը՝ նպաստավոր պայմաններում գտնվող ազատները տնտեսապես հզորանալով իշխանների կարգն էին անցնում: Հավանական է, որ ազատ կոչվող իշխանների մի մասն

---

[286] Տես Ստեփանոս Օրբելյան, էջ 205:
[287] Նույն տեղում, էջ 267–268:

այս ճանապարհով էր իշխան դարձել և շարունակում էր իշխան կոչման հետ միաժամանակ կրել նախկին ազատ անվանումը:

Սակայն խոշոր ֆեոդալական տների հաշվին մանր ազնվականության շարքերի համալրումն ավելի կանոնավոր և համեմատաբար լայնորեն էր կատարվում, քան հակառակը: Որոշ դեպքերում աղբյուրները շատ համեստ կարողություն ունեցող ֆեոդալների նրանց իշխանական ծագումից ելնելով իշխան են անվանում, ինչպես ասենք, ժառանգական պայքարի հետևանքով մանր կալվածատիրության շարքն ընկած իշխանների որդիներին, որոնք, սակայն իրենց տնտեսական կարողությամբ և հասարակական-քաղաքական դիրքով հիմնականում հավասար էին ազատներին: Մանր ազնվականության դասը համալրվում էր նաև շատ հարբստացած, հետևաբար և բարձր դիրք ձեռք բերած տանուտերների կամ գեղջավագների, ձեռնավորների և այլ հասարակական շերտերի հաշվին:

2. Մանր հողատերերի սոցիալական և իրավական վիճակը

Ազատները հողային կարողության տեսակետից ֆեոդալական միջին հասարակական շերտ հանդիսանալով, իրենց սոցիալական վիճակով ևս նույնպիսի դիրք էին գրավում: Նրանք որպես իշխող դասակարգի առանձին խավ, օգտվում էին նրա գրեթե բոլոր իրավունքներից ու արտոնություններից:

Ազատները, սովորաբար, անձամբ չէին մասնակցում անմիջական ֆիզիկական աշխատանքին և իրենց իշխանության տակ ունեին գյուղի մի մասը կամ ամբողջ գյուղը, իսկ, երբեմն, նույնիսկ գյուղերը, որոնց բնակչությանն էլ աշխատեցնում էին: Նրանց համար որոշ չափով աշխատող ուժ էին նաև ենթակա զինվորները, որոնք պատերազմի ժամանակ նրանց հետ մասնակցում էին կռիվներին, իսկ խաղաղ շրջանում զբաղվում երկրագործությամբ:

Ազատներն իշխաններից ավելի ցածր, նրանց նկատմամբ ստորադաս վիճակում են եղել: Զանազան առիթներով հասարա-

կական տարբեր շերտերի թվարկման ժամանակ, որը սովորաբար ըստ սոցիալական դիրքի էր կատարվում, ազատները միշտ իշխաններից հետո էին հիշատակվում: Տաթևի վանքի կառուցումն ավարտելու առթիվ Գագիկ Արծրունին գալիս է «իւրով եպիսկոպոսօք և իշխանօք և ազատօք»[288]: Բուղայի արշավանքից հետո մնացին միայն մի քանի իշխաններ «ի տանէն Արծրունեաց և ազատք նոցա»[289], կամ «ժողովեցան ամենայն իշխանք և ազատքն»[290]: Այդուհանդերձ ազատները մտնում էին տիրող դասակարգի մեջ և որպես այդպիսին միշտ առանձնացվում ու բարձր էին դասվում անմիջական արտադրողներից՝ շինականներից: Նրանք մասնակցում էին իշխանների գործարքներին, իսկ շինականները զրկված էին նման իրավունքներից: Այս առթիվ բավական է հիշել միայն Տաթևի վանքի տիրույթների սահմանների ու Փիլիպպե իշխանի նվիրատվության առթիվ կազմված վերը հիշատակած 844 թ. արձանագրությունը: Այն որպես հաստատող վկաներ տարբեր խավերի պատկանող մարդիկ են հանդես գալիս: Սկզբում հիշատակվում և իրենց մատանիով նվիրատվությունը հաստատում են Սյունիքի իշխանները, ապա ազատները, իսկ վերջում ազատների դիրքում և նրանցից ավելի ցածր աստիճանում գտնվող հոգևորականները, որոնք սակայն, մատանիով չեն վավերացնում[291]: Նմանօրինակ դեպքերում, երբ խոսքն իշխող դասերին է վերաբերվում, նրանց թվում ազատներն էլ են հիշատակվում, իսկ ընդհանրապես հասարակական տարբեր շերտերի թվարկման ժամանակ շինականները միշտ ազատներից հետո են հիշատակվում:

Ազատների հասարակական միջին դիրք գրավելու և մանր ազնվականական դաս կազմելու հանգամանքը պարզորոշ արտացոլվել է նաև Մխիթար Գոշի Դատաստանագրքում: Աշխարհիկ օրենքի Ա հոդվածի առաջին մասում հեղինակը խոսելով այն մա-

---

288 Նույն տեղում, էջ 226:

289 Թովմա Արծրունի, էջ 311:

290 Մատթեոս Ուռհայեցի, էջ 52:

291 Ստեփանոս Օրբելյան, էջ 206–208: Նմանօրինակ փաստեր տես նաև 205, 220, 222, 231, էջերում:

սին, որ թագավորի կողմից իշխաններին բերդ կամ ավան չինելու համար հող հատկացնելու դեպքում վերջիններս առանց նրա թույլատրության այն փոխանակելու իրավունք չունեն, վերջում ավելացնում է. «Սոյնպէս ընդ ձեռամբ իշխանաց ազատք լիցին եւ ընդ ազատաց ձեռամբ չինականք»: Ուրեմն ինչպես իշխանները կարող են որևէ տարածք ստանալ իրենցից բարձր կանգնած թագավորից. նույն կերպ էլ ազատները կարող են ստանալ իշխանից, իսկ չինականները՝ ազատներից:

Գոշը Դատաստանագրքի երկրորդ մասի ՄԺԴ հոդվածում տարբեր իրավերի պատկանող մարդկանց պատժելու հետևյալ կարգն է սահմանում: Եթե իշխաններն են մեկին թագավոր կարգում և նա իրեն չի արդարացնում, ապա նրանք իրավունք ունեն թագավորին հանելու: Իսկ եթե իշխանն է կարգվում թագավորի կողմից, ապա վերջինս իրավունք ունի նրան և՛ հանելու, և՛ պատժելու: Իշխանաց-իշխանը կարող է իշխանին ու ազատին հեռացնել և պատժել: Ազատները զինվորներին և չինականներին կարող են միայն հանել, իսկ նրանց պատժել կարող է իշխանը[292]:

Այս հոդվածներից պարզ երևում է ֆեոդալական հասարակարգին հատուկ, տարբեր հասարակական դիրք գրավող դասերի հաջորդական աստիճանավորումը՝ ֆեոդալական հիերարխիան: Ինչպես տեսնում ենք, դրա վերջին աստիճանում կանգնած էին ազատները, որոնցով էլ վերջանում էին շահագործող դասերը: Այսպիսով, եթե խոշոր հողատիրության կապակցությամբ տրված ֆեոդալական դասային աստիճանավորմանն ավելացնենք նաև ազատներին, ապա ֆեոդալական հիերարխիան Բագրատունյաց շրջանում կընդունի հետևյալ տեսքը: Թագավոր կամ թագավորներ, երկրորդ աստիճանում՝ իշխանաց-իշխան, մեծ, դահագլուխ, դահիրեց իշխաններ, հաջորդ աստիճանը կազմում էին շարքային իշխանները և չորրորդ աստիճանը՝ ազատները:

---

[292] Մխիթար Գոշ, Դատաստանագիրք, էջ 422: Դատաստանագրքի հրատարակիչ Վ. Բաստամյանը գտնում է, որ հեղինակին այս հոդվածը հորինելու տեղիք է տվել մեր երկրի պատմության Բագրատունյաց թագավորության հատկապես վերջին շրջանը, երբ ուժեղացել էին գահակալական կռիվներն ու իշխանական խռովությունները: Տե՛ս նույն տեղում ծան. 942:

Եկեղեցու մասին խոսելիս, արդեն նշվել է, որ մոտավորապես նուլնպիսի աստիճանավորում գոյություն ուներ նաև հոգևորականության միջև:

Ինչպես տեսանք, մանր ֆեոդալները, որպես իշխող դասակարգի առանձին խավ, իրենց սոցիալական իրավունքներով խոշոր ֆեոդալներից անմիջապես հետո են գրվել և որոշակիորեն բարձր են դասվել շահագործվող շերտերից: Մեր պատմագիրները որոշակիորեն նկատել են այդ տարբերությունը և պատահական չէ, որ նրանք ազատներին «պատվավոր» մարդկանց շարքում են դասում: Հովհաննես Դրասխանակերտցին պատմելով կաթողիկոս Մաշտոց Ա Եղիվարդեցի (898–899) մասին, որն իրեն զրկում էր ամեն տեսակ վայելքներից, ավելացնում է. «Ընդ որ հաճեալ հաւանեալ թագաւորն և դահամեծար իշխանքն և պատուական արք ազատք...»[293].

Այս բոլորով հանդերձ մանր ֆեոդալական դասը միևնույն ժամանակ վասալական կախման մեջ գտնվող հասարակական խավ էր, քանի որ հողին տիրում էր պայմանական եղանակով: Այդ դասը խոշոր ֆեոդալներից հողային կալվածքներ էր ստանում, որի դիմաց պարտավոր էր վասալական պարտավորություններ կատարել: Դրանք կարող էին արտահայտվել տուրքեր վճարելու և ծառայություններ կատարելու միջոցով:

Ազատների կողմից իշխաններին տուրքեր վճարելու վերաբերյալ փաստեր չունենք: Գուցե դրա պատճառն այն է, որ պատմիչների համար դա այնքան սովորական է թվացել, որ անհրաժեշտ չեն համարել հիշատակել, կամ թերևս որոշ դեպքերում այդ տուրքերը նվերների բնույթ են ընդունել: Համենայնդեպս պետք է կարծել, որ ազատները, որպես վասալներ, իրենց իշխաններին հավանաբար որոշ տուրքեր են վճարել: Անշուշտ, նրանց վասալական կախումն արտահայտվել է ոչ միայն տուրքեր վճարելով, այլ առավել ևս զինվորական պարտականություններ կատարելով, որոնք պայմանական եղանակով ստացված հողի հատուցումն են եղել:

---

[293] Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 182:

Զինվորական ուժն ամեն մի իշխանի համար առաջնակարգ նշանակություն ուներ, որովհետև յուրաքանչյուր ֆեոդալի կալվածքի պահպանումն ու ընդարձակումը ռազմական ուժի միջոցով էր կատարվում, չխոսելով այլևս արտաքին հարձակումներից պաշտպանվելու համար զինվորական ուժ ունենալու անհրաժեշտության մասին: Ազատների դերն իշխանական ռազմական ուժի մեջ այնքան մեծ էր, որ այն նրանց անունով հաճախ կոչվում էր «ազատազունդ զորք», «ազատանի» և նման այլ տերմիններով:

Այս հիմնական ծառայությունից բացի, ազատները վարչական-գործակալական ֆունկցիաներ էլ են կատարել: Վերհիշենք թեկուզ նախորդ գլխում բերված Դերենիկ և Գուրգեն Արծրունիների միջև Մուշեղ Անձավացու ժառանգության շուրջը սկսված պայքարի փաստը: Դերենիկին հաջողվում է իր գործակալների միջոցով նվաճել Նորաբերդ ամրոցը, իսկ Մարդաստան գավառը գրավում և իր գործակալներն է թողնում Գուրգենը: Դերենիկը դուրս է հանում Գուրգենի գործակալներին, սակայն դրանից քիչ հետո վերջինիս հաջողվում է դուրս քշել նրա գործակալներին և Անձևացու ամբողջ ժառանգությունը վերցնել իրեն[294]: Անհավանական չէ, որ իշխանների կողմից նվաճված հողերում թողած այս գործակալները հենց ազատները լինեին: Եթե անգամ ազատները չեն կատարել այդ ֆունկցիաները նրանք իրավական առումով մոտավորապես հավասար են եղել իշխաններին ենթակա մանր ֆեոդալական կատեգորիայի մեջ մտնող մարդկանց:

Ինչպես տեսնում ենք, Հայաստանում ազատները ոչ թե պետության, այլ առանձին ֆեոդալների կողմից էին վարձատրվում, որոնց էլ ծառայում էին: Այդ է պատճառը, որ մանր հողատերերն ընկնում էին իշխանների հովանավորության տակ և վարչական կախման մեջ դրվում նրանցից: Ուրիշ, մասնավորապես արևմտաեվրոպական երկրների ֆեոդալիզմի պատմությունից հայտնի է, որ կենտրոնական պետությունն ընդդեմ խոշոր ֆեոդալների անջատողական ձգտումների վարձատրում և ամեն կերպ պաշտպանում ու հովանավորում էր մանր ազնվականությանը, որպես

[294] Տես Թովմա Արծրունի, էջ 379:

պետության հենարանի: Սովորաբար, մանր ազնվականությունն էլ շահագրգռված էր իրեն վարձատրող ու հովանավորող կենտրոնական պետության հզորացման մեջ և նրա հենարանն էր դառնում խոշոր ֆեոդալների դեմ պայքարելու գործում:

Հայտնի է, որ Բագրատունիները թագավորական իշխանության հասնելու ժամանակաշրջանից սկսած պետության կենտրոնացումն ուժեղացնելու նպատակով մոտավորապես նույնպիսի քաղաքականություն էին վարում: Նրանք հողեր էին հատկացնում ու հովանավորում որոշ թվով մանր ազնվականների, սակայն այդ ուղղությամբ նրանց գործադրած ջանքերն ապարդյուն անցան, որովհետև մանր հողատիրության զարգացումն այլ բանի էր հանգեցնում: Նրանք ոչ միայն Բագրատունիների համար սոցիալական հենարան չհանդիսացան, այլև կարճ ժամանակում դարձան խոշոր հողատերեր և բոլորովին շահագրգռված չէին պետության կենտրոնացման մեջ, եթե չասենք հակառակը: Այսպիսով, ուսումնասիրվող էպոխայում մեզ մոտ մանր ազնվականությունն ամբողջովին կապված էր խոշոր ֆեոդալների և ոչ թե պետության հետ: Նա իշխանների կողմից էր հողով վարձատրվում և այդ պատճառով էլ ծառայում էր նրանց տնտեսական ու քաղաքական ձգտումների իրականացմանը:

Ազատներն անձամբ էլ սերտորեն կապված էին իշխանների հետ, և պատական չէ, որ աղբյուրներում հաճախ հիշատակվում են իրենց որդիների հետ միասին: Նրանք իրենց դիրքով հավասար էին համարվում իշխանի տոհմի անդամներին: Իզուր չէ, որ պաշտոնական դեպքերում որևէ փաստ հաստատելու կամ վկայություն տալու ժամանակ նրանք միասին էին հանդես գալիս: Փիլիպպե իշխանի նվիրատվությունը մեծամեծ իշխաններից ու հոգևորականներից հետո որպես հաստատող վկաներ միասին հիշվում են նաև ազատներն ու իշխանների ծառանդները: Այդ բոլորի վերջում Փիլիպպեն ավելացնում է. «Եւ վասն առաւել հաստատութեան զիմ սովորական մատանիս ի վերայ եդի և զիմ որդեայս և զայլ ազատաց»[295]: Փիլիպպեն նույն ձևով նրանց արգելում է իր

[295] Ստեփանոս Օրբելյան, էջ 208:

վանքին նվիրած գյուղը հետագայում հետ խլել. «և չիշխէ ոք հեռացնել ո՛չ եղբայր և ո՛չ որդի և ո՛չ յիմ խոստակդարաց»[296]: Ինչպես տեսնում ենք, այստեղ ևս ազատները (խոստակդարները) և իշխանի որդիները նույն դիրքի ու աստիճանի մեջ են դիտվում:

Իշխանների ժառանգները, ինչպես նաև ազատները, որպես կանոն, դեմ էին առաջիններին իրենց հոր, իսկ երկրորդները՝ տիրոջ ժառանգությունից վանքերի օգտին կատարող նվիրաբերությունը: Այդ պատճառով էլ վավերագրերում միշտ շեշտվում է, որ նրանք հետագայում՝ նվիրող ֆեոդալի մահից հետո իրավունք չունեն եկեղեցուն անցած գյուղերը կամ այգիները հետ վերցնելու[297]: Ֆեոդալի ժառանգները դեմ էին, որովհետև այդ ժառանգությունը հետագայում պետք է իրենց մեջ բաժանվեր, իսկ նրա փոքրանալու դեպքում քիչ բաժին կստանային: Նրանք շատ հաճախ հոր մահից և հայրական ժառանգությունը բաժանելուց հետո վանքից հետ էին խլում նրա նվիրած հարստությունները՝ մանավանդ եթե իրենց բաժնեմասը փոքր էր լինում: Ազատներն էլ իրենց հերթին, հատկապես վանքի համար ստեղծված անանցաստ, խառը դրության շրջանում, աշխատում էին նրանից հողամաս կամ այգի ձեռք բերել, օգտագործելով այն հանգամանքը, որ այն մի ժամանակ պատկանել է իրենց իշխանին: Անշուշտ, գործնական կյանքում կատարվող այդպիսի դեպքերի պատճառով էլ արձանագրություն-ների վերջում հատուկ շեշտվում էր, որ տվյալ իշխանի ժառանգները կամ ազատները նվիրվող վայրի նկատմամբ զրկվում են ամեն մի իրավունքից:

Այսպիսով, ինչպես տեսանք, 9–14-րդ դդ. ֆեոդալական մանր հողատիրական դասը, նախորդ էպոքայի նման ազատներն էին, որոնք իրենց հիմնական զբաղմունքի՝ զինվորական ծառայության դիմաց խոշոր ֆեոդալներից պայմանական-ժառանգական ձևով հող էին ստանում և վասալական կախման մեջ գտնվում նրանցից: Ազատները, որպես իշխող հասարակական շերտ, օգտվում էին բավական լայն իրավունքներից ու արտոնություններից և միշտ բարձր պահվում անմիջական արտադրողներից:

---

[296] Նույն տեղում, էջ 206:
[297] Տես նույն տեղում, էջ 206, 210, 233 և այլն:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՌԵՆՏԱՆ ԵՎ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԻ ՍՐՎԵԼԸ

1. Շահագործվող դասակարգը. Նրա իրավական և սոցիալական վիճակը

Ֆեոդալական հողատիրությունը և նրա տարբեր ձևերի ուսումնասիրությունը միակողմանի, մակերեսային բնույթ կընդուներ առանց անմիջական արտադրողների սոցիալ-տնտեսական դրության լուսաբանման: Ֆեոդալների հողային տիրույթները խարսխվում էին գյուղացիության ֆիզիկական աշխատանքի անմիջական շահագործման վրա: Այդ պատճառով էլ գյուղացու, արտադրության հիմնական միջոցի՝ հողի, սեփականատիրոջ հանդեպ ունեցած պարտավորությունների և նրանց իրավա-սոցիալական դրության հարցերի հնարավորին պարզաբանումը չափազանց կարևոր ու անհրաժեշտ խնդիր է:

Ֆեոդալական հասարակարգի հիմնական արտադրող դասակարգը՝ գյուղացիությունը, միատարր չի եղել և բաղկացած է եղել խայտաբղետ շերտերից:

Գյուղացիության ամենաստվար դասն անմիջական արտադրողների այն խավն է եղել, որն աղբյուրներում հայտնի է «չինական» անունով: Խ. Սամուելյանը կարծում է, թե «չինական» տերմինն առաջացել է չինել բայից, որը նշանակում է կառուցել, մշակել, ուստի, ըստ նրա, չինական նշանակել է ընդհանրապես կառուցող, մշակող[298]: Մեր կարծիքով, ճիշտ է Բ. Հարությունյանը[299]

---

[298] Տես Խ. Սամուելյան, նշվ. աշխ., էջ 955:

[299] Տես Б. Арутюнян, Социально-экономическое положение крестьян в Армении XII в. по «Судебнику» Мхитара Гоша, էջ 51:

և ընդհանրապես մեր պատմագիտության մեջ ընդունված այն կարծիքը, որը «շինական» բառն առաջացած է համարում «շէն» – գյուղ արմատից: Այստեղից էլ շինական նշանակել է «շէն»-ի բնակիչ, այնպես, ինչպես գյուղի բնակիչը կոչվել է գեղջուկ: Քանի որ «շէն» և «գիւղ» տերմինները համազոր նշանակություն են ունեցել, շինականն էլ գործածվել է գյուղի բնակչի, գյուղացու առումով:

Շինականները համարվում էին ճնշվող խավ և զրկված էին իշխող դասերի իրավունքներից ու արտոնություններից: Նրանք, ինչպես նաև շահագործվող մյուս սոցիալական շերտերը, «անազատ» էին կոչվում, ի հակադիր իշխող խավերի, որոնք «ազատ» էին համարվում: Շինականների այս անազատությունը հարաբերական իմաստով պետք է հասկանալ: Դա նշանակում է, որ նրանք չահագործող դասակարգի նման ազատ չէին ֆիզիկական հարկադրական աշխատանքից ու հարկեր վճարելուց և չէին օգտվում այդ դասերին հատուկ արտոնություններից ու իրավունքներից: Սակայն դրանից չի հետևում, թե նրան զրկված էին ամեն մի իրավունքից և հավասարեցված էին ճորտերին[300]:

Շինականների սոցիալական և իրավական դրության ուսումնասիրությունը բավական դժվար հարց է: Պատմիչների մոտ այդ տիպի տեղեկություններն այնքան աղոտ ու կցկտուր են, որ հնարավոր չէ դրանց հիման վրա որևէ եզրակացություն դալ: Որոշ նյութ կա վիմական արձանագրություններում ու վավերագրերում:

Շինականների մասնավորապես իրավական դրությունն ավելի լավ արտացոլվել է Մխիթար Գոշի Դատաստանագրքում: Ճիշտ է, այդ Դատաստանագիրքը մեզ հասաքրքրող ժամանակաշրջանից ավելի քան մեկ դար ուշ է հանդես եկել, սակայն կազմվել և իրավական նորմերի է վերածել դոյություն ունեցող սովորութային

---

[300] Խ. Յամուելյանն իր վերոհիշյալ աշխատության մեջ (էջ 249–259), աշխատում է ցույց տալ, որ միջնադարյան Հայաստանում շինական է կոչվել ճորտային դրության մեջ գտնվող գյուղացին, այսինքն նա հավասարության նշան է դնում ճորտի և շինականի միջև: Նրա այս սխալ տեսակետն իրավացի քննադատել է Ռ. Հարությունյանն իր վերը հիշատակած հոդվածում, ուստի կրկնությունից խուսափելու նպատակով ավելորդ ենք համարում այստեղ քննության առնել այն:

իրավունքի հիման վրա, որը ձևավորվում է դարերի ընթացքում: Հետևաբար, Գոշի Դատաստանագիրքի մեջ արտացոլվել են նաև Հայաստանի 9–11-րդ դդ. սովորութային իրավունքն ու սոցիալական հարաբերությունները: Էլ չեմ խոսում այն մասին, որ ինչպես մասնագիտական ուսումնասիրություններն են ցույց տալիս, Դատաստանագրքի որոշ հոդվածներ, (թագավորի մասին եղած հոդվածները) կազմվել են զուտ Բագրատունյաց ժամանակաշրջանում գոյություն ունեցող իրավական նորմաների հիման վրա: Ինչ խոսք, որ Դատաստանագիրքը հիմք է հանդիսանալու ոչ միայն 12-րդ դ., այլև որոշ վերապահումներով հանդերձ նաև 9–11-րդ դդ. իրավասոցիալական հարաբերությունները լուսաբանելու համար:

Մենք արդեն տեսանք (երկրորդ գլխում), որ աշխարհիկ ու եկեղեցական խոշոր հողատիրության աճը կատարվում էր գերազանցապես գյուղական համայնքի հաշվին: Իշխանները և վանքերն իրենց վարելահողերն ու այգիները մեծացնում էին գյուղական համայնական հողերի հաշվին: Նրանք Բագրատունյաց էպոխայում համայնքում աստիճանաբար գերիշխանություն ձեռք բերեցին և այն իրենց տնտեսական և քաղաքական իշխանությանը ենթարկեցին: Դրա հետևանքով գյուղական համայնական կարգը չքայքայվեց:

Մխիթար Գոշի Դատաստանագրքի երկրորդ մասի ՃԶ «Յաղագս դատաստանաց գեղից նորագապէս չինողաց» հոդվածը հետևյալ կարգն է սահմանում: Նոր գյուղեր հիմնելու դեպքում նրա հողի ու ջրի բաժանումն օրինական չէ, եթե չի հավաքվում բավարար քանակով բնակչություն: Սակայն, երբ քանդված գյուղն է վերականգնվում և ամեն մեկը ճանաչում է իր հին սահմանը, յուրաքանչյուրը պարտավոր է զբաղեցնել իր հողաբաժինը, ըստ հին սահմանի: Իսկ եթե ավերվելուց հետո երկար ժամանակ է անցել, փոխվել է տիրապետությունը և սահմանները մոռացվել են, պետք է նոր բաժանում կատարել, բոլորին հավասար ընդունելով, սակայն նախ եկեղեցու բաժինն առանձնացնել և մնացածից մի բաժին ավելի տալ գեղջավագին, որովհետև նա ուրիշների համար հոգ է տանում: Այս հոդվածից երևում է, որ հողի համայնական բաժանումը դեռևս գոյություն ուներ և այդ սկզբունքը թեև

մասնակի դեպքերում, բայց և այնպես այնքան ամուր էր պաշտպանվում, որ եթե համայնքի անդամների մի զգալի մասը չէր հավաքվում, հողի կամ ջրի բաժանումն օրինական չէր համարվում: Ուշադրավ է, որ հոդվածի վերջին մասում պահանջվում է հողերի նոր բաժանման ժամանակ համայնքի բոլոր անդամներին հավասար բաժին տալ: Հոդվածի երկրորդ մասի այդ պահանջը համայնքի անդամների հողային իրավահավասարությունը պահպանելու նպատակ ուներ: Սակայն մեզ մոտ Դատաստանագրքի հանդես գալուց դեռ դարեր առաջ այդ սկզբունքը խախտվել էր և համայնքները շերտավորվել էին: Գոշի այդ հոդվածը վերաբերվում էր միայն նոր դյուղեր հիմնելու կամ հնները վերականգնելու մասնավոր դեպքերին: Նույն հոդվածի վերջին մասի մի վկայությունից պարզ երևում է, որ համայնքը ոչ միայն շերտավորվել, այլև արդեն Ցեղապետների գերիշխանության տակ էր անցել. «Իսկ թէ բազմաժամանակեայ իցէ եւ անգիտելի, եւ տէրութեան փոփոխումն եղեալ, նորոգ արասցին բաժանումն հաւասարադատութեամբ, նախ եկեղեցւոյն եւ ապա այլոցն մասն աւելի տալով որ գլխաւորն իցէ դեղջն վասն հոգալոյ զայլս»[301]: Այստեղ «Եւ տէրութեան փոփոխումն եղեալ» դարձվածքը պետք է հասկանալ այն իմաստով, որ գյուղը մի կալվածատիրոջ իշխանությունից մյուսի տիրապետության տակ է անցել:

Մխիթար Գոշը Դատաստանագրքի երկրորդ մասի Ժ հոդվածով համայնքին իրավունք է վերապահում իր սահմաններում գտնվող անտառի հատատուղը հավաքել, իսկ եթե հավաքողը գյուղական համայնքի անդամ չէ՝ տվյալ համայնքի շինականներն իրավունք ունեն պահանջելու հավաքածի մեկ տասներորդ մասը: Ըստ այդ հոդվածի նույն կերպ պետք է մոտենալ նաև որսի, չինափայտի, արոտավայրի, խոտհարքի և վարելահողերի նկատմամբ: Այս հոդվածից նմանապես երևում է, որ գյուղական համայնական կազմակերպությունը դեռևս ամուր էր: Այս դեպքում ևս ինչպես երևում է, համայնքն այս կամ այն չափով ենթարկված էր իշխանների տիրապետությանը, որովհետև Ձյուրթի,

[301] Մխիթար Գոշ, Դատաստանագիրք, էջ 415:

խնկի, բժշկական խոտերի և նմանօրինակ այլ նյութերի վաճառքից ստացված եկամուտի մեկ տասներորդ մասը պետք է տրվեր նրանց:

Հայտնի է, որ համայնքի կարևոր առանձնահատկություններից մեկն էլ իր անդամների իրավունքները պահպանելու, նրանց տնտեսական օժանդակություն ցույց տալու և քայքայումից փրկելու սկզբունքն էր: Մխիթար Գոշի Դատաստանագրքում կան հոդվածներ, որոնք նվիրված են իր աղքատացած «եղբորը» փրկելու համար բարեկամի պարտավորություններին: Դատաստանագրքի երկրորդ մասի ԺԲ հոդվածում ասվում է, որ եթե մեկն աղքատության պատճառով վաճառում է իր հողաբաժինը, ապա նրա մերձավորները պետք է չեղարկեն այդ վաճառքը և իրավունք ունեն հետ այն վերադարձնելու վաճառման ժամանակվանից մինչև յոթ տարի անցնելը: Եթե վաճառողը մերձավոր մարդ չունի, բայց հետագայում բավական միջոցներ է կուտակում, կարող է նույն արժեքով հողաբաժինը հետ գնել: Երկրորդ մասի ԾԳ հոդվածով նույն կերպ քաղաքում վաճառված տան համար հետ գնելու ժամանակ է սահմանվում մեկ տարի: Գյուղի տան համար ժամանակ չի սահմանվում, իսկ հաջորդ հոդվածով վաճառված ջրաղացի համար սահմանվում է մեկ տարի:

Ինչպես տեսնում ենք, քաղաքում վաճառվող գույքի համար ավելի կարճ ժամանակ է սահմանվում, քան գյուղում: Անշուշտ, դա կապված էր քաղաքներում առևտրի ու դրամական տնտեսության զարգացման հետ և կարճ ժամանակ սահմանելն ուներ առևտրին չխոչընդոտելու, այն ավելի դյուրին դարձնելու նպատակ:

Այս հոդվածներից միաժամանակ երևում է, որ համայնքն արդեն շերտավորման էր ենթարկվել, որի հետևանքով նրա անդամների մի մասն աղքատանում և քայքայվում էր:

Դատաստանագրքի երկրորդ մասի ՃԷ հոդվածով Գոշը գյուղական հողը վաճառելու արգելքներ է սահմանել: Եթե հայրն է վաճառում, անհրաժեշտ է հողի ժառանգորդների՝ որդիների, դուստրերի և եղբայրների համաձայնությունը, իսկ եթե վերջիններս չեն համաձայնվում, երբ ցանկանան կարող են վաճառված

հողը հետ պահանջել գնողից: Նույն ձևով էլ, եթե որդին է վաճառքը կատարում, պետք է հոր և քույրերի համաձայնությունը լինի: Այս հոդվածից, ինչպես Բ. Հարությունյանն է ցույց տալիս[302], երևում է դեռևս պահպանվող նահապետական տնային համայնքի կամ ղերդաստանի ամբողջությունը:

Գյուղացու իրավասոցիալական դրության պարզաբանման համար հիմնական հարցը այդ նրա հողին ամրացած լինելն է: Այս ինդրին է նվիրված Գոշի Դատաստանագրքի երկրորդ մասի Գ հոդվածը («Յաղագս դատաստանաց չինականաց»): Այնտեղ ասվում էր, որ մարդը բնականից ազատ է ստեղծվել, տերերին ծառայելն առաջացել է հողի ու ջրի պատճառով: Լավ է այն դասը, որ թողնի մարդուն ուր ուզում է ապրի, իսկ եթե տերերից որևէ մեկը դա չհանդուրժի և հեռացողին ստիպի կրկին վերադառնալ, ապա հոր մահվանից հետո նրա որդիները, որոնք ծնվել են ոչ այդ վայրում, ազատ են: Այս հոդվածի հիման վրա պատմաբանների մի մասը (Խ. Սամուելյան[303], Ս. Երեմյան[304]) գտնում է, որ 12-րդ դ. գյուղացին արդեն իրավաբանորեն ամրացված էր հողին: Բ. Հարությունյանը, հենվելով Գոշի Դատաստանագրքի հրատարակիչ Վ. Բասսամյանի բերած ձեռագրերի տարբերությունների և Մատենադարանում պահվող Դատաստանագրքի 36 ձեռագրերի վրա, ցույց է տալիս, որ այդ հոդվածի վերջին մասը պետք է հակառակ իմաստով հասկանալ: Սակայն ենթադրելով, որ հոդվածի վերջին տարբերությունը կարող է հետագայում ավելացված լինել՝ հավանական է համարում, որ չինականների ճորտացումը կատարվել է երկրի տնտեսապես ավելի հասունացած, Վրաստանին մերձավոր շրջաններում միայն, որտեղ զարգացած էր կուսային

---

[302] Տես Б. М. Арутюнян, Социально-экономическое положение крестьян в Армении XII в. по «Судебнику» Мхитара Гоша, էջ 53:

[303] Տես Խ. Սամուելյան, նշվ. աշխ., էջ 258-259:

[304] Տես С. Еремян, Опыт периодизации истории Армении эпохи феодализма, «Вопросы истории», 1951, № 7, էջ 63:

տնտեսությունը, իսկ հարավային Հայաստանում ճորտացումը թույլ է արտահայտվել[305]:

Մեզ թվում է, որ հարցի իրավական կողմից անկախ, պահպանված տեղեկություններից երևում է, որ Հայաստանում փաստորեն շինականն ամրացված է եղել հողին: Ինչպես տեսանք վիմական արձանագրություններից ու վավերագրերից, մեզ հետաքրքրող շրջանում, ինչպես և հետագայում, գյուղերն օտարվել են իրենց բնակչությամբ և արտադրության մյուս միջոցներով ու գյուղացին չի առանձնացվել իրեն պատկանող հողամասից: Արևելքում այդ թվում նաև միջնադարյան Հայաստանում համայնական կարգերն ամուր են պահպանվել և համայնքի անդամ շինականն իր հողաբաժինը թողնելու անհրաժեշտություն չի զգացել: Նա շահագրգռված չէր իր հողամասը թողնելու մեջ, որովհետև համայնքը պահպանում էր նրա իրավունքները և տնտեսական օժանդակություն էր ցույց տալիս: Այնպես որ շինականը եթե ոչ իրավաբանորեն, ապա փաստորեն ամրացած է եղել իր հողաբաժնին, այգուն, բանջարանոցին ու համայնքին: Դրանից, իհարկե, չպետք է հետևեցնել, թե համայնական գյուղացին խսպառ զրկվել էր ամեն մի իրավունքից ու ազատությունից և լրիվ ճորտացվել էր: Համայնք-գյուղը 9-11-րդ դդ. կորցրել էր իր նախկին ազատությունների մեծ մասը և անցել էր իշխանների կամ եկեղեցու տիրապետության տակ, սակայն, դեռևս ճորտական վիճակի մեջ չէր ընկել:

Այս ժամանակաշրջանում ուժեղանում է համայնքի ներքին շերտավորումը, որի հետևանքով նրա հարստացող մասն իր ունեցվածքով ու դիրքով ավելի է անջատվում համայնքի մյուս անդամներից:

Համայնքը սովորաբար ունենում էր իր ընտրովի առաջնորդը, որը հետևում ու վարում էր նրա ներքին գործերը: Խոշոր հողատիրության զարգացման ընթացքում համայնքն ընկնում է Ֆեոդալի գերիշխանության տակ, որը, սակայն, ոչ միայն չի ոչնչացնում

[305] Տես Б. М. Арутюнян, Социально-экономическое положение крестьян в Армении XII в. по «Судебнику» Мхитара Гоша, էջ 53–55:

համայնքի վարչական-տնտեսական կազմակերպությունը, այլև այն պահպանում ու հարմարեցնում է իր կալվածատիրական շահերին: Համայնքի առաջնորդ գեղջավագը կամ տանուտերը, որը մինչ այդ կազմակերպում էր գյուղի համար անհրաժեշտ ընդհանուր աշխատանքները (ճանապարհաշինություն, առուներ անցկացնել և այլն), լուծում նրա առանձին անդամների միջև վիճելի հարցերը և ընդհանրապես հետևում ամբողջ համայնքի ներքին կարգուկանոնին, այժմ աստիճանաբար վեր է ածվում նաև իշխանի դրածակալի՝ տվյալ համայնքի սահմանում: Ահա մի վկայություն տանուտերների կատարած ֆունկցիաներից մեկի մասին: Դավիթ Ալավկա Որդու դատաստանագրքի ԽԲ կանոնում կարդում ենք. «այլ թէ վարձկան ոք լինի և ասիցեն ցտանուտէրն. թէ առաքեայ զիս և կամ տուր ինձ գործ զի արարիցց»[306]:

Այս կանոնից պարզ երևում է, որ տանուտերներն են աշխատանքի պահանջ ունեցող մարդկանց համապատասխան գործի նշանակել: Նրանք հետևել են նաև աշխատանքի որակին, օգնել կալվածատիրոջը՝ հավաքելու հարկերը և այլն: Նրանք օգտվելով իրենց իրավունքներից ու ֆեոդալի հովանավորությունից՝ ավելի են հարստանում համայնքի մյուս անդամների շահագործման միջոցով: Ստեփանոս Օրբելյանը 895 թ. Տաթևի եպիսկոպոս ընտրված Հովհաննեսի մանկության մասին խոսելիս հայտնում է, որ նրա ազգատ հայրը կնոջ մահից հետո ամուսնացել էր մի այրու հետ, որը «պահէր զերամս ընտանի թռչնոց տեառն գեղջն»[307]: Ինչպես տեսնում ենք, գյուղի ավագը կամ տանուտերն ուներ թռչունների երամ (որպիսի հարստություն հավանաբար չունեին համայնքի մյուս անդամները կամ նրանց մեծ մասը), որը պահելու համար հատուկ մարդիկ էին պահում, այլ խոսքով ասած՝ շահագործում համայնքի մյուս անդամներին:

Եթե տանուտերները համայնքի ընտրովի առաջնորդներն էին և համայնքի ներքին գործերը վարելով կալվածատիրոջ համար վարչական աշխատողի դեր էին կատարում, ապա ձեռնավորները

---

[306] Սասնամաղարան, ձեռ. № 839, էջ 57ա:
[307] Ստեփանոս Օրբելյան, էջ 221:

միայն ու միայն ֆեոդալի գործակալներ էին: Մեծ մասամբ նրանք էին կալվածատիրոջ անձնական տնտեսության մեջ կազմակերպում ու ղեկավարում աշխատանքը, հետևում տիրոջ հանդեպ շինականների ունեցած պարտավորությունների կատարմանը: Ձեռնավոր բառն առաջին անգամ օգտագործվել է 906 թ. Տաթևի նոր սահմանները հաստատելու առթիվ կազմած արձանագրությունում[308], ապա 11-րդ դ. մի արձանագրության մեջ[309] և նույն իմաստով ավելի հաճախ օգտագործվել է 13–14-րդ դդ. վավերագրերում:

Ձեռնավորների հիմնական պարտականությունը հարկերի հավաքումն է եղել: Նրանց այս կարևոր ֆունկցիան ավելի ցցուն հանդես է գալիս 13-14-րդ դդ: Ամբերդի անթվական մի արձանագրության մեջ կարդում ենք. «Ողորմութեամբ Աստուծոյ ես Մխիթար .... ձեռնաւորս թողի տանն կէս կապիճ հաց եւ տարին հակ ձեռնաւորին յիշատակ մեզ եւ յարեւշատութիւն պարոնացն թէ ոք ի մերոց»[310]: Պարոն բառի հիշատակությունից ելնելով ենթադրելի է, որ այս արձանագրությունը պատկանում է 13-րդ դ.: Վկայությունից նախ երևում է, որ ձեռնավորները հարկ են գանձել նաև իրենց օգտին և օգտվել են բավական մեծ իրավունքներից, քանի որ կարողացել են ինքնակամ հարկային որոշ դիջումներ կատարել:

Ձեռնավորների հարկահանության ֆունկցիան և իրավունքները պարզորոշ երևում են նաև Օշականի 1288 թ. արձանագրությունից, ուր ասվում է. «ի պարոնութեանն Սահմադինին եւ իւր որդւոյն Ամիրբէկին Հաղարբէկին, ես Գէշմարդս էի ամիրայ եւ Հաւիկս ձեռնաւոր, թողաք զՍուրբ Կարապետին այգեացն զՅաւշականու, զՄիրինու, զձեռնաւորին զհարկն գինէ որ կայր, վասն փրկութեան հոգոց մերոց եւ յարեւշատութեան Պարոնացն»[311]:

---

[308] Նույն տեղում, էջ 233:
[309] Նույն տեղում, էջ 327:
[310] Օգտվում ենք Կ. Ղաֆադարյանի Արձանագրությունների ժողովածու ձեռագիր աշխատությունից:
[311] Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 190:

Ինչպես տանուտերները, այնպես էլ ձեռնավորներն ունեցել են բավականաչափ իրավունքներ ու արտոնություններ: Եկեղեցու առաջնորդների ընտրությունների, հողերի նվիրման կամ փոխանակման ժամանակ դրանք հաստատող վկաների թվում խոշոր ֆեոդալների ու ազատների հետ հանդես են եկել նաև տանուտերներն ու ձեռնավորները:

Բերենք համապատասխան վկայություններ: Սյունիքի եպիսկոպոս Սողոմոնի մահից հետո (895 թ.) «ժողովեալ տէրանցն Սիւնեաց և ամենայն ազատաց նոցա, և վանաց երիցունք աշխարհիս, նա և աւագ տանուտեարք... առնեն ընտրութիւն նորոգ հայրապետի»[312]: Տաթևի տիրույթների սահմանները հաստատող Հայաստանի նշանավոր մարդկանց անունները նշելուց հետո Ստեփանոս Օրբելյանն ավելացնում է. «այլ եպիսկոպոսաց և քահանայից և ազատաց և տանուտերաց արարաք զայս գիր պայմանի հաստատուն և անխախտ»[313]: Ապա գրում է. «Եթէ ոք ընդ հակառակս ելանէ ի մերոց կամ յօտարաց, յաւագաց կամ ի ձեռնաւորաց և ի խոստակղարաց կամ ի տանուտէրաց, ի սուրբ Երրորդութենէն որոշեալ լիցի»[314]:

Ուշագրավ է, որ վանքի տիրույթների սահմանների հակառակորդների թվում հանդես են գալիս ոչ միայն համայնքի առաջնորդ տանուտերները, այլ նաև վանքի տիրույթներին սահմանակից համայնական դյուղերը. «և մի ոք իշխեսցէ այսմ հակառակել մի Բաղացիք և մի Որոտնեցիք և մի Վաղանդացիք, մի Շնհէրացիք և մի Նորեցիք»[315]:

Վավերագրերի վերջում նվիրատվությանը հավանական հակառակորդ համարվողների թվում հաճախ կարելի է հանդիպել ձեռնավորների հիշատակությանը[316]:

Տանուտերերը և ձեռնավորները, ինչպես երևում է բերված փաստերից, ոչ միայն պաշտոնական դեպքերում հանդես էին գա-

---

[312] Ստեփանոս Օրբելյան, էջ 222:
[313] Նույն տեղում, էջ 231:
[314] Նույն տեղում, էջ 233:
[315] Նույն տեղում, էջ 232–233:
[316] Տե՛ս նույն տեղում, էջ 327, 362, 367:

լիս իշխող դասերի հետ ու հիշատակվում աղատներից անմիջապես հետո, այլև նպաստավոր պայմաններում, հավանաբար, նվիրվող հողամասի կամ այգու նկատմամբ իրավունքներ են բանեցնում, ուստի նվիրաբերությունը խախտողներին նզովելիս հիշատակվում են նաև նրանք:

Այսպիսով, տանուտերերը և ձեռնավորները բավականաչափ իրավունքներ ունեցող շահագործող սոցիալական խումբ էին և իրենց սոցիալ-տնտեսական դրությամբ ընդհուպ մոտենում էին մանր ազնվականության դասին: Նրանց մեջ առավել հարստացողներն ու ավելի մեծ կշիռ ձեռք բերողներն աստիճանաբար ընկնում էին մանր ազնվականության դասի մեջ և դրանով իսկ համալրում նրա շարքերը:

Եթե համայնքի շերտավորման հետևանքով նրա առաջնորդներն ու շինականների մի մասն աստիճանաբար հարստանում և սկսում են շահագործել մյուսներին, ապա համայնքի անդամների մի մասը գնալով աղքատացման և նույնիսկ ունեզրկման է ենթարկվում:

Աղբյուրներում, մասնավորապես Գոշի Դատաստանագրքում այս կամ այն առիթով հիշատակվում և որոշ հոդվածներ են նվիրվում վարձով աշխատող մարդկանց՝ վարձկաններին: Նրանք բոլոր վկայություններում հանդիսանում են աղքատ, ընչազուրկ, սեփական աշխատողներ: Այսպես օրինակ, Գոշի Դատաստանագրքի երկրորդ մասի ՁԳ հոդվածի երկրորդ մասում կարդում ենք. «Յայտ է զի յաղագս աղքատութեան եղեւ վարձկան եւ աւուրն պիտոյից. զի թէ ոչ հատուսցէ յաւուր գործոյն, դատաստանաւ է աւելի քան որ վարձն իցէ հատուցանել»[317]:

Վարձկաններին է նվիրված նաև ԺԳ հոդվածը, որի առաջին մասում ասվում է. «Այլ թէ վարձկան ոք լինի եւ ասիցէ ցտանուտէր տանն թէ՝ առաքեա զիս եւ կամ տուր ինձ գործ զի արարից, իսկ նա յառաջապատրաստ ծանուցանէ նմա զորոգայթ վնասուն եւ վարձկանն առ կարիս հարկի իւրոյ յանձն առնուցու, եւ սա կրկին զանպարտութեան բանն ասիցէ նմա, եւ անդ պատահի

[317] Մխիթար Գոշ, Դատաստանագիրք, էջ 395:

վարձկանին մահ, անպարտ է»[318]: Այս հոդվածից ևս երևում է, որ վարձկանությունը քայքայման ու ծայրահեղ աղքատացման հետևանքով էր առաջանում:

Այժմ տեսնենք, թե ո՞րն էր վարձկանության առաջացման աղբյուրը: 10–11-րդ դդ., ինչպես ասացինք, գյուղական համայնքը բավականաչափ շերտավորել էր: Համայնքի ներսում առաջ էին եկել հարուստ գյուղացիներ, որոնք յուրացրել էին համայնական հողերի գգալի մասը և դարձել ժառանգական սեփականություն:

Տնտեսապես թույլ ոչ սակավ գյուղացիներ այս կամ այն պատճառով իրենց հողաբաժինը սեփական ուժերով մշակելու կարողությունից զրկված լինելով հարկադրված էին վաճառել կամ թողնել այն: Այդպիսի հողամասն անցնում էր տնտեսապես ավելի ուժեղ հարևանի ձեռքը: Հողաբաժնից զրկված գյուղացին դառնում էր վարձու աշխատող: Ուրեմն, վարձկանները հիմնականում առաջանում էին ունեզուրկ շինականներից, իսկ շինականների հողազրկումը տեղի էր ունենում համայնքի ներքին շերտավորման և, հատկապես, ֆեոդալական խոշոր հողատիրության զարգացման հետևանքով: Շինականների շերտավորումն ու հողազրկումն այս օրինաչափ եղանակից բացի կատարվում էր նաև այլ միջոցներով:

Պատերազմները (հատկապես Ատրպատականի էմիրության դեմ մղված) քայքայում էին երկիրը: Բնակչությունը դրա հետևանքով զրկվում էր ունեցվածքից և հաճախ թողնում էր իր բնակավայրն ու տեղափոխվում այլ վայր: Անգամ չտեղափոխվելու պարագայում, միևնույնն է, այն զբաղվում էր վարձկանությամբ, որովհետև զրկվում էր սեփական տնտեսություն վարելու ամեն մի միջոցից: Այս եղանակը, իհարկե, տարածված երևույթ չէր և վարձկանության առաջացման աննշան աղբյուր էր: Գյուղատըն-

---

[318] Նույն տեղում, էջ 421: Գոշի Դատաստանագրքի հրատարակիչ Վ. Բաստամյանը հենվելով այս հոդվածի երկրորդ մասում «կանոնական» բառի հիշատակության վրա, գրում է. «Հեղինակի այս խոսքերից այնպես է երևում, որ հոդվածի սկիզբը հանած է ուրիշ աղբյուրից և իբր թե եկեղեցական կանոնից, բայց մենք չկարողացանք գտնել թե ո՞րտեղից» (նույն էջ, ծանոթ. 941): Մենք ճշտեցինք, որ Գոշը այս հոդվածը գրեթե բառացիորեն վերցված է Դավիթ Ալվկա Որդու կանոնգրքից (տե՛ս Մատենադարան, ձեռ. № 5607, էջ 205բ), որը, ինչպես հայտնի է, կազմվել է 12-րդ դ. սկզբներին, ուստի ընդհուպ վերաբերվում է մեզ հետաքրքրող շրջանին:

տեսության մեջ վարձու աշխատանքի դերն այնքան էլ մեծ չէր և աշխատանքների փոքրագույն մասն էր միայն վարձկանների միջոցով կատարվում:

Վերջիններս իրավական տեսակետից թեև ազատ էին, սակայն այն աստիճան աղքատության ու կարիքի մեջ էին, որ այդ ազատությունը սոսկ ձևական բնույթ էր կրում: Վարձու աշխատանքը դեռևս սերտորեն կապված էր ֆեոդալական արտադրական եղանակի հետ:

Ծառաները (իգական սեռի նկատմամբ օգտագործվում էր աղախին տերմինը) ամենաշահագործվող ու իրավազուրկ սոցիալական շերտն էին: Խ. Սամուելյանը ծառաներին համարում է ֆեոդալի տանը ծառայող տնային ստրուկներ[319]: Ծառաների իրավական դրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրանք իրոք ստրուկի վիճակում էին և ի տարբերություն չինականների ու սոցիալական մյուս շերտերի՝ առանձնապես պատկանում էին տիրոջը: Մխիթար Գոշի Դատաստանագրքի երկրորդ մասի Լ հոդվածի համաձայն, եթե տերն իր ծառայի ատամը ջարդում է կամ աչքն է հանում ու կուրացնում՝ որպես տուգանք պարտավոր է նրան ազատ արձակել[320]: Շինականի վնասվելու դեպքում տերը պարտավոր էր վճարել նրա աշխատանքի ու բուժման համար (իններորդ մաս, հոդված ԺԴ): Աշխարհական օրենքի ԻԷ հոդվածի համաձայն, եթե տիրոջ փայտի հարվածից մեկ կամ երկու օր հետո ծառան մահանում է, ապա տերը քրեական պատասխանատվության չէր ենթարկվում, այլ եկեղեցում ապաշխարում էր: Եթե նման բան կատարվում էր շինական հանդեպ, ապա տերը պարտավոր էր նրա արյան գինը վճարել մահացողի որդիներին կամ ազգականին: Երկրորդ մասի ԼԱ հոդվածի համաձայն եթե ցուլը հարվածում և սպանում է ծառային, ապա ցուլի տիրոջից դրամական հատուցում է ստանում ծառայի տերը: Այլ խոս-

---

[319] Տե՛ս Խ. Սամուելյան, նշվ. աշխ., հ. I, էջ 302–304:

[320] Տե՛ս Մխիթար Գոշ, Դատաստանագիրք, էջ 343: Այս հոդվածից միաժամանակ երևում է, որ ֆեոդալի համար այն աստիճան է շահավետ եղել ծառայի գլխին ձրի աշխատանքը, որ նրան ազատելը տուգանք է համարվել:

քով՝ ծառայի սպանության դեպքում դրամական հատուցում էին ստանում ոչ թե նրա հարազատները, այլ՝ տերը:

Ծառան կարող էր տիրոջ մոտից ազատվել իր գնման համար ծախսած գումարի չափով տիրոջն օգուտ տալու դեպքում: Եթե նա կնոջ հետ էր անցել տիրոջ տրամադրության տակ, ապա կինն էլ էր ազատվում իր հետ, իսկ եթե ամուսնացել էր տիրոջ մոտ աշխատանքի անցնելուց հետո, ապա կինը և որդիները չէին ազատվում: Նրանք կարող էին ազատվել միայն համապատասխան փրկագին վճարելուց հետո[321]: Այս և նախորդ հոդվածներից կարելի է եզրակացնել, որ ծառաներն իրենց իրավունքներով և սոցիալական դրությամբ պարզորոշ կերպով տարբերվում էին չինականներից, ինչպես նաև ճորտերից: Նրանք իսկական ստրուկի վիճակում էին, այն տարբերությամբ միայն, որ ամուսնանալու իրավունք ունեին և տնային ծառայության մեջ էին: Տերը նրանց հետ վարվում էր այնպես, ինչպես սովորաբար վարվում էին ստրուկի հետ:

Ծառաների առաջացման աղբյուրները երկուսն էին՝ պատերազմները և մարդկանց աղքատացումն ու իսպառ ունեզրկումը: Բավականաչափ փաստեր կան, որոնցից երևում է, թե ինչպես պատերազմի ժամանակ ձեռք բերած գերիներին դարձնում էին ծառաներ: Թովմա Արծրունին վկայում է, որ Աբուսեթի որդի Յուսուֆը «եւ զբնակիչս աշխարհին վարեաց ի գերութիւն, վաճառակուր առնել ի կողմանս Ասորոց և յամենայն սահմանս տէրութեանն Տաճկաց. և զկէս գերւոյն ընդ իւրեանց ունելով ի քաղաքն, լինել իւրեանց ջրկիրս և փայտակոտորս. և չարչարէին զնոսա ի գործս խիստ սաստկասառոյց ձմերանն դառնութեան»[322]: Բուղայի Դվին մտնելու առթիվ էլ գրում է. «Եւ եղև ի մտանելն նորա ի քաղաքն, ունելով ընդ իւր կապեալս բազումս և գերեալս որոց ոչ գոյր թիւ. զորս վաճառակուր արարեալ յօտար ազգս, վարել ի ծառայութիւն,

---

[321] Տե՛ս նույն տեղում, էջ 335–336:

[322] Թովմա Արծրունի, էջ 199–200:

գնալ հեռանալ մերժել ի տան հայրենի ժառանգութենէ իւրնանց»[323]:

Պատերազմի ժամանակ վերցրած գերիներին ստրկացնելն այնքան տարածված է եղել, որ Մխիթար Գոշը հատուկ հոդվածով (երկրորդ մաս, հոդված ԻԲ «Յաղագս դատաստանաց այլազգի ծառայից, նմանապէս եւ աղախնաց)[324] կարգավորում է նրանց և տերերի հարաբերության հարցը: Դատաստանագրքում կան վկայություններ ծառաներ վաճառելու մասին, իսկ երկրորդ մասի ԻԱ հոդվածում խոսվում է նյութական կարիքից դրդված լինելու դեպքում իրենց դստերն աղախնության վաճառելու և հետագայում նրան փրկելու միջոցների մասին[325]: Դավիթ Ալավկա Որդին իր Դատաստանագրքի կանոններից մեկում խոսելով փախած գերիների և նրանց պատժի մասին՝ տարբերություն է դնում աղքատ և գերի ծառաների միջև. «բայց զանազանութիւն է աղքատաց և գերեաց քանզի աղքատք անկեալ են առաջի բռնաւորաց և հարկահանաց»[326]:

Նշանակում է, որ ռազմագերիներին՝ այդ թվում գերված բնակչությանը և տնտեսապես քայքայված ու ամեն ինչից զրկված մարդկանց տնային ստրուկ էին դարձնում: Հավանական է, որ տնտեսապես քայքայվող չինականների մի մասը վարձու աշխատանքով էր զբաղվում, իսկ մյուսն ուղղակի ծառաների էր վերածվում:

Պետք է ենթադրել, որ տնային այդ ստրուկները տիրոջ տանը միմիայն նեղ իմաստով ծառայի դեր չէին կատարում: Եթե այդպես լիներ, ապա առանձին անհատներով հարցը կլուծվեր և այդ եզակի դեպքերի համար հարկ չէր լինի ոչ ռազմագերիներին այն աստիճան ստրկացնելու, որ Մխիթար Գոշը նրանց հատուկ հոդված նվիրեր և ոչ էլ աղքատության հետևանքով ծառաներ դառնալու ու նրանց վաճառելու մասին հոդվածներ կգրվեին: Ծառաները հատուկ սոցիալական շերտ էին, թեև նվազ տեսակարար

---

[323] Նույն տեղում, էջ 276:
[324] Մխիթար Գոշ, դատաստանագիրք, էջ 337:
[325] Նույն տեղում, էջ 336:
[326] Մատենադարան, ձեռ. № 839 բ, 61ա:

կշիռ ունեցող: Շատ հավանական է, որ նրանք ֆեոդալի տանը ոչ միայն տնային ծառայողի, սպասավորի պարտականություններ էին կատարում, այլև հանդիսանում էին արհեստավորներ, դերձակներ, անասնապահներ, այգեգործներ և այլն: Անհավանական չէ, որ, մանավանդ վանքապատկան խոշոր տնտեսություններում, զուցե նաև իշխանական կալվածքներում նրանց օգտագործեին որպես աշխատող ուժ: Դա հատուկ ուսումնասիրության հարց է:

Այսպիսով մենք 9–11-րդ դդ. Հայաստանում անմիջական արտադրող դասակարգի այս խայտաբղետ շերտերին համապատասխան տեսնում ենք աշխատանքի մի քանի ձևերի համակցում: Գյուղատնտեսության և անասնապահության մեջ հանդիպում ենք համայնական կախյալ գյուղացու, մասամբ նաև ազատ համայնականի, վարձու աշխատողի, կապալառուի և տնային ստրուկների աշխատանքին: Հիմնական աշխատանքները, սակայն, կատարվում էին ֆեոդալի գերիշխանության տակ անցած կախյալ, ստիպողաբար ճորտացող համայնականի (մասամբ նաև կիսանկախ գյուղացիների) միջոցով:

Անմիջական արտադրողների սոցիալական վիճակը, նրանց և ֆեոդալ-իշխանների փոխհարաբերությունը լիովին պարզ կդառնա ֆեոդալական ռենտայի ուսումնասիրության միջոցով:

2. Ֆեոդալական ռենտա

Անմիջական արտադրողի անվճար հավելյալ աշխատանքը կամ դրա շնորհիվ արտադրված մթերքները, որոնք անցնում էին հողատիրոջը, կոչվում էին ֆեոդալական ռենտա:

Ռենտայի սկզբնական և ամենապարզ ձևի՝ աշխատավճար ռենտայի ժամանակ անմիջական արտադրողը շաբաթվա մի մասն աշխատում էր իր հողամասում, իսկ մյուս օրերին մշակում կալվածատիրոջ հողը կամ նրա տնտեսության մեջ այլ աշխատանքներ էր կատարում: Ռենտայի այս ձևի ժամանակ հողատիրոջ կողմից ուրիշի հավելյալ աշխատանքի յուրացումն ավելի ակնհայտ էր կատարվում, որովհետև անմիջական արտադրողի աշխատանքը

ժամանակի և տարածության տեսակետից իրարից անջատվում, բաժանվում է երկու մասի՝ տիրոջ և իր համար տարբեր հողամասերում կատարած աշխատանքի: Կոռային աշխատանքը սովորաբար հենվում էր արտադրողական ուժերի հետամնացության և աշխատանքի պարզունակ եղանակի վրա:

Արդյունավճար (բնամթերային) ռենտան ֆեոդալական հողային ռենտայի զարգացման հաջորդ, ավելի բարձր աստիճան էր և աշխատանքի արտադրողականության բարձրացման ավելի լայն հնարավորություններ էր ստեղծում:

Հողային ռենատայի այս ձևի ժամանակ անմիջական արտադրողն իր բանվորական օրվա տնօրինողն էր, թեև առաջվա նման այդ աշխատանքի ամբողջ հավելուրդային մասը հողի սեփականատիրոջ օգտին էր գնում: Հետևաբար, անմիջական արտադրողի աշխատանքը ժամանակի և տարածության տեսակետը չոշափելիորեն չէր անջատվում: Նա ձգտում էր հավելյալ աշխատաժամանակում ավելի շատ մթերքներ արտադրել, որպեսզի կալվածատիրոջը հարկեր մուծելուց հետո իրեն էլ որոշ «ավելցուկ» մնա: Այլ խոսքով՝ այս հարաբերության ժամանակ գյուղացու շահագրգռվածությունն աճում էր և դրա շնորհիվ բարձրանում աշխատանքի արտադրողականությունը: Այնուամենայնիվ, ռենտայի այս և նախորդ ձևի ժամանակ տնտեսությունը դանդաղ էր զարգանում: Այն գերազանցապես նատուրալ բնույթ էր կրում, որի հետևանքով էլ արտադրությունը գրեթե չէր ընդլայնվում:

Արդյունավճար ռենտային փոխարինում է դրամական ռենտան, որը ֆեոդալական ռենտայի վերջին ձևն է և իր բնույթով զգալի չափով տարբերվում է ռենտայի նախորդ երկու ձևերից: Դրամական ռենտայի առաջացումը կապված էր դրամաապրանքային տնտեսության զարգացման հետ, որը սկսում էր քայքայել կալվածքային տնտեսության նատուրալ հիմքերը: Աշխատանքի հասարակական բաժանման աճը, ներքին ու արտաքին առևտրի աշխուժացումը և արհեստագործության դրանցով պայմանավորված զարգացումն անհրաժեշտ էին դարձնում դրամական ռենտայի առաջացումը: Այս երևույթների զարգացման հետևանքով մեծանում ու բարդանում էին հողատիրոջ պահանջները, որի համար

նա կապվում էր շուկայի հետ և մշտապես դրամ ստանալու կարիք զգում: Կալվածատիրոջ դրամական այդ պահանջները բավարարելու համար անհրաժեշտ էր, որ գյուղացու արտադրած մթերքների մի մասը մշտապես փոխարինվի դրամի, այսինքն՝ արտադրվի որպես ապրանք: Ուրեմն դրամական ռենտայի զարգացման անհրաժեշտ պայման է շուկայի հետ գյուղատնտեսության կապվելը:

Դրամական ռենտան իր առաջացման ու զարգացման սկզբնական շրջանում ամբողջովին պատկանում էր ֆեոդալական հասարակարգին ու հակասության մեջ չէր նրա հետ: Սակայն հետագա զարգացման ընթացքում նպաստում էր ֆեոդալական հասարակարգի աստիճանական քայքայմանն ու նոր հարաբերությունների կազմավորմանը:

Ճիշտ չէր լինի ասել, որ ֆեոդալական ռենտայի որևէ ձևի առաջացումից հետո այն անընդհատ աճում, մեծ չափեր է ընդունում: Ինչպես հայտնի է, ֆեոդալական արտադրությանը հատուկ է ցածր ու հետամնաց տեխնիկան, տնտեսական կյանքում դանդաղաշարժությունն ու պարզ վերարտադրությունը, իսկ այդպիսի պայմաններում սովորույթն ու ավանդույթը գերակշռող դեր էին կատարում: Գյուղացիության սկզբնական հարկադրումը, որը համեմատաբար մեղմ էր լինում, սովորութային իրավունքի հիման վրա ամրանալով ու օրինական դառնալով, որոշ իմաստով արգելակում է հարկերի հետագա ծանրացումը: Եթե կոռային աշխատանքի ժամանակ գյուղացուց պահանջվում էր շաբաթվա մեջ մեկ օր աշխատել ֆեոդալի տնտեսության մեջ, ապա այդ մեկ օրն ավանդաբար կրկնվելով անփոփոխ մեծություն էր դառնում ու ամրապնդվում սովորութային իրավունքով: Իմիջիայլոց, նաև համայնքի դերն այն է, որ գյուղացիության իրավունքների պահպանման գործում սովորույթային իրավունքի հիման վրա պահպանում էր ֆեոդալական ճնշման սկզբնական ձևը և դրանով իսկ խանգարում, որ այդ շահագործումն աստիճանաբար ուժեղանա: Սակայն, սխալ կլիներ սովորույթային իրավունքի կատարած դերի հիման վրա կարծել, թե ֆեոդալական հասարակության մեջ գյուղացիության շահագործումը չի ուժեղանում, այլ միշտ անփոփոխ էր մնում: Նախ, պետք է հաշվի առնել, որ այդ սովորույթները

ձևավորվում են հողուտ շահագործող դասերի և ի վնաս անմիջական արտադրողների: Այդ պատճառով էլ իշխող խավերն աշխատում էին իբրև օրենք սրբագործել այն, ինչ գոյություն ուներ ավանդույթի ու սովորույթի ձևով. երկրորդ, ֆեոդալներին, այնուամենայնիվ, որոշ չափով հաջողվում էր գյուղացիության շահագործումն աստիճանաբար մեծացնել: Սակայն դա չէր գյուղացիության շահագործման ուժեղացման հիմնական եղանակը:

Փորձենք պարզաբանել ֆեոդալական հողային ռենտայի և նրա տիրապետող ձևի հարցը 9–11-րդ դդ. Հայաստանում:

Մեր աղբյուրներում կան բավական փաստեր, որոնք դրական պատասխան են տալիս Հայաստանում ռենտայի առաջին ձևի՝ աշխատավճար ռենտայի գոյության խնդրին: Անիի վիմական արձանագրություններից մեկում, որը թվագրվում է 1057–1063-ով, կարդում ենք. «Կամ եղել իմ՝ Բագրատայ, մագիստրոսիս եւ Արեւելից կատապանիս վիկացոյս, առնել ողորմութիւն մայրաքաղաքիս Անւոյ, յորժամ առին զտանուտերութիւնս՝ Մխիթար իպատոսն, Կրտին որդին, եւ Գրեգոր Լապտատակայ որդին... եւ ազատեցին զվնցկէ կոռ. եւ զսայլին եւ զկամին, եւ զանդարիսն»[327]:

Այս կարևոր վկայությունից, ինչպես արդեն նշել ենք, երևում է, որ կոռային աշխատանքը բազմազան բնույթ է կրել: Գյուղացին տիրոջ համար աշխատանքի է դուրս եկել իր սեփական գործիքներով ու քաշող ուժով: Նա երեք լուծ եզներով վարել է տիրոջ հողը՝ «վցկէ կոռ» (այս դեպքում, հավանաբար, մի քանի գյուղական տնտեսություններ միասին էին դուրս գալիս աշխատանքի, այլապես ամեն մի տնտեսություն չէր կարող երեք լուծ եզներ դուրս բերել), իր կամով ու քաշող ուժով կալսել տիրոջ կալը՝ «կամին կոռ» և ցորենն իր սայլով տեղափոխել տիրոջ ամբարը՝ «սայլին կոռ»:

Մրենի 999 թվակիր արձանագրության մեջ ասվում է. «Յանուն Աստուծոյ այս իմ հրամանք են Գագկա Շահիաղնչահի ազատեալ եմ զՄրենոյ զկոռն, որ ի նախճաւանի էր զմարդոյ եւ զկ-

[327] Կ. Բասմաջեան, նշվ. աշխ., էջ 35–36, № 23:

զին»[328]: Այս արձանագրության համաձայն շինականը կոռ պետք է կատարեր իր սեփական աշխատուժով՝ «մարդոյ կոռ» և իր քաշող ուժով՝ «եզին կոռ»:

Սյունիքի եպիսկոպոս Սաղոմոնը 881 թ. գրած կտակի մեջ հայտնում է, որ «յառաջ ժամանակաց զԼոտոյ կոռավարն Տեառն Գէորգեայ սուրբ նշանին հոգեցաւուր էր արարեալ, զինչ պատճառաւք և էր՝ այլ յափշտակեալ էին»[329]:

«Կոռավար» կոչվում էր այն հողը, որը վարվում էր, դուցե նաև մշակվում, կոռային աշխատանքի միջոցով[330]: Այս տերմինը 12–13-րդ դդ. ավելի հաճախ է պատահում:

Սրանք են կոռի ու կոռային աշխատանքի մասին եղած փաստերը: Ուսումնասիրողների մի մասը (Ն. Ադոնց[331], Ի. Պետրուշևսկի[332]) գտնում են, որ մեր աղբյուրներում գործածվող «բեկար»-ը հենց կոռային աշխատանքն է, իսկ մյուս մասը (Հ. Մանանդյան[333] և ուրիշներ), ընդհակառակը, այն տուրքի իմաստով են մեկնաբանում: Իմ կարծիքով ճիշտ են այն պատմաբանները, որոնք «բեկոր»-ին կոռի իմաստ են վերագրում: Անհրաժեշտ է, սակայն, դրա հետ մեկտեղ նշել կոռի համեմատությամբ բեկարի ունեցած որոշ յուրահատկությունը:

Բեկարն այնպիսի կոռային աշխատանք էր, որը չէր գործադրվում ֆեոդալների անհատական տնտեսություններում: Պատահական չէ, որ աղբյուրներում չկան այդպիսի փաստեր և ոչ մի տեղ բեկարը չի տարբերակված այնպես, ինչպես կոռը (մարդի կոռ,

---

[328] Ղևոնդ Ալիշան, Շիրակ, էջ 139:

[329] Ստեփանոս Օրբելյան, էջ 215:

[330] Հ. Մանանդյանը հավանական է համարում, որ կոռավար հողերն օտարվելու դեպքում օտարվում էին նաև կոռային աշխատանքները, այսինքն հողի հետ նրա նոր տերը ստանում էր նաև հողի մշակման պարտադիր ձրի աշխատանքները (տե՛ս Հ. Մանանդյան, Հայաստանի արքունի հարկերը մարզպանության շրջանում, «Տեղեկագիր», գիտության և արվեստի ինստիտուտի, Երևան, 1926, № 1, էջ 42–43):

[331] Տե՛ս Н. Адонц, նշվ. աշխ., էջ 484:

[332] Տե՛ս И. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI – начале XIX вв., Ленинград, 1949, էջ 284–289:

[333] Տե՛ս Հ. Մանանդյան, Հայաստանի արքունի հարկերը մարզպանության շրջանում, էջ 32–37:

սայլի կոռ և այլն): Բեկար կոչվում էին միայն պետական ու հասարակական ընդհանուր բնույթի կոռային աշխատանքները: Այն կարող էր գործադրվել Խալիֆայության համար ու արաբների պահանջով ռազմական ճանապարհների, բերդերի, կամուրջների շինարարության կամ էլ տեղական ֆեոդալների պահանջով ջրանցքների, ամրոցների, վանքերի և նման տիպի այլ շինարարությունների ժամանակ: Բերենք ասվածը հավաստող մի վկայություն: «Ապա ոստիկան ոմն ի Հայս առաքեալ, որ Ալի արմանի անուանիւր ըստ հրամանի ամիրապետին իշխան իշխանացս Հայոց զնա կացուցանէր (խոսքը Աշոտ Բագրատունուն 862 թ. իշխանաց իշխան դարձնելու մասին է — Վ. Բ.), բազում զգեստիւք և արքունական պատուով ճոխացուցեալ ի նա հաւատալով զսակս Հայոց և զամենայն բեկար արքունի»[334]:

Սակը մեծ մասամբ հավաքական, ընդհանրապես հարկի իմաստ է ունեցել: Մասնավորապես այս կապակցության մեջ «սակս Հայոց» ասելով հասկացվել են Հայաստանից արքունիքի համար հավաքվող հարկերը: Հասկանալի է, որ բեկարն էլ Խալիֆայության համար կատարվող այդ ընդհանուր պարտադիր աշխատանքն է եղել: Հակառակ դեպքում բեկարը տուրքի իմաստով մեկնաբանելու դեպքում, կստացվեր ոչնչով չհիմնավորված կրկնություն:

Սյունիքի Գրիգոր Սուփան իշխանը Կոթ գյուղաքաղաքում եկեղեցի կառուցելու առթիվ գրում է. «զԱստուածածնի քահանայքն նախնեաց իմոց և այլ սպասաւորս բազումս ազատ արարի յարքունական ծանրութենէ և ի բեկարէ»[335]:

Այստեղ «արքունական ծանրություն» ասելով հասկացվել են արքունիքին տրվող հարկերը, իսկ բեկարը, ինչպես ճիշտ նկատել է Գ. Հովսեփյանը, արքունական հարկադիր ծառայությունն է եղել[336]: Գրիգոր Սուփան իշխանը քահանաներին ազատել է արքունական հարկերից և հարկադիր ծառայությունից: Ինչպես

---

[334] Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 133:
[335] Ստեփանոս Օրբելյան, էջ 178:
[336] Գ. Հովսեփյան, Ջագավանից ժողովը, Շողակաթ, Էջմիածնի հայագիտական ժողովածու, գիրք առաջին, Վաղարշապատ, 1913, էջ 36:

տեսնում ենք, այս վկայությունում ևս բեկարը հարկադիր աշխատանքի իմաստ ունի, սակայն այն, քահանաների նկատմամբ փոխարինվել է հարկադիր ծառայությամբ:

Երբ Ատրպատականի Էմիր Յուսուֆը երկրորդ անգամ է պահանջում նույն հարկերը, Հայաստանում որոշում են «տալ կրկին կամ երեքկին զսակ հարկին և զամենայն բեկարս արքունի և ոչ հարկանիլ ընդ միմեանս սրակոս կոտորածիւ ի պատճառս քինախնդրութեան վրիժուց»[337]: Այս վկայությունում էլ սակը և բեկարը նույն ձևով են գործածված: Սակայն, եթե այստեղ բեկարն անգամ տուրքի իմաստով հասկանանք (որովհետև վկայությունում ասվում է «տալ»), ապա պետք է ընդունել, որ արաբներն ամենայն հավանականությամբ բեկարի փոխարեն համապատասխան չափի տուրք են գանձել: Ուշագրավ է, որ բեկարը մեկ անգամ օգտագործվել է Դվինի 645 թ. եկեղեցական ժողովի 8-րդ կանոնում «ազատ ի հարկէ և ի բեկարէ» ձևով, որից պարզ ու մեկին երևում է, որ այն տուրքի իմաստ չի ունեցել[338]:

Հայ ֆեոդալներն ընդհանուր առմամբ ձրի պարտադիր աշխատանքի շատ են դիմել, ինչն աղբյուրներում սակավ է արտացոլվել: Ուսումնասիրվող շրջանում կամուրջների, քաղաքի պարիսպների, ջրանցքների և, մանավանդ, վանքերի ծավալված շինարարությունը մեծ մասամբ կատարվում էր պարտադիր անվճար աշխատանքով: Այսպես օրինակ, հայտնի է, որ 895 թ. սկսվել և 906 թ. ավարտվել է Տաթևի մայր եկեղեցու և նրա օժանդակ շինությունների կառուցումը: Հարց է առաջանում, թե ինչպիսի աշխատող ուժով կառուցվեց վանքը: Ինչ խոսք, որ Սյունիքի գյուղացիության ձրի աշխատանքով: Նույն կերպ հոգևոր ու աշխարհիկ ֆեոդալներին ենթակա գյուղացիության ձրի աշխատանքով են այդ շրջանում կառուցվել վանքերի մեծ մասը: Հոգևորականությունը գյուղացիության կատարած այդ աշխատանքը համարել է սուրբ գործ, քանի որ նրանք «Աստծու տուն» են կառուցել, դրա համար էլ երբեք այդ աշխատանքը բեկար չի անվանել, ինչպես կոչվել է Խալիֆայության համար կատարվող ընդհանուր ձրի

---

[337] Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 330:
[338] Կանոնագիրք Հայոց, էջ 125:

աշխատանքը: Այդ է պատճառը, որ բեկարը ժամանակի աղբյուրներում հիշատակվում է միմիայն Խալիֆայության կապակցությամբ և ոչ երբեք հայ ֆեոդալների համար կամ նրանց ցանկությամբ կատարվող շինարարական աշխատանքների վերաբերյալ:

Միջնադարյան ֆեոդալական երկրներում սովորաբար կոռային պարտադիր աշխատանքի քանակական չափը ստույգ որոշված, իրավական տեսակետից օրինականացված է եղել: Տարբեր երկրներում ֆեոդալական շահագործման աստիճանին համապատասխան այն տարբեր չափեր է ընդունել՝ տատանվելով շաբաթվա մեջ մեկից մինչև երեք օրվա սահմաններում: Հայաստանում կոռի տևողության մասին ուղղակի փաստ չունենք, բացի Մխիթար Գոշի մի վկայությունից: Նա իր Դատաստանագրքի աշխարհական օրենքի Ա հոդվածում գրում է. «Այսպէս եւ յաւուրս շաբաթու յեօթնէ մին գործիցի իշխանին ու տէրունի. այլ աւելի աշխատելն զձեռամբ անկեալն անիրաւութիւն մեծ է»[339]: Սա նշանակում է, որ կոռային աշխատանքը Հայաստանում սահմանված է եղել շաբաթվա մեջ մեկ օր: Հավանաբար, իշխանները խախտում էին այդ ընդունված կարգը և ավել էին աշխատեցնում, քանի որ Մխիթար Գոշը հարկ է համարել հատուկ զգուշացնել ու արգելել նման դեպքերը:

Կոռի բովանդակության մասին նույնպես մանրամասն փաստեր չունենք: Սակայն պարզ է, որ շինականն աշխատում էր ամբողջ տարվա ընթացքում՝ հողի վարից սկսած մինչև բերքի կալսումն ու նրա տեղափոխումը: Նա ոչ միայն անձամբ էր աշխատում, այլև օգտագործում էր իր քաշող ուժը և գյուղատնտեսական արտադրության մյուս միջոցները: Գոշը նույն այդ հոդվածում ասում է. «Զիոյ եւ ջորւոյ և իշոյ մի լիցի հարկ, զի նոքօք բազում անգամ ծառայէ զտէրունիսն»[340]: Այս ուշագրավ փաստից երևում է, որ կալվածատերը կոռային աշխատանքներում օգտագործում էր ոչ միայն շինականի լծկանը, այլ նաև ձին, ջորին և էշը՝ որպես փոխադրամիջոցներ:

---

[339] Մխիթար Գոշ, Դատաստանագիրք, էջ 315:
[340] Նույն տեղում, էջ 316:

Կալվածատերը հատուկ գործակալներ ուներ, որոնց կալվածքում հսկում էին կոռի կատարմանը. եկեղեցապատկան կալվածքներում, հավանաբար, նման դեր էին կատարում միջին դիրք գրավող հոգևորականները:

9-րդ դ. սկսած Հայաստանում խոշոր կալվածքային տնտեսությունների զարգացման շնորհիվ կոռը տարածվեց, քանի որ խոշոր կալվածքներում ավելի շատ էր նման աշխատանքի պահանջ զգացվում: Կոռը սովորաբար առաջանում և տարածվում էր հացահատիկային կուլտուրաների մշակման հիման վրա: Այդ տեսակետից պատահական չէ, որ կոռի մասին մեզ հասած փաստերը Հայաստանի հացահատիկային կուլտուրաներով զարգացած շրջաններին են վերաբերվում (Անի, Մրեն և այլն):

Աղբյուրների տվյալներից որոշակիորեն երևում է, որ արդյունավճար ռենտան անհամեմատ ավելի լայն տարածում ու գործածություն է ունեցել: Անգամ սահմանված է եղել հատուկ կարգ՝ ռենտայի այս ձևի դանձումն օրինական ճանապարհով իրագործելու համար:

Ըստ Մխիթար Գոշի հարկադրումը կատարվում էր հետևյալ կերպ: Շինականը պարտավոր էր որպես հարկ վճարել բերքի մեկ հինգերորդը, եթե մշակում էր արհեստականորեն ոռոգվող հողը, իսկ անջրդի հողերը մշակելու դեպքում՝ բերքի մեկ տասներորդը: Այգիներն ու բանջարանոցները հարկվում էին բերքի մեկ տասներորդով: Արոտից առանձին հարկ չէր վերցվում. որովհետև հարկվում էին այդ արոտավայրերում արածող անասունները: Եղների համար առանձին հարկ չէր պահանջվում, քանի որ արդեն հարկվել էր այն հողը, որի վրա նրանց աշխատեցնում էին: Ձին, ջորին, էշը, ինչպես տնասանք, ազատվում էին հարկադրանքից՝ տիրոջը բազմիցս ծառայելու համար: Դրա փոխարեն հարկադրվում էր կովը (մեկ լիտր յուղ), իսկ մանր եղջերավոր անասունները տասնորդվում էին՝ տասն ոչխարից մեկն անցնում էր հողատիրոջը[341]: Հավանաբար, իրական կյանքում էլ հարկադրումը հիմնականում

[341] Տե՛ս նույն տեղում, էջ 314–316:

այս ձևով էր կատարվում, որովհետև եղած կցկտուր փաստերը չեն հակասում սրան:

9–11-րդ դդ. Հայաստանում տարածված են եղել արքունի հարկ, արքունական չար, արքունի նեպակ, աշխարհական հարկ, չարիատ, թաստակ, պախտ-տանց, հաս, սակ, բաժ, բեկար, խալա, ծուծ, մրուր, կապիճ և պտուղ հարկերը:

Արքունի հարկ, արքունական չար և արքունի նեպակ հարկերի մասին եղած վկայությունների քննությունից և այդ տերմինների ծագումից ու լեզվական իմաստից հետևում է, որ դրանց տարբեր տեսակի հարկեր համարելու չկա որևէ հիմնավոր պատճառ, ինչպես արվում է սովորաբար:

Նախ արքունի հարկի մասին: Այս հարկի մասին եղած վկայություններից (շատ է օգտագործվում Թովմա Արծրունին, ավելի սակավ Ստեփանոս Օրբելյանը և Հովհաննես Դրասխանակերտցին), պարզ երևում է, որ այդպես են կոչվել ընդհանրապես արաբական արքունիքի համար հավաքվող հարկերը: Այս տեսակետից պատահական չէ, որ արքունի հարկը հիշատակվում է գլխավորապես Խալիֆայության հետ առնչվող այս կամ այն խնդրի կամ նրա կողմից պահանջվող հարկերի կապակցությամբ: Խալիֆայության հարկային լուծը վերանալուց հետո արքունի հարկը հավաքվում էր Բագրատունիների օգտին, սակայն անհամեմատ ավելի պակաս չափերով:

Թովմա Արծրունին պատմում է, որ երբ Արուսեթը Վասպուրականն էր եկել տեղի արքունի հարկերը հավաքելու («առնուլ զհարկս արքունի»), Աշոտ Արծրունին նրանից պահանջում է չասպատակել երկիրը, քանի որ իրենք չեն հրաժարվում վճարել պահանջվող հարկը[312]: Բուղայի արշավանքի ժամանակ, ավերածություններից խուսափելու նպատակով, նույն Աշոտ Արծրունին խորհրդակցում է իր մերձավորների հետ, որ արաբական զորավարին տան «հարկս արքունիս և պատանդս իսաղաղութեան»[313]:

Ատրպատականի էմիր Յուսուֆը «չարժեալ բարկութեամբ մնծաւ ի վերայ Սմբատայ վասն բեկանելոյ նորա զհարկս արքու-

---

[312] Տես Թովմա Արծրունի, էջ 189:
[313] Նույն տեղում, էջ 222:

նի»[344], իսկ «ինքն Սմբատ ոչ խնդրեաց երթալ զհետ խաղաղութեան, տալ զհարկս արքունի[345]:

Խալիֆը «իբրև դիտաց թագաւորելն Գագկայ (Արծրունի – Վ. Բ.) ի վերայ Հայաստանեայց՝ առաքն նմա թագ և հանդերձս զարդուց զարմանալիս և յանձն առնէ նմա զհարկս արքունի»[346]:

Հովհաննես Դրասխանակերտցին վկայում է, որ Սմբատ Ա Բագրատունին հարձակվում է Դվինի էմիրության վրա, որովհետև «ոչ ետես զնոսա հնազանդեալս ի ծառայութիւն ինքեան և զսակ արքունի հարկաց և մաքսից նուազեցուցեալ»[347]:

Փիլիպպե իշխանը 943 թ. երկու դյուղ է նվիրում Տաթևի վանքին և շեշտում, որ «ազատ են դոքա յամենայն արքունի հարկաց»[348]: Նույն ձևով Սյունիքի Սենեքերիմ թագավորի հրամանով Հասան իշխանը 1086 թ. Տաթևին է վերադարձնում նրա նախկին գյուղերը «ազատ յարքունի հարկաց»[349]:

Մեջբերված վկայություններում արքունի հարկը միշտ հոգնակի օգտագործելուց անդամ պարզ երևում է, որ սովորաբար Խալիֆայության օգտին հավաքվող ամբողջ տուրքերն են հարկային այս տերմինով անվանվել և ոչ թե նրանցից մեկը:

Արքունի չար կամ չար տերմինը մեզ հետաքրքրող շրջանում օգտագործվում է երկու անդամ Ստեփանոս Օրբելյանի մոտ և մեկ անդամ Հռոմոսի 1036 թվականի արձանագրության մեջ: Գրիգոր Սուփան իշխանը Կոթում եկեղեցի կառուցելու և այնտեղ քահանաներ ու սպասավորներ հաստատելու կապակցությամբ գրում է. «զԱստուածածնի քահանայքն նախնեաց իմոց և այլ սպասաւորս բազումս ազատ արարի յարքունական ծանրութենէ և ի բեկարէ»[350]: Մի քանի էջ հետո պատմիչը նույն դեպքը հիշատակելով ավելացնում է «զԱստուածածնին քահանայքն ազատ արարաք

---

[344] Նույն տեղում, էջ 463:
[345] Նույն տեղում, էջ 465:
[346] Նույն տեղում, էջ 466:
[347] Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 160:
[348] Ստեփանոս Օրբելյան, էջ 270:
[349] Նույն տեղում, էջ 327:
[350] Նույն տեղում, էջ 178:

յամենայն արքունի չարէ»[351]: Ինչպես տեսնում ենք, արքունական ծանրությունն ու բեկարը հավասարազոր են համարվել ու նույնացվել «արքունական չար» հարկին: Այսինքն վերջինս պարունակել է արքունիքին վճարվող հարկերի ու բեկարի իմաստ: Այդ իսկ տեսակետից իրավացի է Գ. Հովսեփյանը, երբ գրում է. «Միջնադարյան լեզվով «թեթև պահել է չարէ» կամ «ազատ յամենայն չարէ» նշանակում է ազատել հարկից և արքունական ստիպողական ծառայություններից»[352]:

Սյունաց Վասակ թագավորը 1015 թ. Տաթևի վանքին է վերադարձնում Գրվակ գյուղը «ազատ յամենայն չարէ և հարկաց»[353], ինչն ունի հարկերի և պարտադիր աշխատանքի կամ ծառայության իմաստ: Հաճախ նույն նշանակությամբ էր գործածվում նաև արքունի հարկը: Սյունաց Սենեքերիմ թագավորի (1072–1094) հրամանով Հասան իշխանը 1086 թ. Տաթևի վանքին է վերադարձնում նախկինում նրան պատկանած գյուղերը «ազատ յարքունի հարկաց»[354]: Սակայն եթե առաջին դեպքում Օրբելյանը նվիրվող գյուղերի մասին գրում է «ազատ յամենայն չարէ և հարկաց» ապա վերջին դեպքում՝ «ազատ յարքունի հարկաց»[355]: Հասկանալի է, որ երկու դեպքում էլ վանքին նվիրվող գյուղերն ազատվում են արքունի հարկերից ու պարտավորություններից, չնայած պատմիչն օգտագործում է տարբեր տերմիններ ու արտահայտություններ: Արքունի հարկեր և կար ասելով հաճախ հասկացվել են արքունական տուրքերն ու պարտավորությունները: Դրանց նույնիմաստության հետևանքով է, որ Օրբելյանն օգտագործում է մեկ այս մեկ այն ձևը: Հավանաբար, այդ լայն իմաստի հետևանքով է, որ Թովմա Արծրունին այդ հարկի մասին բազմիցս խոսելով ոչ մի անգամ չի օգտագործում «բեկար» տերմինը: Չար տերմինը օգտագործվել է նաև միմիայն հարկերի նկատմամբ: Հովհաննես-

---

[351] Նույն տեղում, էջ 181:
[352] Գ. Հովսեփեան, Ջաղսվանից ժողովը, էջ 35–36:
[353] Ստեփանոս Օրբելյան, էջ 306–307:
[354] Նույն տեղում, էջ 327:
[355] Տես Թովմա Արծրունի, էջ 58:

Սմբատ Թագավորը Կողբի աղահանքից Հռոմոսի վանքին է նվիրում «Ճ. բեռն աղ յամենայն ամի ազատ յամենայն չարէ»[356]:

Նեպակը մեկ անգամ օգտագործել է Թովմա Արծրունին՝ հին շրջանի վերաբերյալ: Հ. Աճառյանը գտնում է, որ նա օգտվել է Եղիշեից[357], որի շրջանում նեպակը պարսկական արքունիքի կողմից գրված վնասակար միջատներ ոչնչացնելու հարկ է եղել[358]: Բայի այդ, նեպակն աղբյուրներում հիշատակվում է ընդամենը երկու անգամ, այն էլ մեզ հետաքրքրող շրջանում՝ Ստեփանոս Օրբելյանի մոտ: Փիլիպպե իշխանը կատարելով Տաթևի եպիսկոպոս Դավթի խնդրանքը վերցնում է 10.000 դրամ «և տայ ի ձեռս նորա զԱրծիւ գիւղ և զԲերդկաներէչ որ ի վերոյ վանիցն, բոլորն ընդ ջրթափովն՝ ազատ յամենայն աշխարհական հարկաց և ի նեպակաց»[359]:

Ջունաշեր իշխանը Սոդոմոն եպիսկոպոսից վերցնում է Բեխ գյուղը և նրա փոխարեն վերադարձնում Արուքսը՝ արձանագրելով հետևյալը. «Առաք զԲեխ իւր սահմանովն և արքունի նեպակովն եւ տուաք զԱրուքս իւր սահմանովն և արքունի նեպակովն որ էր 12 դրամ»[360]:

Առաջին վկայության մեջ չնայած նեպակի առաջ արքունի բառը չի գրված, սակայն օգտագործման ձևից երևում է, որ այն արքունի հարկերի իմաստով է գործածվել և դրա համար էլ առանձնացվել է աշխարհական հարկերից: Ինչպես վկայություններից երևում է նեպակ կոչել են նաև արքունիքին վճարվող հարկերը:

Այսպիսով, արքունի հարկ, արքունի չար, արքունի նեպակ տերմինները տրվել են ամբողջ Հայաստանից խալիֆայությանը վճարվող հարկերին, հաճախ նաև պարտավորություններին: Այդ միևնույն հարկային պարտավորությունը տարբեր հեղինակներ զանազան անունով են կոչել: Ավելի ճիշտ, վիմական արձանա-

---

[356] Վիմական տարեգիր, էջ 21:
[357] Եղիշէի Պատմութիւն Վարդանանց, Թիֆլիս, 1913, էջ 67–68:
[358] Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Երևան, 1931, հ. Ե, էջ 86–87:
[359] Ստեփանոս Օրբելյան, էջ 204-205:
[360] Նույն տեղում, էջ 218:

դրությունների սակավ բացառությունները չհաշված, միայն Ստեփանոս Օրբելյանն է, որ արքունի հարկ տերմինին դուգահեռ օգտագործել է նաև չար և նեպակ տերմինները՝ միևնույն կամ գրեթե նույն իմաստով:

Արքունի հարկերը վճարվում էին բնամթերքով, անասուններով, արհեստագործական արտադրանքով ու դրամով: Օրինակ, Սմբատ Ա թագավորը Յուսուֆին որպես արքունի հարկ վճարում է. «...արծաթ և ոսկի և կարասիս բազումս և ձիս և ջորիս...»[361]:

Խալիֆայության հարկային լուծը թոթափելով վերանում է նաև աղբյուրներում նեպակ հարկային տերմինի հիշատակությունը, արքունի հարկ տերմինը պահպանվում է մինչև 11-րդ դ. վերջերը, իսկ արքունի չարը ստանում է տեղական հարկի իմաստ և «չար» ձևով հիշատակվում նաև հետագա դարերի վիմական արձանագրություններում[362]:

Աշխարհական հարկ տերմինն օգտագործվել է երկու իմաստով: Նախ նա ունեցել է շատ ընդհանուր նշանակություն և տրվել է բոլոր ոչ եկեղեցական, աշխարհիկ հարկերին: Այսպես օրինակ, Վասակ իշխանի կին Մարիամը «գնեալ ի հագարացի մարդկանէ զգեօղն Շողուագայ ընդ 60,000 դրամի ազատ յամենայն աշխարհական հարկաց՝ ընծայէ ի սեպհական ժառանգութիւն սուրբ եկեղեցւոյն»[363]: Այստեղ աշխարհիկ հարկ ասելով հասկացվել են բոլոր հարկերը, բացի եկեղեցուն վճարվողներից: Աշխարհական հարկի մյուս իմաստն ավելի նեղ է, սակայն դարձյալ օգտագործվել է ընդհանուր նշանակությամբ, տրվել հարկերի մի ամբողջ տեսակին: Ինչպես հիշատակեցինք, Փիլիպպոս իշխանը Արծիվ և Բերդկաներեչ գյուղերը վաճառում է Տաթևի վանքին «ազատ յամենայն աշխարհական հարկաց և ի նեպակաց»: Այս վկայության մեջ աշխարհական հարկ են կոչվել աշխարհիկ ֆեոդալներին տրվող բոլոր տուրքերը, այսինքն՝ հարկերը, բացի արքունիքի և եկեղեցու օգտին հարկերից: Աշխարհական հարկը նույն իմաստով է օգտագործվել Նորավանքի 1296 թ. արձանագ-

---

[361] Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 330:
[362] Տե՛ս Վիմական տարեգիր, էջ 137, 247:
[363] Ստեփանոս Օրբելյան, էջ 174:

բութեան մեջ, ուր ասվում է «Եռու ... սուրբ եկեղեցւոյս զՀայաստանեայս զիւղն իւր բոլոր սահմանաւքն ազատ յամէն աշխարհական հարկաց ի դիւանէ ի խալանէ եւ յամէն չարէ»[364]: Աշխարհական հարկն առանձին հարկ չի եղել: Այն ունեցել է ընդհանուր, հավաքական իմաստ, ուստի բոլոր վկայություններում էլ հոգնակի թվով է օգտագործվում:

Շարիաթը չորս անգամ հիշատակվում է մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի վիմագրերում[365] և մի քանիցս 13-րդ դ. երկրորդ կեսի արձանագրություններում[366]: Բոլոր այս վկայություններից երևում է, որ «շարիաթ»-ը ինչպես 10–11-րդ, այնպես էլ 13-րդ դ. կալվածատիրոջ համար բերքի տարբեր տեսակներից և յուղից բնամթերքով գանձվող հարկ է եղել: Այսպես օրինակ, Տեկորի 971 թ. արձանագրության մեջ կարդում ենք. «Ես Խաչատուր Հայոց թագուհի հաստատեալ եմ զՏեկորոյ շարյաթն յեղն կայթ մի [«յեղն կայթ մի»]»[367], իսկ նույն եկեղեցու 1008 թ. վիմական արձանագրության մեջ ասվում է. «կամ եղեւ ինձ Կատրանիդէ Հայոց թագուհի, դուստր Վասակայ եւ ամուսին Գագկա, թողեալ եմ զՏեկորոյ շարյաթն»[368]:

Աղբյուրները «շարիաթի» չափը որոշելու հնարավորություն չեն տալիս: Հ. Մանանդյանը հենվելով Տեկորի 971 թ. վերոհիշյալ արձանագրության «շարյաթն յեղն կայթ մի» դարձվածքի, Գոշի Դատաստանագրքի այն վկայության վրա, ըստ որի յուրաքանչյուր կովից վերցվում էր մեկ լիտր յուղ և դրանք համարժեք ընդունելով Շիրակացու ժամանակաշրջանի «կայթ»-ին, որը հավասար էր բյուզանդական վաթսուն լիտրին, ենթադրում է, որ յուղից վճարվող «շարիաթ»-ը հավասար է եղել 408 գրամի[369]: Այս կարծիքը հավանական չի թվում, և, բայի այդ, վերաբերվում է միայն

---

[364] Վիմական տարեգիր, էջ 137:
[365] Տես նույն տեղում, էջ 8, 13, 14, 26:
[366] Տես նույն տեղում, էջ 107, 126, 127, 130, 138, 142, 247:
[367] Նույն տեղում, էջ 8:
[368] Նույն տեղում, էջ 13:
[369] Տես Հ. Մանանդյան, Նյութեր հին Հայաստանի տնտեսական կյանքի պատմության, Երևան, 1928, հ. II, էջ 15–16:

յուղից վերցվող հարկին և ոչ թե ընդհանրապես բերքից դարձվող «շարիատ»-ին:

Թաստակ հարկը հիշվում է ընդամենը չորս անգամ՝ 11-րդ դ. վիմական արձանագրություններում[370]: Այդ վկայություններից առանձնապես ուշագրավ է Անիի 1045–1054 թվակիր արձանագրությունը, ուր ասվում է. «Ես Առաւնս... Բերի ոսկի մատանեաւ գիր ազատութեան զինքնակալ ծիրանեծին թագուհոյն վասն պախտից տանց քաղաքիս եւ թաստակին, զոր տային ամ յամէ չափ ութից լտերց..., զոր տայր մուխսիբն այս ամէն»[371]: Հ. Մանանդյանն այս վկայության հիման վրա գտնում է, որ «թաստակ»-ը լրացուցիչ հարկ է եղել և գանձվել է գյուղի և քաղաքի հարկահանների «ձեռնավոր»-ների և «մուխթասիբ»-ների համար: Նա միաժամանակ գտնում է, որ «թաստակը», ինչպես երևում է մեջբերված ընագրից, գանձվել է հիմնական ընահարկի՝ շարիաթի, մեկ չորրորդ մասի չափով:

Այս նույն վկայության մեջ հիշատակված «պախտանց» հարկը, որը «թաստակի» նման գանձվում էր մթերքով, Հ. Մանանդյանը նույնանիշ է համարում «շարիատին»[372]:

Հաս հարկային տերմինը գործածվել է մարզպանական շրջանից սկսած՝ մինչև 14-րդ դ.: Մեկ անգամ այն օգտագործվել է Անիում 1036 թ. Պետրոս Ա կաթողիկոսի թողած արձանագրության մեջ՝ այգիներից վերցվող հարկի նշանակությամբ[373]:

Թովմա Արծրունու երկում հաճախ ենք հանդիպում այս տերմինի գործածությանը: Այսպես օրինակ, ըստ նրա Աշոտ Արծրունին և Բագարատ Բագրատունին արաբական հարկահան Աբուսեթին են հանձնում «զհարկս և հասս արքունի և դարձուցանեն զնա ընդ նոյն ուստի եկն»[374]: Մի այլ առիթով պատմիչը գրում է. «մեք տացուք քեզ հասս հարկացն և հաճեսցուք զմիտս քո»[375]:

---

[370] Տե՛ս Վիմական տարեգիր, էջ 9, 13, 14, 27:
[371] Նույն տեղում, էջ 27:
[372] Տե՛ս Հ. Մանանդյան, Նյութեր հին Հայաստանի տնտեսական կյանքի պատմության, էջ 18–23:
[373] Տե՛ս Վիմական տարեգիր, էջ 20:
[374] Թովմա Արծրունի, էջ 183:
[375] Նույն տեղում, էջ 189:

Ըստ նրա Գուրգեն Արծրունին Բուղային հայտնում է, որ «կացցէ ինքն և իւրքն ամենեքեան ի հնազանդութեան արքունի, ի հարկս և ի հասս չափոյ սակի արքունական աւանդութեանց»[376]: Խոսելով ծառաների մասին, Թովմա Արծրունին նշում է, որ նրանք բնակվում էին «յամուրս լեռնականս, յանհոգս խաղաղացեալք յարտաքին թշնամեաց, և հարկ և հասք արքունի ի յինքեանս մնալով»[377]:

Ինչպես տեսնում ենք, Թովմա Արծրունին տարբեր տեսակ տուրքերին տրվող և հավաքական իմաստ կրող հարկ ու հաս տերմիններն օգտագործում է իրար կողք կողքի և գրեթե նույն նշանակությամբ: Այս առումով իրավացի է, ինչպես Հ. Մանանդյանը, երբ «հաս»-ին վերագրում է բերքից կամ եկամուտից մթերքով տրվող ընդհանուր հարկի իմաստ[378], այնպես էլ Թ. Ավդալբեգյանը, որը «հաս»-ը բացատրում է հասանելիք, տուրք ու հարկ ձևով[379]:

Աղբյուրներում բավական առատորեն հանդիպող սակ հարկային տերմինն օգտագործվել է մարզպանական ու արաբական ժամանակաշրջանում, ինչպես նաև Բագրատունյաց տիրապետության առաջին շրջանում: Այս հարկը հիշատակվում է գերազանցապես Խալիֆայությանը մուծվելիք տուրքերի կապակցությամբ և նրա մասին եղած վկայությունները 10-րդ դ. առաջին կեսից այս կողմը չեն անցնում: Այս երկու կարևոր հանգամանքները հիմք են տալիս եզրակացնելու, որ «սակը» եղել է արաբական արքունիքին վճարվող հարկ և իբրև այդպիսին Խալիֆայության հարկային սիստեմը վերանալու հետ մեկտեղ վերացել է:

Այն հաճախ գործածվել է ոչ թե հարկի որևէ տեսակի, այլ ընդհանրապես հարկի իմաստով: Դրա օգտին են խոսում, օրինակ հետևյալ վկայությունները: Խալիֆը Սմբատ Ա Թագավորի ընծա-

---

[376] Նույն տեղում, էջ 238:
[377] Նույն տեղում, էջ 286:
[378] Տե՛ս Հ. Մանանդյան, Հայաստանի արքունի հարկերը մարզպանության շրջանում, էջ 29–32:
[379] Թ. Ավդալբեգյան, Հաս, սակ ու բաժ, «Տեղեկագիր», ՀՍՍՀ Գիտության և արվեստի ինստիտուտի, Երևան, 1926, № 1, էջ 52–54:

ները ստանալով «թեթևաբեռ զսակն արքունի արարեալ»[380] Ատրպատականի Էմիր Յուսուֆը «զսակն արքուն ի կամս անձին նորա (Սմբատի – Վ. Բ.) ըստ կարի և կամաց թողացուցեալ...»[381], իսկ մի քանի տարի հետո «ուժգնապես հայցեալ տալ զսակն արքունի»[382] և այլն: Հ. Մանանդյանը փորձել է ցույց տալ, որ «սակ»-ը գլխահարկ է եղել[383], սակայն դա համապատասխան փաստերով չի հիմնավորվում:

«Սակը» գործ է ածվել նաև չափի կամ նախորոշված հարկագումարի իմաստով: Օրինակ, «կացցէ ինքն և իւրքն ամենեքեան ի հնազանդութեան արքունի, ի հարկս և ի հասս չափոյ սակի արքունական աւանդութեանց»[384] կամ «Իսկ արքայ Սմբատ ընդ կրունկն դարձեալ հասանէր ի մայրաքաղաքն Դվին: Եւ վասն զի ըստ առաջնոյ կիտին եդելոյ ոչ նոցա զնոսա հնազանդեալս ի ծառայութիւն ինքեան և զսակ արքունի հարկաց եւ մաքսից նուազեցուցեալ, ապա դուռն ևս քաղաքին փակեցաւ ընդդէմ նորա»[385]:

Բաժը մեզ հասած քրիստոնյա շրջանում գործ է ածվել 10–11-րդ դդ. երկու վիմական արձանագրության մեջ[386] և մեկ անգամ Ասողիկի կողմից[387]: Առաջին վկայության՝ Արուճի 987 թ. արձանագրության մեջ կարդում ենք. «Ես Սմբատ Շահնշահ, որդի Աշոտոյ Շահնշահի, ազատեցի վասն իմ հաւրն հոգւոյն եւ իմ արեւշատութեան եւ մեղաց թողութեան զշալակաւոր բաժէ»[388]: Երկրորդ վկայության մեջ, որը գտնվում է Անիի 1057–1063 թ. նշանավոր արձանագրության մեջ ասվում է. «Եւ գինեւոր Անեցի, եթէ սայլով, եթէ գրաստով (բաժն – Վ.Բ.) ազատէ. Եւ Անեցի որ իւրենն մորմեալիք

---

[380] Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 193:
[381] Նույն տեղում, էջ 196:
[382] Նույն տեղում, էջ 204:
[383] Հ. Մանանդյան, Հայաստանի արքունի հարկերը մարզպանության շրջանում, էջ 28–29:
[384] Թովմա Արծրունի, էջ 238:
[385] Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 160:
[386] Վիմական տարեգիր, էջ 9, 27:
[387] Ասողիկ, էջ 256: Բաժ տերմինն ընդհանրապես հարկի և մաքսի իմաստով գործ է ածվել հին մատենագիրների (Կորյունի, Եղիշեի, Անանիա Շիրակացու) կողմից: Այդ մասին տես Թ. Ավդալբեգյան, Հաս, սակ ու բաժ, էջ 73–92:
[388] Վիմական տարեգիր, էջ 9:

գնէ, բաժն ազատ է, եւ շալակաւոր Անեցի ... բաժին կէսն ազատէ: Եւ մսագործի, եթէ պախրէի լինի գլուխ, եթէ ոչխարի, կեսն տա, կէսն ազատ է»[389]:

«Բաժը», ինչպես երևում է բերված փաստերից, մաքսային տուրքի իմաստ է ունեցել: Երկրորդ վկայության համաձայն, սայլով կամ դրաստով քաղաք դինի բերող կամ մսացու դնող անեցիներն ազատվում էին «բաժից»: Շալակավոր անեցիները վճարելու էին «բաժի» կեսը: Նույն ձևով նաև մսագործները պախրեի և ոչխարի համար պետք է տային սովորական պահանջվող հարկի կեսը: Շալակավորները ևս վճարելու էին բաժի կեսը:

Այսպիսով, «բաժը» կարող էր լինել մաքսային հարկ, վճռաահարկ և առևտրահարկ, այլ խոսքով, այն վերցվում էր ինչպես ապրանքի տեղափոխության, այնպես էլ առևտրից ու արհեստագործական արտադրանքից: Սակայն Բագրատունյաց շրջանում «բաժի» վերջին այս երկու ձևերի մասին փաստեր չունենք, ուստի և դա չենք պնդում:

«Խալա» հարկային տերմինը մեկ անգամ օգտագործվել է Անիի 1036 թ. արձանագրության մեջ: Պետրոս Ա կաթողիկոսը Գրիգոր Պահլավունու որդի Ալպարիպին է նվիրում այգի «սպմով եւ ծառով պտղաբերով եւ անպտղով եւ խոտագեանով եւ զ աւր ջուր ազատ ի խալէ»[390]: Հասկանալի է, որ խալան պտղատու ծառերից, գուցե նաև խաղողից, այլ խոսքով՝ այգիներից վերցվող հարկ էր, որն ըստ երևույթին այս շրջանում լայն տարածում չէր գտել: Հետագայում՝ 13-րդ դ. այն այնքան է տարածվում, որ արդեն գանձվում էր ինչպես պտղատու այգիներից ու խաղողից, այնպես էլ դինուց: Այսպես օրինակ, Թալինի 1267 թ. արձանագրության մեջ կարդում ենք. «այս իմ դիր է պարոն Աղպուղայիս, թոռն մեծին Շահանշահի... թողի զիմ հայրենիք զնդիս զԹալնայ զինոյ խալէն»[391]:

Մրենի 1238 թ. արձանագրության մեջ Սահմադինը գրում է. «Ես պարոն Սէնոպ Սահմադինս եւ ամուսին իմ Մրենոյ հացին

---

[389] Նույն տեղում, էջ 27:
[390] Նույն տեղում, էջ 20:
[391] Նույն տեղում, էջ 110–111:

չարիատն թողել էաք և հայմալ թողաք զէգեց գինոյ եւ խաղողի իալէն»[392]:

Մուծ, մրուր, կապիճ հարկային տերմիններն օգտագործվել են ընդամենը մեկ անգամ՝ Մրենի 1041 թ. արձանագրության մեջ. «այս իմ հրամանքն են, Գագկա Շահանշահի, որդո Աշուտո, ազատեալ եմ զՄրենոյ հարկն, զծուծ եւ մրուր, զկապիճքն»[393]: *«Մրուրը» Հ. Աճառյանը համարում է արաբերենից փոխառված բառ, որը նշանակում է անցնել, անցուդարձ անել*[394]: *Այստեղից կարելի է եզրակացնել, որ այն եղել է մի ֆեոդալի հողերից մյուսն անցնելու անցահարկ: Դժվար է «ծուծ» և «կապիճ» հարկերին, թեկուզ ենթադրաբար, որևէ բացատրություն տալ: Նույն կերպ անբացատրելի է նաև մեկ անգամ Տեկորի 1049 թ. արձանագրության մեջ օգտագործված «պաշդիտտ» հարկը:*

Աշխարհիկ հարկային այս սիստեմին զուգահեռ գոյություն ուներ նաև եկեղեցական հարկատվություն: Եկեղեցուն կամ վանքին տրվող հարկը սովորաբար կոչվում էր «պտուղ»: Վանքը իրեն պատկանող գյուղերի բնակիչների նկատմամբ հանդես էր գալիս որպես տիպիկ ֆեոդալ, նրանց հարկադրում այնպես, ինչպես իշխաններն իրենց տիրույթներում գտնվող գյուղերին: Դրանից զատ, եկեղեցին հատուկ եկեղեցական հարկ էր ստանում նաև աշխարհիկ ու հոգևոր ֆեոդալների իշխանությանը ենթակա բնակչությունից: Ահա այդ զուտ եկեղեցական հարկն է, որ կոչվում էր պտուղ:

«Պտուղ» հարկի գանձման չափն ու տեսակը որոշելու համար շատ կարևոր է Ստեփանոս Օրբելյանի բերած՝ Սյունիքի գավառների եկեղեցական հարկացուցակը[395]: *Նախ հարկացուցակի կազմման ժամանակ վերաբերյալ: Մեզ թվում է, որ Հ. Ութմազյանը ճիշտ է, գտնելով, որ այն կազմվել է ոչ թե 13-րդ, ինչպես ընդունված է կարծել, այլ՝ 10-րդ դ.: Նա ցույց է տալիս, որ Սյունիքի գավառանունները 12–13-րդ դդ. փոփոխության էին ենթարկվել,*

---

[392] Նույն տեղում, էջ 130:
[393] Նույն տեղում, էջ 22:
[394] Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. Գ., էջ 1199–1200:
[395] Տես Ստեփանոս Օրբելյան, էջ 509-523:

որոնք Օրբելյանի բերած հարկացուցակում չեն արտացոլվել: Բայց այդ, վերջինս պետք է որ 1006 թ. շուտ կազմված լինի, որովհետև այդ թվին Նախճավանը մտավ Սյունիքի կազմի մեջ: Եթե հարկացուցակը 1006 թ. ուշ կազմվեր, ապա դրանում Նախճավանը ևս կհիշվեր: Հարկացուցակը, ինչպես վկայում է Ստեփանոս Օրբելյանը, կազմվել է «ըստ հին սահմանաց», ինչը ևս ցույց է տալիս, որ այն 13-րդ դ. շուտ է ստեղծվել[396]:

Ավելի դժվար է որոշել այն հարցը, թե ինչով էր գանձվում «պտուղ» կոչվող հարկը: Ինչպես հայտնի է, Ստեփանոս Օրբելյանի հարկացուցակում, առանց որևէ բացատրության ՀԴ գլխում բերված են Սյունիքի 14 գավառներն[397], իրենց գյուղերով, որոնցից յուրաքանչյուր գյուղի դիմաց գրված են հինգից մինչև հիսունի սահմանում աճող կամ նվազող աբստրակտ թվանշաններ: Մի բան պարզ է, որ Ստեփանոս Օրբելյանի հարկային ցուցակում արտացոլվել են ոչ թե վանքի բոլոր եկամուտները, այլ միայն Սյունիքի բոլոր գյուղերից նրա օգտին գանձվող եկեղեցական «պտուղ» հարկը:

Հարկացուցակի այդ թվանշանների բովանդակության մասին մեր պատմագիտության մեջ իրարամերժ կարծիքներ են հայտնվել: Ղ. Ալիշանը հարկացուցակում բերված թվերին բեռ ցորենի

---

[396] Տե՛ս Հ. Ութմազյան, նշվ. աշխ., էջ 279–286:

[397] Հեղինակը այս գլխի վերնագրում տասներկու գավառ է նշում է, սակայն բնագրում մեջ է բերված ոչ թե տասներկու այլ տասնչորս գավառ: Բ. Հարությունյանը այս հանգամանքը ճիշտ բացատրում է նրանով, որ այդ փոփոխությունները, հավանաբար, հետագա արտագրողներն են կատարել: Իր գրքի Գ գլխում Օրբելյանը գրում է, որ Սյունիքն ունի տասներկու գավառ և տալիս է նրանց անունները: Գ և ՀԴ գլուխներում բերված գավառների անունները համեմատությունից երևում է, որ վերջին ցուցակում (հարկացուցակում) ավելացված են երկու նոր գավառներ՝ «Այլախս» և «Քաշունիք»: Ակնհայտ է, որ այս գավառները հետագայում են կազմվել: Այլախն իր քսանվեց բնակավայրով, ըստ երևույթին, առաջացել է Մղուկ խոշոր գավառից անջատվելու, իսկ Քաշունիքը՝ Բաղք գավառը երկու մասի բաժանվելու և 1-ին Բաղք ու 2-րդ Բաղք կամ Քաշունիք առաջանալու հետևանքով: Այս նոր գավառների առաջացման պատճառով Սյունիքն ընդհանուր առմամբ տերիտորիալ փոփոխությունների չի ենթարկվել (տե՛ս Б. М. Арутюнян, Крестьянские волнения в Сюнии в X веке, Ученые записки Ереванского Государственного русского педагогического института им. А. А. Жданова т. 2, Ереван, 1950, էջ 163, ծան. 1:

իմաստ է վերագրում[398], *իսկ Կ. Շահնազարյանը ցորեն ու դրամ է համարում*[399]:

Նորագույն ուսումնասիրողներից այս հարցին անդրադարձել են Ս. Հակոբյանը և Հ. Ութմազյանը: Ս. Հակոբյանը հենվելով Մատենադարանի 18-րդ դ. պատկանող № 3409 ձեռագրի մի վկայության վրա, ըստ որի Սյունիքի տասներկու գավառների եկեղեցական պտուղը հավասար է 6700 ոսկու[400], *և այս թիվը համեմատելով Օրբելյանի հարկացուցակի թվերի ընդհանուր գումարի հետ ու տեսնելով, որ տարբերություն մեծ չի, եզրակացնում է հարկացուցակի թվերի դրամական նշանակություն ունենալու մասին*[401]:

Հ. Ութմազյանն իր հերթին հիմք դարձնելով այն, որ 10-րդ դ. Սյունիքում զարգացել էին դրամական հարաբերությունները և «նեպակը» դրամով է դանձվել, գտնում է, որ հարկացուցակի գյուղերի դիմաց նշանակված «պտուղ» հարկի թվերը ևս դրամական գումար են արտահայտել[402]:

Այս կարծիքների հետ դժվար է համաձայնվել, քանի որ մենք ունենք «պտուղը» բնամթերքով՝ ցորենով, կտավատով, անասուններով, յուղով գանձելու մասին: Ամբերդի 11-րդ դ. մի արձանագրության մեջ կարդում ենք. «Ամին ՆՀԵ (1024 – Վ. Բ.) ես իշխան Վահրամ շ(ի)նեցի զԿաթողիկեսս ամոս հա(յ)րապետական և սահման եղի պտուղն ի (այ)գի տունն Բ. կապիճ ցորեն յԱրագածոտն եւ էգին Բ փասգի ի Քաղաքաղաշտի Բաբակն... յԱնբերդի պտուղ ի տունն Գ կապիճ ցորեն ա կատաւահատ»[403]:

Մխիթար Գոշը եկեղեցուն ու հոգևորականներին տրվող հարկերի մասին գրում է. «Եւ զպտուղս ցորենոյ եւ զգինւոյ եւ զիւղոյ

---

[398] Տես Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 23:

[399] Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն Նահանգի Սիսական, հ. Բ, Փարիզ, 1859, էջ 370, ծան. 190:

[400] Ս. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 477–480:

[401] Նույն տեղում, էջ 477–480:

[402] Հ. Ութմազյան, նշվ. աշխ., էջ 288:

[403] Օգտվում ենք Կ. Դաֆթաղյանի Արձանագրությունների ժողովածու ձեռագիր աշխատությունից:

քոյ, եւ դպտուղս կարոց խաշանց ցոց տացես նմա»[404]: *Եթե «պտուղը» դրամով դանձվելիս լիներ, ապա Դատաստանագրքի հեղինակը, որը մեծ տեղ է հատկացնում առևտրադրամական հարաբերություններին, կնշեր այդ: 16-րդ դ. պատկանող ձեռագրի մի վկայության համաձայն «պտուղը» վերցվում էր ցորենով և գինով»*[405]:

Եթե անգամ 18-րդ դ. վերոհիշյալ ձեռագրի վկայության հիման վրա հարկացուցակի թվերը դրամական թվեր ընդունենք, ապա պետք է ենթադրել, որ վանքը գյուղացիներից հարկը ոչ թե դրամով էր վերցնում, այլ բնամթերքով դանձվող հարկն արտահայտվել է դրամական չափով: Դրամը այստեղ միայն հարկային չափի դեր է կատարել:

Մենք անառարկելիորեն չենք պնդում, թե Ստեփանոս Օրբելյանի հարկացուցակում գյուղերի դիմաց դրված թվերը բնամթերքային հարկի թվեր են եղել (այդ հարցը վերջնականապես պարզված չի կարելի համարել), այլ ելնելով «պտուղը» մթերքով դանձելու հանգամանքից, կարծում ենք, որ Սյունիքն այս հարցում բացառություն չի կազմել, ուստի և հարկացուցակի թվերն արտահայտել են Տաթևի վանքի համար մթերքներով հավաքվող եկեղեցական հարկը:

Վանքերը «պտուղից» զատ շատ ավելի մեծ չափերի բնամթերքային հարկեր՝ ցորեն, գարի, ոչխար, յուղ, մեղր, ընկույզ և այլ տեսակի մթերքներ էին ստանում իրենց սեփական հողերում բնակվող բնակչությունից:

Այս բոլոր հարկերի վճարումից բացի, անմիջական արտադրողները ֆեոդալների կողմից շահագործման էին ենթարկվում նաև զանազան այլ ձևերով: Շինականները և արհեստավորները պարտադիր ձրի աշխատանք էին կատարում մեծ շինությունների, հատկապես վանքերի կառուցման վրա:

Շինականները պարտավոր էին նշանավոր տոների առթիվ «նվերներ» տալ տերերին: Զանազան առիթներով գյուղացիներից

---

[404] Սյսիթար Գոշ, Դատաստանագիրք, էջ 136:
[405] Սասնամարան, ձեռ. № 8017, էջ 8:

«նվերների» ձևով եկամուտներ դուրս կորզելու եղանակն այնքան տարածված է եղել, որ Մխիթար Գոշն իր Դատաստանագրքի երկրորդ մասի Ա հոդվածում անդրադարձել է այդ հարցին և անարդար համարել չինականի հնարավորություններից վեր «նվերներ» պահանջելը:

Այսպիսով, ինչպես տեսանք, Հայաստանում ֆեոդալական հողային ռենտայի երեք ձևն էլ գոյություն ուներ: Կոռը կամ աշխատավճարը ռենտան մեծ չափերով կիրառվում էր խոշոր կալվածքային տնտեսություններում, մանավանդ հացահատիկային տնտեսություններում: Հացահատիկային կուլտուրաների մշակման հիմնական աշխատանքները (վարել, կալսել, տեղափոխել) կոռային աշխատանքի միջոցով էին կատարվում:

Ավելի լայն տարածվել էր բնամթերային ռենտան: Հարկերի բացարձակ մեծամասնությունը դանձվում էր զանազան տեսակի մթերքներով ու անասուններով:

Հարկերից դրամով վճարվում էր արքունի հարկերի մի մասը: Մի քանի հարկերի վերաբերյալ էլ դա կարելի է ենթադրաբար ընդունել: Սակայն ընդհանուր առմամբ դրամական հարաբերությունները բավական զարգացած էին և ըստ երևույթին օգտագործվում էին նաև կապալառության մեջ: Սյունիքի Սուփան իշխանի արդեն հիշատակած արձանագրության մեջ կարդում ենք. «ետուս որս ձկանց զԲողաշէն սեղանոյն, և 700 դրամ ի Դեղձանաբետոյ զապալէն, 200 դրամ ի Կաթկայ, 350 յԱնմեռէն, որ լինի 1250 դրամ»[406]: Դրամը կիրառվում էր հողերի գնման (քսակագին) և ներքին ու արտաքին առևտրի մեջ:

Որոշ ուսումնասիրողներ դրամաապրանքային հարաբերությունների ու քաղաքային կյանքի այդ արտաքին նշաններից ելնելով եզրակացնում են, որ Բագրատունյաց էպոխայում Հայաստանում տիրապետող էր դրամական ռենտան: Սակայն ֆեոդալական հողային ռենտայի տիրապետող ձևը որոշել կարելի է միայն տվյալ երկրի սոցիալ-տնտեսական պատմության բազմակողմանի ուսումնասիրության հիման վրա: Դրա համար անհրաժեշտ է

---

[406] Ստեփանոս Օրբելյան, էջ 179:

պարզել, թե արդյոք շուկայի հետ գյուղացո՞ւ, թե կալվածատիրոջ տնտեսության միջոցով էր կապ ստեղծվում: Այդ հարցի պարզաբանումը կարևոր է այնքանով, որքանով որ դրամատիրական հարաբերությունների զարգացմանը դրամական ռենտայի ուժեղացումը միշտ չի ուղեկցում: Կարելի է տեսնել այնպիսի դեպքեր, երբ աշխատանքի հասարակական բաժանման աճը և շուկայի առաջացումը հանգեցնում են ռենտայի առաջին երկու ձևերի պահպանմանը կամ նույնիսկ ուժեղացմանը: Նման դեպքերի հիմնականում հանդիպում ենք այն ժամանակ, երբ շուկայի հետ ֆեոդալական գյուղը կապվում է ոչ թե գյուղացու, այլ՝ կալվածատիրոջ տնտեսության միջոցով: Կալվածատերն աշխատում էր հարկերի ուժեղացման միջոցով ավելի շատ մթերքներ ստանալ, ապա այն շուկայում դրամի վերածել, և ոչ թե գյուղացուց ուղղակի դրամական հարկ պահանջել: Նույն կերպ դրամատիրական տնտեսության զարգացումը կարող է խթանել կոռային աշխատանքի ուժեղացումը:

Մենք արդեն տեսանք, որ հարկերը մեկ կամ մի քանի բացառությամբ միայն, մուծվում էին մթերքներով: Սրանից հետևում է, որ գյուղացու տնտեսությունը շուկայի հետ կապված չէր, նա իր մթերքները փողի վերածելու միջոցներ ու հնարավորություն չունենալով, տուրքերը մթերքով էր վճարում: Սակայն միաժամանակ վիմական արձանագրություններից ու Ստեփանոս Օրբելյանի մեջբերած վավերագրերից տեսանք, որ աշխարհիկ ու հոգևոր ֆեոդալները գործ էին ունենում դրամի հետ: Այստեղից էլ հասկանալի է, որ կալվածատիրոջ տնտեսությունն էր կապվում շուկայի հետ ու որոշ չափով ապրանքային բնույթ ստանում և ոչ թե պատրաստի դրամ էր ստանում շինականից:

Ի դեպ, ի տարբերություն ֆեոդալական այլ երկրների, ուր սովորաբար եկեղեցին փակ նատուրալ տնտեսություն էր վարում, ընդհանրապես Հայ իրականության մեջ, մասնավորապես Բագրատունյաց ժամանակաշրջանում, նա դրամական գործառության տեսակետից հետ չէր մնում աշխարհիկ ֆեոդալներից, եթե չասենք ավելին:

Կալվածքային տնտեսությունների ապլանքային բնույթն էլ հարաբերական իմաստով պետք է հասկանալ: Շուկայի հետ կապվել էին գլխավորապես առևտրական ճանապարհների վրա կամ դրանց շատ մոտ գտնվող Հայաստանի կենտրոնական շրջանների աշխարհիկ ու եկեղեցական ֆեոդալական տնտեսությունները, իսկ ծայրամասային, հատկապես լեռնային շրջանների ֆեոդալական տնտեսությունները նատուրալ բնույթ ունեին:

Այսպիսով հաստատապես կարելի է ասել, որ Բագրատունյաց շրջանում ռենտայի տիրապետող ձևը բնամթերքայինն էր՝ կուռային ու դրամական ռենտայի գոյության և վերջինիս աճման հեռանկարներ ունենալու պայմաններում: Հարկային այս ծանր լուծը մի կողմից և համայնական հողերի հաշվին խոշոր ֆեոդալական հողատիրության զարգացումը՝ մյուս կողմից դասակարգային պայքարի սրման պարարտ հող էին ստեղծում:

3. Սոցիալական շարժումները Հայաստանում 10–11-րդ դդ.

10-րդ դ. Հայաստանի տարբեր մասերում՝ Այրարատում, Սյունիքում և արևմտյան գավառներում գյուղացիական խոշոր ապստամբություններ ու շարժումներ են տեղի ունենում:

Երկրի տարբեր շրջաններում բռնկված այդ շարժումների պատճառներն ընդհանուր էին և ամբողջ Բագրատունյաց Հայաստանում գործող միևնույն տնտեսական պայմանների արդյունք էին: Ավելի ճիշտ, գյուղացիական շարժումներն այս ժամանակաշրջանում Հայաստանի տնտեսական հարաբերությունների մեջ կատարվող տեղաշարժերի սոցիալական արտահայտությունը հանդիսացան:

Երկրի տնտեսության մեջ տեղի ունեցող այդ փոփոխությունները երկու հիմնական ուղղությամբ էին կատարվում:

ա) Հողատիրության ձևերը, մասնավորապես խոշոր ֆեոդալական կալվածքը զարգանում էին, որի շնորհիվ ֆեոդալների տնտեսական ու քաղաքական կարողությունն աճում էր: Ֆեոդա-

լական կալվածքի աճի հիմնական աղբյուրը գյուղական համայնական հողերն էին: Զանազան մեթոդներով ու ճանապարհներով իշխանները և հոգևոր ֆեոդալները տիրանում էին համայնական հողերին, հաճախ էլ նույնիսկ կցում անհատական սեփականություն հանդիսացող իրենց հողերին: Ազատ կամ կիսանկախ համայնքները տնտեսական իրենց գերիշխանության ենթարկելուն հաջորդում էր նրանց վրա իրավաքաղաքական իշխանություն ձեռք բերելը: Հետզհետե գյուղական համայնքներն ընկնում էին ֆեոդալների տնտեսական ու քաղաքական իշխանության տակ: Միաժամանակ տեղի էր ունենում նաև այլ պրոցես՝ ուժեղանում է համայնքի ներքին շերտավորումը: Այլ խոսքով՝ խոշոր հողատիրության զարգացմանը զուգընթաց գյուղական բնակչության վիճակը փոփոխվում էր: Աստիճանաբար կրճատվում էր ազատ համայնականների թիվը և ֆեոդալական անմիջական ճնշման տակ ընկնելու հետևանքով նրանց տնտեսական ու քաղաքական դրությունը վատթարանում էր:

բ) Ինչպես հայտնի է, ագրարային հարաբերությունների մեջ կատարվող այդ տեղաշարժերից բացի, Բագրատունյաց Հայաստանին բնորոշ էր նաև առևտրի, դրամաապրանքային հարաբերությունների և քաղաքային կյանքի զարգացումը: Այս էպոխայում ֆեոդալական կալվածքներն ընդգրկվում են դրամաապրանքային հարաբերությունների մեջ և որոշ չափով ապրանքային բնույթ ստանում:

Առևտրի ու քաղաքային կյանքի ընդհանուր զարգացումն ազդում էր ֆեոդալի տնտեսության և նրա կենցաղային պայմանների վրա: Ֆեոդալ իշխանների պահանջկերն աճում էին: Նրանք իրենց նստավայրերում նորանոր պալատներ էին կառուցում, զարդարում շքեղ իրերով, վարում բավական ցոփ կյանք, օգտագործում պերճանքի բազմատեսակ առարկաներ ու զարդեր, որոնց զգալի մասը բերվում էր այլ երկրներից: Այս բոլորի հետևանքով իշխանները հետզհետե ավելի ու ավելի շատ էին դրամի պահանջ զգում, որը նրանք բավարարում էին ոչ թե մթերային հարկերը դրամականի փոխարինելու միջոցով, այլ կապվում էին շուկայի կամ առևտրականների հետ և իրենց մթերքների մի մասը մշտա-

պես դրամի վերածում: Պատահական չէ, որ մեզ են հասել փաստեր այլ երկրներում Հայաստանի գյուղատնտեսության հիմնական արտադրանքի՝ ցորենի վաճառքի մասին[407]:

Ֆեոդալները բավարար ցանկությամբ մթերքներ ունենալու համար ավելացնում էին հարկերը, որոնք հաճախ այնքան էին ծանրանում, որ գյուղացին չքավորության ու աղքատության մեջ էր ընկնում: Բացի այդ, վերջիվերջո գյուղացիների ուսերի վրա էր ծանրանում մանր թագավորությունների և իշխանությունների ամբողջ պետական ապարատի ծախսերը, և այս շրջանում լայն ծավալ ստացած բերդերի ու ղղյակների շինարարությունը:

Այսպիսով, ֆեոդալական հողատիրության աճի ու համայնքներն իրենց տիրապետությանը ենթարկելու հետևանքով ուժեղանում էր գյուղացիության տնտեսական ճնշումը (կոռային աշխատանքն ընդլայնելու և ուժեղացնելու, եկեղեցիների, կամուրջների, ֆեոդալական բերդերի և այլ խոշոր շինությունների վրա նրանց պարտադիր, ձրի աշխատացնելու միջոցով), որն ավելի քան ծանր էր դառնում հարկերի ավելացման հետևանքով: Եթե սրան ավելացնենք նաև համայնքի ներքին շերտավորման ուժեղացումը, ապա պարզ կդառնա, թե ինչու գյուղացիության մի մասն ուղղակի քայքայման էր ենթարկվում և վարձակալությամբ զբաղվում կամ համալրում քաղաքի աշխատավոր բնակչության շարքերը:

Գյուղացիությունը ֆեոդալական շահագործման ուժեղացմանը պատասխանում էր ակտիվ սոցիալական պայքարով՝ ապստամբություններով:

Սոցիալական շարժումներ ծնող այս հիմնական պատճառներից բացի կար նաև արտաքին դրդապատճառ, որը արագացրեց ու խթանեց գյուղացիական ընդվզումները: Դա Ատրպատականի էմիր Յուսուֆի 909 թ. սկսած ավերիչ ու թալանչիական արշավանքներն էին: Յոթ տարի տևած այդ սարսափելի արշավանքների ընթացքում ամբողջ երկիրը քայքայվեց, ավերվեցին գյուղերն ու քաղաքները, շատ տեղերում դադարեցին գյուղատնտեսական աշխատանքները: Դրությունն ավելի էր վատանում հայ իշխանների

---

[407] J. Laurent, նշվ. աշխ., էջ 38:

ներքին դժտություններին ու կռիվների հետևանքով: Նրանք փոխանակ միաբանելու և կազմակերպված դիմադրություն ցույց տալու Յուսուֆի հրոսակներին, լքեցին Սմբատ Թագավորին, որը մենակ մնալով չկարողացավ դիմադրել թշնամու գերազանց ուժերին, գերվեց ու սպանվեց:

Գյուղացիության առանց այն էլ ծանր վիճակը Յուսուֆի արշավանքների պատճառով առանձնապես անտանելի դարձավ. նա չհանդուրժեց այդ ամենը և ապստամբեց: Գյուղացիական ապստամբություն բռնկվեց Այրարատում, իսկ երկրի հատկապես արևմտյան շրջաններում տարածվեց Թոնդրակյան սոցիալական շարժումը:

ա) Այրարատի գյուղացիական ապստամբությունը: Արարատում ապստամբությունը սկսվեց Յուսուֆի արշավանքների սկզբնական շրջանում՝ 909–910 թթ. և տևեց մինչև 918 թ.: Յավոք գյուղացիական այս պայքարի մասին ժամանակի կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցու վկայություններից բացի այլ փաստեր չունենք: Վերջինս էլ լինելով տիրող դասակարգի գաղափարախոսը և իր ժամանակի ակտիվ եկեղեցական-քաղաքական գործիչը, ոչ թե պատմում է ապստամբության ուղղության, ընթացքի, նրա ղեկավարների ձգտումների ու նպատակների մասին, այլ բավարարվում է ապստամբներին հայհոյելով և մեղադրելով այն բանի մեջ, որ նրանք օտարի արշավանքի շրջանում դուրս են եկել իրենց տերերի դեմ: Պատմիչի այդ կշտամբալից խոսքերից անգամ երևում է, որ ապստամբությունը բավական սուր բնույթ է ունեցել:

Այսպես, նա կսկիծով հայտնում է, որ հասարակ մարդիկ (նրանց հաճախ սրիկա, ավազակ է անվանում) աշխատում էին իրենց տերերին տրեխներ հագցնել և գետնի վրա ման ածել, իսկ իրենք բարձրանալ ձիերի վրա, որ նրանք ձգտում էին իրենց թագավորներին և իշխաններին տապալել, խլել նրանց բնակավայրերը և ըստ իրենց ցանկության նորերին ընտրել: Դրասխանակերտցին գրում է. «վասնզի նուազունքն քան զմեծամեծսն ձեռներէց լինել ջանային... զի զտեսաս տրեխաւորեալ՝ ի գետնի գնացուսցեն և ինքեանք ելցեն յերիվարս ահիպարանոցս և առաքեսս հարցս՝

խրոխտացեալք և սոնքացեալք մեծաւ ապստամբութեամբ: Իսկ թագաւորք մեր և պետք և իշխանք, զորս ի ընէ նախարարութիւնք էին՝ ջանային վարատել և խլել յիւրաքանչիւրոցն բնակութեանց, և ըստ ախորժից իմն ձեռական և նոր ստեղծանել պայազատս և սպասալարս»[408]: Ապա պատմիչը շարունակում է, որ եղբայրը եղբոր, ազգականն ազգականի դեմ դուրս գալով թշնամուց ավելի միմյանց արյուն էին հեղում և քաղաքները, գյուղերն ու ագարակները քանդում, ավերակ էին դարձնում. «Այլ և եղբայր ընդ եղբօր և ազգայինք ընդ ազգայինս ընդվզեալ... ընդ միմեանս հարեալք՝ հակառակութիւն և ի կռիվ պայքարէին. և միշտ սուր յաղդեր ունելով՝ բազում ևս քան զթշնամիսն հեղուին ի միմեանց զարիւն ճապաղիս և առհասարակ զքաղաքս զգեօղս և զաւանս և զագարակս, այլ և զտունս իւրեանց քանդէին ձեռօք իւրեանց»[409]:

Ճիշտ է, հայ ֆեոդալներին բռնի ուժի միջոցով հաջողվեց ճնշել այս ապստամբությունը, սակայն այն եզակի երևույթ չէր, գյուղացիական ուժեղ ապստամբություն էր սկսվել նաև Սյունիքում:

բ) Սյունիքի գյուղացիական ապստամբությունը: Այս ապստամբությունը, որն ընդհատումներով տևեց մոտ մեկ դար, մեկ ավելի ծանոթ է շնորհիվ Ստեփանոս Օրբելյանի հաղորդած տվյալների և նրա Պատմության մեջ բերած հրովարտակների ու նզովագրերի: Եթե Այրարատում դասակարգային պայքարի ուղղակի պատճառ դարձավ հարկերի ուղղակի ծանրացման[410] ու արտաքին արշավանքների հետևանքով գյուղացիության դրության վատթարացումը, ապա Սյունիքում պայքարը բորբոքվեց հողի համար՝ խոշոր ֆեոդալական հողատեր Տաթևի վանքի և հարևան գյուղերի միջև:

Ինչպես տեսանք դեռևս 9-րդ դ. 30-ական թթ. սկսած՝ Տաթևի վանքը զանազան մեթոդներով ու միջոցներով մեծացնում էր իր կալվածքները: Այն մեծ նվերներ է ստանում հատկապես 906 թ. մայր եկեղեցու կառուցումն ավարտելու կապակցությամբ: Բաց-

---

[408] Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 258–259:
[409] Նույն տեղում, էջ 259:
[410] Տե՛ս Ստեփանոս Օրբելյան, էջ 230:

մաթիվ գյուղերի ու այգիների թվում վանքին է անցնում նաև Սյունիքի գահերեց իշխան Աշոտի նվիրած Ցուր (Ցուրաբերդ) գյուղը: Այդ ժամանակներից սկսած, հակասություններ են սկսվում վանքի և Ցուր գյուղի միջև: Ստեփանոս Օրբելյանն այդ նվիրումների առթիվ ավելացնում է. «Բայց թէպէտ զայս ամենայն տուրս արարին, զբնակիչս բերդին Ցուրա ոչ կարացին հանել ի տեղւոյն. զի հին հայրենի տէրք էին և բարբարոսք և պիղծ մարդիկ»[411]:

Այս վկայության մեջ չափազանց ուշագրավ է այն փաստը, որ նրանց չի հաջողվում հանել Ցուրի բնակիչներին, որովհետև «հին հայրենի տէրք էին»: Անշուշտ, հեղինակը «հին հայրենի տէրք» ասելով նկատի է ունեցել, որ Ցուրի բնակիչները հնուց ի վեր այդ գյուղի ու նրա հողամասերի բուն տերերն են եղել: Ինչպես Ցուրը, այնպես էլ ապստամբ մյուս երկու գյուղերը, ազատ համայնական գյուղեր են եղել և իրենց շրջակա հողերի սեփականատերն են հանդիսացել, դրա համար էլ «հայրենատէր» են կոչվել: Հենց սեփականատիրական իրավունք ունենալու հետևանքով է, որ գյուղացիները ոչ մի կերպ չէին համաձայնվում թողնել այդ վայրը: Չկարողանալով այլ միջոցներով գյուղացիներին վտարել, վանքի Հովհաննես եպիսկոպոսը բռնի ուժի է դիմում, որն էլ առաջացնում է գյուղացիության կատաղի դիմադրությունը:

Ստեփանոս Օրբելյանն իր երկի ԽԸ գլխում նկարագրում է Ցուրի ապստամբությունը և մեջ է բերում Հովհաննես եպիսկոպոսի 915 թ. նզովագիրը, որտեղ փաստորեն տրված է ապստամբության ճնշման և Ցուրի ավերման պատմությունը: Նա պատմում է, որ ցուրաբերդցիները մի գիշեր հանկարծակի հարձակվում են վանքի վրա, փնտրում եպիսկոպոսին, որպեսզի սպանեն, սակայն նրան չգտնելով եկեղեցու հոգևորականներից մի քանիսին սպանում են, իսկ մյուսներին փախուստի մատնում և կողոպտում վանքն ու հեռանում Ցուրաբերդ: Իրենց հետ արծաթե սափորով տանում են մեռոնն ու թափում քարի վրա: Առավոտյան գալիս է եպիսկոպոսն ու տեսնելով կատարվածը՝ նզովում է ցուրաբերդցի-

---

[411] Տե՛ս նույն տեղում:

ներին և չհամարձակվելով այլևս այդտեղ ապրել՝ վերցնում է սուրբ խաչն ու հեռանում:

Փաստորեն ապստամբները ժամանակավոր հաղթանակ են տանում վանքի նկատմամբ, որովհետև ինչպես եպիսկոպոսը, այնպես էլ մյուս հոգևորականները չհամարձակվելով այլևս վանքում ապրել, թողնում են այն ու հեռանում, այսինքն՝ վտարվում են ապստամբների կողմից:

Երբ հոգևորականներին հալածելու և վանքը կողոպտելու լուրը հասնում է Սյունյաց գահերեց իշխան Սմբատին, նա 915 թ. իր ազատների հետ եպիսկոպոսին համոզում է վերադառնալ, իսկ ինքը մեծամեծ պատիժներով հալածում ու ցրում է Ցուրի բնակչությանը և այն իր սահմանով սեփական ժառանգության իրավունքով հանձնում վանքին: Ապա Հովհաննես եպիսկոպոսին հանձնարարում է նզովագիր գրել և դնել եկեղեցում, որպեսզի ոչ ոք այլևս չհամարձակվի Ցուրաբերդը հանել վանքի տիրապետությունից կամ վերականգնել այն:

Տաթևի հոգևորականության այս հաղթանակը վերջը չէր: Շուտով՝ 930-ական թթ. ապստամբում են Ավելադաշտ (Բերդ) և Տամալեկ գյուղերը: Նրանք ևս «բազում և մեծամեծ վիշտս և նեղութիւնս հասուցեալ էին վանիցն»[412]*: Ստեփանոս Օրբելյանը շատ սակավ տեղեկություններ է հաղորդում այս երկու գյուղերի ապստամբության մասին*[413]*, սակայն նրա տված «ավազակ», «ելուզակ» և այլ ածականներից երևում է, որ հոգևորականության դեմ գյուղացիների պայքարն այս դեպքում ևս ունեցել է արմատական բնույթ: Ապստամբությունը կրկին ճնշվում է Սյունիքի գահերեց իշխանի բռնի ուժի միջոցով: Սակայն Տաթևի վանքի դեմ Սյունիքի գյուղացիության պայքարը դրանով չի ավարտվում:*

10-րդ դ. վերջերին և 11-րդ դ. սկզբին վանքի՝ հատկապես նրա եպիսկոպոս Հակոբի ճնշումների դեմ Ցուրը 1000–1002 թթ. կրկին ոտքի է կանգնում[414]*: Ցուրաբերդցիները այս երկրորդ*

---

[412] Նույն տեղում, էջ 270–271:

[413] Նույն տեղում, էջ 257–270–271:

[414] 915 թ. Սմբատ իշխանի կողմից Ցուրի ապստամբությունը ճնշելու մասին խոսելիս Ստեփանոս Օրբելյանը հայտնում է. «Բայց յետ բազում ժամանակաց մինչ խան-

ապստամբության ժամանակ նորից հարձակվում և ավերում են վանքը: «Յարուցին մեծամեծ հալածումն եկեղեցւոյն յաւուրս Վասակայ Թագաւորեցելոյն և Սեւադայի և Շահանդխտոյ՝ մօր նոցա. և կրկին աւերեցին զվանսն»[415]*: Նրանք դարան են մտնում Ցուրի ձորում և սպանում Բաղքից վերադարձող Հակոբ եպիսկոպոսին: Ճիշտ է վարվել Ի. Ջավախիշվիլին, երբ այս փաստին արժանավայել նշանակություն է տվել, ասելով, որ միջնադարի պայմաններում վանականին ոչ միայն սպանելը, այլև վիրավորելը ծանր և անքավելի մեղք էր համարվում, իսկ եթե հարձակվողները դրա առաջ կանգ չառան, ապա դա, անշուշտ, գյուղացիական ապստամբության արմատական բնույթի ու նրանց զայրույթի ծայրահեղության ապացույցն է*[416]*:*

Այս անգամ էլ վանքին օգնության է հասնում աշխարհիկ իշխանությունը: Հակոբ եպիսկոպոսի հաջորդ Գրիգոր եպիսկոպոսի

զարեալ էր հայրապետանոցն» (էջ 250) Ցուրի բնակիչները կրկին հարձակվեցին և սպանեցին Հակոբ եպիսկոպոսին (էջ 250): Ուսումնասիրողները ելնելով նրանից, որ Հակոբի եպիսկոպոսության շրջանն ընկնում է 10-րդ դ. վերջերը, ապստամբությունն էլ մոտավորապես այդ թվերին են վերագրում: Սեր կարծիքով դա ճիշտ չէ:

Ստեփանոս Օրբելյանը դժբախտաբար չի նշում ոչ Հակոբ եպիսկոպոսի, ոչ էլ նրա հաջորդ Գրիգորի եպիսկոպոսության տարիները կամ վերջինիս ընտրության թվականը: Շահանդուխտ Թագուհու կողմից 998 թ. Տեղ գյուղը Տաթևին նվիրելու առթիվ գրած արձանագրությունում Հակոբ եպիսկոպոսը հիշատակվում է: Նշանակում է, որ ապստամբությունն ու Հակոբի սպանությունը դրանից հետո պետք է կատարված լինեն: Այդ նվիրատվության դեպքից հետո պատմիչն ավելացնում է. «Եւ ապրդ այս Յակոբ կեցեալ ամս սակաւ վախճանի» (էջ 294): Եթե այդ սակավ տարիներն ընդունենք 2–3 տարի, ապա կստացվի, որ ապստամբությունը տեղի է ունեցել 1000–1002 թթ.: 998 թ. հետո Հակոբի ապրած սակավ տարիները 2–3 տարուց պակաս չենք կարող ընդունել, որովհետև Օրբելյանը տարիներ է ասում և ոչ տարի, ավելի տարիներ էլ չի կարելի ընդունել, քանի որ Հակոբին հաջորդող Գրիգորի մասին պատմիչը հայտնում է, որ նա եպիսկոպոս ընտրվելուց հետո «կեցեալ... սակաւ ժամանակս՝ փոխի յաստեացս» (էջ 295): Գրիգորի եպիսկոպոսության սակավ ժամանակը եթե 3–5 տարի ընդունենք, ապա կստացվի, որ նա Հակոբին փոխարինել է կրկին 1000–1002 թթ., որովհետև 1006 թ., Գրիգորը մահացած էր և Սարգիս կաթողիկոսի միջնորդությամբ եպիսկոպոս էր ընտրվել Հովհաննեսը (Ազգապատում, էջ 1164): Այսպիսով՝ Ցուրի երկրորդ ապստամբությունը պետք է գնել 1000–1002 թթ. միջակայքում:

[415] Ստեփանոս Օրբելյան, էջ 250:

[416] Տե՛ս Ի. Ջավախիշվիլի, Նյութեր Հայաստանի սոցիալական շարժումների պատմության համար, Լ. Մելիքսեթ-Բեկի թարգմանությամբ, առաջաբանով ու ծանոթագրություններով, Երևան, 1937, էջ 17:

խնդրանքով Վասակ թագավորը ճնշում է Ցուրի այս երկրորդ ապստամբությունը[417]:

Սյունիքում, ինչպես իրավացիորեն շեշտում է Բ. Հարությունյանը, պայքարը գյուղական համայնական հողերի շուրջն էր: Ցուր, Տամալեկ և Ավելադաշտ գյուղերի բնակիչները ոչ մի կերպ չէին համաձայնվում հօգուտ վանքի հրաժարվել հնուց ի վեր իրենց սեփականությունը հանդիսացող հողերից: Այդ հողերի պաշտպանության համար, ինչպես տեսանք, ոտքի են կանգնում ոչ թե գյուղական առանձին տնտեսություններ կամ խմբեր, այլ ամբողջ գյուղական համայնքը:

Հարևան գյուղերի համայնական հողերն իր տնտեսությանը միացնելու վանքի ձգտումն այնքան մեծ էր, ու. տենչալից, որ Ցուրը երկու անգամ ավերելով և նրա հողերին տեր դառնալով, այն ոչ միայն հոգ չէր տանում շահագործվող գյուղական բնակչության նկատմամբ, այլև հալածում ու քշում է տարբեր կողմեր[418]:

Այսպիսով, ի վերջո ֆեոդալական խոշոր հողատեր Տաթևի վանքին, աշխարհիկ ֆեոդալների սերտ համագործակցության ու օգնության շնորհիվ, հաջողվեց դաժան դատաստան տեսնել գրեթե մեկ ամբողջ դար իրենց հողային իրավունքների համար պայքարող գյուղացիների հետ: Նրանք գյուղացիներին վտարեցին իրենց սեփական հողերից և դրանք կցեցին վանքի սեփական տնտեսությանը:

Սակայն դրանով տիրող դասերին չի հաջողվում վերջ տալ այս էպոխայի սոցիալական շարժումներին:

գ) Թոնդրակյան գյուղացիական շարժումը: 9-րդ դ. վերջերին և 10-րդ դ. սկզբին կրոնական քողի տակ հանդես եկավ Թոնդրակյան շարժումը և տևեց մինչև 11-րդ դ. կեսերը:

Թոնդրակյան շարժման հիմնադիր առաջնորդն ու գաղափարախոսը եղել է Սմբատ Զարեհավանցին: Ասողիկը նրա մասին

---

[417] Ստեփանոս Օրբելյան, էջ 251:

[418] Տե՛ս Б. М. Арутюнян, Крестьянские волнения в Сюнии в X веке, Ученые записки Ереванского государственного института им. А.А. Жданова, т. II, էջ 135, 178–179:

գրում է. «Յաւուրս սորա (Հովհաննես Դրասխանակերտցու — Վ. Բ.) երևեցաւ Սմբատ Թոնդրակաց առաջինն ի Զարեհավան գեղջէ ի Մաղկոտն գաւառէ, հակառակ ամենայն քրիստոնէական կարգաց»[419]:

Սկզբնական շրջանում շարժման կենտրոններն էին Մաղկոտն գավառի Զարեհավան գյուղը և Ապահունիք գավառի Թոնդրակ ավանը[420]: Այս ավանի անունով էլ շարժումը կոչվել է Թոնդրակեցիների կամ Թոնդրակյան: Թոնդրակեցիներն իրենց պայքարն ուղղում էին հատկապես եկեղեցու դեմ, որպես ժողովրդին շահագործող ֆեոդալական զորեղ կազմակերպության և տիրող կարգերի ամուր հենարանի:

Եկեղեցին խոշոր կալվածքներ ունենալով և իր հոգևոր իշխանության տակ գտնվող գյուղական բնակչությունից եկեղեցական հարկ ստանալով չէր բավարարվում: Նա ամեն մի քայլափոխի զանազան ծիսակատարությունների և արարողությունների (մկրտություն, պսակ, հուղարկավորության, հաղորդություն, մեղքերի թողության, ձեռնադրություն, աղոթք, մատաղ և այլն) միջոցով հսկայական նյութական միջոցներ էր քամում ժողովրդից: Այս ժամանակ վանքերի, եկեղեցիների և հոգևորականության քանակական աճի պայմաններում զանազան առիթներով կատարվող եկեղեցական ծիսակատարություններն աշխատավորների համար սոցիալական չարիքի էր վերածվել: Այդ իսկ պատճառով Թոնդրակեցիների պայքարի սուր ծայրը ուղղում էին եկեղեցական ծեսերի ու արարողությունների դեմ:

Դժբախտաբար Թոնդրակյանների գաղափարախոսությունը ճիշտ վերարտադրող, անաչառ աղբյուրներ մեզ չեն հասել: Պահպանվել են միայն նրանց գաղափարական հակառակորդների կամ տիրող դասակարգի ներկայացուցիչների գործերը (Արիստակես Լաստիվերտցի, Գրիգոր Մագիստրոս, Գրիգոր Նարեկացի)[421], որոնք նրանց ուսմունքը աղավաղված են ներկայացրել: Այնուամենայնիվ

---

[419] Ասողիկ, էջ 160:

[420] Տե՛ս Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 153–154:

[421] Տե՛ս Արիստակես Լաստիվերտցի, էջ 142–151, 151–162, տե՛ս նաև Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 147–164, Գիրք Թղթոց, Թիֆլիս, 1910, էջ 498–509:

մենայնիվ հնարավոր է հիմնական գծերով պատկերացում կազմել նրանց ուսմունքի մասին:

Թոնդրակեցիները ժխտում էին մկրտությունը, այն համարելով սովորական լվացում, իսկ մկրտության ավազանը՝ սովորական ջրաման: Հաղորդությունն ու պատարագը դատարկ ու սնոտի արարողություն էին համարում: Ծաղրում էին մատաղի սովորությունը: Մատաղացու անասունին դիմելով Թոնդրակյան առաջնորդներից մեկն ասում է. «Ա՛յ տառապեալ չորքոտանի, թո՛ղ թէ նա (մահացածը, որի համար մատաղ էր արվում – Վ. Բ.) զիւր ժամանակն մեղս արար և մեռաւ, դու զի՞նչ մեղար որ ընդ նմա մեռանիս»[422]: Նրանք ժխտում էին նաև ձեռնադրությունը, աղոթքը և եկեղեցական գրեթե բոլոր ծեսերն ու արարողությունները: Հետևաբար նրանք դեմ էին նաև այդ եղանակով եկեղեցու ձեռք բերած հարստությանը: Սմբատ Զարեհավանցու հաջորդներից Կյուրեղն ուղղակի ասում էր. «մենք ոչ եմք նիւթապաշտ, այլ աստուածապաշտք»: Եվ քանի որ աստված ամենուրեք է, մարդիկ կարող են նրան պաշտել առանց եկեղեցու և ծիսակատարությունների:

Այսպիսով, Թոնդրակեցիները հանդում էին եկեղեցին ու եկեղեցական հիերարխիան ժխտելու դաղափարին: Նրանք պտնում էին, որ աստվածապաշտությունը պետք է զերծ լինի նյութական բարիքներից, զեխությունից և ստեղծել էին նյութական զոսվածության ու իրավահավասարության վրա հիմնված բազմաթիվ համայնքներ: Թոնդրակեցիները միաժամանակ գտնում էին, որ ամուսնությունը պետք է հիմնված լինի փոխադարձ սիրո ու համաձայնության վրա և մերժում էին բռնության հիման վրա կառուցված ընտանիքը[423]:

Սմբատ Զարեհավանցուց հետո Թոնդրակյան շարժումն աստիճանաբար ավելի տարածվեց: 10-րդ դ. վերջերին այն ընդգրկեց Հայաստանի մի շարք գավառներ: Այս շրջանում շարժման ղեկա-

---

[422] Արիստակես Լաստիվերտցի, էջ 147:
[423] Տե՛ս Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 160:

վարներից հայանի են Թոդորոսը, Անանեսը, Արքան, Սարգիսը, Կյուրեղը, Հեսուն և ուրիշները[424]:

Նրա հիմնական ուժը կազմում էին ծանր դրության մեջ գտնվող գյուղի և քաղաքի աշխատավորական մասսաները: Շարժմանը մասնակցում էին նաև սակավաթիվ հոգևորականներ ու մանր ազնվականներ, որոնց ձգտումները, սակայն, իրենց նեղ, դասային շահերից և եկեղեցին մասնակի փոփոխությունների ենթարկելուց այն կողմ չէին անցնում:

Եկեղեցին ու խոշոր ֆեոդալները փորձեցին վերջ տալ Թոնդրակյան շարժմանը, սակայն դա նրանց չհաջողվեց, որովհետև Թոնդրակեցիների քարոզի սոցիալական բովանդակությունը մեծ համակրանք էր վայելում և ուժեղ պաշտպանություն գտնում աշխատավորական լայն շրջաններում:

11-րդ դ. առաջին կեսին շարժումն ավելի մեծ բռնկումներ ունեց հատկապես Ապահունիք, Հեր, Զարևանդ, Մանանալի գավառներում, Վասպուրականում և տարածվեց Բյուզանդական կայսրության արևելյան շրջաններում, Ասորիքում ու Աղվանքում:

Թոնդրակյան շարժմանը մասնակցում և նրա մեջ կարևոր դեր էին խաղում նաև կանայք: Մանանդի գավառի Շիրնի բերդաքաղաքում շարժման ղեկավարի դերում հանդես է գալիս Հրանույշը, ապա Ախնի և Կամարս քույրերը[425]:

Շարժումը գնալով ավելի մեծ չափեր էր ընդունում և ավելի ու ավելի վտանգավոր դառնում տիրող դասերի համար: Թոնդրակեցիների դեմ մղվող պայքարին միջամտում է Բյուզանդիան: Միջագետքի մագիստրոս Գրիգոր Պահլավունին 1051–1052 թթ. մեծ բանակով հարձակվում և դաժանորեն ճնշում է շարժումը[426]:

Ինչպես տեսնում ենք, Հայաստանում 10-11-րդ դդ. ծավալված գյուղացիական ապստամբություններն ու շարժումները շատ սուր և արմատական բնույթ ունեին: Այդ են վկայում ֆեոդների

---

[424] Տես նույն տեղում, էջ 154:
[425] Տես Արիստակես Լաստիվերտցի, էջ 151–152:
[426] Տես Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 158:

ունեցվածքի բռնագրավման և բարձրաստիճան հոգևորականների սպանության փաստերը:

Ֆեոդալական սաստկացող շահագործման ծնունդ այս շարժումները, շատ ընդհանուր ու նման գծեր ունեին: Տիրող կարգերի դեմ մղվող պայքարում վերջի վերջո դրանց բոլոր մասնակիցների ձգտումներն ու նպատակներն նույնն էին: Սակայն չափազանց ուշագրավ է, որ այդ բոլոր ապստամբություններն ու շարժումները կատարվում են օտարի արշավանքների կամ նվաճողական քաղաքականության պայմաններում: Սյունիքի և Այրարատի գյուղացիական ապստամբությունները տեղի էին ունենում Ատրպատականի էմիր Յուսուֆի արշավանքների, իսկ Թոնդրակյան շարժումը՝ Բյուզանդիայի նվաճողական քաղաքականության ժամանակաշրջանում: Գյուղացիությունը կռվում էր երկու ուղղությամբ՝ իրեն շահագործողների՝ տիրող դասերի և օտար նվաճողների դեմ: Եթե Սյունիքի ու Այրարատի ապստամբությունները նաև Յուսուֆի ավերիչ արշավանքներից Հայաստանը պաշտպանելու ձգտում ունեին, ապա Թոնդրակյան շարժումն իր մի կողմով ուղղված էր Բյուզանդիայի նվաճողական քաղաքականության դեմ: Այսինքն՝ 10–11-րդ դդ. գյուղացիական ապստամբություններն ունեին նաև ժողովրդաազատագրական պայքարի բնույթ:

Այսպիսով, 9–11-րդ դդ. ուժեղանում է գյուղական համայնքի ներքին շերտավորումը, որի հետևանքով էլ խորանում է անմիջական արտադրող դասակարգի տարբեր խավերի միջև գոյություն ունեցող տնտեսական ու իրավական անհավասարությունը: Գյուղական համայնքի մեջ ընդգրկված մեծ մասամբ արդեն Ֆեոդալի գերիշխանությանը ենթարկված, մասամբ դեռևս կիսանկախ ու ազատ չինականների կողքին հանդես են գալիս չքավորության գիրկն ընկած վարձկաններն ու նրանցից ավելի վատ դրության մեջ գտնվող տնային ստրուկները:

Գյուղացիության դրությունն առանձնապես վատանում էր գոյություն ունեցող բավական ծանր հարկային սիստեմի հետևանքով: Ընդ որում, ինչպես տեսանք, գյուղացին մեծ մասամբ բնամթերքով ու մասամբ էլ դրամով հարկեր վճարելով չէր ազատ-

վում: Նա դրանից զատ հարկադրված էր նաև սիրոջ համար ֆիզիկական աշխատանք (կռռ) կատարելու:

Շահագործվող դասակարգը ֆեոդալական այդ սաստիկ ճնշումը չէր հանդուրժում: Նա դրան պատասխանում էր ակտիվ սոցիալական պայքարով՝ գյուղացիական շարժումներով ու ապստամբություններով: 10-րդ դ. սկսում և Հայաստանի գրեթե բոլոր մասերում տարածվում են գյուղացիական շարժումներ ու ապստամբություններ:

Ուսումնասիրվող էպոխան միջնադարյան Հայաստանի սոցիալական շարժումներով ամենից ավելի հարուստ ժամանակաշրջանն է:

ԱՄՓՈՓՈՒՄ

Խալիֆայությունն իր տիրապետությունը Հայաստանում հաստատուն դարձնելու նպատակով արաբական բավականաչափ ցեղեր էր գաղթեցրել ու բնակեցրել երկրում: Այդ ցեղերը տեղական ազդեցության հետևանքով աստիճանաբար ֆեոդալականացվվելով և 9-րդ դ. սկզբներից հայ ֆեոդալների նման կենտրոնական իշխանությունից անկախանալու ձգտումներով էին հանդես գալիս: Խալիֆայության աստիճանական թուլացումն ու ծայրամասային երկրների, այդ թվում և Հայաստանի ինքնուրույնանալու ձգտումը գնալով ավելի է ուժեղանում: 9-րդ դ. կեսերին Հայաստանն օգտվում էր բավականաչափ ինքնուրույնությունից, իսկ 886 թ. սեփական թագավորություն հիմնադրելով լրիվ անկախանում է:

Խալիֆայության տիրապետության տարիներին, մասնավորապես 8-րդ դ. կեսից 9-րդ դ. կեսերի ընթացքում հայ նախարարական տները խոշոր փոփոխությունների ենթարկվեցին: Նրանց մի մասը հողատիրության համար մղվող պայքարում պարտվելով դադարեց երկրի տնտեսական-քաղաքական կյանքում քիչ թե շատ խոշոր դեր կատարելուց, իսկ մյուսները ընդհակառակը, ավելի ընդլայնեցին իրենց ժառանգական տիրույթները և հսկայական կարողության տեր դառնալով քաղաքական խոշոր դիրք ու հեղինակություն ձեռք բերին: Մամիկոնյան ֆեոդալական տունը Բագրատունիների դեմ պայքարելու ու այդ պայքարում ամբողջովին Բյուզանդիայի վրա հենվելու և հակաարաբական քաղաքականություն վարելու հետևանքով, 8-րդ դ. վերջերին խոշոր հարված ստանալով դուրս եկավ պատմական ասպարեզից: Այդ նույն ժամանակ իրենց կալվածքներից զրկվեցին նաև Կամսարականները: Բագրատունիները, ընդհակառակը, հմտորեն օգտագործում էին Հայաստանի համար Բյուզանդիայի ու Խալիֆայության մրցակցությունը և աստիճանաբար ընդլայնում իրենց ժառանգական կալվածքները: 9-րդ դ. առաջին կեսին նրանք տեր

էին դարձել բավական մեծ տիրույթների և իշխանաց իշխանի պաշտոն ստանալով մեծ հեղինակություն ու դիրք ձեռք բերել: Մի քանի տասնամյակ հետո նրանք խոշոր կալվածքներ ունեին արդեն կենտրոնական Հայաստանում և հասան թագավորական իշխանության:

Նույն ձևով Վասպուրականում էմիրությունների տերիտորիաների հաշվին, առավել ևս մյուս նախարարական տների նկատմամբ գերիշխանություն ձեռք բերելու միջոցով բարձրացան Արծրունիները, իսկ Սյունիքում՝ Սյունյաց նախարարական տունը:

9-րդ դ. վերջերին երկրի տնտեսական և քաղաքական կյանքում հիմնական տոն տվող ուժերն այս երեք խոշոր ֆեոդալական տներն էին: Նրանց մեջ Բագրատունիներն ավելի մեծ կարողություն և ազդեցություն ունեին և ձգտում էին իրենց ենթարկել ամբողջ Հայաստանն ու ստեղծել կենտրոնացված, միասնական պետություն: Աշոտ Բ Բագրատունին 922 թ. խալիֆից ստացավ «շահնշահ» տիտղոսը, որով ճանաչվում էր Բագրատունիների գերիշխանությունն ու առաջնությունը հայկական մյուս իշխանությունների, ինչպես նաև 908 թ. ստեղծված Արծրունյաց թագավորության նկատմամբ:

Այդ շրջանից սկսած վերանում են օտար արշավանքներն ու բռնությունները և երկրի խաղաղ տնտեսական զարգացման հնարավորություն է ստեղծվում: Աշխատանքի հասարակական բաժանման՝ գյուղատնտեսությունից արհեստների անջատման բազայի վրա զարգանում են արհեստագործությունը, առևտուրն ու քաղաքային կյանքը, ծավալվում կուլտուրական շինարարությունը:

Բագրատունիներն ավելի են ընդարձակում իրենց տիրույթները, տեր դառնում կենտրոնական Հայաստանի մեծ մասին և օգտագործելով նաև եկեղեցու հոգևոր ուժը՝ ձգտում երկիրը միավորել իրենց գերիշխանության ներքո: Սակայն նրանք իրենց քաղաքական ձգտումների մեջ հաջողություն չունեցան: Երկրի տնտեսական զարգացումը ոչ միայն միավորման պայմանները չէր ստեղծում, այլև, ընդհակառակը, տանում էր դեպի մասնատում: Այդ էր պատճառը, որ չնայած Բագրատունիների ջանքերին՝ հետզհետե ուժեղանում է մասնատման պրոցեսը և 10-րդ դ. երկրորդ կեսին Հայաստանում մի շարք մանր թագավորություններ

առաջացան հիմնականում Բագրատունյաց թագավորության հաշվին:

963 թ. անկախացավ Վանանդը, Կարս կենտրոնով, 970 թ. հիմնադրվեց Սյունիքի թագավորությունը, նույն տասնամյակում անկախացավ Տաշիր-Զորագետը (Կյուրիկյան թագավորություն), իսկ դեռ 908 թ. Վասպուրականում ինքնուրույն թագավորություն էին հիմնել Արծրունիները: Երկրի քաղաքական մասնատման տնտեսական պատճառները ֆեոդալական ժառանգական հողատիրական իրավունքի ամրապնդման ու նրա հետագա զարգացման մեջ պետք է տեսնել:

Արդ՝ ի՞նչ է իրենից ներկայացնում ֆեոդալական հողատիրությունը. ի՞նչ ձևերով է հանդես գալիս և ինչպիսի էվոլյուցիա ապրեց Բագրատունյաց տիրապետության շրջանում:

Հայաստանի անկախությունից հետո էլ հայ ֆեոդալների կողմից շարունակվեց արաբական էմիրություններին հայկական հողերից դուրս քշելու և ազատագրված հողերը ժառանգական սեփականություն դարձնելու քաղաքականությունը: Նրանք միաժամանակ իրենց իշխանության սահմանները ընդարձակում էին գյուղական հողերի հաշվին:

Այնպես որ վերոհիշյալ երեք խոշոր իշխանական տներից և համեմատաբար նվազ կարողություն ունեցող ֆեոդալական այլ բազմաթիվ տներից բացի, 10-րդ դ. կեսերին հանդես եկան նոր այնպիսի հզոր ֆեոդալական տներ, ինչպիսին, ասենք, Պահլավունիներն էին: Ֆեոդալական բոլոր այս իշխանությունները մասնավոր սեփականության իրավունքով տիրապետում էին հսկայական հողային տարածությունների ու տնտեսական միջոցների: Կուտային բազմատեսակ աշխատանքների մասին եղած վկայություններից, Տաթևի վանքի օրինակից և մի քանի այլ փաստերից երևում է, որ ֆեոդալներն անհատական խոշոր տնտեսություններ են ունեցել: Սակայն Հայաստանում գերակշռել են գյուղական առանձին համայնքների կողմից մշակվող ֆեոդալական մասնատված տնտեսությունները: «Հայրենիք» կոչվող մասնատիրական այդ կալվածքները ժառանգական ընույթ են ունեցել:

Ֆեոդալական իշխանություններն ինքնուրույն տնտեսական կյանքով էին ապրում և ունենալով սեփական զորքն ու հարկադ-

բանքի այլ միջոցներ, ոչ միայն չահագրգռված չէին կենտրոնական միասնական պետության ամրապնդման խնդրում, այլև ձգտում էին նրա քաղաքական մասնատմանը: Այսպիսով, երկրում առաջ եկած մասնատումը ֆեոդալական արտադրական եղանակի զարգացման արդյունք էր: Այն արտադրական հարաբերությունների և արտադրողական ուժերի զարգացման առաջադիմական քայլ էր, կապված ֆեոդալական հարաբերությունների խորացման և ծավալման, տեղական իշխանությունների ուժեղացման ու ամրապնդման հետ:

Գյուղատնտեսության մեջ զարգացումն արտահայտվեց նոր հողեր յուրացնելու և մշակելի հողային տարածություններն ընդլայնելու, բերքատվության բարձրացումը խթանող ցանքաշրջանառության եռադաշտային սիստեմը կիրառելու, հողերը մոլախոտերից մաքրելու, արհեստական ոռոգման ու հողերի պարարտացման եղանակին ավելի լայնորեն դիմելու միջոցով:

Աշխատանքի հասարակական բաժանման և արհեստագործության զարգացման հետևանքով կատարելագործվում էր մետաղների մշակման և գյուղատնտեսական գործիքների պատրաստման տեխնիկան, որն աշխատանքի մեթոդների կատարելագործման պատճառ էր հանդիսանում: Անհատական խոշոր տնտեսությունների կազմակերպումն իր հերթին արտադրողական ուժերի զարգացման նպաստավոր պայմաններ էր ստեղծում: Այդ շրջանում ծանր գութանի կիրառմանը, որը գյուղատնտեսության առաջադիմության տեսակետից մեծ նշանակություն ունի, նպաստում էին ֆեոդալական խոշոր անհատական տնտեսությունները:

Հողատիրության և հողագործության մեջ կատարվող փոփոխությունները նշանավորվում էին երկրի անցումը զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանին: Ֆեոդալիզմի զարգացման այս նոր էտապը մի կողմից բնորոշվում էր արհեստագործության, դրամատպրանքային տնտեսության ու քաղաքային կյանքի զարգացմամբ, իսկ մյուս կողմից՝ խոշոր հայրենիք-կալվածքների ձևավորմամբ ու նրանց հետագա զարգացմամբ:

Ֆեոդալական խոշոր կալվածքն, այս ժամանակաշրջանում դառնում է երկրի տնտեսական ու քաղաքական կյանքի հիմնական, վճռական ուժը: Այն ոչ միայն տնտեսական կազմակերպա-

կան գլխավոր ձև է դառնում, այլև ֆեոդալական ամբողջ տնտեսական սիստեմի կենտրոնն էր: Խոշոր ֆեոդալն իր կալվածքի ոչ միայն կազմակերպիչն ու ղեկավարն էր, այլև նրա անկախ, սուվերեն կարգադրիչը, իր տիրապետության սահմաններում ապրող բնակչության տերն ու տնօրենը:

Խոշոր ֆեոդալներից վասալական կախման մեջ էին մանր կալվածատերերը՝ ազատները: Նրանց հիմնական զբաղմունքը զինվորական ծառայությունն էր, որի դիմաց խոշոր ֆեոդալներից պայմանական եղանակով հող էին ստանում: Սակայն քանի որ նրանց ռազմական ծառայությունը ժառանգաբար փոխանցվում էր իրենց սերունդներին, պայմանական հողատիրությունն էլ ժառանգական հողատիրության ձև էր ընդունում և իր բնույթով գրեթե հավասարվել էր նրան:

Ազատները, շահագործող դասակարգի մի առանձին շերտ լինելով, բավական մեծ իրավունքներ ու արտոնություններ ունեին և որոշակիորեն տարբերվում էին անմիջական արտադրող շինականներից: Նրանք մասնակցում էին իշխանների գործարքներին և հանդես գալիս զանազան պաշտոնական դիրքերում: Ազատները տիրող դասակարգի շահագործող վերջին շերտն էին:

Որքանով որ տիրող դասակարգի առանձին շերտերի քաղաքական դիրքը որոշվում էր հողատիրության չափով, այնքանով էլ հողային սեփականությունը կրում էր հիերարեխիկ բնույթ: Ֆեոդալական հիերարխիան արտահայտում էր տիրող դասակարգի առանձին շերտերի հողային սեփականությունը, ռենտային բաշխումը, ինչպես նաև իրար նկատմամբ նրանց ունեցած, թեկուզ ձևական, իրավունքները: Դրանց հիման վրա ֆեոդալական հիերարխիան 9–11-րդ դդ. արտահայտվում էր հետևյալ ձևով: Բոլորից վեր կանգնած էր թագավորը կամ թագավորները, որոնցից հետո հաջորդ աստիճանում էին մեծ, դահագլուխ, դահերեց և իշխանաց իշխանը: Երրորդ աստիճանը կազմում էին շարքային իշխանները, իսկ վերջին՝ չորրորդ աստիճանն՝ ազատները:

Ֆեոդալական խոշոր հողատիրության աճը զգալի տեղաշարժեր է կատարում գյուղացիության ու գյուղական համայնքների կյանքում: Իշխանական հողերի ընդլայնման հետևանքով դեռևս ազատ, ինչպես նաև կիսազատ համայնքներն անցնում են նրանց

գերիշխանության տակ՝ կորցնելով նախկին ազատությունն ու ինքնուրույնությունը: Դրանով, իհարկե, համայնքը որպես տնտեսական կազմակերպական միավոր չի ոչնչացվում: Խոշոր կալվածատերերը հնարավոր չափով համայնքը հարմարեցնում են իրենց կալվածատիրական շահերին, սակայն հենվում, պահպանում ու ամրապնդում էին համայնական կազմակերպությունը:

Կալվածատիրոջ գերիշխանության տակ անցնելու և ներքին զարգացման հետևանքով համայնքի շերտավորումն ուժեղանում է: Նրա ավելի չքավոր մասն աստիճանաբար քայքայվելով և ամեն մի միջոցից զրկվելով վարձկանությամբ է զբաղվում: Համայնքի մյուս անդամների շահագործման միջոցով ավելի է հարստանում նրա վերին շերտը:

Անմիջական արտադրող գյուղացիությունը պետության ու ֆեոդալների կողմից հարկադրվում էր ծանրորեն՝ ռենտայի բոլոր երեք ձևերով: Ուսումնասիրվող ժամանակաշրջանում բավականին տարածված էր կռուային աշխատանքը: Գործում էր փողային ռենտան, որն դրամապրանքային հարաբերությունների զարգացման շնորհիվ ավելի ու ավելի էր տարածվում: Սակայն դեռևս տիրապետող էր բնամթերքային ռենտան: Գյուղացիության վրա ծանրացած հարկերի մեծագույն մասը մթերքով էր գանձվում:

Գյուղացիությունը ֆեոդալների տնտեսական ու արտաարտտեսական ճնշման ուժեղացմանը պատասխանում է սոցիալական ակտիվ պայքարով: 10-րդ դ. Այրարատում և Սյունիքում բռնվում են ուժեղ գյուղացիական ապստամբություններ, իսկ երկրի արևմտյան գավառներում տարածվում է Թոնդրակյան գյուղացիական շարժումը: Տիրող դասակարգը միայն զինվորական բռնի ուժի միջոցով է կարողանում ճնշել գյուղացիական այդ ապստամբությունները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ 3
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 5
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԴՐՈՒԹՅՈՒՆԸ 9–11-ՐԴ ԴԴ.
1. Երկրի անկախության երաշանգնումը 17
2. Արհեստագործության, առևտրի և քաղաքների զարգացումը
..... 38
3. Միասնական համահայկական պետություն ստեղծելու
փորձերը 51
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ԽՈՇՈՐ ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ՀՈՂԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ
1. Գյուղատնտեսությունը և գյուղատնտեսական տեխնիկան .. 65
2. Աշխարհիկ և եկեղեցական խոշոր հողատիրություն
ա. Հողի սեփականատիրության հարցը 73
բ. Աշխարհիկ խոշոր հողատերեր. հողատիրության բնույթը ... 79
գ. Եկեղեցական խոշոր հողատերեր. եկեղեցական
հողատիրության առանձնահատկությունները 94
դ. Ֆեոդալական կալվածք 106
3. Կալվածքային տնտեսության դերը և
առանձնահատկությունները 132
ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ՄԱՆՐ ՈՒ ՄԻՋԻՆ ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ՀՈՂԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ
1. Մանր ու միջին ֆեոդալական դասը 141
2. Մանր հողատերերի սոցիալական և իրավական վիճակը 161

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՌԵՆՏԱՆ ԵՎ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԻ ՍՐՎԵԼԸ

1. Շահագործվող դասակարգը. Նրա իրավական և սոցիալական վիճակը 168
2. Ֆեոդալական ռենտա 183
3. Սոցիալական շարժումները Հայաստանում 10–11-րդ դդ. 208
Ամփոփում 222

Վ. Բ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ

ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ՀՈՂԱՏԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 9–11-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

Համակարգչային ձևավորումը՝ Ն. Ադամյանի
Համակարգչային շարվածքը՝ Ն. Բարթիկյանի,
Թ. Սուքիասյանի և Հ. Առաքելյանի
Տեխնիկական խմբագրումը՝ Մ. Գրիգորյանի
Տպագրիչ՝ Լ. Մուրադյան

Ստորագրված է տպագրության 07.09.2017 թ.
Տպաքանակը՝ 200 օրինակ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ИСТОРИИ НАН РА
INSTITUTE OF HISTORY OF NAS RA

ՀՀ, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4
РА, 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4
24/4, Marshal Baghramyan Ave., 0019, Yerevan
http //www.academhistory.am

II
A 106902